

Տ ԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ

դասական գործերի
ժողովածու
2007-2010

գիրք II



Կազմեցին՝

Շ. Մ. Դոյրոյան, բ.գ.թ

Գ.Ղ. Յայրապետյան

Դատական գործերի ժողովածուում ներկայացված են տեղեկատվության ազատության ոլորտում 2007-2010 թ.թ.-ի ընթացքում տեղի ունեցած եւ ավարտված դատական գործերը: Ներկայացված է յուրաքանչյուր գործի համառոտ նկարագրությունը առնչվող բոլոր փաստաթղթերով՝ հայցադիմում, դատարանի վճիռ եւ այլն: Ժողովածուն ներառում է նաեւ տեղեկատվության ազատության դատական պրակտիկայի վերլուծություն, որում ամփոփվում են տեղեկատվության ազատության վերաբերյալ դատական պրակտիկայի վիճակագրությունը, հիմնական խնդիրները եւ դրական տեղաշարժերը:

Ժողովածուն հասցեագրված է ոչ միայն ՏԱ ոլորտի մասնագետներին, իրավաբաններին եւ լրագրողներին, այլեւ՝ ընթերցողների լայն շրջանակին:

www.foi.am



Դատական գործերի ժողովածուն հրապարակվում է Ինֆորմացիայի ազատության կենտրոնի կողմից «Տեղեկատվության ազատությունը որպես համայնքային մասնակցության միջոց» ծրագրի շրջանակում, Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալության տրամադրած աջակցությամբ:

Գրքում արտահայտված տեսակետները հեղինակային են եւ պարտադիր չէ, որ արտահայտեն ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության տեսակետը:

- © Ինֆորմացիայի ազատության կենտրոն, 2010թ.
- © Շ. Դոյրոյան, 2010թ.
- © Գ. Յայրապետյան, 2010թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Տեղեկատվություն ստանալու իրավունքի դատական պաշտպանության պրակտիկան.....	5
ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ.....	27
Գործ 1. Ինֆորմացիայի ազատության կենտրոնն ընդդեմ Հրազդանի քաղաքապետարանի.....	28
Գործ 2. Ինֆորմացիայի ազատության կենտրոնն ընդդեմ Նոր Նորքի թաղապետի եւ թաղապետարանի.....	63
Գործ 3. Ինֆորմացիայի ազատության կենտրոնն ընդդեմ Արաբկիրի թաղապետարանի	87
Գործ 4. Ինֆորմացիայի ազատության կենտրոնն ընդդեմ Դավթաշենի թաղապետի եւ թաղապետարանի.....	106
Գործ 5. Ինֆորմացիայի ազատության կենտրոնն ընդդեմ Չարթունքի գյուղապետարանի.....	117
Գործ 6. Ինֆորմացիայի ազատության կենտրոնն ընդդեմ Փարաքարի գյուղապետարանի.....	129
Գործ 7. Ինֆորմացիայի ազատության կենտրոնն ընդդեմ Ելփինի գյուղապետի եւ գյուղապետարանի.....	146
Գործ 8. Ինֆորմացիայի ազատության կենտրոնն ընդդեմ Բջնիի գյուղապետի եւ գյուղապետարանի.....	160
Գործ 9. Ինֆորմացիայի ազատության կենտրոնն ընդդեմ Լենուղու գյուղապետի եւ գյուղապետարանի.....	168
Գործ 10. Ինֆորմացիայի ազատության կենտրոնն ընդդեմ Տավրորիկի գյուղապետի եւ գյուղապետարանի.....	179

Գործ 11. Ինֆորմացիայի ազատության կենտրոնն ընդդեմ «Հայ ազգային կոնգրես» դաշինքի.....	192
Գործ 12. Ինֆորմացիայի ազատության կենտրոնն ընդդեմ «Օրինաց երկիր» կուսակցության.....	203
Գործ 13. Ինֆորմացիայի ազատության կենտրոնն ընդդեմ Հայաստանի Աշխատավորական սոցիալիստական կուսակցության.....	218
Գործ 14. Ինֆորմացիայի ազատության կենտրոնն ընդդեմ «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի.....	232
Գործ 15. Ինֆորմացիայի ազատության կենտրոնն ընդդեմ «Երեւանի կառուցապատման եւ ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ի.....	248
Գործ 16. Ինֆորմացիայի ազատության կենտրոնն ընդդեմ ՀՀ վարչական դատարանի դատավորի որոշման.....	266
Գործ 17. Ինֆորմացիայի ազատության կենտրոնի դիմումը ՀՀ Սահմանադրական դատարան.....	276
Practice of the Judicial Defense of the Right of Access to Information	298
FOI Court Cases: 2007-2010	320
List of FOI Court Cases: 2001-2010.....	339
SU դատական գործերի ցանկ. 2001-2010.....	341

Տեղեկատվություն ստանալու իրավունքի դատական դաճադանության դրակսիկան

Ներածություն.

Տեղեկություն ստանալու իրավունքը եւ դատական պաշտպանության անհրաժեշտությունը

Յուրաքանչյուր ոք ունի տեղեկություններ փնտրելու եւ ստանալու իրավունք: Մարդու՝ տեղեկատվության ազատության իրավունքն ամրագրված է ինչպես ՀՀ Սահմանադրությամբ եւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով, այնպես էլ Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային իրավական ակտերով: Տեղեկատվության ազատության իրավունքը մարդու հիմնարար իրավունքներից մեկն է: Այս իրավունքի իրականացումն ապահովում է մարդու այլ իրավունքների իրականացումը, եւ ընդհակառակը՝ այս իրավունքի խախտումը հանգեցնում է այլ իրավունքների խախտմանը:

Տեղեկություններ փնտրելու եւ ստանալու իրավունքն ապահովում է նաեւ պետական կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմինների աշխատանքի թափանցիկությունը եւ հրապարակայնությունը: Ի վերջո, առանց սեփական իրավունքների մասին տեղյակ լինելու, անհնար է նաեւ դրանց իրականացումն ու պաշտպանությունը: Այդ իմաստով՝ տեղեկություններ ստանալու իրավունքը բոլոր իրավունքների իրականացման նախա-

պայմաններից է: Միաժամանակ, դրա պատշաճ դատական պաշտպանությունն ապահովում է մյուս իրավունքների իրականացումը: Դատական համակարգն ապահովում է իշխանության մյուս երկու ճյուղերի՝ գործադիր եւ օրենսդիր մարմինների նկատմամբ վերահսկողություն՝ վերացնելով կամայականություններն ու մարդկանց իրավունքների խախտումները՝ արձանագրելով իրավախախտումները, պատժելով դրանց մեղավորներին:

2003թ.-ի նոյեմբերի 15-ից գործում է «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը: Համարվելով տեղեկատվության ազատության մասին լավագույն օրենքներից մեկը՝ այն ամրագրում է քաղաքացիների եւ կազմակերպությունների տեղեկություններ փնտրելու, սահմանված ժամկետներում պատշաճ պատասխան ստանալու իրավունքը: Տեղեկատվություն ստանալու իրավունքն ամրագրված է նաեւ ՀՀ Սահմանադրությամբ՝ «Մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքները եւ ազատությունները» գլխում՝ մարդու արժանապատվության, կյանքի, օրենքի առջեւ հավասարության, դատական պաշտպանության իրավունքների հետ մեկտեղ:

ՏԱ դասական որակչիկան.

դատական նախադեպերի ընդհանուր նկարագիրը

Տեղեկատվության ազատության իրավունքի դատական պաշտպանության պրակտիկայի վերաբերյալ առավել ամբողջական եւ ամփոփ պատկեր ներկայացնելու համար անհրաժեշտ է նշել տեղեկատվության ազատության վերաբերյալ բոլոր դատական գործերը՝ այդ թվում՝ նախկինում վերլուծված գործերը, որոնց մասին արդեն առկա է վիճակագրություն¹: Սակայն հաշվի առնելով տեղեկություն ստանալու իրավունքի վերաբերյալ նախկին եւ այժմյան դատական պաշտպանության պրակտիկայի առանձնահատկությունները՝ այդ տվյալները կներկայացնենք առանձին:

Դա հնարավորություն կընձեռնի պատկերացում կազմել ՏԱ դատական ընդհանուր պրակտիկայի մասին՝ միաժամանակ հնարավորություն տալով համեմատել ՏԱ նախկին եւ այժմյան դատական պրակտիկան, վերհանել դրանց նմանություններն ու տարբերությունները:

Առանձնացնում ենք տեղեկատվության ազատության դատական պրակտիկայի հետեւյալ 3 փուլերը.

I. մինչեւ ՏԱ մասին օրենքի ընդունումը՝ 2001-2003թ.թ.,

II. ՏԱ մասին օրենքի ընդունումից հետո՝ 2003-2006թ.թ.,

III. 2007-2010թ.թ.:

Օրենքի ընդունումից հետո տեղի ունեցած գործերի տարանջատումն անհրաժեշտ է այն պատճառով, որ

փոխվել է գործերի բովանդակությունը. 2003-2006թ.թ.-ի ընթացքում նախաձեռնված դատական գործերի հիմնական նպատակը պաշտոնյաներից դատական կարգով տեղեկություններ ստանալն էր, իսկ 2007-2009թ.թ.-ին այդ պահանջին ավելացել է նաեւ պաշտոնյաներին տեղեկատվության ազատության իրավունքը խախտելու համար վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջը, ինչն էականորեն ազդել է ՏԱ դատական գործերի արդյունքի վրա:

Տեղեկատվության ազատության իրավունքը դատական կարգով պաշտպանելու եւ վերականգնելու գործընթացն սկսվել է դեռեւս 2001թ.-ին, այսինքն՝ դեռեւս մինչ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի ընդունումը: 2001-2003թ.թ.-ի ընթացքում տեղեկատվության ազատության վերաբերյալ 6 դատական գործ է տեղի ունեցել: Երկուսի դեպքում դատարանը բավարարել է հայցվորների պահանջները մասնակի, իսկ մնացած 4 գործերն ունեցել են բացասական ավարտ:

Մասնակի բավարարված գործերից մեկը նախաձեռնել էր «Աքիլես» ավտովարորդների իրավունքների պաշտպանության կենտրոնը՝ տեղեկատվություն տրամադրելուն պարտավորեցնելու վերաբերյալ հայց ներկայացնելով դատարան ՀՀ Ներքին գործերի նախարարության դեմ «ՏԱ մասին» ՀՀ օրենքի ընդունումից 2 տարի առաջ՝ 2001թ.-ին:

1. Տես՝ Ինֆորմացիայի ազատության կենտրոնի հրապարակած «Դատական գործերի ժողովածու. 2001-2006» գրքում, որի էլեկտրոնային տարբերակը կարող եք ներբեռնել ԻԿԿ-ի ինտերնետային կայքից՝ <http://www.foi.am/am/content/125/>

2001թ.-ի մարտի 14-ին «Աքիլլես» ՀԿ-ն դիմել էր ՀՀ ՆԳ նախարարությանը՝ խնդրելով տրամադրել վիճակագրական տվյալներ ճանապարհային երթուղիների կանոնների խախտման համար վարչական պատասխանատվության ենթարկված վարորդների թվի, վարչական տույժերի գումարի, պարտականությունները չկատարելու կամ չարաշահելու համար պատասխանատվության ենթարկված ՊԱՏ աշխատակիցների թվի մասին: ՆԳ նախարարի տեղակալ Արարատ Մահտեսյանը մերժել էր տրամադրել պահանջվող տեղեկությունները՝ գրավոր պատասխանելով. «ՆԳ նախարարությունը Ձեզ վիճակագրական տվյալներ տրամադրելը նպատակահարմար չի գտնում»:

2001թ.-ի սեպտեմբերի 12-ին հայցներկայացվեց Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարան՝ ընդդեմ ՆԳ նախարարության: Հոկտեմբերի 10-ին դատարանը մասնակի բավարարեց «Աքիլլես» ՀԿ-ի հայցն ընդդեմ ՆԳ նախարարության՝ վճռելով, որ հայցը տեղեկատվություն տրամադրելու մասով ենթակա է կարճման, քանի որ պահանջված տեղեկությունը պետք է տրամադրվի այլ պետական մարմնի կողմից: Սակայն դատարանը բավարարեց հայցը մյուս պահանջի մասով՝ պարտավորեցնելով պատասխանողին «Աքիլլես» ՀԿ-ի գրությանը տալ պատճառաբանված ու հիմնավոր պատասխան:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո՝ 2003թ.-ից մինչև 2006թ.-ը, տարբեր հասարակական կազմակերպությունների նախաձեռնությամբ տեղեկատվության ազատության վերա-

բերյալ 11 դատական գործ է տեղի ունեցել, որոնցից 10-ն ունեցել են դրական ավարտ, եւս 1-ը բավարարվել է մասնակի:

Այսպիսով, ընդհանուր առմամբ 2001-2006թ.թ.-ի ընթացքում տեղեկատվության ազատության վերաբերյալ դատական պրակտիկան ունի հետեւյալ պատկերը.

հարուցվել է 17 գործ, որոնցից 10-ն ունեցել է դրական ավարտ, 4-ը՝ բացասական, 3 գործ բավարարվել է մասնակի: Նշենք, որ 17 գործերից 7-ի նախաձեռնողն Ինֆորմացիայի ազատության կենտրոնն էր: Այդ գործերն են՝

- ԻԱԿ-ն ընդդեմ Արարատի մարզպետարանի,
- ԻԱԿ-ն ընդդեմ Ապարանի քաղաքապետարանի,
- ԻԱԿ-ն ընդդեմ Գյումրու քաղաքապետարանի,
- ԻԱԿ-ն ընդդեմ Արմավիրի քաղաքապետարանի,
- ԻԱԿ-ն ընդդեմ Արմավիրի մարզի Լուկաշին գյուղի գյուղապետարանի,
- ԻԱԿ-ն ընդդեմ Կոտայքի մարզի Նումուս գյուղի գյուղապետարանի,
- ԻԱԿ-ը եւ քաղաքացի Մարտիրոս Կարապետյանն ընդդեմ «Բեռլին» մոր եւ մանկան կենտրոն» պոլիկլինիկա» ՓԲԸ-ի եւ Առողջապահության նախարարության:

Վերոնշյալ բոլոր 7 գործերն ունեցել են դրական արդյունք: Ընդ որում, 3 գործում պատասխանող կողմը տրամադրել է պահանջված տեղեկատվությունը մինչև դատաքննությունը սկսելը՝ դատական գործընթացներից խուսափելու համար:

ՏԱ դասական տրակսիկան. դատական նախադեպի այժմյան վիճակագրությունը

Ինչպես նշվեց՝ 2003-2006թ.թ. ընթացքում Ինֆորմացիայի ազատության կենտրոնը տեղեկատվության ազատության ոլորտում 7 դատական գործ է նախաձեռնել: 2007-2010թ.թ.-ին այդ ցուցանիշը եռապատկվել է: Այս ընթացքում Ինֆորմացիայի ազատության կենտրոնը 20 դատական գործ է նախաձեռնել՝ տեղեկություններ ստանալու խախտված իրավունքը վերականգնելու եւ այդ իրավունքը խախտած պաշտոնյային վարչական պատասխանատվության ենթարկելու համար:

2007թ.-ից մինչեւ 2010թ.-ի ապրիլը տեղեկատվության ազատության վերաբերյալ դատական գործերի ընդհանուր վիճակագրությունն ունի հետևյալ պատկերը.

- հարուցված 20 գործերից ավարտվել է 17-ը, որոնցից ամբողջությամբ բավարարվել է 7 գործ, 5 գործ բավարարվել է մասնակի, 4 գործ մերժվել է, եւս 1 գործ կարճվել՝ առանց ըստ էության քննվելու:
- Մասնակի բավարարված 5 գործերից 2-ի դեպքում դատարանն ինքն է ԻԱԿ-ի հայցը մասնակիորեն բավարարելու որոշում կայացրել, իսկ 3-ի դեպքում դատական գործերը կարճվել են, քանի որ պատասխանող կողմը գործի

դատական քննության ընթացքում տրամադրել է ԻԱԿ-ի պահանջած տեղեկությունները: Այս կարճված 3 գործերի դեպքում նույնպես Ինֆորմացիայի ազատության կենտրոնը պահանջել է պաշտոնյային վարչական պատասխանատվության ենթարկել, սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ պահանջված տեղեկություններն ինքնակամ տրամադրվել են, ԻԱԿ-ն այդ հայցապահանջից հրաժարվել է:

2007-2010թ.թ.-ին ԻԱԿ-ի նախաձեռնած եւ ավարտված 17 դատական գործերից 7-ը եղել են ընդդեմ գյուղապետարանների, 3-ը՝ թաղապետարանների, 2-ը՝ պետական ոչ առևտրային կազմակերպությունների, 2-ը՝ կուսակցությունների, մեկը՝ քաղաքապետարանի եւ մեկն էլ ընդդեմ դատավորի որոշման²: Գործերից մեկի դեպքում էլ պատասխանող կողմ է եղել ՀՀ Ազգային ժողովը, քանի որ գործը վերաբերել է ՀՀ Վարչական դատավարության օրենսգրքի 151 եւ 152 հոդվածների սահմանադրականության հարցին:

Ընդհանուր առմամբ, կարելի է արձանագրել, որ Ինֆորմացիայի ազատության կենտրոնի նախաձեռնած եւ ավարտված 17 գործերից 12-ն ունեցել է դրական ավարտ, 5-ը՝ բացասական:

2. Տես՝ էջ , «ՏԱ իրավունքը խախտած մարմինները» բաժնում, էջ՝ 19:

Դրական ավարտ ունեցած գործեր

Դրական ավարտ ունեցած 12 գործերից 7-ի դեպքում ԻԱԿ-ի պահանջներն ամբողջությամբ բավարարվել են: Այդ գործերն են.

- ԻԱԿ-ն ընդդեմ Արաբկիրի թաղապետարանի,
- ԻԱԿ-ն ընդդեմ Դավթաշենի թաղապետարանի,
- ԻԱԿ-ն ընդդեմ Բջնիի գյուղապետարանի,
- ԻԱԿ-ն ընդդեմ Ելփինի գյուղապետարանի,
- ԻԱԿ-ն ընդդեմ ՀՀ Վարչական դատարանի դատավորի որոշման,
- ԻԱԿ-ն ընդդեմ «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի,
- ԻԱԿ-ն ընդդեմ Հայաստանի աշխատավորական սոցիալիստական կուսակցության:

ԻԱԿ-ի նախաձեռնած դատական գործերից ամենակարեւորն ու առանցքային նշանակություն ունեցողը «ԻԱԿ-ն ընդդեմ Ելփինի գյուղապետի եւ գյուղապետարանի դատական գործն է»³:

Այս գործով դատարանն առաջին անգամ վարչական պատասխանատվության՝ տուգանքի ենթարկեց պաշտոնյային՝ անձի տեղեկատվություն ստանալու իրավունքը խախտելու համար: 2009թ.-ի հուլիսի 6-ին ՀՀ վարչական դատարանը՝ դատավոր Արթուր

Պողոսյանի նախագահությամբ, վճիռ կայացրեց պաշտոնյային տեղեկատվություն ստանալու իրավունքը խախտելու համար վարչական պատասխանատվության՝ տուգանքի ենթարկելու մասին:

Սա Հայաստանում առաջին նախադեպն էր, երբ պաշտոնյան տեղեկատվության ազատության իրավունքը խախտելու համար ենթարկվեց վարչական պատասխանատվության՝ պարտավորվելով տուգանք վճարել:

Նշենք, որ դրական ելք ունեցած գործերից մեկում ԻԱԿ-ը վիճարկել էր վարչական դատարանի դատավորի անտրամաբանական որոշումը, թե հասարակական կազմակերպությունը վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջով Վարչական դատարան դիմելու իրավունք չունի. 2009թ.-ի ապրիլի 9-ին Ինֆորմացիայի ազատության կենտրոնը դիմել էր ՀՀ Վարչական դատարան ընդդեմ Չարթոնքի գյուղապետարանի՝ տեղեկատվություն տրամադրելու եւ Չարթոնքի գյուղապետին վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջներով⁴: Վարչական դատարանը Չարթոնքի գյուղապետին վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջի մասով մերժել էր վերոնշյալ պատճառաբանությամբ: Ուստի, ԻԱԿ-ը դիմեց ՀՀ Վարչական դատարանի նախագահին՝ խնդրելով վերացնել Վարչական դատարանի դատավորի վերոնշյալ

3. Տես՝ Գործ 7, էջ 146:

4. Տես՝ Գործ 5, էջ 117:

որոշումը: ՀՀ Վարչական դատարանը բավարարեց ԻԱԿ-ի բողոքը՝ ամրագրելով, որ հասարակական կազմակերպությունը կարող է դիմել դատարան պաշտոնատար անձին վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջով:

Հետաքրքիր ընթացք է ունեցել նաև ԻԱԿ-ն ընդդեմ «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի դատական գործը⁵: ՊՈԱԿ-ից ստացվել էր կես էջանոց պատասխան գրություն՝ առաջարկելով պահանջված տեղեկությունները ստանալ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության մամուլի ծառայությունից: Պատճառաբանությունն այն էր, թե համաձայն ՀՀ ԱԻ նախարարի հրամանի՝ ՀՀ ԱԻՆ կառուցվածքային եւ առանձնացված ստորաբաժանումների կամ նրանց կողմից իրականացվող գործառույթների վերաբերյալ տեղեկատվությունը տրվում է ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության մամուլի ծառայության միջոցով: Փաստորեն, ՊՈԱԿ-ն ըստ էության չէր պատասխանել ԻԱԿ-ի հարցմանը: 2009թ. սեպտեմբերի 29-ին Ինֆորմացիայի ազատության կենտրոնը «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի դեմ հայց ներկայացրեց դատարան: Կենտրոն եւ Նորք Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը վճռեց ամբողջությամբ բավարարել Ինֆորմացիայի ազատության կենտրոնի հայցն ընդդեմ «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի՝ վերջինիս պարտավորեցնելով հնգօրյա ժամկետում տրամադրել մերժած ողջ տեղեկատվությունը:

5. Տես՝ Գործ 14, էջ 232:

6. Տես՝ Գործ 3, էջ 87:

Այս գործի ընթացքում ԻԱԿ-ը ՊՈԱԿ-ին ուղղված հարցերի պատասխանը փորձեց ստանալ հենց ԱԻՆ-ից: ԱԻՆ-ը մերժել էր տրամադրել ԻԱԿ-ի խնդրած տեղեկություններն այն պատճառաբանությամբ, որ պահանջվող տեղեկատվության մեջ առկա են անձնական տվյալներ, որոնց տրամադրումը ենթակա է մերժման: Այսինքն, Արտակարգ իրավիճակների նախարարությունը տեղյակ չէր, որ համաձայն «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ կետի՝ եթե պահանջվող տեղեկատվության մի մասը պարունակում է տվյալներ, որոնց տրամադրումը ենթակա է մերժման, ապա տեղեկություն է տրամադրվում մնացած մասի վերաբերյալ: Հետեւաբար՝ Արտակարգ իրավիճակների նախարարությունը պետք է տրամադրեր ՊՈԱԿ-ի աշխատողների հաստիքացուցակները՝ առանց նշելու աշխատավարձի չափերը (օրինակ՝ աշխատավարձի չափերը պարունակող հատվածները ծածկելու միջոցով):

ԻԱԿ-ն ընդդեմ Արաբկիրի թաղապետարանի դատական գործի⁶ արդյունքում ԻԱԿ-ը ոչ միայն վերականգնեց իր տեղեկատվության ազատության իրավունքը, այլ նաև ստիպեց թաղապետարանին իրականացնել իր պարտականություններից մեկը՝ վերացնելով անգործությունը:

ՀՀ Վարչական դատարանը լիովին բավարարեց ԻԱԿ-ի հայցն ընդդեմ Արաբկիրի թաղապետարանի՝ պարտավորեցնելով թաղապետարանին 5-օրյա ժամկետում տրամադրել մերժված տեղեկությունները, ինչպես նաև

փոխհատուցել 4000 դրամ դատարանին վճարված պետական տուրքը:

Դրական ավարտ ունեցած 12 գործերից 5-ը բավարարվել է մասնակի, որոնցից երկուսի դեպքում դատարանը գտել է, որ արդարացված չեն եղել ԻԱԿ-ի՝ պաշտոնյային վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջները: Սակայն այս երկու դեպքում էլ բավարարվել է ԻԱԿ-ի հիմնական պահանջը՝ հայցվող տեղեկատվությունն ամբողջությամբ տրամադրվել է: Այդ գործերն են ԻԱԿ-ն ընդդեմ Հրազդանի քաղաքապետարանի եւ ԻԱԿ-ն ընդդեմ Նոր Նորքի թաղապետարանի:

Մասնակի բավարարված գործերից երեքի դեպքում էլ ԻԱԿ-ը մինչեւ դատաքննության ավարտը ստացել է իր պահանջած տեղեկությունները, ուստի հրաժարվել է հայցից: Այդ գործերն են.

- ԻԱԿ-ն ընդդեմ Չարթունքի գյուղապետարանի,
- ԻԱԿ-ն ընդդեմ Տավրոհիկի գյուղապետարանի,
- ԻԱԿ-ն ընդդեմ Լենուղու գյուղապետարանի:

Քացասական ավարտ ունեցած գործեր

Քացասական ավարտ ունեցել է 5 գործ: Այդ գործերն են.

- ԻԱԿ-ն ընդդեմ «Օրինաց երկիր» կուսակցության,
- ԻԱԿ-ն ընդդեմ «Հայ ազգային կոնգրես» դաշինքի,
- ԻԱԿ-ն ընդդեմ Փարաքարի գյուղապետարանի,
- ԻԱԿ-ն ընդդեմ «Երեւանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ի,
- ԻԱԿ-ի դիմումը ՀՀ Սահմանադրական դատարան:

ԻԱԿ-ն ընդդեմ «Հայ ազգային կոնգրես» դաշինքի դատական գործի դեպքում դատարանը ստիպված եղավ կարճել դատական գործն օրենսդրական կազուսի պատճառով:

Մնացած 4 գործի դեպքում դատարանը գտավ, որ Ինֆորմացիայի ազատության կենտրոնի պահանջներն արդարացված չեն:

Ձեւավորված հիմնական բացասական միտումներից մեկն այն է, որ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանները մերժում են տեղեկատվության ազատության իրավունքը խախտած պաշտոնյային վարչական պատասխանատվության ենթարկելու մասին հայցապահանջն ընդունել՝ պատճառաբանելով, թե վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ գործերը քննելու իրավասությունը պատկանում է ՀՀ վարչական դատարանին: ՀՀ վարչական դատարանն էլ իր հերթին պաշտոնյային վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջի ընդունումը մերժում է այն պատճառաբանությամբ, թե նախ՝

Ինֆորմացիայի ազատության կենտրոնը, ըստ ՀՀ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի, պաշտոնյային վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջ ներկայացնելու իրավունք չունի: Եվ երկրորդ՝ բացակայում է իրավախախտման վերաբերյալ իրավասու մարմնի արձանագրությունը, ԻԱԿ-ն էլ նման արձանագրություն կազմելու լիազորություն չունի: Իսկ ՀՀ վարչական օրենսդրության մեջ բացակայում է որեւէ դրույթ, որը կսահմանի նման լիազորություն ունեցող մարմնի առկայությունը: Ստացվում է, որ պահանջը կա, բայց պահանջը բավարարելու լիազորություն ունեցող մարմինը չկա: Հետեւաբար, այստեղ առկա է օրենսդրական բաց, որի պատճառով էականորեն դժվարանում է տեղեկատվության ազատության իրավունքի դատական պաշտպանությունը: Փաստորեն, ԻԱԿ-ի հարուցած եւ ավարտված 17 գործերից 11-ի դեպքում թեեւ ԻԱԿ-ը պահանջել է վարչական պատասխանատվության ենթարկել պաշտոնյաներին, սակայն միայն մի դեպքում՝ Ելփիհի գյուղապետի դեմ գործով է բավարարվել այդ պահանջը:

Բացասական ավարտ ունեցած հինգ գործերից երկուսը հարուցվել են քաղաքական կուսակցությունների դեմ հրապարակայնության ապահովման պահանջով:

Այսպես, 2009թ.-ի ապրիլին ԻԱԿ-ը դիմել էր Երեւանի ավագանու ընտրություններին մասնակցած 8 կուսակցություններին՝ խնդրելով տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. 2008թ. ֆինանսական հաշվետվության պատճեն, որը կպարունակի «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված ողջ տեղեկատվությունը:
2. Օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից ավել արժողությամբ նվիրատվության աղբյուրների մասին տեղեկություն:

«Օրինաց երկիր» կուսակցության պատասխանը թերի էր եւ ժամկետների խախտմամբ, իսկ «Հայ ազգային կոնգրես» դաշինքն ԻԱԿ-ի հարցումը թողել էր անպատասխան: Ուստի, ԻԱԿ-ը դիմեց դատարան: Մի դեպքում Կենտրոն եւ Նորք Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը վճռեց ԻԱԿ-ի հայցն ընդդեմ «Օրինաց երկիր» կուսակցության մերժել⁷ պատճառաբանելով, որ եթե Ինֆորմացիայի ազատության կենտրոնն իրեն ուղարկված տեղեկատվությունը համարել է ոչ լիարժեք, ապա կարող էր գրավոր դիմումով հայտնել «Օրինաց երկիր» կուսակցությանը, իսկ եթե վերջինս անվճար չտրամադրեր ճշգրտված տվյալներ, ապա այդ դեպքում Նոր միայն խախտված կլիներ ՏԱ մասին ՀՀ օրենքի պահանջը:

Իսկ ՀԱԿ-ի դեպքում⁸ դատարանը որոշեց կարճել ԻԱԿ-ի հայցն այն հիմքով, որ համաձայն ՀՀ Զաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ դատարանում որպես պատասխանող կարող են հանդես գալ ֆիզիկական կամ իրավաբանական անձինք: Զանի որ Հայ Ազգային Կոնգրեսը կու-

7. Տես՝ Գործ 12, էջ 203:

8. Տես՝ Գործ 11, էջ 192:

սակցությունների դաշինք է, իսկ դաշինքը ոչ իրավաբանական անձ է, ոչ էլ՝ ֆիզիկական, ուստի այն չի կարող դատարանում հանդես գալ որպես պատասխանող: Այսինքն՝ չնայած համաձայն ՀՀ Ընտրական օրենսգրքի՝ դաշինքը որոշակի իրավունքներով եւ պարտականություններով օժտված մարմին է, ըստ դատարանի՝ «Հայ ազգային կոնգրես» դաշինքը պատշաճ պատասխանող չէ:

ԻԱԿ-ն ընդդեմ Փարաքարի գյուղապետի եւ գյուղապետարանի դատական գործի⁹ դեպքում նույնպես ԻԱԿ-ը դատական կարգով վիճարկել է ստացված տեղեկությունների ամբողջական եւ սպառիչ լինելը: Փարաքարի գյուղապետը դատարանում պարզաբանեց, որ ԻԱԿ-ի տեղեկատվություն ստանալու հարցմանը սպառիչ չի պատասխանել, քանի որ հողի՝ սեփականության իրավունքով չփոխանցվող ցանկը ներառում է այն հողային զանգվածները, որի վերաբերյալ կառավարության հատուկ որոշումներ են ընդունված, ուստի Փարաքարի գյուղապետարանը ԻԱԿ-ի պահանջած տեղեկատվությունը տրամադրելու համար չունի այդ հողատարածքի արգելքների վերաբերյալ կառավարության համապատասխան որոշումը: 2009թ.-ի օգոստոսի

13-ին ՀՀ վարչական դատարանը վճռեց ԻԱԿ-ի հայցն ընդդեմ Փարաքարի գյուղապետարանի մերժել՝ հաշվի առնելով Կառավարության համապատասխան ծրագրի բացակայությունը:

2009թ.-ի սեպտեմբերի 15-ին ԻԱԿ-ը ՀՀ վարչական դատարանի վճիռը բողոքարկեց վճռաբեկության կարգով: ՀՀ վճռաբեկ դատարանը ԻԱԿ-ի բողոքն ամբողջությամբ բավարարեց եւ գործն ուղարկեց նոր քննության:

Բացասական ավարտ ունեցած 4-րդ գործը ԻԱԿ-ն ընդդեմ «Երեւանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ի դատական գործն է¹⁰: Դատարանը մերժեց ԻԱԿ-ի հայցը՝ պատճառաբանելով, որ ՊՈԱԿ-ն ըստ էության պատասխանել է ԻԱԿ-ի տեղեկատվություն ստանալու հարցմանը. 1-ին կետով պահանջվող հարցին տրվել է հստակ պատասխան, իսկ 2-րդ եւ 3-րդ կետերով ներկայացված հարցերի պատասխանները պարունակում են առեւտրային գաղտնիք:

Բացասական ավարտ ունեցած հինգերորդ գործը ԻԱԿ-ի դիմումն է ՀՀ Սահմանադրական դատարանի՝

9. Տես՝ Գործ 6, էջ 129:

10. Տես՝ Գործ 15, էջ 248:

11. Տես՝ Գործ 17, էջ 276:

Բողոքարկումներ

Չորս դեպքում հնֆորմացիայի ազատության կենտրոնը վճռաբեկության կարգով բողոքարկել է դատարանի վճիռը: Այդ գործերն են.

- ԻԱԿ-ն ընդդեմ Փարաքարի գյուղապետարանի,
- ԻԱԿ-ն ընդդեմ Չարթոնքի գյուղապետարանի,
- ԻԱԿ-ն ընդդեմ Նոր Նորքի թաղապետարանի,
- ԻԱԿ-ն ընդդեմ «Երեւանի կառուցապատման եւ ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ի եւ ՊՈԱԿ-ի տնօրենի:

Մի դեպքում ԻԱԿ-ը ստիպված է եղել բողոքարկել դատարանի վճիռը՝ կապված տեղեկություններ տրամադրելու պահանջի մերժման հետ: Դա ԻԱԿ-ն ընդդեմ Փարաքարի գյուղապետարանի գործն է: ՀՀ Վարչական դատարանի այս վճիռը բողոքարկվել է վճռաբեկության կարգով: ՀՀ Վճռաբեկ դատարանը ԻԱԿ-ի բողոքը բավարարել է եւ գործն ուղարկել է դատական նոր քննության:

ԻԱԿ-ն ընդդեմ Չարթոնքի գյուղապետարանի դատական գործի շրջանակներում հնֆորմացիայի ազատության կենտրոնը ստիպված է եղել դատարանի տարբեր գործողությունների կամ որոշումների դեմ տարբեր ատյաններ բողոք ներկայացնել:

Այսպես, ԻԱԿ-ն ընդդեմ Չարթոնքի գյուղապետարանի դատական գործի դեպքում ՀՀ Վարչական դատարանը որոշեց Չարթոնքի գյուղապետի կարգավան պատասխանատվության

ենթարկելու մասին պահանջի մասով ԻԱԿ-ի հայցի ընդունումը մերժել: ԻԱԿ-ը ստիպված էր վերադասության կարգով բողոքարկել վերոնշյալ որոշումը: Վարչական դատարանը բավարարեց ԻԱԿ-ի բողոքը՝ որոշելով, որ ԻԱԿ-ի այդ պահանջը պետք է ընդունվի վարույթ¹²: Քանի որ Չարթոնքի գյուղապետը դատավարության ընթացքում տրամադրեց պահանջված տեղեկությունները, ԻԱԿ-ը հրաժարվեց բոլոր հայցապահանջներից, բացառությամբ Չարթոնքի գյուղապետի գործողությունները ոչ իրավաչափ ճանաչելու վերաբերյալ պահանջը: ՀՀ Վարչական դատարանն այս պահանջն էլ մերժեց՝ գտնելով, որ քանի որ ՀՀ Վարչական դատավարության օրենսգիրքը նման հայցատեսակ չի սահմանում, ապա այս պահանջի մասով նույնպես դատական գործը ենթակա է կարճման: ԻԱԿ-ը նորից ստիպված էր բողոքարկել ՀՀ Վարչական դատարանի որոշումը՝ այս անգամ վճռաբեկության կարգով: ՀՀ վճռաբեկ դատարանն իր որոշումը դեռ չի կայացրել:

Երկու դատական գործի դեպքում (ԻԱԿ-ն ընդդեմ «Երեւանի կառուցապատման եւ ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ի եւ դրա տնօրենի, ԻԱԿ-ն ընդդեմ Նոր Նորքի թաղապետարանի եւ թաղային համայնքի ղեկավարի) ԻԱԿ-ը դիմել է ՀՀ Սահմանադրական դատարան՝ խնդրելով լուծել այն հարցը, թե ի վերջո ի՞նչ կարգով է հնարավոր տեղեկություն ստանալու իրավունքը խախտած պաշտոնյային ենթարկել վարչական պատասխանատվության:

12. Տես՝ Գործ 16, էջ 266:

Գինում ՀՀ Սահմանադրական դասարան

Սպառելով դատական պաշտպանության բոլոր ատյաններ դիմելու հնարավորությունը՝ ԻԱԿ-ը դիմեց ՀՀ Սահմանադրական դատարան՝ վիճարկելով ոչ թե դատարանի ապօրինի վճիռը կամ որոշումը, այլ տեղեկատվության ազատության իրավունքի իրականացմանը խոչընդոտող իրավական նորմերի՝ ՀՀ Վարչական դատավարության օրենսգրքի 151 եւ 152 հոդվածների սահմանադրականությունը:

ԻԱԿ-ի՝ Սահմանադրական դատարան դիմելու նպատակն էր վերացնել օրենսդրական բացը՝ այդպիսով բացառելով այլ դատարանների դատավորների կողմից օրենքները երկակի եւ հակասական մեկնաբանելու հնարավորությունը:

2010թ.-ի փետրվարի 5-ին Սահմանադրական դատարանը որոշեց, որ ՀՀ Վարչական դատավարության օրենսգրքի 151 եւ 152 հոդվածները Սահմանադրությանը չեն հակասում: Սահմանադրական դատարանը արձանագրեց, որ խնդիրը կայանում է այս ոլորտում օրենսդրական բացի առկայության մեջ: Անհրաժեշտ է, որպեսզի իրավասու մարմինը, այսինքն՝ ՀՀ Ազգային ժողովը համապատասխան նախաձեռնություն իրականացնի՝ ՀՀ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում բարեփոխումներ կատարելու եւ վարչական պատասխանատվության ենթարկելու ինստիտուտի օրենսդրական բացը լրացնելու համար:

Չավարսված գործեր

2007-2010թ.թ. ընթացքում ԻԱԿ-ի նախաձեռնած 20 դատական գործերից 3-ը 2010թ.-ի ապրիլի դրությամբ դեռևս չեն ավարտվել: Այդ գործերն են.

- ԻԱԿ-ն ու «Առավոտ» օրաթերթն ընդդեմ Լոռու մարզպետարանի,
- ԻԱԿ-ն ու «Առավոտ» օրաթերթն ընդդեմ Շիրակի մարզպետարանի,
- ԻԱԿ-ն ընդդեմ «Թիվ 2 բուժմիավորում» ՓԲԸ-ի:

ԻԱԿ-ի սեղեկություն ստանալու հարցումները

ԻԱԿ-ի նախաձեռնած դատական գործերի վերլուծությունը ցույց է տալիս, թե ինչ տեղեկություններ չտրամադրելու համար են պաշտոնյաները հիմնականում հայտնվում դատական գործընթացում: Այսպիսով.

- ԻԱԿ-ն ընդդեմ «Հայ ազգային կոնգրես» դաշինքի, ԻԱԿ-ն ընդդեմ «Օրինաց երկիր» կուսակցության եւ ԻԱԿ-ն ընդդեմ Հայաստանի աշխատավորական սոցիալիստական կուսակցության.
1. Դաշինքի/կուսակցության 2008թ.-ի ֆինանսական հաշվետվության պատճեն:
 2. Օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից ավել արժողությամբ նվիրատվության աղբյուրների մասին տեղեկություն:

- ԻԱԿ-ն ընդդեմ Ելփինի գյուղապետարանի, ԻԱԿ-ն ընդդեմ Բջնիի գյուղապետարանի եւ ԻԱԿ-ն ընդդեմ Չարթոնքի գյուղապետարանի.

1. Համայնքի 2008թ. բյուջեն,
 2. Համայնքի 2008թ. բյուջեի կատարման հաշվետվության պատճեն:
- ԻԱԿ-ն ընդդեմ Լեւոնուզու գյուղապետարանի եւ ԻԱԿ-ն ընդդեմ Տալվորիկի գյուղապետարանի.
1. Համայնքի 2008թ. բյուջեի պատճեն,
 2. 2008թ. 2-րդ կիսամյակի ընթացքում հողհատկացումների վերաբերյալ համայնքի ավագանու կայացրած որոշումների պատճենները:
- ԻԱԿ-ն ընդդեմ Նոր Նորքի թաղապետարանի, ԻԱԿ-ն ընդդեմ Դավթաշենի թաղապետարանի եւ ԻԱԿ-ն ընդդեմ Արաբկիրի թաղապետարանի.
1. Համայնքին սեփականության իրավունքով քանի՞ բնակարան է պատկանում (այդ թվում համայնքի հաշվեկշռում քանի՞ բնակարան է գրանցված), որոնցում բնակվում են այն բնակիչները, որոնք չեն սեփականաշնորհել իրենց բնակարանները:
 2. Խնդրում ենք հայտնել այդ բնակարանների հասցեները:
 3. Թաղապետարանը քանի՞ հայց է հարուցել սեփականության իրավունքով համայնքին պատկանող վերը նշված բնակարաններից բնակիչներին վտարելու պահանջով:
 4. Խնդրում ենք, ներկայացնել այդ դատական գործերի ելքի մասին տեղեկատվություն (քանի՞սն է բավարարվել, քանի՞սը՝ մերժվել):

- ԻԱԿ-ն ու «Առավոտ» օրաթերթն ընդդեմ Լոռու մարզպետարանի եւ ԻԱԿ-ն ու «Առավոտ» օրաթերթն ընդդեմ Շիրակի մարզպետարանի դատական գործերի դեպքում Լոռու եւ Շիրակի մարզպետները հայտնվել են դատական գործընթացում, քանի որ չեն տրամադրել հետեւյալ տեղեկությունները. «սկսած 2005 թվականից, ՀՀ պետական բյուջեով, բացի մարզպետարանների պահպանման ծախսերից, «Այլ նպաստներ բյուջեից» տողով ՀՀ մարզպետարանները գումարներ են ստանում: 2005, 2006, 2007 թվականներին յուրաքանչյուր մարզպետարան ստացել է 10-ական միլիոն դրամ, իսկ 2008 եւ 2009 թվականներին՝ 20-ական միլիոն: Խնդրում եմ պատասխանել հետեւյալ հարցերին.
1. Ի՞նչ նպատակներով են ծախսվել այդ գումարները՝ ըստ տարիների:
 2. Խնդրում եմ մանրամասնել՝ ամեն տարի քանի՞ որոշում է կայացվել, ինչքա՞ն գումար է ծախսվել ամեն որոշմամբ»:
- ԻԱԿ-ն ընդդեմ «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի.
1. Մինչեւ սույն թվականի օգոստոսի 1-ը ՊՈԱԿ-ի ռեեստրում փորձաքննություն իրականացնող քանի՞ մասնավոր ընկերություն է գրանցված եւ այդ ընկերություններն ու՞մ անունով են գրանցված: Նշեք հավատարմագիր ստացած ընկերությունների անունները:
 2. Տրամադրեք նաեւ ՊՈԱԿ-ի աշխատողների 2008 եւ 2009 թվականներ
- ի հաստիքացուցակներն ու նույն ժամանակահատվածի աշխատողների աշխատավարձերի չափը հաստատող ցուցակը:
- ԻԱԿ-ն ընդդեմ «Թիվ 2 բուժմիավորում» ՓԲԸ-ի.
1. Թիվ 2 բուժմիավորման մանկական պոլիկլինիկայում մինչեւ 7 տարեկան երեխաներին տրամադրվող դեղերի հատկացման կարգը:
 2. Առկա անվճար տրամադրվող դեղերի ցուցակի պատճեն:
 3. Նաեւ տեղեկացնել, որ եթե երեխան հիվանդ է եւ բուժման համար անհրաժեշտ դեղորայքը ներառված չէ վերոնշյալ ցուցակում, ապա կա՞ այլ տարբերակ՝ մինչեւ 7 տարեկան երեխային անվճար տրամադրելու այդ դեղը:
 4. Ի՞նչ անի ծնողը, եթե անվճար տրամադրվող դեղերի ցուցակում կա դեղ, որի կարիքն ունի հիվանդ երեխան, եւ այն բժշկի կողմից չի տրամադրվում:
- ԻԱԿ-ն ընդդեմ Փարաքարի գյուղապետարանի.
1. Փարաքար գյուղի Մեքենագործների փ. 1-ին շենքի մոտով անցնող մայր առվի ձախ ափին, ճանապարհին կից տարածքում գտնվող 250-260քմ հողամասը ներառված է արդյոք ՀՀ հողային օրենսգրքի 60 հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում:
 2. Եթե այո, խնդրում եմ հայտնել, թե ի՞նչ հիմքով եւ պատճառով,
 3. Եթե ոչ, խնդրում եմ հայտնել այդ մասին:

- ԻԱԿ-ն ընդդեմ «Երեւանի կառուցապատման եւ ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ի.
1. «Երեւանի կառուցապատման եւ ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ի ֆինանսավորումը ՀՀ պետական բյուջեից 2006, 2007 եւ 2008թ.թ.-ին որքա՞ն գումար է կազմել:
 2. «Երեւանի կառուցապատման եւ ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ը 2006, 2007 եւ 2008թ.թ.-ին ո՞ր կազմակերպությունների հետ է կնքել հանձնարարության եւ նկարագրության պայմանագրեր:
 3. «Երեւանի կառուցապատման եւ ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ը 2006, 2007 եւ 2008թ.թ.-ին որքա՞ն

հասույթ է ստացել հանձնարարության եւ նկարագրության պայմանագրերից:

- ԻԱԿ-ն ընդդեմ Հրազդանի քաղաքապետարանի.

2007թ. երկրորդ եռամսյակի ընթացքում Հրազդանի քաղաքապետի եւ ավագանու կողմից ընդունված որոշումների պատճենները:

Այս վիճակագրությունը ներկայացված է ըստ Ինֆորմացիայի ազատության կենտրոնի նախաձեռնած 18 դատական գործերի: Երկու դատական գործ ներառված չեն, քանի որ դրանք չեն վերաբերում պաշտոնյայից տեղեկատվություն ստանալուն: Դրանք են ԻԱԿ-ն ընդդեմ Վարչական դատարանի որոշման գործը եւ ԻԱԿ-ի՝ Սահմանադրական դատարան ներկայացված բողոքը:

SU իրավունքը խախտած

մարմինները

2007-2010թ.թ.-ին ԻԱԿ-ի և խաձեռնած դատական գործերը ցույց տվեցին, թե տեղեկատվություն տնօրինող որ մարմիններն են առավել հաճախ խախտել տեղեկատվության ազատության իրավունքը եւ հայտնվել դատարանում:

Այսպիսով, ըստ դատական գործերի՝ տեղեկատվության ազատության ոլորտում ամենաշատ խախտումները թույլ են տվել գյուղապետարանները. ԻԱԿ-ի և խաձեռնած դատական գործերից 6-ի դեպքում պատասխանող կողմ եղել են գյուղապետարանները՝ Ելփիկի, Տալվորիկի, Չարթոնքի, Լենուղու, Փարաքարի եւ Բջնիի: Հաջորդ հորիզոնականում կուսակցությունները եւ թաղապետարաններն են. տեղեկություն ստանալու իրավունքը խախտելու համար ԻԱԿ-ը հայց է ներկայացրել երեք կուսակցության («Հայ ազգային կոնգրես» դաշինք, «Օրինաց երկիր» կուսակցություն եւ Հայաստանի աշխատավորական սոցիալիստական կուսակցություն) եւ երեք թաղապետարանի (Նոր Նորքի, Դավթաշենի եւ Արաբկիրի թաղապետարաններ) դեմ:

2007-2010թ.թ.-ին տեղեկատվության ազատության իրավունքը խախտելու համար դատարանում է հայտնվել 2

մարզպետարան (Լոռու եւ Շիրակի մարզպետարաններ) եւ 2 պետական ոչ առևտրային կազմակերպություն («Երեւանի կառուցապատման եւ ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» եւ «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ները): Նույն ժամանակահատվածում ԻԱԿ-ի հարցումն առանց պատշաճ պատասխանի թողել է միայն մեկ քաղաքապետարան՝ Հրազդանը, եւ մեկ հանրային նշանակության կազմակերպություն՝ «Թիվ 2 բուժմիավորում» ՓԲԸ-ը, որի համար էլ հայտնվել են դատարանում:

Այսպիսով ՏԱ իրավունքը խախտել են.

- Գյուղապետարաններ 6 գործ,
- Կուսակցություններ 3 գործ,
- Թաղապետարաններ 3 գործ,
- Մարզպետարաններ 2 գործ,
- Պետական ոչ առևտրային կազմակերպություններ 2 գործ,
- Զաղաքապետարաններ 1 գործ,
- Հանրային նշանակության կազմակերպություններ 1 գործ:

ՏՄ դասական որակցիկայի

խնդիրները

Ինֆորմացիայի ազատության կենտրոնի նախաձեռնած դատական գործերը հնարավորություն տվեցին մի շարք վերլուծություններ անել տեղեկատվության ազատության ոլորտում արդարադատության իրականացման պրակտիկայի շուրջ եւ վերհանել տեղեկատվության ազատության իրավունքի իրականացմանը խոչընդոտող մի քանի խնդիրներ:

1. Դատարանների կախվածությունը գործադիր իշխանությունից

Ինֆորմացիայի ազատության կենտրոնի նախաձեռնած դատական գործերի վերլուծությունը ցույց տվեց, որ դատարանները խուսափում են պաշտոնյաներին ենթարկել վարչական պատասխանատվության: Այս երեւոյթի հիմնական պատճառներից մեկը կարող է լինել դատարանի կախվածությունը գործադիր իշխանությունից: Այս կախվածությունն իրապես կաշկանդում է դատարաններին պաշտոնյաների դեմ անկողմնակալ վճիռներ կայացնելիս:

2. Դատական ակտերի չկատարում

Որոշ դեպքերում դատարանի վճիռն անվերապահորեն չի կատարվել սահմանված ժամկետներում: Ինֆորմացիայի ազատության կենտրոնի նախաձեռնած եւ ավարտված 17 դատական գործերից 2-ի դեպքում Ինֆորմացիայի ազատության կենտրոնը ստիպված է եղել դիմել Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայություն՝ պաշտոնյային դատարանի վճիռը կատարելուն պարտավորեցնելու համար:

3. Դատարանի նկատմամբ վստահության պակաս

2007-2010թ.թ. ընթացքում տեղեկատվության ազատության ոլորտում դատական գործեր նախաձեռնողը հիմնականում հասարակական կազմակերպություններն են եւ ոչ քաղաքացիները: Չնայած այն փաստին, որ բազմաթիվ մարդիկ են դիմում Ինֆորմացիայի ազատության կենտրոն իրենց տեղեկություններ ստանալու հարցում օգնելու համար, սակայն քաղաքացիները ձեռնպահ են մնում տեղեկատվության ազատության իրավունքի դատական պաշտպանության խնդրանքով դիմելուց: Սա ցույց է տալիս, որ մարդկանց մոտ դատարանների հանդեպ վստահության պակաս կա:

4. Իրազեկման պակաս

Անգամ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի ընդունումից 7 տարի անց դեռեւս կան պաշտոնյաներ, ովքեր անտեղյակ են այս օրենքից: Լինում են դեպքեր, երբ Ինֆորմացիայի ազատության կենտրոնը ստիպված է լինում տեղեկատվություն ստանալու հարցմանը պատասխանելու համար օրենքով սահմանված ժամկետների կամ օրենքով սահմանված մերժման հիմքերի եւ պատշաճ հիմնավորման վերաբերյալ պարզաբանումներ տալ, տեղյակ պահել դրանց գոյության մասին՝ պահանջելով տեղեկատվություն ստանալու իր հարցումներին սահմանված ժամկետում պատշաճ պատասխան կամ պատշաճ ձեւով հիմնավորված մերժում տալ:

5. Անկատար օրենսդրական դաշտ

Տեղեկատվության ազատության ոլորտում առկա խնդիրներից է այս ոլորտում անկատար օրենսդրական դաշտի առկայությունը: Խնդիրն ինչպես տեղեկատվության ազատության ոլորտը կարգավորող իրավական ակտերի պակասը եւ տեղեկատվության ազատության ոլորտում որոշ հարցերի՝ իրավական ակտերով չկարգավորված լինելն է, այնպես էլ տեղեկատվության ազատության իրավունքի իրականացմանը խոչընդոտող, հակասությունների տեղիք տվող այլ իրավական ակտերում առկա դրույթներն են կամ անհրաժեշտ դրույթների բացակայությունն է:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը գործում է շուրջ 6 տարի, սակայն երկու ենթաօրենսդրական ակտեր, որոնք նախատեսված են այս օրենքով եւ անհրաժեշտ են տեղեկատվության ազատության ապահովման համար, այդպես էլ չընդունվեցին: Այժմ, Ինֆորմացիայի ազատության կենտրոնի նախաձեռնությամբ, ՀՀ ԱԺ պատգամավոր Վիկտոր Դալլաքյանի եւ ՀՀ Արդարադատության նախարարության կողմից մշակվել է «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի բարեփոխումների փաթեթ: ԻԱԿ նախաձեռնությամբ կազմակերպվել են քննարկումներ, որոնց հիման վրա օրենսդրական փաթեթում կատարվել են փոփոխություններ եւ լրամշակումներ: Այս օրենսդրական փաթեթով նախատեսվում է հանել տեղեկություններ ստանալու իրավունքի կիրառումն ապահովող ենթաօրենսդրական ակտեր ընդունելու՝ ՀՀ Կառավարության վրա դրված պարտականությունը: Փոխարենը, այն հարցերը, որոնք պետք է կարգավորվեն ենթա-

օրենսդրական ակտերով, կներառվեն հենց օրենքի մեջ՝ վերջ տալով տարակարծություններին եւ ենթաօրենսդրական ակտերի բացակայության հիմնավորմամբ տեղեկատվություն ստանալու հարցումները մերժելու արատավոր պրակտիկային:

6. Իրավական նորմերի հակասական մեկնաբանում դատարանների կողմից

Որոշ դեպքերում տեղեկատվության ազատության ոլորտին չվերաբերող տարբեր իրավական ակտերի ոչ լիարժեք լինելու պատճառով օրենսդրական կազուս է առաջանում, որի արդյունքում տուժում է տեղեկատվության ազատության իրավունքը: Այսպես, Ինֆորմացիայի ազատության կենտրոնը փորձեց դատական կարգով պաշտպանել տեղեկություններ ստանալու իր իրավունքը՝ տեղեկություններ տրամադրելու պահանջի մասին հայց ներկայացնելով դատարան ընդդեմ «Հայ ազգային կոնգրես» դաշինքի, որը ԻԱԿ-ի հարցումը թողել էր անպատասխան: Այս գործի ընթացքում առաջ եկավ հետեւյալ խնդիրը. Հայ Ազգային Կոնգրեսը կուսակցությունների դաշինք է, իսկ դաշինքը, համաձայն ՀՀ օրենսդրության, ոչ իրավաբանական, ոչ էլ ֆիզիկական անձ է: ՀՀ Զաղաքացիական դատավարության օրենսգրքի համաձայն՝ դատարանում որպես պատասխանող կարող են հանդես գալ ֆիզիկական կամ իրավաբանական անձինք: Այս հիմքով էլ Կենտրոն եւ Նորք Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը որոշեց կարճել ԻԱԿ-ի հայցն ընդդեմ «Հայ ազգային կոնգրես» դաշինքի: Բացի այն, որ օրենսդրական այս բացը խոչընդոտեց տեղեկատվության ազատության իրա-

վունքի իրականացմանը, այն նաեւ առաջացրեց հակասություն ՅՅ Զաղաքացիական դատավարության եւ ՅՅ Ընտրական օրենսգրքի միջեւ, քանի որ ՅՅ Ընտրական օրենսգիրքը նախատեսում է դաշինքին դատական կարգով պատասխանատվության ենթարկելու հնարավորություն, իսկ ՅՅ Զաղաքացիական դատավարության օրենսգիրքն այդ հնարավորությունը բացառում է:

Նման պայմաններում կարելուորագույն նշանակություն է ստանում դատարանի ընտրությունը, այսինքն՝ թե որ իրավական ակտին է դատարանը նախապատվություն տալիս, որ իրավական ակտով է առաջնորդվում: Հանդիպելով տարբեր՝ միեւնույն իրա-

վաբանական ուժ ունեցող իրավական ակտերի միջեւ հակասության՝ դատավորը պետք է կարողանա ճիշտ կողմնորոշվել, վերհանել գերակշռող շահը, առաջնորդվել այն իրավական ակտով, որի կիրառումը կապահովի խախտված իրավունքի վերականգնում: Տեղեկատվության ազատության դատական պրակտիկան, սակայն, հակառակ պատկերն է ցույց տալիս. դատավորներն առավել հաճախ օգտագործում են իրավական ակտերի միջեւ հակասությունը դատական գործերը կարճելու համար՝ խուսափելով դրանց ըստ էության լուծում տալուց:

Եզրակացություն

Չնայած տեղեկատվության ազատության իրավունքի իրականացման ոլորտում առկա խնդիրներին, տեղեկատվության ազատության իրավունքի պաշտպանության դատական պրակտիկան չէր կարող չունենալ դրական արդյունքներ: Առաջընթացն ակնհայտ է. արդեն կայացել է պաշտոնյային տեղեկությունն չտրամադրելու համար վարչական պատասխանատվության՝ տուգանքի ենթարկելու առաջին վճիռը, Տեղեկատվության ազատության մասին օրենսդրական բարեփոխումների փաթեթը գտնվում է ՀՀ Ազգային ժողովի օրակարգում:

Տեղեկատվության ազատության վերաբերյալ դատական յուրաքանչյուր գործ ինքնին արդեն ունի հսկայական կրթական նշանակություն: Անկախ վերջնական արդյունքից՝ դատական գործերը լայնորեն լուսաբանվում են զանգվածային լրատվամիջոցների կողմից: Այդպիսով, այդ գործերն արժանանում են քաղաքացիների և պաշտոնյաների ուշադրությանը՝ ավելացնելով տեղեկատվության ազատության իրավունքի մասին իրազեկությունը: Բացի այդ՝ դատական գործերը տեղեկատվության ազատության իրավունքի խախտումները կանխարգելող նշանակություն ունեն: Դրանք յուրատեսակ նախազգուշացում են պաշտոնյաներին այն մասին, որ տեղեկատվության ազատության իրավունքի իրականացմանը խոչընդոտելու դեպքում նրանք պարտավոր են պատասխան տալ դատարանում:

Դրական ելք ունեցող դատական գործերը նաև ունեն նախադեպային նշանակություն: Դատավորը, հարգե-

լով իր գործընկերներին, հաշվի է առնում նրանց կայացրած վճիռները՝ նմանատիպ գործերում կայացնելով նմանատիպ վճիռ:

Տեղեկատվության ազատության վերաբերյալ դատական գործերի պրակտիկան, նման գործերի առկայությունը և շատ դեպքերում դրական ավարտը հանգեցրին որոշակի առաջընթացի նաև դատական գործերի մասսայականացման առումով: Չնայած քաղաքացիները դեռևս չեն դիմում անմիջականորեն դատարան կամ անգամ իրավաբանական ծառայություններ մատուցող կազմակերպություններին իրենց տեղեկությունն ստանալու իրավունքի պաշտպանության համար, սակայն արդեն ընթացք է տրվել երկու դատական գործի, որոնց դեպքում Ինֆորմացիայի ազատության կենտրոնի հետ միասին համահայցվոր է նաև զանգվածային լրատվամիջոցը՝ «Առավոտ» օրաթերթը: Տեղեկատվության ազատության վերաբերյալ դատական գործերը տեղեկություն ստանալու իրավունքի պաշտպանության միջոց են դառնում նաև զանգվածային լրատվամիջոցների համար:

Մինչ 2007թ.-ը տեղի ունեցած տեղեկատվության ազատության վերաբերյալ դատական գործերի վերլուծությունը ցույց է տալիս, որ 2007թ.-ից հետո նույնպես ՏԱ դատական պրակտիկայի խնդիրները մնացել են նույնը, սակայն փոխվել է դրանց բովանդակությունը. եթե նախկինում դատարանները խուսափում էին ամրագրել պաշտոնյայի կողմից տեղեկություններ տալու պարտականությունը, ապա այժմ, պաշտոնյաների կողմից տեղե-

կատվության ազատության իրավունքի խախտման փաստը եւ տեղեկություններ տրամադրելու պարտականությունը նշելով՝ խուսափում են պաշտոնյաներին ենթարկել վարչական պատասխանատվության:

Տեղեկատվության ազատության դատական պրակտիկայի վերլուծությունը հանգեցրեց մի շարք խնդիրների վերհանման: Այդ խնդիրները խոչընդոտում են տեղեկատվության ազատության, տեղեկություններ փնտրելու եւ ստանալու իրավունքի իրականացմանը, հետեւաբար նաեւ բարձր իրավագիտակցությամբ օժտված քաղաքացիական հասարակության ձեւավորմանը: Դրական արդյունքներն ինքնաբերաբար ի հայտ չեն գալիս. դրական արդյունքներ, հետեւաբար նաեւ ոլորտում առավել կատարյալ օրենսդրական դաշտ եւ իրավունքի պատշաճ կիրառում ապահովելու համար անհրաժեշտ է հաղթահարել առկա խոչընդոտները: Դրա համար անհրաժեշտ է քաղաքացիների եւ հասարակական կազմակերպությունների ակտիվ գործունեություն: Կարելի է առանձնացնել այդպիսի գործունեության մի քանի հիմնական ուղղություններ:

Ա. Բողոքարկում վերադասության կարգով

ԻԱԿ-ը տեղեկություններ ստանալու գրավոր հարցումով դիմել էր Արարատի մարզպետարան, սակայն պատասխան չէր ստացել: Սակայն այն բանից հետո, երբ ԻԱԿ-ը Արարատի մարզպետի անգործությունը բողոքարկեց ՀՀ Տարածքային կառավարման նախարար Արմեն Գեւորգյանին, ԻԱԿ-ին տրամադրվեց սպառնիչ պատասխան: Այսպիսով, վերադասության կարգով բողոքարկումը նույնպես կարող է դրական արդյունք ունե-

նալ: Վերադասի պատշաճ վերահսկողությունը կարող է մեծապես նվազեցնել ենթակաների կողմից իրավախախտումների, անարդար որոշումների կայացումը: Բացառությունն չեն նաեւ դատարանները: Մի շարք դեպքերում Ինֆորմացիայի ազատության կենտրոնը վարչական դատարանի որոշումը բողոքարկել է վերադասության կարգով՝ վարչական դատարանի նախագահին: Մի դեպքում (ԻԱԿ-ն ընդդեմ «Երեւանի կառուցապատման եւ ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿի եւ ՊՈԱԿ-ի տնօրենի) բողոքարկումն ունեցել է բացասական, մի այլ դեպքում էլ (ԻԱԿ-ն ընդդեմ Չարթնքի գյուղապետարանի)՝ դրական արդյունք:

Բ. Դիմում Սահմանադրական դատարան

Տեղեկատվության ազատության, տեղեկություններ փնտրելու եւ ստանալու՝ մարդու իրավունքն ամրագրված է ՀՀ Սահմանադրությամբ: Սակայն որոշ իրավական ակտերի դրույթներ հնարավորություն են տալիս պաշտոնյաներին խուսափել պատասխանատվությունից՝ խախտելով տեղեկատվության ազատության իրավունքը: Որպես կանոն, նման դեպքերում դատարանները ձեռնպահ են մնում իրավունքի մեկնաբանումներից՝ նախընտրելով դատական հայցերը մերժել: Ինֆորմացիայի ազատության կենտրոնը նման խնդրի հանդիպել է «Երեւանի կառուցապատման եւ ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿի եւ ՊՈԱԿ-ի տնօրենի եւ Նոր Նորքի թաղապետարանի եւ թաղային համայնքի ղեկավարի դեմ դատական գործերի ժամանակ: Այս պարագայում կարելի էր դեմ է ստանձնում Սահմանադրական դատարանը: Հենց

Սահմանադրական դատարանին է վերապահված իրավական ակտերի կամ ակտերի առանձին նորմերի սահմանադրականության հարցի որոշումը: Ուստի, Սահմանադրական դատարան դիմելու միջոցով հնարավոր է վերացնել օրենսդրական բացը, որոշ դեպքերում էլ՝ լրացնել այլ դատարանների դատավորների անհամարձակությունը:

Գ. Օրենսդրական բարեփոխումներ

Անգամ դատավորների կողմից մեծ ցանկություն եւ աջակցություն ցուցաբերելու դեպքում տեղեկատվության ազատության իրավունքի իրականացումն անհնար կլինի առանց օրենսդրական բավարար հիմքի: Տեղեկատվության ազատության վերաբերյալ օրենսդրական դաշտում առկա են բացթողումներ կամ թերություններ: Դրանք անհրաժեշտ է վերացնել: Ինչպես արդեն նշվել է, Ինֆորմացիայի ազատության կենտրոնի նախաձեռնությամբ, ՀՀ ԱԺ պատգամավոր Վիկտոր Դալլաքյանի եւ ՀՀ Արդարադատության նախարարության կողմից մշակվել է «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի բարեփոխումների փաթեթ, որի ընդունման արդյունքում մի շարք կարելու է հարցեր կստանան իրենց լուծումը: Օրինակ՝ նախատեսվում են էլեկտրոնային հարցումներ կամ առաջարկվում է «ՏԱ մասին» ՀՀ օրենքից հանել տեղեկություններ ստանալու իրավունքի կիրառումն ապահովող ենթաօրենսդրական ակտեր ընդունելու՝ ՀՀ Կառավարության վրա դրված պարտականությունը եւ այդ հարցերը կարգավորել հենց «ՏԱ մասին» ՀՀ օրենքով:

Դ. Դատավորների ուսուցումներ:

Տեղեկատվության ազատության իրավունքի պատշաճ պաշտպանության եւ իրականացման համար անհրաժեշտ է այս ոլորտի եւ իրավունքի վերաբերյալ գիտելիքներ եւ իրազեկման ավելացում: Ինֆորմացիայի ազատության կենտրոնը կազմակերպում է ուսուցումներ եւ քննարկումներ, որոնց ժամանակ պարզաբանվում են «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի դրույթները, օրենքի տրամաբանությունը, նաեւ՝ տեղեկատվության ազատության իրավունքի նշանակությունը եւ կարեւորությունը: Անհրաժեշտ է ուսուցումներ կազմակերպել նաեւ դատավորների եւ դատական համակարգի աշխատողների համար:


Ե. Խրախուսում

Տեղեկատվության ազատության իրավունքի իրականացման համար կարելու է նշանակություն ունի մի կողմից քաղաքացիների ձգտումը՝ պաշտպանել իրենց իրավունքը, եւ մյուս կողմից՝ պաշտոնյաների ձգտումը՝ աշխատել հրապարակային եւ թափանցիկ, դատավորների ձգտումը՝ իրականացնել տեղեկատվության ազատության իրավունքի պատշաճ պաշտպանություն: Այս առումով մեծ դեր կարող են ունենալ տեղեկատվության ազատության իրավունքի վերաբերյալ տարբեր միջոցառումները: Ամեն տարի Տեղեկատվության ազատության միջազգային օրը՝ սեպտեմբերի 28-ին, Ինֆորմացիայի ազատության կենտրոնը կազմակերպում է մրցանակաբաշխություն, որի ժամանակ մրցանակներ՝ «Ոսկե բանալի»-ներ են շնորհ-

վում տեղեկատվության ազատության իրավունքի պաշտպանության առումով կարելու վճիռ կայացրած դատավորին, ամենահրապարակային եւ թափանցիկ աշխատող պաշտոնյային, տեղեկատվության ազատության իրավունքի իրականացման ոլորտում ամենաակտիվ քաղաքացուն եւ այլն:

Իսկ ամենափակը ճանաչված կամ տեղեկատվության ազատության իրավունքը խախտած պաշտոնյաներն արժանանում են «Ժանգոտ կողպեք»-ի: Բնականաբար, «Ոսկե բանալի»-ն բարձրացնում է պաշտոնյայի կամ տվյալ մարմնի նկատմամբ քաղաքացիների վստահությունը, իսկ «Ժանգոտ կողպեք»-ը մեծ հարված է պաշտոնյայի քաղաքական հեղինակությանը:

ՏՎ դատական պրակտիկային, բոլոր գործերի մանրամասներին եւ դատարանների վճիռներին կարող եք ծանոթանալ ԻԱԿ-ի պաշտոնական կայքի «Ռազմավարական դատավարություն» բաժնում՝ <http://www.foi.am/am/rcontent/14/>



Դ Ա Տ Ա Կ Ա Ն

Գ Ո Ր Ծ Ե Ր

2007-2010

Հանուն Հայաստանի Հանրապետության
 ՎԵՒՅ
 և Լորդ-Սարաշ վարչական շրջանների ընդհանուր
 դատարանի ներկայ կազմով
 ուրյանը դատախոզ
 ությանը
 Ս. Սուքոյանի
 Ս. Արդյանի
 անվան նիստում քննելով թաղաքացիական գործն ըստ հայտի
 ներքին» հասարակական կազմակերպության ԴՆԳԳ 02568394,
 179.01833/ ընդրեն «Չայ Ազգային Կոնգրես» դաշինքի՝
 պարտավորելու պահանջի մասին

Լորդ-Սարաշ համայնքների ընդհանուր իրավասության
 սրբադիմումն ընդունվել է վարույթ:
 սրբապատկարաստվել է դատաքննության:
 շանակվել է դատաքննության:
 որպես պատասխանող նշված անձը, աստիճան մասին
 մեղմամանին և վայրի մասին, չեն ներկայացրել
 արագաշահմանի հանրապետության շտաբային
 նորմերի 2-րդ մասով, գործը քննել է նույն
 միջանդ, դիմելով դատարան հայտելու
 իրավասության կազմակերպությունը 21.04.2009
 Չայ Ազգային Կոնգրես» դաշինքին՝ ներկայ
 7. «Չայ Ազգային Կոնգրես» դաշինքի ստեղծման
 «Չայ Ազգային Կոնգրես» դաշինքի ստեղծման
 արժեքի հարյուրապատիկին՝ լավին արժողությանը
 արվելու: Սակայն «Չայ Ազգային Կոնգրես»
 անել և պահանջվող տեղեկատվությունը չի
 99 Սահմանադրության 27-րդ հոդվածի 2-րդ
 ի դրսով ապատության իրավունքը, ներառյալ,
 ստանալու ապրանքներ ազատություն
 տալան ստիճանները:

Հանուն Հայաստանի Հանրապետության
 ՎԵՒՅ
 27.12.2009թ.
 Կոնգրեսի Կենտրոնի և Լորդ-Սարաշ վարչական շրջանների ընդհանուր
 դատարանի ներկայ կազմով
 Ս. Սուքոյանի
 Ս. Արդյանի
 09.12.2009թ. որոշող դատարան նիստում քննելով թաղաքացիական գործն
 «Կոնգրեսի Կենտրոնի և Լորդ-Սարաշ վարչական շրջանների ընդհանուր
 դատարանի ներկայ կազմով» հասարակական կազմակերպության ԴՆԳԳ
 02568394, 211.171.01833/ ընդրեն «Չայ Ազգային Կոնգրես»
 տեղեկատվություն ստանալու պահանջի մասին

Դ Ա Ր Ծ Յ
 31.01.2010 թ. Կոնգրեսի Կենտրոնի և Լորդ-Սարաշ վարչական շրջանների ընդհանուր
 դատարանի ներկայ կազմով քննելով թաղաքացիական գործն
 «Կոնգրեսի Կենտրոնի և Լորդ-Սարաշ վարչական շրջանների ընդհանուր
 դատարանի ներկայ կազմով» հասարակական կազմակերպության ԴՆԳԳ
 02568394, 211.171.01833/ ընդրեն «Չայ Ազգային Կոնգրես»
 տեղեկատվություն ստանալու պահանջի մասին

Գործ 1.

**Ինֆորմացիայի ազատության
կենսրոնն
ընդդեմ**

Տրազդանի ֆադաֆադեսարանի

Գործի համառոտ նկարագրությունը

2007թ. նոյեմբերի 2-ին «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ն գրավոր դիմել էր Հրազդանի քաղաքապետին՝ խնդրելով տրամադրել 2007թ.-ի երկրորդ եռամսյակի ընթացքում Հրազդանի քաղաքապետի եւ ավագանու կողմից ընդունված որոշումների պատճենները:

Պատասխանողից ոչ գրավոր, ոչ բանավոր պատասխան չստանալուց հետո 2007թ. նոյեմբերի 11-ին՝ 20 օր անց, ԻԱԿ-ը դիմումով դիմել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին: Պաշտպանը, ուսումնասիրելով դիմումում ներկայացված փաստերը, ընդունեց այն քննարկման: ԻԱԿ-ի դիմումի կապակցությամբ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը պարզաբանումներ էր ուզել Հրազդանի քաղաքապետից: Վերջինս տեղեկացրել էր, թե իբր ԻԱԿ-ի նախագահի հետ հեռախոսազրույցում բանավոր համաձայնության են եկել, որ տեղեկությունները կտրամադրեն համապատասխան վճարը վճարելուց հետո:

Սակայն ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյանը հավաստում է, որ նմանատիպ որեւէ բանավոր պայմանավորվածություն չի եղել իր եւ Հրազդանի քաղաքապետարանի միջեւ: Ավելին, Շ. Դոյդոյանը նշում է, որ իրենց գրավոր հարցմանն անպայման պետք է գրավոր պատասխան տրվեր, ինչպես նախատեսում է «Տեղեկատվության ազատության մասին» օրենքը, ինչը չի արվել Հրազդանի քաղաքապետարանի կողմից՝ այդպիսով խախտելով կազմակերպության տեղեկատվություն ստանալու իրավունքը: Հրազդանի քաղաքապետարա-

նից ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հաղորդելով ոչ ճիշտ տեղեկատվություն, վերջինիս թուրիմացության մեջ են գցել, որի արդյունքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանն ընդունել է ԻԱԿ-ի կողմից ստացված դիմում-բողոքի քննարկումը դադարեցնելու մասին որոշում:

2008թ. հունիսին ԻԱԿ-ը դիմեց ՀՀ վարչական դատարան՝ պահանջելով պարտադրել Հրազդանի քաղաքապետին տրամադրել 2007թ. երկրորդ եռամսյակի ընթացքում Հրազդանի ավագանու կողմից կայացված որոշումների եւ 2007թ. երկրորդ եռամսյակի ընթացքում Հրազդանի քաղաքապետի կողմից կայացված որոշումների պատճենները /պատճենահանման համար անհրաժեշտ վճարի դիմաց/, Հրազդանի քաղաքապետին ենթարկել վարչական տույժի եւ որպես պատասխանատվության միջոց ընտրել տուգանքը՝ 50000 դրամ գումարի չափով, ինչպես նաեւ պարտադրել Հրազդանի քաղաքապետին համայնքի իրավական ակտերը Հրազդանի քաղաքապետարանի վարչական շենքի տարածքում հանրության համար մատչելի ձևով, օրենքով սահմանված կարգով, հրապարակել /փակցնել/:

Դատավարության ընթացքում Հրազդանի քաղաքապետի ներկայացուցիչը ԻԱԿ-ին տրամադրեց 2007թ. երկրորդ եռամսյակի ընթացքում Հրազդանի քաղաքապետի եւ ավագանու ընդունած որոշումների պատճենները 178 էջ ծավալով: Ուստի ԻԱԿ-ը այդ հայցապահանջից հրաժարվեց:

2008թ. դեկտեմբերի 25-ին ՀՀ վարչական դատարանը մերժեց Հրազդանի քաղաքապետին վարչական տույժի ենթարկելու մասին ԻԱԿ-ի պահանջը՝ պատճառաբանելով, որ հասարակական կազմակերպությունը իրավասու չէ դատարան դիմելու վարչական տույժի ենթարկելու պահանջով:

Նաեւ մերժվեց հայցադիմումի 3-րդ պահանջը: Դատավոր Զ. Մկոյանը դա մեկնաբանեց հետեւյալ կերպ. «Վարչական օրենսգրքի համաձայն

հայցվոր կողմը կարող է դատարանին նման պահանջով դիմել, եթե նախկինում այդ հարցով դիմել է տվյալ վարչական մարմնին եւ պատասխան չի ստացել կամ մերժվել է»:

Սակայն ԻԱԿ-ը Հրազդանի քաղաքապետին էր դիմել միայն 2007թ. երկրորդ եռամսյակի ընթացքում Հրազդանի քաղաքապետի եւ ավագանու ընդունած որոշումների պատճենները ստանալու հարցմամբ:

Պորժի նյութերը

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԶԿ

75- ի 4

22.11.2007թ.

Յրագրանի քաղաքապետ
պրն Արամ Դանիելյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Յարգելի պրն Դանիելյան,

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 եւ 27.1 հոդվածների եւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում եմք տրամադրել.

1. 2007թ. երկրորդ եռամսյակի ընթացքում Յրագրանի ավագանու կողմից կայացված որոշումների պատճենները,
2. 2007թ. երկրորդ եռամսյակի ընթացքում Յրագրանի քաղաքապետի կողմից կայացված որոշումների պատճենները:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5- օրյա ժամկետում: Ուստի, խնդրում եմ տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Կանխավ շնորհակալ եմ:

ԻՄԿ նախագահ՝ Շուշան Դոյդոյան _____

75-ի 5

22.11.2007թ.

**ՀՀ Մարդու իրավունքների պաշտպան
պրն Արմեն Հարությունյանին**

Հարգելի պրն Հարությունյան,

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ն 02.11.2007թ.-ին տեղեկատվություն ստանալու հարցում է ուղարկել Հրազդանի քաղաքապետ Արամ Դանիելյանին՝ խնդրելով տրամադրել 2007թ. երկրորդ եռամսյակի ընթացքում Հրազդանի ավագանու եւ քաղաքապետի կողմից կայացված որոշումների պատճենները: Հրազդանի քաղաքապետարանից օրենքով սահմանված ժամկետում ոչ մի պատասխան չի ստացվել, որով խախտվել է մեր՝ տեղեկատվություն ստանալու իրավունքը:

Խնդրում ենք Ձեր միջամտությունը ԻԱԿ-ի տեղեկատվություն ստանալու խախտված իրավունքը վերականգնելու համար:

Կանխավ շնորհակալ եմ:

Նախագահ՝ Շուշան Դոյդոյան _____

Մ Ա Ր Դ ՈՒ Ի Ր Ա Վ ՈՒ Ն Ք Ն Ե Ր Ի Պ Ա Շ Տ Պ Ա Ն

դիմում-բողոք թիվ 1-0963

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

բողոքի քննարկումը դադարեցնելու մասին

10.03.2008թ.

Ինֆորմացիայի ազատության կենտրոնի (այսուհետեւ՝ ԻԱԿ) նախագահ Շուշան Դոյոյանը ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված դիմում-բողոքում հայտնել է հետեւյալը.

02.11.2007թ.-ին ԻԱԿ-ի անունից տեղեկատվություն ստանալու հարցում է ուղարկել Հրազդանի քաղաքապետին՝ խնդրելով տրամադրել 2007թ. երկրորդ եռամսյակի ընթացքում Հրազդանի ավագանու եւ քաղաքապետի կողմից կայացված որոշումների պատճենները, սակայն մինչ օրս որեւէ պատասխան չի ստացել:

Շուշան Դոյոյանի դիմում-բողոքում բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ստանալու ակնկալիքով Պաշտպանի կողմից հարցում է կատարվել Հրազդանի քաղաքապետին:

10.01.2008թ. ստացվել է Հրազդանի քաղաքապետի 29.12.2007թ. թիվ 396 գրությունը՝ հետեւյալի մասին.

«Ինֆորմացիայի ազատության կենտրոնի նախագահ Շուշան Դոյոյանը 2007թ. նոյեմբերին գրավոր դիմել էր համայնքի ղեկավարին՝ խնդրելով տրամադրել 2007թ. երկրորդ եռամսյակի ընթացքում Հրազդանի ավագանու եւ քաղաքապետի կողմից կայացված որոշումների պատճենները: Համաձայն «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 10 հոդվածի 2-րդ մասի՝ նախատեսված տեղեկատվության տրամադրման համար գանձում չի կատարվում մինչեւ 10 էջ տպագրված կամ պատճենահանված տեղեկություն տրամադրելիս: Պահանջվող ժամանակահատվածի՝ Հրազդանի քաղաքային համայնքի ավագանու եւ քաղաքապետի կողմից կայացված որոշումները 250 էջից ավելի են: Հրազդանի քաղաքապետարանի եւ Ինֆորմացիայի ազատության կենտրոնի միջեւ եղել է պայմանավորվածություն՝ վճարման դեպքում տրամադրել պահանջվող տեղեկատվությունը»:

Շուշան Դոյոյանը Մարդու իրավունքների պաշտպանին 12.02.2008թ. ի լրումն ներկայացրած դիմումով հայտնել է, որ ԻԱԿ-ի եւ Հրազդանի քաղաքապետարանի միջեւ որեւէ պայմանավորվածություն չի եղել՝ վճարման դեպքում պահանջվող տեղեկատվությունը տրամադրելու հարցում:

Այս կապակցությամբ Պաշտպանը 14.02.2008թ. կրկին դիմել է Հրազդանի քաղաքապետին՝ առաջարկելով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի դրույթների պահանջների պահպանմամբ լուծել գրավոր հարցմամբ պահանջվող տեղեկատվության ընթացքը:

Ի պատասխան՝ ստացվել է Հրազդանի քաղաքապետի 21.02.2008թ. թիվ 46 գրությունը, որով քաղաքապետը, հայտնելով իր նախորդ գրությամբ նշված տեղեկությունները, միաժամանակ ավելացրել է. «Հիմք ընդունելով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 13 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետը՝ հեռախոսային զրույցով բացատրվել է տեղեկատվության տրամադրման կարգը, պայմանավորվածությունից հետո արձագանք չի եղել»:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի 15 հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով՝ ըստ որի՝ քննարկված բողոքի արդյունքների հիման վրա Պաշտպանը պարտավոր է ընդունել որոշում՝ օրենքով նախատեսված հիմքերով բողոքի քննարկումը դադարեցնելու մասին, եթե բողոքի քննարկման ընթացքում բացահայտվել են բողոքը չքննարկելու կամ քննարկումը դադարեցնելու վերաբերյալ հիմքեր:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

- 1. ԻԱԿ-ի անունից ներկայացված բողոքի քննարկումը դադարեցնել:**
- 2. Որոշման մեկ օրինակն ուղարկել դիմումատուին:**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հայաստանի Հանրապետության Վարչական դատարանին

Երևան, Գ.Նժդեհի պողոտա 23

Հայցվոր՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն»

հասարակական կազմակերպություն

Ներկայացուցիչ՝ Արտակ Գարոյան

ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ

բաց թողնված ժամկետը վերականգնելու վերաբերյալ

Հարգելի դատարան,

Ձեր արդար քննությանն ենք հանձնել՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունը /այսուհետ՝ հայցվոր/ ընդդեմ Հրազդանի քաղաքապետի /այսուհետ՝ Նաեւ պատասխանող/՝ Հրազդանի քաղաքապետից հարցված տեղեկատվությունը ստանալու խախտված իրավունքը վերականգնելու, վարչական տույժի ենթարկելու եւ Հրազդանի քաղաքային համայնքի իրավական ակտերը օրենքով սահմանված կարգով հրապարակմանն ուղղված գործողությունները կատարելու պարտադրելու մասին հայցը:

Հայցադիմում արդեն նկարագրված է այն, որ պատասխանողին դիմելուց եւ նրանից որեւէ պատասխան չստանալուց 20 օր հետո հայցվորը պատշաճ կարգով դիմել էր ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին /այսուհետ՝ Պաշտպան/, իր խախտված իրավունքները պաշտպանության նպատակով, քանի որ, համաձայն՝ **Մարդու իրավունքների պաշտպանի մասին ՀՀ օրենքի**

«Հոդված 2. Մարդու իրավունքների պաշտպանը.

Մարդու իրավունքների պաշտպանը (այսուհետ՝ Պաշտպան) անկախ եւ անփոփոխելի պաշտոնատար անձ է, որն իրականացնում է պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց կողմից մարդու խախտված իրավունքների եւ ազատությունների պաշտպանությունը»:

Ավելի քան չորս ամիս տեւած գործառնությունների ավարտից հետո, պաշտպանը վերջնական պատասխանը հայցվորին ուղարկել էր 10.03.2008թ:

Դրանից հետո հայցվորը բազմաթիվ անգամ բանավոր հարցումներ է հղել պետական տարբեր մարմիններին, խորհրդատվություններ է հայցել իրավունքի բնագավառի մասնագետներից՝ իր խախտված իրավունքների պաշտպանությանն ուղղված հետագա քայլերի մասին: Որից հետո հայտարարել է եւ անց է կացրել մրցույթ սույն գործը պատշաճ վարելու համար իրավախորհրդատու ներգրավելու համար, նրա հետ կնքել աշխատանքային պայմանագիր, ժամանակ տվել նրան ծանոթանալու գործի նյութերի հետ եւ այլն:

Վերոնշյալ գործողությունները բնականաբար հայցվորից խլել են որոշ ժամանակ: Այդ ամենից հետո նոր հայցվորն իր խախտված իրավունքների պաշտպանության եւ վերականգնման հայցով դիմում է ՀՀ վարչական դատարանին:

Հիմք ընդունելով **ՀՀ ՎԴՕ-ի 53 հոդվածի 2, 3 եւ 4 կետերի կանոնակարգումը**, այն է՝

Հոդված 53. Դատավարական ժամկետները բաց թողնելը եւ վերականգնելը.

2. Դատավարական ժամկետների ավարտից հետո ներկայացված հայցադիմումները, բողոքները եւ այլ փաստաթղթերը դատարանը չի քննարկում եւ վերադարձնում է դրանք ներկայացրած անձանց, եթե բացակայում է բաց թողնված դատավարական ժամկետներով պայմանավորված գործողություններ կատարելու իրավունքը վերականգնելու մասին միջնորդությունը: Նման միջնորդությունը կարող է բավարարվել, եթե դատարանը գտնի, որ անձը ժամկետը բաց է թողել հարգելի պատճառով:

3. Բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու միջնորդությունը ներկայացվում է այն դատարան, որտեղ պետք է կատարվի դատավարական գործողությունը: Միջնորդության ներկայացման հետ միաժամանակ, եթե դա հնարավոր է, կատարվում են անհրաժեշտ դատավարական գործողությունները (դիմումի, բողոքի, փաստաթղթերի ներկայացում եւ այլն), որոնց կատարման ժամկետը բաց է թողնված:

4. Բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու միջնորդությունը քննվում է դատարանում դա ստացվելու օրվանից հետո՝ հնգօրյա ժամկետում՝ առանց գործին մասնակցող անձանց ծանուցման, եթե սույն օրենսգրքով այլ բան նախատեսված չէ:

Եւ վերոնկարագրված այն հանգամանքները, որոնց առկայությունը թույլ է տալիս դատավարական ժամկետների ուշացումը որակել որպես հարգելի պատճառ,

ԽՆԴՐՈՒՄ ԵՄ

ՀՀ վարչական դատարան դիմելու բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնել եւ հայցադիմումը ընդունել վարույթ:

Հայցվորի ներկայացուցիչ՝

Արտակ Գարոյան:

Հայաստանի Հանրապետության Վարչական դատարանին

Երևան, Գարեգին Նժդեհի 23

Հայցվոր՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն»

հասարակական կազմակերպություն

Նախագահ՝ Շուշան Դոյդոյան,

Լիազոր ներկայացուցիչ՝

փաստաբան Արտակ Գարոյան:

Պատասխանող՝ Հրազդանի քաղաքապետ

հասցե՝ ք.Հրազդան, Կենտրոն թաղամաս,

Վարչական շենք

Հ Ա Յ Ց Ա Դ Ի Մ ՈՒ Մ

Հրազդանի քաղաքապետից հարցված տեղեկատվությունը ստանալու խախտված իրավունքը վերականգնելու, վարչական տույժի ենթարկելու եւ Հրազդանի քաղաքային համայնքի իրավական ակտերը օրենքով սահմանված կարգով հրապարակմանն ուղղված՝ գործողությունները կատարել պարտադրելու մասին

Հարգելի դատարան.

I. «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունը, /այսուհետ՝ հայցվոր/, իրագործելով իրեն ՀՀ Սահմանադրության 27 եւ 27.1 հոդվածով տեղեկատվություն ստանալու երաշխավորված իրավունքները, ինչպես նաեւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9 հոդվածի՝

7. *Գրավոր հարցման պատասխանը տրվում է հետեւյալ ժամկետներում.*

- 1) *եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը հրապարակված չէ, ապա դրա պատճենը դիմողին է տրվում հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում.*
- 2) *եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը հրապարակված է, ապա տվյալ հրապարակման միջոցի, վայրի եւ ժամկետի մասին տեղեկությունը դիմողին է տրվում հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում.*

2007 թվականի նոյեմբերի 2-ին գրավոր դիմել էր Հրազդանի քաղաքապետին /այսուհետ՝ պատասխանող/, վերոնշյալ նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով, Հրազդանի քաղաքապետից՝

1. 2007թ. երկրորդ եռամսյակի ընթացքում Հրազդանի ավագանու կողմից կայացված որոշումների պատճենները,

2. 2007թ. երկրորդ եռամսյակի ընթացքում Հրազդանի քաղաքապետի կողմից կայացված որոշումների պատճենները /այսուհետ՝ հարցում, տեղեկատվություն/

5 /հնգօրյա/ ժամկետում ստանալու հարցումով: Ընդ որում հարցման մեջ, վերջին պարբերությամբ հայցվորը խնդրել էր հարցված տեղեկատվությունը չտրամադրելու դեպքում, դրա մասին տեղյակ պահել գրավոր ձևով:

Պատասխանողից ոչ մի՝ թե գրավոր, թե բանավոր ձևով պատասխան կամ որբեւէ այլ հաղորդագրություն չստանալուց հետո, 20 /քսան/ օր անց՝ 22.11.2008թ. հայցվորն իր խախտված իրավունքը պաշտպանելու դիմումով դիմել էր ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին /այսուհետ՝ Պաշտպան/, հաշվի առնելով այն, որ

Մարդու իրավունքների պաշտպանի մասին ՀՀ օրենքի՝

Հոդված 2. Մարդու իրավունքների պաշտպանը.

Մարդու իրավունքների պաշտպանն անկախ է անփոփոխելի պաշտոնատար անձ է, որն իրականացնում է պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց կողմից մարդու խախտված իրավունքների եւ ազատությունների պաշտպանությունը:

Պաշտպանը, ուսումնասիրելով դիմումում ներկայացված փաստերը, որոշեց այն ընդունել քննարկման, ինչի մասին հայցվորին 17.12.2007թ. տեղեկացրեց թիվ 1-0963 գրությամբ: Հայցվորի դիմումում բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ստանալու ակնկալիքով Պաշտպանի կողմից հարցում էր հղվել Հրազդանի քաղաքապետին: Դրան ի պատասխան Պաշտպանի գրասենյակը ստացել էր թիվ 396/29.12.2007 գրությունը, որտեղ ասվում էր, թե իբր պատասխանողն ու հայցվորը որոշ ժամանակ առաջ հեռախոսագրություն բանավոր ձևով եկել էին փոխադարձ համաձայնության այն մասին, որ հայցվորը համաձայն է վճարել տրամադրվող տեղեկատվության համար անհրաժեշտ պատճենահանման աշխատանքների դիմաց, հաշվի առնելով, որ օրենքը նախատեսում է հարցված տեղեկատվության անվճար տրամադրում միայն 10 էջից ոչ ավել քանակի համար: Դրանից ավել ծավալ ունեցող տեղեկատվության համար հարցում հղող անձը պարտավոր է վճարել համապատասխան անհրաժեշտ պատճենահանման աշխատանքների համար: Տվյալ դեպքում, Հրազդանի քաղաքապետից հարցված տեղեկատվությունը կազմում էր 250-ից ավելի էջ տպաքանակ, ինչի մասին էլ պատասխանողը տեղեկացրել էր Պաշտպանին վերոնշյալ գրությամբ:

Տիկին Շուշան Դոյրոյանը, որն հանդիսանում է հայցվորի՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի նախագահը, Պաշտպանին 12.02.2008թ պաշտոնապես հայտնել էր, որ հայցվորի եւ պատասխանողի միջեւ որբեւէ պայմանավորվածություն չի եղել՝ վճարման դեպքում պահանջվող տեղեկատվությունը տրամադրելու հարցի վերաբերյալ: Այդ կապակցությամբ Պաշտպանը 14.02.2008թ կրկին դիմել էր պատասխանողին առաջարկելով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի դրույթների պահանջների պահպանմամբ լուծել գրավոր հարցմամբ պահանջվող տեղեկատվության ընթացքը:

Դրան ի պատասխան Պաշտպանը ստացել էր պատասխանողի 21.02.2008թ. թիվ 46 գրությունը, որտեղ պատասխանողը հայտնում էր, որ «...Հիմք ընդունելով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 13 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետը, հեռախոսային զրույցով բացատրվել է տեղեկատվության տրամադրման կարգը, պայմանավորվածությունից հետո արձագանք չի ստացվել»:

Գտնում ենք, որ մինչ այսօր պատասխանողը ցուցաբերում է ապօրինի անգործություն՝ օրենքի բոլոր պահանջներին հակառակ: Տեղեկատվության տրամադրման համար վարչական մարմինն ուղղված հարցումը՝ դա անձի դիմումի նախաձեռնությամբ վարչական վարույթին հարուցելու հիմք է, որի արդյունքում վարչական մարմնից հայցվում է կատարելու օրենքով սահմանված եւ երաշխավորված որեւէ գործողություն, սովյալ դեպքում՝ տրամադրել հարցված տեղեկատվությունը:

Համաձայն՝ «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի.

Հոդված 30. Վարչական վարույթ հարուցելու հիմքերը եւ վարույթը հարուցելը

1. Վարչական վարույթ հարուցելու հիմքերն են՝

ա) անձի դիմումը, բողոքը,

բ) վարչական մարմնի նախաձեռնությունը:

2. Սույն հոդվածի 1-ին մասի "ա" կետով նախատեսված դեպքերում վարչական վարույթը համարվում է հարուցված՝ համապատասխան դիմումը կամ բողոքը վարչական մարմնում ստանալու օրվանից, բացառությամբ այն դեպքերի, երբ դիմումը կամ բողոքը, սույն օրենքի 33-րդ հոդվածի համաձայն, վերահասցեագրվել է ըստ իրավասու վարչական մարմինների կամ վերադարձվել է դիմողին (բողոք բերողին):

Ավելին, իր գրության մեջ, որով եւ հարցվել էր նշված տեղեկատվությունը, հայցվորը, վերջին պարբերությամբ հստակ նշել էր, որ ըստ եւրոպայի, հետագա հողորդագրությունը պետք է ունենա գրավոր ձեւ:

Ընդ որում, «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի՝

Հոդված 54. Վարչական ակտի ձեւերը

1. Վարչական ակտը, որպես կանոն, ընդունվում է գրավոր՝ որոշման, հրամանի, կարգադրության կամ օրենքով նախատեսված այլ ձեւով:

Դիմումի հիման վրա հարուցված վարչական վարույթի արդյունքում կարող է ընդունվել միայն գրավոր վարչական ակտ:

Սա վկայում է այն մասին, որ եթե անգամ հայցվորը պատասխանողին ուղղված իր գրության մեջ չնշեր, որ պատասխանողի պատասխանը պետք է ունենա գրավոր ձեւ, ապա արդեն իսկ օրենքի ուժով պատասխանողը հետագա բոլոր հողորդագրությունները պետք է իրականացներ միմիայն գրավոր ձեւ:

ով: Դա է օրենքի պահանջը: Մինչ այսօր պատասխանողից ոչ մի գրավոր հաղորդագրություն, այդ թվում ճշգրտում, պարզաբանում, հարցադրում, մերժում կամ որեւիցե այլ գրություն չի ստացվել:

Եթե պատասխանողը վարչական դատավարության ընթացքում շարունակելու է պնդել, թե ինքը տեղեկացրել էր հայցվորին՝ համապատասխան գումարի գանձմամբ հարցված տեղեկատվությունը տրամադրելու հանգամանքը, ապա նա պետք է ապացուցի այդ փաստի առկայությունը:

Համաձայն՝ **ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի՝**

Հոդված 25. Ապացույցներ ներկայացնելու պարտականությունը

1. *Կողմը պարտավոր է դատարանին ներկայացնել իր տիրապետման տակ կամ ազդեցության ոլորտում գտնվող այն բոլոր ապացույցները, որոնցով նա հիմնավորում է իր պահանջները կամ առարկությունները:*
2. *Վարչական մարմինը պարտավոր է նաեւ ներկայացնել իր տիրապետման տակ կամ ազդեցության ոլորտում գտնվող այն բոլոր ապացույցները, որոնք հիմնավորում են հակառակ կողմի պահանջները կամ առարկությունները:*

Հոդված 26. Ապացուցման բեռը

1. *Եթե բոլոր ապացույցների հետազոտումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, ապա դրա բացասական հետեւանքները կրում է այդ փաստի ապացուցման բեռը կրող կողմը:*
2. *Ապացուցման բեռը կրում է սույն օրենսգրքի 25-րդ հոդվածի 1-ին մասով ապացույցներ ներկայացնելու պարտականություն կրող կողմը:*
3. *Պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը (պաշտոնատար անձը), որն ընդունել է վիճարկվող իրավական ակտը կամ կատարել է վիճարկվող գործողությունը կամ չի կատարել որեւէ հայցվող գործողություն, սակայն հայցվորի պնդմամբ պարտավոր էր այն կատարել, կրում է իր որոշման, գործողության կամ անգործության համար հիմք ծառայած փաստական հանգամանքների ապացուցման բեռը:*
4. *Կողմերն իրավունք չունեն ոչնչացնելու կամ թաքցնելու որեւէ ապացույց կամ այլ եղանակով խոչընդոտելու դրա հետազոտմանը եւ գնահատմանը՝ դատավարության մյուս կողմի համար անհնարին կամ դժվարին դարձնելով ապացույցներ հավաքելը եւ ներկայացնելը: Նման դեպքում դատարանը կարող է խոչընդոտող կողմի վրա դնել հակառակի ապացուցման բեռը:*

Այսպիսով, պատասխանողը Պաշտպանին հաղորդելով իրականությանը չհամապատասխանող տեղեկություններ, ըստ էության, շփոթության մեջ է գցել Պաշտպանին, ինչի արդյունքում Պաշտպանը 10.03.2008թ. ընդունել է հայցվորի թիվ 1-0963 դիմում-բողոքի քննարկումը դադարեցնելու մասին որոշումը, ինչի մասին էլ 10.03.2008թ. տեղեկացրել հայցվորին թիվ 1-0963 գրությամբ: Ակնհայտ է, որ 10.03.2008թ -ի Պաշտպանի թիվ 1-0963 որոշումը կայացվել է ոչ հավաստի տվյալների հիմքերով, որի մեղավորությունը միմիայն պատասխանողին է:

Գտնում ենք, որ ապացուցված բավարար հիմքեր կան ՀՀ վարչական դատարանից հայցել պաշտպանելու եւ վերականգնելու՝

Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Կոնվենցիայով՝

Հոդված 10. Արտահայտվելու ազատություն

1. Յուրաքանչյուր ոք ունի ազատորեն արտահայտվելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, տեղեկություններ եւ գաղափարներ ստանալու եւ տարածելու ազատությունը՝ առանց պետական մարմինների միջամտության եւ անկախ սահմաններից: Այս հոդվածը չի խոչընդոտում պետություններին՝ սահմանելու ռադիոհաղորդումների, հեռուստատեսային կամ կինեմատոգրաֆիական ձեռնարկությունների լիցենզավորում:

Եւ ՀՀ Սահմանադրությամբ.

Հոդված 27. Յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք:

Արգելվում է մարդուն հարկադրել հրաժարվելու իր կարծիքից կամ փոխելու այն:

Յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք, ներառյալ՝ տեղեկություններ եւ գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից:

Լրատվամիջոցների եւ տեղեկատվական այլ միջոցների ազատությունը երաշխավորվում է:

Պետությունը երաշխավորում է տեղեկատվական, կրթական, մշակութային եւ ժամանցային բնույթի հաղորդումների բազմազանություն առաջարկող անկախ հանրային ռադիոյի եւ հեռուստատեսության առկայությունը եւ գործունեությունը:

Հոդված 27.1. Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական կամ հասարակական շահերի պաշտպանության նկատառումներով իրավասու պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններին եւ պաշտոնատար անձանց դիմումներ կամ առաջարկություններ ներկայացնելու եւ ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու:

Ինչպես նաեւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով եւ այլ նորմատիվ ակտերով երաշխավորված՝ տեղեկատվություն ստանալու մեր իրավունքը:

II. Միեւնույն ժամանակ, ակնհայտ է, որ պատասխանողը խախտել է մեկ այլ դատավարական նորմ, այն է՝

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրքի՝

Հոդված 189.7. Տեղեկություն տալու պարտականությունը չկատարելը

Օրենքով նախատեսված տեղեկությունը պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունների, ինչպես նաեւ հանրային նշանակության կազմակերպությունների պաշտոնատար անձանց կողմից ապօրինաբար չտրամադրելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկից մինչեւ հիսնապատիկի չափով:

Նույն խախտումը, որը կատարվել է կրկին անգամ՝ վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո մեկ տարվա ընթացքում՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից մինչեւ հարյուրապատիկի չափով:

եւ հիմք ընդունելով նույն օրենսգրքի հետեւյալ դրույթները, որոնք են՝

Հոդված 14. Պաշտոնատար անձանց պատասխանատվությունը

Պաշտոնատար անձինք ենթակա են վարչական պատասխանատվության այնպիսի վարչական իրավախախտումների համար, որոնք կապված են կառավարման կարգի, պետական ու հասարակական կարգի, բնության, բնակչության առողջության պահպանության ոլորտում սահմանված կանոնները եւ մյուս այն կանոնները չպահպանելու հետ, որոնց կատարման ապահովումը մտնում է նրանց պաշտոնեական պարտականությունների մեջ:

Հոդված 223. Առաջին ատյանի դատարանների դատավորները

Առաջին ատյանի դատարանների դատավորները քննում են սույն օրենսգրքի 40.1-40.7, 44, 53, 53.1, 97.2, 97.3, 104.3, 147, 166.1, 170.5, 172 հոդվածներով, 175 հոդվածի երրորդ մասով եւ 180.1, 182, 183.1, 185, 189.2, 189.3, 189.4, 189.5, 189.6, 189.7, 189.8, 189.9, 189.10 եւ 198.2 հոդվածի չորրորդ եւ հինգերորդ մասերով, 206.1, 206.2, 206.3, 206.4, 206.5, 206.6, 206.7, 206.8 հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը.

գտնում ենք, որ արդարացի իրավունք ունենք դատարանից հայցել՝ վարչական տույժի ենթարկել պատասխանողին իր ապօրինի արարքի /անգործության/ համար, որն արտահայտվել է՝ օրենքով սահմանված իր պարտականություններից խուսափելու՝ այն է հայցված տեղեկատվությունը չտրամադրելու արարքով՝ եւ դրա համար կիրառել որպես պատասխանատվության միջոց՝ տուգանքը, ընդ որում տուգանքի առավելագույն չափը, այն է 50.000 /հիսուն հազար/ դրամ գումարի չափով:

III. Հայցվորը՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունը կանոնադրությամբ հետապնդում է հետեւյալ նպատակներն ու խնդիրները.

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ կանոնադրություն

Կազմակերպությունը հետապնդում է հետեւյալ նպատակները եւ խնդիրները.

- *նպաստել Հայաստանում տեղեկատվության ազատության զարգացմանը,*
- *նպաստել մարդկանց, մասնավորապես լրագրողների տեղեկություն ստանալու իրավունքի պաշտպանությանը,*
- *աջակցել տեղեկատվության ազատության օրենսդրության կատարելագործմանը,*
- *նպաստել մարդկանց՝ տեղեկատվության ազատության ոլորտում իրավագիտակցության բարձրացմանը եւ կրթությանը,*
- *աջակցել մարդկանց, մասնավորապես լրագրողներին իրավաբանական եւ մասնագիտական խորհրդատվություն ստանալուն,*
- *աջակցել տեղեկատվության ազատության իրավունքի դատական պաշտպանության իրականացմանը:*

Գտնում ենք, որ արդարացի կլինի պահանջել որեւիցե պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնից պատշաճ կատարելու իրեն՝ օրենքով պարտադրված լիազորություններն ու պարտականությունները, այն մասով, որը վերաբերում է տեղեկատվություն ազատ փնտրելու եւ ստանալու իրավունքին: Այս դեպքում, Հրագրանի քաղաքային համայնքի վարչական շենքում օրենքով սահմանված կարգով հանրության համար մատչելի ձեւով չեն փակցվել համայնքային նշանակություն ունեցող, բայց պետական եւ ծառայողական գաղտնիք չկազմող, իրավական ակտերը հանրությանը հասու լինելու համար:

Համաձայն **Տեղեկան ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի՝**

Հոդված 12.1. Տեղեկացումը համայնքի ավագանու նիստերի մասին

Ավագանու հերթական նիստից առնվազն յոթ օր առաջ համայնքի ղեկավարը հրապարակում է տեղեկություն ավագանու նիստի ժամանակի, վայրի վերաբերյալ եւ օրակարգի նախագիծը: Հրապարակումն իրականացվում է համայնքներում՝ համայնքի ավագանու նստավայրում դրանք փակցնելու միջոցով, ինչպես նաեւ այն վայրերում, որոնք մատչելի են համայնքի յուրաքանչյուր մասի բնակչի համար՝ առնվազն մեկ տեղ յուրաքանչյուր երկու հազար բնակչի համար:

Հնարավորության դեպքում այդ տեղեկությունը լրացուցիչ կերպով կարող է տարածվել զանգվածային լրատվության միջոցներով եւ ինտերնետային ցանցի միջոցով:

Ավագանու անդամներին տրամադրված, նիստի հետ կապված փաստաթղթերը, եթե դրանք քննարկվելու են դռնբաց նիստում, պետք է դրված լինեն համայնքի ավագանու նստավայրում՝ բոլորի համար մատչելի տեղում:

Անձանց պահանջով նրանց պետք է տրամադրվեն այդ փաստաթղթերի ատճենները՝ դրա ծախսերը ծածկող վճարի դիմաց:

Սույն հոդվածով նախատեսված փաստաթղթերի հրապարակումները փակցնելու եւ դնելու տեղերը սահմանվում են ավագանու աշխատակարգով:

Դոդված 32. Համայնքի ղեկավարի իրավասությունը

Համայնքի ղեկավարը սույն օրենքով սահմանված կարգով՝

- 1) հրավիրում եւ վարում է ավագանու նիստերը՝ սույն օրենքով եւ ավագանու կանոնակարգով սահմանված կարգով.

1.1) համայնքի ղեկավարը անհատական ակտեր ընդունելուց հետո պարտավոր է երկօրյա ժամկետում այն ուղարկել համայնքի ավագանու անդամներին եւ փակցնել համայնքի ավագանու նստավայրում՝ բոլորի համար տեսանելի տեղում.

- 2) համայնքի զարգացման եռամյա ծրագիրը ներկայացնում է ավագանու հաստատմանը ...,

Ինչպես նաեւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենք.

Դոդված 7. Տեղեկությունների մատչելիության եւ հրապարակայնության ապահովումը

1. Տեղեկատվություն տնօրինողն օրենսդրությամբ սահմանված կարգով մշակում եւ հրապարակում է իր կողմից տեղեկություն տալու կարգը, որը փակցնում է իր գտնվելու վայրում՝ բոլորի համար տեսանելի տեղում:
2. Տեղեկատվություն տնօրինողն անհապաղ հրապարակում կամ այլ մատչելի ձեով հանրությանը տեղեկացնում է իր տնօրինության տակ գտնվող այն տեղեկությունը, որի հրապարակումը կարող է կանխել պետական եւ հասարակական անվտանգությունը, հասարակական կարգին, հանրության առողջությանն ու բարքերին, այլոց իրավունքներին եւ ազատություններին, շրջակա միջավայրին, անձանց սեփականությանն սպառնացող վտանգը:
3. Եթե Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ եւ (կամ) օրենքով այլ բան նախատեսված չէ, ապա տեղեկատվություն տնօրինողը տարին առնվազն մեկ անգամ հրապարակում է իր գործունեությանն առնչվող հետեւյալ տեղեկությունները եւ դրանցում կատարված փոփոխությունները.
 - հանրության համար իրականացվող (իրականացման ենթակա) աշխատանքները եւ ծառայությունները.

- բյուջեն,
 - գրավոր հարցումների ձեւերը եւ դրանք լրացնելու վերաբերյալ խորհրդատվական ցուցումները,
 - հաստիքացուցակները, ինչպես նաեւ պաշտոնատար անձանց անունները, ազգանունները, կրթությունը, մասնագիտությունը, պաշտոնը, աշխատանքի վայրի հեռախոսային համարները, էլեկտրոնային փոստի հասցեները,
 - աշխատանքի ընդունման կարգը եւ թափուր աշխատատեղերը,
 - շրջակա միջավայրի վրա ներգործությունը,
 - հասարակական միջոցառումների ծրագրերը,
 - քաղաքացիների ընդունելության կարգը, օրը, ժամը եւ վայրը,
 - աշխատանքների եւ ծառայությունների բնագավառում գնագոյացման կարգը, գները (սակագները),
 - տնօրինվող տեղեկությունների ցանկը եւ դրանց տնօրինման կարգը,
 - ստացված հարցումների վերաբերյալ վիճակագրական եւ ամփոփ տվյալները, այդ թվում՝ մերժման հիմքերը,
 - սույն մասում սահմանված տեղեկությունների մշակման կամ ստացման աղբյուրները,
 - սույն մասում սահմանված տեղեկությունները պարզաբանելու իրավասություն ունեցող անձի տվյալները, /այսուհետ՝ համայնքի իրավական ակտերը/:
4. Սույն հոդվածի 3-րդ մասում նշված տեղեկություններում կատարված փոփոխությունները հրապարակվում են դրանք կատարվելուց հետո՝ 10-օրյա ժամկետում:

Սույն հոդվածի 2-րդ եւ 3-րդ մասերում նշված տեղեկությունները հրապարակվում են հանրության համար մատչելի ձեւով, տեղեկատվություն տնօրինողի ինտերնետային էջի առկայության դեպքում՝ նաեւ դրանով:

Գտնում ենք, որ բավարար հիմքեր ունենք պատասխանողից պահանջելու կատարել օրենքով սահմանված վերոշարադրված իր պարտականությունները: Մենք, Հայաստանի Հանրապետության կողմից /համապատասխան լիազորված պետական մարմնի միջոցով/ գրանցված՝ Հայաստանում տեղեկատվության ազատության զարգացմանն աջակցելու, մարդկանց տեղեկություն ստանալու իրավունքի պաշտպանություն իրականացնելու եւ տեղեկատվության ազատության իրավունքի դատական պաշտպանության իրավասություն ունեցող հասարակական կազմակերպություն ենք: Հայցադիմումի սույն մասում գետեղված պահանջը ուղղակի գտնվում է կանոնադրությամբ վերապահված մեր իրավասությունների շրջանակում: Ուստի, հիմքերն ավելի քան բավարար են ակնկալելու, որ մեծարգո դատարանն իր վճռով կպարտադրի պատասխանողին վերացնել իր կողմից թույլ տված օրենքի կոպիտ խախտումները:

Այսպիսով, վերոշարադրված փաստերի եւ հանգամանքների հաշվառմամբ, ինչպես նաեւ հիմք ընդունելով վերոնշված նորմատիվ ակտերի պահանջներն ու կանոնակարգումները, հղում անելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով ՀՀ վարչական դատարանին տրված հատուկ լիազորություններին, այդ թվում՝ գործի փաստերը վարչական դատարանի ի պաշտոնե /ex officio/ պարզելու իրավասությանը, ինչն իր հերթին թույլ կտա մեզ վստահ լինել, որ մեծարգո դատարանն՝ անձանց ՀՀ Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով եւ ներպետական օրենսդրությամբ երաշխավորված իրավունքներն ու ազատությունները պաշտպանելուն եւ վերականգնելուն ուղղված արդար վճիռ կայացնելու նպատակով, կձեռնարկի բոլոր անհրաժեշտ եւ քավական դատավարական գործառույթները,

ԽՆԴՐՈՒՄ ԵՄ՝

1. Պարտադրել պատասխանողին կատարելու հետեւյալ գործողությունը՝ հայցվորին տրամադրել 2007թ. երկրորդ եռամսյակի ընթացքում Հրազդանի ավագանու կողմից կայացված որոշումների պատճենները եւ 2007թ. երկրորդ եռամսյակի ընթացքում Հրազդանի քաղաքապետի կողմից կայացված որոշումների պատճենները /պատճենահանման համար անհրաժեշտ վճարի դիմաց/.
2. Պատասխանողին ենթարկել վարչական տույժի եւ որպես պատասխանատվության միջոց ընտրել տուգանքը՝ 50000 /հիսուն հազար/ դրամ գումարի չափով.
3. Պարտադրել պատասխանողին կատարելու հետեւյալ գործողությունը՝ համայնքի իրավական ակտերը Հրազդանի քաղաքապետարանի վարչական շենքի տարածքում հանրության համար մատչելի ձեւով, օրենքով սահմանված կարգով, հրապարակելը /փակցնելը/:

Կից ներկայացնում եմ՝

1. Պետական տուրքի վճարման անդորրագիրը,
2. ներկայացուցչի լիազորագիրը՝ 1 էջ,
3. ներկայացուցչի անձնագրի պատճենը՝ 1 էջ,
4. ներկայացուցչի փաստաբանական գործունեության արտոնագրի պատճենը՝ 1 էջ,
5. հայցվորի՝ պատասխանողին ուղղված թիվ 75-ի 2/02.11.2007թ գրության պատճենը՝ 1 էջ,
6. հայցվորի՝ Պաշտպանին ուղղված թիվ 75-ի 5 / 22.11.2007թ. դիմումի պատճենը՝ 1 էջ,

7. Պաշտպանի՝ հայցվորին թիվ 1-0963 / 18.12.2007թ.
ուղղված գրությունը՝ 2 էջ,

8. Պաշտպանի՝ հայցվորին թիվ 1-0963 / 18.12.2007թ.
ուղղված գրությունը՝ 3 էջ,

9. հայցվորի կանոնադրությունից բերված քաղվածքը՝ 1 էջ:

Չարգանքով,

հայցվորի ներկայացուցիչ՝

Արտակ Գարոյան:

Գործ թիվ ՎԴ /4338/05/08

Վ Ճ Ի Ռ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

«25» նոյեմբերի 2008թ.

ք. Երեւան

Հայաստանի Հանրապետության վարչական դատարանը՝
Նախագահությամբ՝ դատավոր Զ. Մկոյանի
քարտուղարությամբ՝ Լ. Մնոյանի
մասնակցությամբ՝
հայցվորի ներկայացուցիչ Կ. Մեժլումյանի
պատասխանողի ներկայացուցիչ Ռ. Հարությունյանի

2008 թվականի նոյեմբերի 11-ին, դատարանում, դռնբաց դատական նիստում, քննելով վարչական գործն ըստ հայցի «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության ընդդեմ Հրազդանի քաղաքապետի՝ Հրազդանի քաղաքապետից հարցված տեղեկատվությունը տրամադրել պարտավորեցնելու, վարչական տույժի ենթարկելու եւ Հրազդանի քաղաքային համայնքի իրավական ակտերն օրենքով սահմանված կարգով հրապարակմանն ուղղված գործողություններ կատարելուն պարտավորեցնելու պահանջների մասին,

Պ Ա Ր Չ Ե Ց

1. Հայցվոր կողմի ներկայացրած փաստերը, հիմնավորումները եւ պահանջը.

Հայցվորը ՀՀ վարչական դատարան ներկայացրած հայցադիմումով հայտնել է, որ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունը՝ իրագործելով իրեն՝ ՀՀ սահմանադրության 27-րդ եւ 27.1-րդ հոդվածներով տեղեկատվություն ստանալու երաշխավորված իրավունքները, ինչպես նաեւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի, 2007 թվականի նոյեմբերի 2-ին գրավոր դիմել էր Հրազդանի քաղաքապետին վերոնշյալ նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով, Հրազդանի քաղաքապետից՝

1. 2007թ. երկրորդ եռամսյակի ընթացքում Հրազդանի ավագանու կողմից կայացված որոշումների պատճենները,

2. 2007թ. երկրորդ եռամսյակի ընթացքում Հրազդանի քաղաքապետի կողմից կայացված որոշումների պատճենները 5-օրյա ժամկետում ստանալու հարցումով: Ընդ որում, հարցման մեջ, վերջին պարբերությամբ հայցվորը խնդրել է հարցված տեղեկատվությունը չտրամադրելու դեպքում, դրա մասին տեղյակ պահել գրավոր ձևով:

Պատասխանողից ոչ մի՝ թե գրավոր, թե բանավոր ձևով պատասխան կամ որել է այլ հաղորդագրություն չստանալուց հետո, 20 /քսան/ օր անց՝ 22.11.2008թ. հայցվորը, իր խախտված իրավունքը պաշտպանելու դիմումով, դիմել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին՝ հաշվի առնելով այն, որ «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ մարդու իրավունքների պաշտպանն անկախ եւ անփոխարինելի պաշտոնատար անձ է, որն իրականացնում է պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց կողմից մարդու խախտված իրավունքների եւ ազատությունների պաշտպանությունը:

Պաշտպանը, ուսումնասիրելով դիմումում ներկայացված փաստերը, որոշել է այն ընդունել քննարկման, ինչի մասին հայցվորին 17.12.2007թ. տեղեկացրել է թիվ 1-0963 գրությամբ: Հայցվորի դիմումում բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ստանալու ակնկալիքով Պաշտպանի կողմից հարցում է հղվել Հրազդանի քաղաքապետին: Դրան ի պատասխան Պաշտպանի գրասենյակը ստացել է թիվ 396 / 29.12.2007 գրությունը, որտեղ ասվում է, թե իբր պատասխանողն ու հայցվորը որոշ ժամանակ առաջ հեռախոսազրույցում բանավոր ձևով եկել են փոխադարձ համաձայնության այն մասին, որ հայցվորը համաձայն է վճարել տրամադրվող տեղեկատվության համար անհրաժեշտ պատճենահանման աշխատանքների դիմաց, հաշվի առնելով, որ օրենքը նախատեսում է հարցված տեղեկատվության անվճար տրամադրում միայն 10 էջից ոչ ավել քանակի համար: Դրանից ավել ծավալ ունեցող տեղեկատվության համար հարցում հղող անձը պարտավոր է վճարել համապատասխան անհրաժեշտ պատճենահանման աշխատանքների համար: Տվյալ դեպքում, Հրազդանի քաղաքապետից հարցված տեղեկատվությունը կազմում էր 250-ից ավելի էջ տպաքանակ, ինչի մասին էլ պատասխանողը տեղեկացրել է Պաշտպանին վերոնշյալ գրությամբ:

Շուշան Դոյրոյանը, որը հանդիսանում է հայցվորի՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի նախագահը, Պաշտպանին 12.02.2008թ պաշտոնապես հայտնել է, որ հայցվորի եւ պատասխանողի միջեւ որել է պայմանավորվածություն չի եղել՝ վճարման դեպքում պահանջվող տեղեկատվությունը տրամադրելու հարցի վերաբերյալ:

Այդ կապակցությամբ Պաշտպանը 14.02.2008թ կրկին դիմել է պատասխանողին առաջարկելով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի դրույթների պահանջների պահպանմամբ լուծել գրավոր հարցմամբ պահանջվող տեղեկատվության ընթացքը: Դրան ի պատասխան Պաշտպանը ստացել է պատասխանողի 21.02.2008թ. թիվ 46 գրությունը, որտեղ պատասխանողը հայտնում է. «...Հիմք ընդունելով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդված 2-րդ մասի 2-րդ կետը, հեռախոսային զրույ-

ցով բացատրվել է տեղեկատվության տրամադրման կարգը, պայմանավորվածությունն ից հետո արձագանք չի ստացվել»:

Պատասխանողը ցուցաբերել է ապօրինի անգործություն՝ օրենքի բոլոր պահանջներին հակառակ: Տեղեկատվության տրամադրման համար վարչական մարմնին ուղղված հարցումը՝ դա անձի դիմումի նախաձեռնությամբ վարչական վարույթի հարուցելու հիմք է, որի արդյունքում վարչական մարմնից հայցվում է կատարելու օրենքով սահմանված եւ երաշխավորված որեւէ գործողություն, տվյալ դեպքում՝ տրամադրել հարցված տեղեկատվությունը:

Համաձայն «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի՝

1. վարչական վարույթ հարուցելու հիմքերն են՝

ա) անձի դիմումը, բողոքը,

բ) վարչական մարմնի նախաձեռնությունը:

2. Սույն հոդվածի 1-ին մասի "ա" կետով նախատեսված դեպքերում վարչական վարույթը համարվում է հարուցված՝ համապատասխան դիմումը կամ բողոքը վարչական մարմնում ստանալու օրվանից, բացառությամբ այն դեպքերի, երբ դիմումը կամ բողոքը, Նույն օրենքի 33-րդ հոդվածի համաձայն, վերահասցեագրվել է ըստ իրավասու վարչական մարմինների կամ վերադարձվել է դիմողին (բողոք բերողին):

Ավելին, իր գրության մեջ, որով եւ հարցվել է նշված տեղեկատվությունը, հայցվորը, վերջին պարբերությամբ հստակ նշել է, որ ըստ էության, հետագա հողորդագրությունը պետք է ունենա գրավոր ձեւ:

Ընդ որում, «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի համաձայն՝

1. Վարչական ակտը, որպես կանոն, ընդունվում է գրավոր՝ որոշման, հրամանի, կարգադրության կամ օրենքով նախատեսված այլ ձեւով: Դիմումի հիման վրա հարուցված վարչական վարույթի արդյունքում կարող է ընդունվել միայն գրավոր վարչական ակտ:

Սա վկայում այն մասին, որ եթե անգամ հայցվորը պատասխանողին ուղղված իր գրության մեջ չնշեր, որ պատասխանողի պատասխանը պետք է ունենա գրավոր ձեւ, ապա արդեն իսկ օրենքի ուժով պատասխանողը հետագա բոլոր հաղորդագրությունները պետք է իրականացներ միմիայն գրավոր ձեւով: Դա է օրենքի պահանջը: Այսպիսով, պատասխանողը Պաշտպանին հաղորդելով իրականությանը չհամապատասխանող տեղեկություններ, ըստ էության, շփոթության մեջ է գցել Պաշտպանին, ինչի արդյունքում Պաշտպանը 10.03.2008թ. ընդունել է հայցվորի թիվ 1-0963 դիմում-բողոքի քննարկումը դադարեցնելու մասին որոշումը, ինչի մասին էլ 10.03.2008թ. տեղեկացրել է հայցվորին թիվ 1-0963 գրությամբ: Ավսիայտ է, որ 10.03.2008թ.-ի Պաշտպանի թիվ 1-0963 որոշումը կայացվել է ոչ հավաստի տվյալների հիմքերով, որի մեղավորությունը միմիայն պատասխանողինն է:

Ապացուցված բավարար հիմքեր կան ԶԶ վարչական դատարանից հայցել պաշտպանելու եւ վերականգնելու իրենց՝ «Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի 10-րդ հոդվածով.

Արտահայտվելու ազատություն

1. Յուրաքանչյուր ոք ունի ազատորեն արտահայտվելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, տեղեկություններ եւ գաղափարներ ստանալու եւ տարածելու ազատությանը՝ առանց պետական մարմինների միջամտության եւ անկախ սահմաններից: Այս հոդվածը չի խոչընդոտում պետություններին՝ սահմանելու ռադիոհաղորդումների, հեռուստատեսային կամ կինեմատոգրաֆիական ձեռնարկությունների լիցենզավորում,

եւ ԶԶ սահմանադրության 27-րդ հոդվածով.

Յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք: Արգելվում է մարդուն հարկադրել հրաժարվելու իր կարծիքից կամ փոխելու այն: Յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք, ներառյալ՝ տեղեկություններ եւ գաղափարներ փնտրելու եւ ստանալու, տարածելու ազատությունը, տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից: Լրատվամիջոցների եւ տեղեկատվական այլ միջոցների ազատությունը երաշխավորվում է: Պետությունը երաշխավորում է տեղեկատվական, կրթական, մշակութային եւ ժամանցային բնույթի հաղորդումների բազմազանության առաջարկող անկախ հանրային ռադիոյի եւ հեռուստատեսության առկայությունը եւ գործունեությունը:

27.1-րդ հոդված՝

Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական կամ հասարակական շահերի պաշտպանության նկատառումներով իրավասու պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններին եւ պաշտոնատար անձանց դիմումներ կամ առաջարկություններ ներկայացնելու եւ ողջամիտ ժամկետում՝ պատշաճ» պատասխան ստանալու,

ինչպես նաեւ «Տեղեկատվության ազատության մասին» ԶԶ օրենքով եւ այլ նորմատիվ ակտերով երաշխավորված՝ տեղեկատվություն ստանալու իրավունքը:

Միեւնույն ժամանակ, ակնհայտ է, որ պատասխանողը խախտել է մեկ այլ դատավարական նորմ, այն է **Վարչական իրավախախտումների վերաբերյալ ԶԶ օրենսգրքի 189.7-րդ հոդվածը՝**

Տեղեկություն տալու պարտականություն չկատարելը.

Օրենքով նախատեսված տեղեկությունը պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունների, ինչպես նաեւ հանրային նշանակության կազմակերպությունների պաշտոնատար անձանց կողմից ապօ-

րինաբար չտրամադրելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկից մինչև հիսնապատիկի չափով:

Նույն խախտումը, որը կատարվել է կրկին անգամ՝ վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո մեկ տարվա ընթացքում՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից մինչև հարյուրապատիկի չափով

եւ հիմք ընդունելով նույն օրենսգրքի հետեւյալ դրույթները, որոնք են՝

Յոդված 14. Պաշտոնատար անձանց պատասխանատվությունը

Պաշտոնատար անձինք ենթակա են վարչական պատասխանատվության այնպիսի վարչական իրավախախտումների համար, որոնք կապված են կառավարման կարգի, պետական ու հասարակական կարգի, բնության, բնակչության առողջության պահպանության ոլորտում սահմանված կանոնները եւ մյուս այն կանոնները չպահպանելու հետ, որոնց կատարման ապահովումը մտնում է նրանց պաշտոնեական պարտականությունների մեջ:

Յոդված 223. Առաջին ատյանի դատարանների դատավորները

Առաջին ատյանի դատարանների դատավորները քննում են նույն օրենսգրքի 40.1-40.7-րդ, 44-րդ, 53-րդ, 53.1-րդ, 97.2-րդ, 97.3-րդ, 104.3-րդ, 147-րդ, 166.1-րդ, 170.5-րդ, 172-րդ հոդվածներով, 175-րդ հոդվածի երրորդ մասով եւ 180.1-րդ, 182-րդ, 183.1-րդ, 185-րդ, 189.2-րդ, 189.3-րդ, 189.4-րդ, 189.5-րդ, 189.6-րդ, 189.7-րդ, 189.8-րդ, 189.9-րդ, 189.10-րդ եւ 198.2-րդ հոդվածի չորրորդ եւ հինգերորդ մասերով, 206.1-րդ, 206.2-րդ, 206.3-րդ, 206.4-րդ, 206.5-րդ, 206.6-րդ, 206.7-րդ, 206.8-րդ հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը:

Արդարացի իրավունք ունեն դատարանից հայցել՝ վարչական տույժի ենթարկելու պատասխանողին՝ իր ապօրինի արարքի /անգործության/ համար, որն արտահայտվել է՝ օրենքով սահմանված իր պարտականություններից խուսափելու՝ այն է հայցված տեղեկատվությունը չտրամադրելու արարքով՝ եւ դրա համար կիրառել որպես պատասխանատվության միջոց՝ տուգանքը, ընդ որում տուգանքի առավելագույն չափը, այն է 50.000 /հիսուն հազար/ դրամ գումարի չափով:

Չայցվորը՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունը, համաձայն իր պատշաճ կարգով պետական գրանցում ստացած կանոնադրության, հետապնդում է հետեւյալ նպատակներն ու խնդիրները՝

1. նպաստել Չայաստանում տեղեկատվության ազատության զարգացմանը,
2. նպաստել մարդկանց, մասնավորապես լրագրողների տեղեկության ստանալու իրավունքի պաշտպանությանը,
3. աջակցել տեղեկատվության ազատության օրենսդրության կատարելագործմանը,

4. նպաստել մարդկանց՝ տեղեկատվության ազատության ոլորտում իրավագիտակցության բարձրացմանը եւ կրթությանը,
5. աջակցել մարդկանց, մասնավորապես լրագրողներին իրավաբանական եւ մասնագիտական խորհրդատվություն ստանալուն,
6. աջակցել տեղեկատվության ազատության իրավունքի դատական պաշտպանության իրականացմանը:

Արդարացի կլինի պահանջելու որեւիցե պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնից պատշաճ կատարելու իրեն՝ օրենքով պարտադրված լիազորություններն ու պարտականությունները, այն մասով, որը վերաբերում է տեղեկատվություն ազատ փնտրելու եւ ստանալու իրավունքին: Այս դեպքում, Յրագրանի քաղաքային համայնքի վարչական շենքում օրենքով սահմանված կարգով հանրության համար մատչելի ձեւով չեն փակցվել համայնքային նշանակություն ունեցող, բայց պետական եւ ծառայողական գաղտնիք չկազմող, իրավական ակտերը հանրությանը հասու լինելու համար: Համաձայն **«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12.1-րդ հոդվածի՝**

Տեղեկացումը համայնքի ավագանու նիստերի մասին.

Ավագանու հերթական նիստից առնվազն յոթ օր առաջ համայնքի ղեկավարը հրապարակում է տեղեկության ավագանու նիստի ժամանակի, վայրի վերաբերյալ եւ օրակարգի նախագիծը: Հրապարակումն իրականացվում է համայնքներում՝ համայնքի ավագանու նստավայրում՝ դրանք փակցնելու միջոցով, ինչպես նաեւ այն վայրերում, որոնք մատչելի են համայնքի յուրաքանչյուր մասի բնակչի համար՝ առնվազն մեկ տեղ յուրաքանչյուր երկու հազար բնակչի համար: Հնարավորության դեպքում այդ տեղեկությանը լրացուցիչ կերպով կարող է տարածվել զանգվածային լրատվության միջոցներով եւ ինտերնետային ցանցի միջոցով: Ավագանու անդամներին տրամադրված, նիստի հետ կապված փաստաթղթերը, եթե դրանք քննարկվելու են դռնբաց նիստում, պետք է դրված լինեն համայնքի ավագանու նստավայրում՝ բոլորի համար մատչելի տեղում: Անձանց պահանջով նրանց պետք է տրամադրվեն այդ փաստաթղթերի պատճենները՝ դրա ծախսերը ծածկող վճարի դիմաց: Նույն հոդվածով նախատեսված փաստաթղթերի հրապարակումները փակցնելու եւ դնելու տեղերը սահմանվում են ավագանու աշխատակարգով,

32-րդ հոդվածով սահմանված կարգով՝

Համայնքի ղեկավարը նույն օրենքով սահմանված կարգով՝

1) *հրավիրում եւ վարում է ավագանու նիստերը՝ նույն օրենքով եւ ավագանու կանոնակարգով սահմանված կարգով,*

1.1) համայնքի ղեկավարն անհատական ակտեր ընդունելուց հետո պարտավոր է երկօրյա ժամկետում այն ուղարկել համայնքի ավագանու անդամներին եւ փակցնել համայնքի ավագանու նստավայրում՝ բոլորի համար տեսանելի տեղում,

2) համայնքի զարգացման եռամյա ծրագիրը ներկայացնում է ավագանու հաստատմանը:

Ինչպես նաև «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենք 7-րդ հոդվածով՝

Տեղեկությունների մատչելիության եւ հրապարակայնության ապահովումը.

1. Տեղեկատվություն տնօրինողն օրենսդրությամբ սահմանված կարգով մշակում եւ հրապարակում է իր կողմից տեղեկություն տալու կարգը, որը փակցնում է իր գտնվելու վայրում՝ բոլորի համար տեսանելի տեղում:

2. Տեղեկատվություն տնօրինողն անհապաղ հրապարակում կամ այլ մատչելի ձևով հանրությանը տեղեկացնում է իր տնօրինության տակ գտնվող այն տեղեկությունը, որի հրապարակումը կարող է կանխել պետական եւ հասարակական անվտանգությունը, հասարակական կարգին, հանրության առողջությանն ու բարքերին, այլոց իրավունքներին եւ ազատություններին, շրջակա միջավայրին, անձանց սեփականությանն սպառնացող վտանգը:

3. Եթե Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ եւ (կամ) օրենքով այլ բան նախատեսված չէ, ապա տեղեկատվություն տնօրինողը տարին առնվազն մեկ անգամ հրապարակում է իր գործունեությանն առնչվող հետեւյալ տեղեկությունները եւ դրանցում կատարված փոփոխությունները.

- հանրության համար իրականացվող (իրականացման ենթակա) աշխատանքները եւ ծառայությունները,
- բյուջեն,
- գրավոր հարցումների ձեւերը եւ դրանք լրացնելու վերաբերյալ խորհրդատվական ցուցումները,
- հաստիքացուցակները, ինչպես նաև պաշտոնատար անձանց անունները, ազգանունները, կրթությունը, մասնագիտությունը, պաշտոնը, աշխատանքի վայրի հեռախոսային համարները, էլեկտրոնային փոստի հասցեները,
- աշխատանքի ընդունման կարգը եւ թափուր աշխատատեղերը,
- շրջակա միջավայրի վրա ներգործությունը,
- հասարակական միջոցառումների ծրագրերը,
- քաղաքացիների ընդունելության կարգը, օրը, ժամը եւ վայրը,
- աշխատանքների եւ ծառայությունների բնագավառում գնագոյացման կարգը, գները (սակագները),
- տնօրինվող տեղեկությունների ցանկը եւ դրանց տնօրինման կարգը,
- ստացված հարցումների վերաբերյալ վիճակագրական եւ ամփոփ տվյալները, այդ թվում՝ մերժման հիմքերը,

- սույն մասում սահմանված տեղեկությունների մշակման կամ ստացման աղբյուրները,
- սույն մասում սահմանված տեղեկությունները պարզաբանելու իրավասություն ունեցող անձի տվյալները, /այսուհետ՝ համայնքի իրավական ակտերը/:

4. Սույն հոդվածի 3-րդ մասում նշված տեղեկություններում կատարված փոփոխությունները հրապարակվում են դրանք կատարվելուց հետո՝ 10-օրյա ժամկետում:

Սույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերում նշված տեղեկությունները հրապարակվում են հանրության համար մատչելի ձևով, տեղեկատվություն տնօրինողի ինտերնետային էջի առկայության դեպքում՝ նաեւ դրանով:

Բավարար հիմքեր ունեն պատասխանողից պահանջելու կատարել օրենքով սահմանված վերոշարադրված իր պարտականությունները: Իրենք, Հայաստանի Հանրապետության կողմից /համապատասխան լիազորված պետական մարմնի միջոցով/ գրանցված՝ Հայաստանում տեղեկատվության ազատության զարգացմանն աջակցելու, մարդկանց տեղեկություն ստանալու իրավունքի պաշտպանություն իրականացնելու և տեղեկատվության ազատության իրավունքի դատական պաշտպանության իրավասություն ունեցող հասարակական կազմակերպություն են: Հայցադիմումի նշված մասում գետեղված պահանջն ուղղակի գտնվում է կանոնադրությամբ վերապահված իրենց իրավասությունների շրջանակում:

Այսպիսով, վերոշարադրված փաստերի և հանգամանքների հաշվառմամբ, ինչպես նաեւ հիմք ընդունելով վերոնշված նորմատիվ ակտերի պահանջներն ու կանոնակարգումները, խնդրել է

1. Պարտադրել պատասխանողին կատարելու հետեւյալ գործողությունը՝ հայցվորին տրամադրել 2007թ. երկրորդ եռամսյակի ընթացքում Հրազդանի ավագանու կողմից կայացված որոշումների պատճենները և 2007թ. երկրորդ եռամսյակի ընթացքում Հրազդանի քաղաքապետի կողմից կայացված որոշումների պատճենները /պատճենահանման համար անհրաժեշտ վճարի դիմաց/.
2. Պատասխանողին ենթարկել վարչական տույժի և որպես պատասխանատվության միջոց ընտրել տուգանքը՝ 50000 /հիսուն հազար/ դրամ գումարի չափով.
3. Պարտադրել պատասխանողին կատարելու հետեւյալ գործողությունը՝ համայնքի իրավական ակտերը Հրազդանի քաղաքապետարանի վարչական շենքի տարածքում հանրության համար մատչելի ձևով, օրենքով սահմանված կարգով, հրապարակելը /փակցնելը/:

Նախնական դատական նիստում, հայցի առարկան և հիմքերը պարզելիս, հայցվորի ներկայացուցիչը դատարանին հայտնեց, որ առաջին և երկրորդ հայցապահանջները գործողության կատարման հայցեր են:

Դատաքննության ընթացքում հայցվորի ներկայացուցիչը, վերը նշված փաստերն ամբողջությամբ պնդելով, դիմում ներկայացրեց դատարանին՝ հայցալիս մի պահանջից հրաժարվելու մասին, քանի որ պատասխանողը նախնական դատական նիստից հետո հայցալիս առաջին պահանջը կատարել ու պահանջվող որոշումները տրամադրել է, ուստի այդ մասով հայցից հրաժարվում են: Նկատի ունենալով, որ պատասխանողի ներկայացուցիչը ընդունում է, որ պահանջվող որոշումները օրենքով սահմանված ժամկետից ուշ են տրամադրվել, ուստի այդ փաստն արդեն ապացուցման կարիք չունի: Նկատի ունենալով, որ ՀՀ վարչական իրավախտումների վերաբերյալ օրենսգրքով նախատեսված չէ այն վարչական մարմինը, որն իրավունք ունի դատարան դիմելու՝ պատասխանողին վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջով, ուստի գտնում են, որ յուրաքանչյուր իրավախախտման սուբյեկտ կարող է դիմել դատարան, ինչը բխում է դատավարության արդյունավետության սկզբունքից: Պատասխանողի ներկայացուցիչը ներկայացրած լուսանկարներով էլ հենց հաստատվում է, որ այդ տախտակի վրա չէին կարող տեղավորվել 200-ից ավելի որոշումներ, դրա վրա կտեղավորվեն միայն 18 որոշում: Հայտնեց նաեւ, որ համայնքի ավագանու որոշումները կարող է հրապարակել համայնքի ղեկավարը՝ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 56-րդ հոդվածով սահմանված կարգով: Պատասխանողի կողմից պահանջվող տեղեկատվությունը չտրամադրելով՝ խախտվել է հայցվորի՝ տեղեկացված լինելու իրավունքը:

Խնդրեց պատասխանողին ենթարկել վարչական պատասխանատվության՝ տուգանքի 50.000 դրամի չափով, ինչպես նաեւ պարտավորեցնել վերջինիս Հրազդանի քաղաքապետարանի վարչական շենքի տարածքում հանրության համար մատչելի ձեւով, օրենքով սահմանված կարգով, հրապարակել /փակցնել/ համայնքի իրավական բոլոր ակտերը, այդ թվում՝ 2007թ. երկրորդ եռամսյակի ընթացքում Հրազդանի ավագանու եւ Հրազդանի քաղաքապետի կողմից կայացված որոշումները:

2. Պատասխանողի կողմից հայցադիմումի պատասխանում բերված փաստերը, հիմնավորումները.

Համաձայն «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի՝ հրապարակում է համարվում տեղեկատվությունը մամուլի եւ զանգվածային լրատվության մյուս միջոցներով, համաշխարհային համակարգչային ցանցով, ինչպես նաեւ օրենսդրությամբ սահմանված այլ միջոցներով հանրությանը տեղեկացնելը եւ մատչելի դարձնելը: Օրենսդրությամբ սահմանված այլ միջոցը, համաձայն նույն օրենքի 7-րդ հոդվածի, հանդիսանում է նաեւ տեղեկատվություն տնօրինողի կողմից իր գտնվելու վայրում, բոլորի համար տեսանելի տեղում փակցնելը, ինչը պարբերաբար կատարվում է Հրազդանի քաղաքապետարանի կողմից: Չնայած այն հանգամանքին, որ հայցվորն իր ներկայացրած հայցադիմումում հանգամանորեն նշել է տվյալ հոդվածը եւ դրա հետ միաժամանակ նշված հարբերությունները կարգավորող ամբողջ օրենսդրությունը, սակայն նա զբաղվել է զուտ օրենքի նորմերը թղթի վրա արտատպելով եւ մոռացել է կամ գուցե դիտավորյալ, ցանկանալով դատարանին զցել մոլորության մեջ, չի մատնանշել այն հանգամանքը, որ քաղաքապե-

տարանի աշխատակիցների կողմից նրան հավուր պատշաճի բացատրվել է, որ իրեն հետաքրքրող տեղեկատվությունը փակցված է բոլորի համար տեսանելի եւ մատչելի վայրում: Մասնավորապես, երկու անգամ հեռախոսային խոսակցություններ են տեղի ունեցել Հրազդանի քաղաքապետի աշխատակազմի քարտուղար Աշոտ Միքայելյանի եւ աշխատակազմի կրտսեր մասնագետ Անուշ Բալաբեկյանի հետ, որոնք հայցվորի կողմից մատնանշված գրավոր հարցման վերաբերյալ հայտնել են, որ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ գանձում չի կատարվում մինչեւ 10 էջ տպագրված կամ պատճենահանված տեղեկատվություն տրամադրելու համար եւ հայցվորին պարզաբանվել է, որ նա համապատասխան տեղեկատվություն հարցման միջոցով ստանալու դեպքում, պետք է կատարի օրենքով սահմանված մուծում կամ էլ նշված տեղեկատվությանը կարող է ծանոթանալ դրա համար առկա այն փակցված լինելու վայրում:

Բացի այդ, հայցվորը, լինելով իրավաբանական անձ եւ իր կանոնադրությամբ ունենալով իրավաբանական խորհրդատվություններ մատուցելու իրավասություն, անհրաժեշտություն չի ունեցել խորհրդատվություններ հայցել իրավունքի բնագավառի մասնագետներից, քանի որ ինքը, որպես իրավաբանական անձ, պարտավոր է ունենալ համապատասխան մասնագետ, որը կարող է առանց որեւէ լրացուցիչ ժամկետների եւ միջնորդությունների կատարել հայցի հետ կապված բոլոր գործողությունները:

Դատաքննության ընթացքում պատասխանողի ներկայացուցիչը, ամբողջությամբ պնդելով վերը նշված փաստարկները, հայտնեց նաեւ, որ պահանջվող որոշումները քաղաքապետարանը միշտ պատրաստ է եղել տրամադրել կողմին, եւ քանի որ եղել է բանավոր պայմանավորվածություն այդ որոշումները տրամադրելու վերաբերյալ, իրենք օրենքով սահմանված ժամկետում գրավոր պատասխան չեն տրամադրել: Օրենքի համաձայն պետք է տեղեկությունը փակցված լինի ավագանու նստավայրում եւ ոչ թե քաղաքապետարանի վարչական շենքում: Իրենք ավագանու նիստի ժամանակի, մրցույթների մասին տեղեկությունները եւ հարցաշարերը միշտ փակցնում են ավագանու նստավայրում, որը գտնվում է վարչական շենքի 5-րդ հարկում, այլ ոչ թե՝ հայցվորի կողմից լուսանկարներով ներկայացված այդ շենքի մոտ գտնվող տախտակի վրա, որը ժամանակին եղել է «պատվո տախտակ»: Ավագանու որոշումները փակցված մնում են մինչեւ մյուս հերթական որոշումների փակցնելը: Հրազդանի քաղաքապետի աշխատակազմի քարտուղար Աշոտ Միքայելյանը եւ աշխատակազմի կրտսեր մասնագետ Անուշ Բալաբեկյանը հայցվոր կազմակերպության երկու աշխատակիցների հետ ունեցել են հանդիպում անգամ, մինչդեռ, նրանք ցանկացել են որոշումները ստանալ հենց քաղաքապետից, որը տեղում չի եղել, ինչի պատճառով նրանք հեռացել են քաղաքապետարանից: Իրենց աշխատակիցների գործողությունները բխել են «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի պահանջներից, մասնավորապես, մատչելի ձևով բացատրվել է տեղեկության տրամադրման կարգը, պայմանները եւ ձևերը:

Լսելով կողմերի ներկայացուցիչների բացատրությունները, ինչպես նաև հետազոտելով, վերլուծելով եւ գնահատելով գործով ձեռք բերված բոլոր ապացույցները, բազմակողմանի, լրիվ եւ օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ՝ ՀՀ վարչական դատարանը գտնում է, որ վարչական գործի վարույթը՝ Հրազդանի քաղաքապետից հարցված տեղեկատվությունը տրամադրել պարտավորեցնելու պահանջի մասով, ենթակա է կարճման, իսկ հայցը մյուս պահանջների մասով ենթակա է մերժման հետեւյալ պատճառաբանությամբ.

3. Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը, ՀՀ վարչական դատարանի պատճառաբանությունները եւ եզրահանգումները.

- Հայցվոր «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունը 02.11.2007թ. գրությամբ դիմել է Հրազդանի քաղաքապետին՝ 2007թ. երկրորդ եռամսյակի ընթացքում Հրազդանի ավագանու եւ քաղաքապետի կողմից կայացված որոշումների պատճենները տրամադրելու խնդրանքով:
- 22.11.2007թ. հայցվոր կազմակերպությունն իր՝ տեղեկատվություն ստանալու խախտված իրավունքը վերականգնելու համար դիմել է ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանին:
- 17.12.2007թ. ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանը որոշում է կայացրել՝ բողոքը քննարկման ընդունելու մասին:
- 10.03.2008թ. որոշմամբ ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանը բողոքի քննարկումը դադարեցրել է:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 100-րդ հոդվածի համաձայն՝ մինչեւ դատաքննության ավարտը հայցվորն իրավունք ունի առանց որեւէ պատճառաբանության լրիվ կամ մասնակի հրաժարվելու իր պահանջներից: Այդ դեպքում դատարանը կայացնում է վճիռ գործի վարույթը կարճելու մասին այն պահանջի մասով, որից հրաժարվել է հայցվորը, բացառությամբ նույն օրենսգրքի 24-րդ գլխով սահմանված գործերի: Նույն օրենսգրքի 90-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ վարչական դատարանը գործի քննության ցանկացած փուլում կարճում է գործի վարույթը, եթե հայցվորը հրաժարվել է հայցից:

Նկատի ունենալով, որ հայցվորը՝ Հրազդանի քաղաքապետից հարցված տեղեկատվությունը տրամադրել պարտավորեցնելու մասին պահանջից հրաժարվել է մինչեւ դատաքննության ավարտը, դատարանը գտնում է, որ սույն վարչական գործի վարույթն այդ հայցապահանջի մասով պետք է կարճել:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ գրավոր հարցման պատասխանը տրվում է հետեւյալ ժամկետներում.

1) եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը հրապարակված չէ,

ապա դրա պատճենը դիմողին է տրվում հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում.

- 2) եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը հրապարակված է, ապա տվյալ հրապարակման միջոցի, վայրի եւ ժամկետի մասին տեղեկությունը դիմողին է տրվում հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում.
- 3) եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը տրամադրելու համար անհրաժեշտ է կատարել լրացուցիչ աշխատանք, ապա այդ տեղեկությունը դիմողին է տրվում դիմումն ստանալուց հետո՝ 30-օրյա ժամկետում, որի մասին հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում, գրավոր տեղեկացվում է դիմողին՝ նշելով հետաձգման պատճառները եւ տեղեկությունը տրամադրելու վերջնական ժամկետը:

Նույն օրենքի 11-րդ հոդվածը սահմանում է տեղեկության տրամադրումը մերժելու հիմքերը եւ կարգը, որի 3-րդ մասի համաձայն՝ գրավոր հարցմամբ պահանջվող տեղեկության տրամադրումը մերժելու դեպքում տեղեկատվություն տնօրինողն այդ մասին 5-օրյա ժամկետում գրավոր հայտնում է դիմողին՝ նշելով մերժման հիմքը /օրենքի համապատասխան նորմը/, ինչպես նաեւ դրա բողոքարկման կարգը:

Վերը նշված իրավանորմերի վերլուծությունից ակնհայտ է, որ տեղեկատվություն տնօրինողը գրավոր հարցում ստանալու դեպքում պետք է դիմողին 5-օրյա ժամկետում /եթե անհրաժեշտ չէ կատարել լրացուցիչ աշխատանք/ պատասխանի՝ միաժամանակ տրամադրելով կամ տեղեկության պատճենը, կամ հրապարակված տեղեկության հրապարակման միջոցի, վայրի եւ ժամկետի մասին տեղեկությունը, կամ հայտնի տեղեկության տրամադրման մերժման հիմքը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ ապացուցման կարիք չունեն այն փաստերը, որոնք հակառակ կողմը չի վիճարկում, բացառությամբ այն դեպքի, երբ դատարանը գտնում է, որ դրանց ապացուցումն անհրաժեշտ է:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ պատասխանող կողմը չի վիճարկում, որ հայցվորին գրավոր հարցման պատասխան չի տրվել՝ որոշակի հանգամանքներից ելնելով, եւ որ այդ փաստի հաստատումը, վերը նշված օրենքի համապատասխան դրույթի համաձայն, ապացուցման կարիք չունի, ուստի դատարանը հաստատված է համարում այն փաստը, որ պատասխանողի կողմից հայցվորին գրավոր հարցման պատասխան օրենքով սահմանված՝ 5-օրյա ժամկետում չի տրվել:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 26-րդ գլուխը վերաբերում է դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու մասին գործերի վարույթին: Նույն գլխում գետեղված 151-րդ հոդվածով նախատեսված է այդ գործերի քննության կարգը, համաձայն որի վարչական պատասխանատվության ենթարկելու մասին գործերը հարուցվում են օրենքով վարչական իրավախախտումների վերաբերյալ արձանագրություններ կազմելու լիազորություն ունեցող մարմինների եւ պաշտոնատար անձանց հայցադի-

մուսների հիման վրա: Նույն օրենսգրքի 152-րդ հոդվածով սահմանված են դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու մասին հայցադիմումին ներկայացվող պահանջները, որի 2-րդ մասի համաձայն՝ դիմումին կցվում են վարչական իրավախախտման մասին արձանագրությունը եւ արձանագրությանը կցվող փաստաթղթերը:

Դատարանի գնահատմամբ ակնհայտ է, որ օրենսդիրը դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու մասին գործեր հարուցելու իրավասությամբ օժտել է միայն վարչական իրավախախտումների վերաբերյալ արձանագրություններ կազմելու լիազորություն ունեցող մարմիններին եւ պաշտոնատար անձանց: Նույն օրենսգրքի 26-րդ գլխի տրամաբանությունից բխում է նաեւ, որ դատարանի կողմից վարչական պատասխանատվության ենթարկելու մասին գործը քննելիս, վարչական իրավախախտման դեպքը տեղի ունեցած լինելու, անձի կողմից դա կատարելու փաստը պարզելու համար, պետք է առկա լինի վարչական իրավախախտման մասին արձանագրությունը, ինչը հայցադիմումին կցելը նույնպես օրենսդրի կողմից սահմանվել է որպես այդ վարույթի գործերի համար պարտադիր պահանջ:

Վերը նշված իրավանորմերի հիման վրա դատարանը գտնում է, որ հայցվոր «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունը չի հանդիսանում վարչական իրավախախտումների վերաբերյալ արձանագրություններ կազմելու լիազորություն ունեցող մարմին, ուստի եւ առարկայագուրկ է նրա կողմից պատասխանող Հրազդանի քաղաքապետին վարչական պատասխանատվության ենթարկելու մասին պահանջը:

Ինչ վերաբերում է հայցվորի ներկայացուցչի այն պնդմանը, որ ՀՀ վարչական իրավախտումների վերաբերյալ օրենսգրքով նախատեսված չէ այն վարչական մարմինը, որն իրավունք ունի դատարան դիմելու՝ պատասխանողին վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջով, ուստի յուրաքանչյուր իրավախախտման սուբյեկտ կարող է դիմել դատարան, ինչը բխում է դատավարության արդյունավետության սկզբունքից, հայցապահանջը բավարարելու հիմք հանդիսանալ չի կարող հետեւյալ պատճառաբանությամբ.

ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 189.7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ օրենքով նախատեսված տեղեկությունը պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունների, ինչպես նաեւ հանրային նշանակության կազմակերպությունների պաշտոնատար անձանց կողմից ապօրինաբար չտրամադրելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկից մինչեւ հիսնապատիկի չափով:

ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 8-րդ հոդվածը սահմանում է, որ վարչական իրավախախտում կատարած անձը ենթակա է պատասխանատվության իրավախախտումը կատարելու ժամանակ եւ վայ-

րում գործող օրենսդրության հիման վրա: Այսինքն, պատասխանողի կողմից վարչական իրավախախտում կատարելու հանգամանքն անգամ պայմանականորեն ընդունելու դեպքում, օրենսդրությամբ սահմանված չէ այն մարմինը, որի ենթակայությանն է վերապահված ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 189.7-րդ հոդվածով նախատեսված իրավախախտման վերաբերյալ գործերի քննությունը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 67-րդ հոդվածի համաձայն՝ գործողության կատարման հայցով հայցվորը կարող է պահանջել կատարելու որոշակի գործողություններ կամ ձեռնպահ մնալու այնպիսի գործողություններից, որոնք ուղղված չեն վարչական ակտի ընդունմանը:

Նույն օրենսգրքի 71-րդ հոդվածով օրենսդիրը, սահմանելով հայց ներկայացնելու ժամկետները, 1-ին մասի 3-րդ կետով գործողության կատարման հայցի դեպքում նախատեսել է հետևյալ ժամկետները.

- ա. մեկամսյա ժամկետում՝ վարչական մարմնի կողմից այն մերժելու պահից,*
- բ. եռամսյա ժամկետում՝ այն պահից, երբ վարչական մարմնին դիմում է ներկայացվել պահանջվող գործողությունը կատարելու վերաբերյալ:*

Նշված իրավանորմերից բխում է, որ գործողության կատարման հայց հարուցելու պարտադիր նախապայման է հանդիսանում նման պահանջով համապատասխան մարմնին դիմում ներկայացնելու եւ վարչական մարմնի կողմից այն մերժելու կամ դիմումին չպատասխանելու փաստի առկայությունը:

Մինչդեռ, ինչպես պարզվեց գործի քննությամբ, հայցվոր «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունը պատասխանող Հրազդանի քաղաքապետին է դիմել միայն 2007թ. երկրորդ եռամսյակի ընթացքում Հրազդանի ավագանու եւ քաղաքապետի կողմից կայացված որոշումների պատճենները տրամադրելու խնդրանքով, իսկ այդ որոշումները, ինչպես նաեւ Հրազդանի քաղաքապետարանի վարչական շենքի տարածքում հանրության համար մատչելի ձևով, համայնքի իրավական բոլոր ակտերը հրապարակելու /փակցնելու/ մասին դիմում հայցվորի կողմից պատասխանողին չի ներկայացվել, հետեւաբար, դատարանի գնահատմամբ նշված պահանջի մասով հայցվորի իրավունքների խախտման փաստը բացակայում է:

Նկատի ունենալով, որ դատաքննությամբ հաստատված վերոհիշյալ փաստերն ինքնին բավարար են վարչական գործի վարույթը հայցապահանջի մի մասով կարճելու, իսկ հայցը մնացած մասով մերժելու համար, որպիսի պարագայում գործի լուծումը որեւէ կերպ պայմանավորված չէ կողմերի ներկայացրած այլ փաստարկների գնահատմամբ, դատարանը եզրակացրեց, որ այդ փաստարկների գնահատման դատավարական անհրաժեշտությունը բացակայում է:

Վերոգրյալի հիման վրա եւ ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 59-րդ, 90-րդ, 100-րդ, 112-րդ, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 130-132-րդ հոդվածներով, ՀՀ դատական օրենսգրքի 35-րդ հոդվածի 2-րդ մասով՝ դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

Վարչական գործի վարույթն՝ ըստ հայցի «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության ընդդեմ Հրազդանի քաղաքապետի՝ Հրազդանի քաղաքապետից հարցված տեղեկատվությունը տրամադրել պարտավորեցնելու պահանջի մասին, կարճել:

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության հայցն ընդդեմ Հրազդանի քաղաքապետի՝ Հրազդանի քաղաքապետին վարչական տույժի ենթարկելու եւ Հրազդանի քաղաքապետարանի վարչական շենքի տարածքում հանրության համար մատչելի ձեւով, օրենքով սահմանված կարգով համայնքի իրավական բոլոր ակտերը հրապարակելուն /փակցնելուն/ պարտավորեցնելու պահանջների մասին, մերժել:

Պետական տուրքի հարցը համարել լուծված:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից եւ կարող է բողոքարկվել վճռաբեկության կարգով՝ ՀՀ վճռաբեկ դատարան:

ԴԱՏԱՎՈՐ Զ. ՄԿՈՅԱՆ:

Գործ 2.
Ինֆորմացիայի ազատության
կենսրոնն
ընդդեմ
Նոր Նորֆի թաղապետի եւ
թաղապետսարանի

Գործի համառոտ նկարագրությունը

Ինֆորմացիայի ազատության կենտրոնը 2008թ. օգոստոսի 1-ին տեղեկատվություն ստանալու հարցում է ուղարկել Նոր Նորքի թաղային համայնքին՝ խնդրելով տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. Նոր Նորք համայնքին սեփականության իրավունքով քանի՞ բնակարան է պատկանում (այդ թվում համայնքի հաշվեկշռում քանի՞ բնակարան է գրանցված), որոնցում բնակվում են այն բնակիչները, որոնք չեն սեփականաշնորհել իրենց բնակարանները:
2. Խնդրում ենք հայտնել այդ բնակարանների հասցեները:
3. Նոր Նորքի թաղապետարանը քանի՞ հայց է հարուցել սեփականության իրավունքով համայնքին պատկանող վերը նշված բնակարաններից բնակիչներին վտարելու պահանջով:
4. Խնդրում ենք, ներկայացնել այդ դատական գործերի ելքի մասին տեղեկատվություն (քանի՞սն է բավարարվել, քանի՞սը՝ մերժվել):

12.08.2008թ. գրությամբ Նոր Նորքի թաղապետարանը տեղեկացրել է, որ «նշված ժամկետում չենք կարող Ձեզ տրամադրել անհրաժեշտ տեղեկությունները, քանի որ համայնքի ղեկավարի համապատասխան կարգադրությունով կատարվում է համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի եւ ոչ բնակելի տարածքների փաստացի չափագրում եւ գույքագրում»:

ԻԱԿ-ը լիարժեք եւ սպառիչ պատասխան ստանալու համար սպասեց օրենքով սահմանված 30-օրյա ժամկետի լրանալուն, սակայն այդ ժամկետը լրանալուց հետո էլ պատասխան չստանալով՝ 2008թ. հոկտեմբերի 9-ին ՀՀ վարչական դատարան հայց ներկայացրեց՝ ընդդեմ Նոր Նորքի թաղապետարանի եւ Նոր Նորքի թաղային համայնքի ղեկավար Դավիթ Պետրոսյանի՝ թաղապետարանի անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու, վերջինիս հնգօրյա ժամկետում տեղեկատվություն տրամադրելուն պարտավորեցնելու եւ Նոր Նորքի թաղային համայնքի ղեկավար Դավիթ Պետրոսյանին 50.000 դրամ տուգանքի չափով վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջների մասին:

2009թ. մարտի 23-ին ՀՀ վարչական դատարանը (նախագահող դատավոր՝ Աշոտ Սարգսյան) մասնակի բավարարեց ԻԱԿ-ի հայցը՝ Նոր Նորքի թաղապետարանի անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու պահանջի մասով:

Դատարանը վճռեց ոչ իրավաչափ ճանաչել ԻԱԿ-ի կողմից հայցվող տեղեկատվության տրամադրման մերժելուն ուղղված Նոր Նորքի ղեկավարի գործողությունները եւ Նոր Նորքի համայնքից հօգուտ ԻԱԿ-ի բռնագանձել 4.000 դրամ՝ որպես պետական տուրքի գումար:

Դատարանը մերժեց հայցը՝ Նոր Նորքի թաղապետարանին հնգօրյա ժամկետում տեղեկատվություն տրամադրելուն պարտավորեցնելու մասով, քանի որ մինչ վճռի հրապարակումը

Նոր Նորքի թաղապետարանն արդեն պատասխանել էր ԻԱԿ-ի հարցմանը: Դատարանը նաեւ մերժեց հայցը՝ Նոր Նորքի թաղային համայնքի ղեկավար Դավիթ Պետրոսյանին 50.000 դրամ տուգանքի չափով վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջի մասով:

ԻԱԿ-ը վճիռը բողոքարկեց վճռաբեկության կարգով՝ ՏԻՄ ղեկավարներին վարչական պատասխանատվության ենթարկելու օրենսդրության պահանջը՝ տուգանքը, ի վերջո, կիրառելու պահանջով: Սակայն ՀՀ Վճռաբեկ դատարանը գտավ, որ վարչական դատարանի կայացրած վճիռը հիմնավոր է եւ ենթակա չէ բեկանման:

Գործի նյութերը

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԶԿ

01.08.2008թ.

80-ի 8

Նոր Նորք համայնքի թաղապետ
պարոն Դավիթ Պետրոսյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Չարգելի պարոն Պետրոսյան,

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 եւ 27.1 հոդվածների եւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում եմք տրամադրել հետեւյալ տեղեկությունը.

1. Նոր Նորք համայնքին սեփականության իրավունքով քանի՞ բնակարան է պատկանում (այդ թվում համայնքի հաշվեկշռում քանի՞ բնակարան է գրանցված), որոնցում բնակվում են այն բնակիչները, որոնք չեն սեփականաշնորհել իրենց բնակարանները:
2. Խնդրում եմ հայտնել այդ բնակարանների հասցեները:
3. Նոր Նորքի թաղապետարանը քանի՞ հայց է հարուցել սեփականության իրավունքով համայնքին պատկանող վերը նշված բնակարաններից բնակիչներին վտարելու պահանջով:
4. Խնդրում եմ, ներկայացնել այդ դատական գործերի ելքի մասին տեղեկատվություն (քանի՞սն է բավարարվել, քանի՞սը՝ մերժվել):

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում եմ տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում եմ գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին (հոդված 11):

Կանխավ շնորհակալ եմ:

Նախագահ՝ Շուշան Դոյրոյան _____

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՆՈՐ ՆՈՐԹԻ ԹԱՂԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

No 27/01-48/813
«12» 09 2008թ.

Ինֆորմացիայի ազատության կենտրոն

ՀԿ ՆԱԽԱԳԱԽ Ծ. ԴՈՂՈՅԱՆԻՆ

Նոր Նորքի թաղապետարանին հասցեագրված Ձեր 01.08.08թ. հ. 80-ի 8 գրության կապակցությամբ հայտնում ենք, որ Նշված ժամկետում չենք կարող Ձեզ տրամադրել անհրաժեշտ տեղեկությունները, քանի որ համայնքի ղեկավարի համապատասխան կարգադրությունով կատարվում է համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի եւ ոչ բնակելի տարածքների փաստացի չափագրում եւ գույքագրում:

Նշված աշխատանքների ավարտից հետո Ձեզ կտրամադրվեն անհրաժեշտ տեղեկությունները օրենքի սահմաններում:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

Դ. ՊԵՏՐՈՍՅԱՆ:

ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ ՂԱՏԱՐԱՆԻՆ

Երևան, Գարեգին Նժդեհի 23

Հայցվոր՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն»

հասարակական կազմակերպություն

Նախագահ՝ Շուշան Դոյրոյան

Ներկայացուցիչ՝ Կարեն Մեծլումյան

Պատասխանողներ՝ Նոր Նորքի թաղապետարան

Հասցե՝ Երևան, Գայի 19

Նոր Նորքի թաղապետ Դավիթ Պետրոսյան

09 հոկտեմբերի 2008թ.

Հ Ա Յ Ց Ա Դ Ի Մ ՈՒ Մ

Ճանաչման եւ գործողության կատարման հայց

Տեղական ինքնակառավարման մարմնի գործողությունները ոչ իրավաչափ ճանաչելու, որպես հետեւանք տեղեկատվություն տրամադրել պարտադրելու եւ վարչական տույժի ենթարկելու պահանջների մասին

1. Փաստերը որոնց վրա հիմնված է հայցապահանջը.

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունը 01.08.2008թ-ին հետեւյալ բովանդակությամբ տեղեկատվություն ստանալու հարցում է ներկայացրել Նոր Նորք թաղային համայնքին. «Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 եւ 27.1 հոդվածների եւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել հետեւյալ տեղեկությունը.

1. Նոր Նորք համայնքին սեփականության իրավունքով քանի՞ բնակարան է պատկանում (այդ թվում համայնքի հաշվեկշռում քանի՞ բնակարան է գրանցված), որոնցում բնակվում են այն բնակիչները, որոնք չեն սեփականաշնորհել իրենց բնակարանները:
2. Խնդրում ենք հայտնել այդ բնակարանների հասցեները:
3. Նոր Նորքի թաղապետարանը քանի՞ հայց է հարուցել սեփականության իրավունքով համայնքին պատկանող վերը նշված բնակարաններից բնակիչներին վտարելու պահանջով:
4. Խնդրում ենք, ներկայացնել այդ դատական գործերի ելքի մասին տեղեկատվություն (քանի՞սն է բավարարվել, քանի՞սը՝ մերժվել):

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում ենք գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին (հոդված 11)»:

Նշված փաստը հաստատվում է հարցման օրինակով եւ պատասխանողի՝ 12.08.2008թ. թիվ 27/01-48/813 պատասխանով:

Նոր Նորքի թաղապետարանը 12.08.2008թ. գրությամբ, տեղեկացրել է, որ. «... նշված ժամկետում չենք կարող Ձեզ տրամադրել անհրաժեշտ տեղեկությունները, քանի որ համայնքի ղեկավարի համապատասխան կարգադրությունով կատարվում է համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի եւ ոչ բնակելի տարածքների փաստացի չափագրում եւ գույքագրում:

Նշված փաստը հաստատվում է պատասխանողի 12.08.2008թ. թիվ 27/01-48/813 գրությամբ:

Նոր Նորքի թաղապետարանի 12.08.2008թ. թիվ 27/01-48/813 գրությունը «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ն ստացել է 23.08.2008թ-ին:

Նշված փաստը հաստատվում է ծրարի պատճենով, որի վրա առկա է 22.08.08թ. թվագրմամբ փոստային բաժնի կնիքը, որից հետո էլ այն ստացել է «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ն:

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ն լիարժեք եւ սպառնիչ պատասխան ստանալու համար սպասել է օրենքով սահմանված 30-օրյա ժամկետի լրանալուն, սակայն այդ ժամկետը լրանալուց հետո էլ պատասխան չի ստացել: Նշված փաստը հաստատվում է նման պատասխանի բացակայությամբ:

2. Հայցապահանջի իրավական հիմնավորումը

ՀՀ Սահմանադրության՝

- 27 հոդվածի 2-րդ պարբերության համաձայն. «Յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք, ներառյալ տեղեկություններ եւ գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը, տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից».
- 27.1 հոդվածի համաձայն. «Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական կամ հասարակական շահերի պաշտպանության նկատառումներով իրավասու պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններին եւ պաշտոնատար անձանց դիմումներ կամ առաջարկություններ ներկայացնելու եւ ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունք»:

Սահմանադրությամբ երաշխավորված վերը նշված իրավունքներն առարկայանում են նաեւ **«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում, որի 6 հոդվածի 1-ին մասի** համաձայն.

«Յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը եւ (կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկատվություն տնօրինողին եւ ստանալու այդ տեղեկությունը»:

Նույն օրենքի 9 հոդվածի 7-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը տրամադրելու համար անհրաժեշտ է կատարել լրացուցիչ աշխատանք, ապա այդ տեղեկությունը դիմողին է տրվում դիմումն ստանալուց հետո՝ 30-օրյա ժամկետում, որի մասին հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում, գրավոր տեղեկացվում է դիմողին՝ նշելով հետաձգման պատճառները եւ տեղեկությունը տրամադրելու վերջնական ժամկետը:

Ի խախտումն Սահմանադրությամբ ու օրենքով երաշխավորված հայցվորի իրավունքների ու պատասխանողի պարտականության, պատասխանող Նոր Նորքի թաղապետարանը օրենքով սահմանված ժամկետում եւ դրա ավարտից հետո էլ, մինչ օրս չի տրամադրել պահանջվող տեղեկատվությունը:

Այսպես, **«Տեղեկան ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16 հոդվածի 29 կետի համաձայն՝** համայնքի ավագանին սույն օրենքով սահմանված կարգով հաստատում է համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը, ինչը նշանակում է, որ համայնքի սեփականությունն ամեն տարի գույքագրվում եւ հաստատվում է ավագանու կողմից, այսինքն սեփականության վերաբերյալ տեղեկությունը պահպանվում է տեղական ինքնակառավարման մարմին թաղապետարանում, որն էլ պարտավոր էր տրամադրել սեփականության վերաբերյալ պահանջվող տեղեկատվությունը, ինչը չկատարելով խախտել է հայցվորի՝ Սահմանադրությամբ եւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով երաշխավորված իրավունքները, որպիսի խախտման համար հայցվորը ենթակա է վարչական պատասխանատվության:

Այսպես, **Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրքի 189.7 հոդվածը** պատասխանատվություն է սահմանում տեղեկություն տալու պարտականությունը չկատարելու համար, որի համաձայն.

«Օրենքով նախատեսված տեղեկությունը պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունների, ինչպես նաեւ հանրային նշանակության կազմակերպությունների պաշտոնատար անձանց կողմից ապօրինաբար չտրամադրելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկից մինչեւ հիսնապատիկի չափով:

Նույն խախտումը, որը կատարվել է կրկին անգամ՝ վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո մեկ տարվա ընթացքում՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից մինչև հարյուրապատիկի չափով»:

Նույն օրենսգրքի 223 հոդվածի համաձայն՝ առաջին ատյանի դատարանների դատավորները քննում են սույն օրենսգրքի 189՝ հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը:

Գտնում ենք, որ արդարացի իրավունք ունենք դատարանից հայցել վարչական տույժի ենթարկել պատասխանող՝ Նոր Նորքի թաղապետ Դավիթ Պետրոսյանին իր ապօրինի արարքի /անգործության/ համար, որն արտահայտվել է օրենքով սահմանված իր պարտականություններից խուսափելու, այն է՝ հայցված տեղեկատվությունը չտրամադրելու արարքով եւ պահանջել, որ դրա համար որպես պատասխանատվության միջոց կիրառվի տուգանքը, ընդ որում տուգանքի առավելագույն չափի, այն է 50.000 /հիսուն հազար/ դրամ գումարի չափով: Վերոգրյալից ելնելով եւ ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 11 գլխի պահանջներով՝

Խնդրում եմ

1. Ոչ իրավաչափ ճանաչել Երեւան քաղաքի Նոր Նորքի թաղապետարանի այն գործողությունները կամ անգործությունը, որով օրենքով սահմանված առավելագույն ժամկետում պատասխան չի տրվել հայցվող տեղեկատվության վերաբերյալ:
2. Պարտավորեցնել Երեւան քաղաքի Նոր Նորքի թաղապետարանին հնգօրյա ժամկետում տրամադրել տեղեկատվություն այն մասին, թե
 - Նոր Նորք համայնքին սեփականության իրավունքով քանոնի բնակարան է պատկանում (այդ թվում համայնքի հաշվեկշռում քանոնի բնակարան է գրանցված), որոնցում բնակվում են այն բնակիչները, որոնք չեն սեփականաշնորհել իրենց բնակարանները:
 - հայտնել այդ բնակարանների հասցեները:
 - Նոր Նորքի թաղապետարանը քանոնի հայց է հարուցել սեփականության իրավունքով համայնքին պատկանող վերը նշված բնակարաններից բնակիչներին վտարելու պահանջով:
 - ներկայացնել այդ դատական գործերի ելքի մասին տեղեկատվություն (քանի՞սն է բավարարվել, քանիսը՝ մերժվել):
3. Նոր Նորքի թաղապետ Դավիթ Պետրոսյանին ենթարկել վարչական պատասխանատվության՝ տուգանքի՝ 50000 դրամի չափով:
4. Նոր Նորքի թաղապետարանից հօգուտ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի բռնագանձել 12000 դրամ պետական տուրքի գումարը:

Կից ներկայացվում են՝

1. Պետական տուրքի վճարման անդորրագիր,
2. լիազորագիր,
3. հարցման օրինակը,
4. պատասխանը,
5. Ծրար:

«Ինֆորմացիայի ազատության
կենտրոն» ՀԿ նախագահ՝
Լիազոր ներկայացուցիչ՝

Շուշան Դոյրոյան,
Կարեն Մեժլումյան:

Վ Ճ Ի Ռ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

23.03.2009թ.

ք. Երեւան

Հայաստանի Հանրապետության վարչական դատարանը
հետեւյալ կազմով՝

Նախագահող դատավոր Ա. Սարգսյան,

քարտուղարությամբ՝ Գ. Տոբեյանի,

մասնակցությամբ՝

հայցվոր՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի

(ներկայացուցիչ Կ. Մեժլումյան),

պատասխանողներ՝ Նոր Նորքի թաղապետարանի եւ

Նոր Նորքի թաղային համայնքի ղեկավարի

ներկայացուցիչներ Ա. Կարապետյանի,

Յ. Գաբրիելյանի,

դռնբաց դատական նիստում քննելով վարչական գործն ըստ հայցի «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի ընդդեմ Նոր Նորքի թաղապետարանի եւ Նոր Նորքի թաղային համայնքի ղեկավար Դավիթ Պետրոսյանի՝ Նոր Նորքի թաղապետարանի անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու, վերջինիս հնգօրյա ժամկետում տեղեկատվություն տրամադրելուն պարտավորեցնելու եւ Նոր Նորքի թաղային համայնքի ղեկավար Դավիթ Պետրոսյանին 50.000 դրամ տուգանքի չափով վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջների մասին,

Պ Ա Ր Չ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի (այսուհետ՝ նաեւ Կազմակերպություն) հայցադիմումն ընդդեմ Նոր Նորքի թաղապետարանի (այսուհետ՝ նաեւ Թաղապետարան) եւ Նոր Նորքի թաղային համայնքի ղեկավար Դավիթ Պետրոսյանի (այսուհետ՝ նաեւ Համայնքի ղեկավար)՝ Նոր Նորքի թաղապետարանի անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու, վերջինիս հնգօրյա ժամկետում տեղեկատվություն տրամադրելուն պարտավորեցնելու եւ Նոր Նորքի

թաղային համայնքի ղեկավար Դավիթ Պետրոսյանին 50.000 դրամ տուգանքի չափով վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջների մասին, ՀՀ վարչական դատարանի որոշմամբ ընդունվել է վարույթ, այնուհետև նշանակվել է քննություն:

Հայցվորի իրավական դիրքորոշումը.

Հայցադիմումով հայցվորը հայտնել է, որ 01.08.2008 թվականին հարցում է ներկայացրել Նոր Նորք թաղային համայնքին այն մասին, թե Նոր Նորք համայնքին սեփականության իրավունքով քանի բնակարան է պատկանում (այդ թվում համայնքի հաշվեկշռում քանի բնակարան է գրանցված), որոնցում բնակվում են այն բնակիչները, որոնք չեն սեփականաշնորհել իրենց բնակարանները, թե ինչպես է այդ բնակարանների հասցեները, թե Նոր Նորքի թաղապետարանը քանի հայց է հարուցել սեփականության իրավունքով համայնքին պատկանող վերը նշված բնակարաններից բնակիչներին վտարելու պահանջով եւ ինչ էլք են ունեցել այդ դատական գործերը (քանիսն է բավարարվել եւ քանիսը՝ մերժվել): Հարցումի պատասխանը խնդրել է տրամադրել «Ինֆորմացիայի ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված 5-օրյա ժամկետում:

Նոր Նորք թաղապետարանը 12.08.2008 թվականի գրությամբ, որը իրենք ստացել են 23.08.2008 թվականին, տեղեկացրել է, որ նշված ժամկետում չի կարող տրամադրվել անհրաժեշտ տեղեկությունները, քանի որ համայնքի ղեկավարի համապատասխան կարգադրությունով կատարվում է համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի եւ ոչ բնակելի տարածքների փաստացի չափագրում եւ գույքագրում:

Վերը նշվածից զատ այլ պատասխան առ այսօր չի տրվել:

Որպես հայցապահանջի իրավական հիմնավորում հայցվորը հայցադիմումով վկայակոչել է ՀՀ Սահմանադրության 27-րդ եւ 271-րդ հոդվածները, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասը, 9-րդ հոդվածի 7-րդ մասի 3-րդ կետը, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 29-րդ կետը, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 189.7-րդ եւ 223-րդ հոդվածները եւ նշել է, որ Նոր Նորքի թաղապետարանը պահանջվող տեղեկատվությունը տրամադրելուն պարտավոր լինելով հանդերձ սահմանված ժամկետում չի տրամադրել այն, որով խախտվել են ՀՀ Սահմանադրությամբ եւ օրենքով երաշխավորված իրենց իրավունքները, իսկ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 189.7-րդ հոդվածը պատասխանատվություն սահմանում տեղեկություն տալու պարտականությունը չկատարելու համար, ուստի, ըստ հայցվորի, Նոր Նորքի թաղային համայնքի ղեկավարը պետք է ենթարկվի վարչական պատասխանատվության, ընդ որում տուգանքի առավելագույն չափի՝ 50.000 դրամ:

Հիմք ընդունելով վերը նշվածը՝ հայցվորը հացադիմումով խնդրել է ոչ իրավաչափ ճանաչել Նոր Նորքի թաղապետարանի անգործությունը, պարտավորեցնել վերջինիս հնգօրյա ժամկետում տեղեկատվություն տրամադրել եւ Նոր Նորքի թաղային համայնքի ղեկավար Դավիթ Պետրոսյանին ենթարկել 50.000 դրամ տուգանքի չափով վարչական պատասխանատվության:

Դատաքննությամբ, հայցվորի ներկայացուցիչը նշելով, որ Համայնքի ղեկավարը տրամադրել է հայցվող տեղեկատվությունը, հայցը պնդեց միայն Նոր Նորքի թաղապետարանի անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու եւ Նոր Նորքի թաղային համայնքի ղեկավար Դավիթ Պետրոսյանին 50.000 դրամ տուգանքի չափով վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջների մասով եւ խնդրեց հիմք ընդունել հայցադիմումով ներկայացված, ինչպես նաեւ ՀՀ վարչական դատարանի 30.12.2008թ. թիվ ՎԴ/5820/05/08 վճռում արտացոլված փաստարկները:

Պատասխանողների իրավական դիրքորոշումը.

Պատասխանողների ներկայացուցիչները հայցի դեմ առարկեցին ներկայացնելով հետեւյալ փաստարկները.

Հայցապահանջում նշված իրավական հիմքը վերաբերում է տեղեկատվությունը տնօրինողին: Այս պահին Նոր Նորք համայնքը չի կարող համարվել պահանջված տեղեկատվության տնօրինող, քանի որ 1993 թվականից սեփականաշնորհման գործընթացով պետական գույքի կառավարման նախարարությունն է զբաղվել եւ միայն 1997 թվականին ՀՀ կառավարության «Երեւան քաղաքի թաղային համայնքների սեփականություն հանդիսացող գույքի ցանկը սահմանելու մասին» թիվ 42 որոշմամբ թաղային համայնքներին է տրամադրվել համայնքային սեփականությունը:

Թաղապետարանը կատարում է դեռեւս համապատասխան աշխատանքներ գույքի պետական կառավարման մարմնի եւ համատիրությունների հետ ճշտգրիտ եւ ստույգ տեղեկատվությանը տիրապետելու համար:

Ինչ վերաբերում է Նոր Նորքի համայնքի ղեկավարին վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջին, ապա անհասկանալի է, թե ինչու է հայցվորը պահանջում տուգանքի առավելագույն չափը կիրառել:

Դատաքննությամբ պատասխանողների ներկայացուցիչները նշելով, որ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին եւ 3-րդ մասերի իմաստով համայնքի ղեկավարը պարտավոր չէր պատասխանել հայցվորի հարցմանը, խնդրեցին հայցը մերժել:

Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը.

Կազմակերպությունը 01.08.2008 թվականին հարցում է ներկայացրել Համայնքի ղեկավարին այն մասին, թե Նոր Նորք համայնքին սեփականության իրավունքով քանի բնակարան է պատկանում (այդ թվում համայնքի հաշվեկշռում քանի բնակարան է գրանցված), որոնցում բնակվում են այն բնակիչները, որոնք չեն սեփականաշնորհել իրենց բնակարանները, թե ինչպես է այդ

բնակարանների հասցեները, թե Նոր Նորքի թաղապետարանը քանի հայց է հարուցել սեփականության իրավունքով համայնքին պատկանող վերը նշված բնակարաններից բնակիչներին վտարելու պահանջով եւ ինչ էլք են ունեցել այդ դատական գործերը (քանիսն է բավարարվել եւ քանիսը՝ մերժվել):

Ի պատասխան՝ համայնքի ղեկավարը 12.08.2008 թվականի գրությամբ հայտնել է, որ նշված ժամկետում չի կարող տրամադրվել անհրաժեշտ տեղեկությունները, քանի որ համայնքի ղեկավարի համապատասխան կարգադրությունով կատարվում է համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի եւ ոչ բնակելի տարածքների փաստացի չափագրում եւ գույքագրում, եւ որ նշված աշխատանքների ավարտից հետո կտրամադրվեն անհրաժեշտ տեղեկությունները:

Սույն գործի քննության ընթացքում համայնքի ղեկավարը Կազմակերպությանը տրամադրել է հայցվող տեղեկատվությունը:

Վարչական դատարանի պատճառաբանություններն ու եզրահանգումները.

Լսելով կողմերի բացատրությունները՝ դատարանը ներկայացված գրավոր ապացույցների բազմակողմանի եւ օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ եզրակացրեց, որ հայցը ենթակա է բավարարման մասնակի՝ Նոր Նորքի թաղապետարանի անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու պահանջի մասով, իսկ հայցը՝ Նոր Նորքի թաղապետարանին հնգօրյա ժամկետում տեղեկատվություն տրամադրելուն պարտավորեցնելու եւ Նոր Նորքի թաղային համայնքի ղեկավար Դավիթ Պետրոսյանին 50.000 դրամ տուգանքի չափով վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջների մասով, ենթակա է մերժման հետեւյալ պատճառաբանությամբ.

ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք, ներառյալ՝ տեղեկություններ եւ գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը, տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը եւ (կամ) այն ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկատվություն տնօրինողին եւ ստանալու այդ տեղեկությունը:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի համաձայն տեղեկության տրամադրումը մերժվում է նույն օրենքի 8-րդ հոդվածում սահմանված դեպքերում կամ այդ տեղեկության տրամադրման համար սահմանված գումարը չվճարելու դեպքում:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի համաձայն մերժվում է տեղեկության տրամադրումը (բացառությամբ նույն հոդվածի 3-րդ մասում սահմանված դեպքերի), եթե դա՝

- 1) պարունակում է պետական, ծառայողական, բանկային, առևտրային գաղտնիք,
- 2) խախտում է մարդու անձնական եւ ընտանեկան կյանքի գաղտնիությունը, այդ թվում՝ նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական եւ այլ հաղորդումների գաղտնիությունը,
- 3) պարունակում է հրապարակման ոչ ենթակա նախնական քննության տվյալները,
- 4) բացահայտում է մասնագիտական գործունեությամբ պայմանավորված մատչելիության սահմանափակում պահանջող տվյալներ (բժշկական, նոտարական, փաստաբանական գաղտնիք),
- 5) խախտում է հեղինակային իրավունքը եւ (կամ) հարակից իրավունքները:

Փաստորեն, վերը նշված հանգամանքների բացակայության դեպքում անձի սահմանադրական իրավունքն է ստանալ տեղեկություն եւ դրա տրամադրումն ուղղված է ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված անձի խոսքի ազատության իրավունքի իրագործմանը:

Տվյալ դեպքում Կազմակերպությունը խնդրել է համայնքի ղեկավարին տրամադրել տեղեկություն այն մասին, թե Նոր Նորք համայնքին սեփականության իրավունքով քանի բնակարան է պատկանում (այդ թվում համայնքի հաշվեկշռում քանի բնակարան է գրանցված), որոնցում բնակվում են այն բնակիչները, որոնք չեն սեփականաշնորհել իրենց բնակարանները, թե ինչպես է այդ բնակարանների հասցեները, թե Նոր Նորքի թաղապետարանը քանի հայց է հարուցել սեփականության իրավունքով համայնքին պատկանող վերը նշված բնակարաններից բնակիչներին վտարելու պահանջով եւ ինչ ելք են ունեցել այդ դատական գործերը (քանիսն է բավարարվել եւ քանիսը՝ մերժվել):

Համադրելով Կազմակերպության կողմից հայցվող տեղեկության բնույթը եւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի վերը շարադրված իրավանորմերը՝ դատարանը գտնում է, որ բացակայում է տեղեկության տրամադրման մերժման հիմքերը, հետեւաբար ոչ իրավաչափ են Կազմակերպության կողմից պահանջվող տեղեկատվության տրամադրման մերժելուն ուղղված համայնքի ղեկավարի գործողությունները:

Ինչ վերաբերում է պատասխանողների ներկայացուցիչների այն պնդմանը, որ Նոր Նորք համայնքը չի կարող համարվել պահանջված տեղեկատվության տնօրինող, ապա նշված հանգամանքը չի կարող վկայել համայնքի ղեկավարի գործողությունների իրավաչափության մասին հետեւյալ նկատառումներով.

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 29-րդ կետի համաձայն՝ համայնքի ավագանին հաստատում է համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը:

Նույն օրենքի 37-րդ հոդվածի 7-րդ կետի համաձայն՝ համայնքի ղեկավարը իրականացնում է համայնքային սեփականություն համարվող շենքերի ու շինությունների հաշվառումը եւ բաշխումը, կազմում է սեփականության ամեն-

ամյա գույքագրման փաստաթղթերը, դրանք ներկայացնում է համայնքի ավագանու հաստատմանը:

Վերոհիշյալ իրավադրույթների վերլուծությունից պարզ է դառնում, որ տեղական ինքնակառավարման մարմինը, իրականացնելով համայնքային սեփականություն համարվող շենքերի ու շինությունների հաշվառումը եւ բաշխումը, համարվում է Կազմակերպության կողմից հայցվող տեղեկության տնօրինող:

Բացի այդ, **«Տեղեկատվության ազատության մասին» ԶԶ օրենքի 9-րդ հոդվածը** սահմանում է, որ եթե տեղեկատվություն տնօրինողը չունի փնտրվող տեղեկությունը, կամ դրա տրամադրումն իր լիազորությունների շրջանակից դուրս է, ապա նա տվյալ գրավոր հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում, պարտավոր է այդ մասին գրավոր տեղեկացնել դիմողին, իսկ հնարավորության դեպքում նրան տրամադրել նաեւ այդ տեղեկությունը տնօրինողի (այդ թվում՝ արխիվի) գտնվելու վայրը, որն ունի փնտրվող տեղեկությունը:

Մինչդեռ համայնքի ղեկավարի 12.08.2008 թվականի գրությամբ ոչ միայն չի տրամադրել Կազմակերպությանը այդ տեղեկությունը տնօրինողի գտնվելու վայրը, այլ նշելով, որ համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի եւ ոչ բնակելի տարածքների փաստացի չափագրման եւ գույքագրման աշխատանքների ավարտից հետո կտրամադրվեն անհրաժեշտ տեղեկությունները, ուղղակի ընդունել է դատարանի այն դիրքորոշումը, որ հենց Թաղապետարանն է հանդիսանում է հայցվող տեղեկության տնօրինողը:

Իսկ ինչ վերաբերում է պատասխանողների ներկայացուցիչների մեկ այլ պնդմանն առ այն, որ «Տեղեկատվության ազատության մասին» ԶԶ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին եւ 3-րդ մասերի իմաստով համայնքի ղեկավարը պարտավոր չէր պատասխանել հայցվորի հարցմանը, ապա դատարանն արձանագրում է, որ նման եզրահանգումն անհիմն է՝ հաշվի առնելով հետեւյալ հանգամանքները.

«Տեղեկատվության ազատության մասին» ԶԶ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասը, սահմանելով տեղեկատվության ստանալու սահմանափակումները, միեւնույն ժամանակ սահմանում է բացառություն, այն է՝ տեղեկատվությունը նույնիսկ «Տեղեկատվության ազատության մասին» ԶԶ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված դեպքերի առկայության պայմաններում չի կարող մերժվել, եթե միաժամանակ առկա են նույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքերը:

Իսկ «Տեղեկատվության ազատության մասին» ԶԶ օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն.

«Տեղեկության տրամադրումը չի կարող մերժվել, եթե դա՝

- 1) վերաբերում է քաղաքացիների անվտանգությանը եւ առողջությանը սպառնացող արտակարգ դեպքերին, ինչպես նաեւ տարերային (ներառյալ՝ պաշտոնապես կանխատեսվող) աղետներին եւ դրանց հետեւանքներին,*
- 2) ներկայացնում է Հայաստանի Հանրապետության տնտեսության ընդհանուր վիճակը, ինչպես նաեւ բնության եւ շրջակա միջավայրի պաշտպա-*

նույնի, առողջապահության, կրթության, գյուղատնտեսության, առեւտրի, մշակույթի բնագավառում տիրող իրական վիճակը,

3) *չտրամադրելը բացասական ազդեցություն կունենա Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական, գիտատեխնիկական եւ հոգեւոր-մշակութային զարգացման պետական ծրագրերի իրականացման վրա:*

Յետեւաբար, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանելով այն դեպքերը, երբ նույն հոդվածի 1-ին մասով նշված տեղեկատվության տրամադրումը մերժելու հիմքերի պարագայում նույնիսկ չի կարող մերժվել տեղեկատվության տրամադրումը, որեւէ կերպ տեղեկատվությունը տնօրինողին չի ընձեռում ցանկացած պարագայում տեղեկատվության տրամադրումը մերժելու իրավասությամբ: Այսպիսով, ոչ իրավաչափ են Կազմակերպության կողմից փնտրվող տեղեկատվության տրամադրման մերժելուն ուղղված համայնքի ղեկավարի գործողությունները:

Նկատի ունենալով, որ դատաքննությամբ պարզվեց, որ խնդրո առարկա տեղեկատվությունը Թաղապետարանի կողմից Կազմակերպությանը տրամադրվել է, ինչից ելնելով էլ հայցվորի ներկայացուցիչը դատաքննությամբ չպնդեց հայցը՝ Նոր Նորքի թաղապետարանին հնգօրյա ժամկետում տեղեկատվություն տրամադրելուն պարտավորեցնելու պահանջի մասով, դատարանը գտնում է, որ նշված պահանջն առարկայազուրկ է, ուստի մերժման ենթակա:

Նոր Նորքի թաղային համայնքի ղեկավար Դավիթ Պետրոսյանին 50.000 դրամ տուգանքի չափով վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջը քննարկելիս դատարանը հարկ է համարում անդրադառնալ այն հարցին, թե արդյո՞ք Վարչական իրավախախտումների վերաբերյալ 189.7-րդ հոդվածով նախատեսված վարչական պատասխանատվության պաշտոնատար անձին ՀՀ վարչական դատարանը կարող է ենթարկել հասարակական կազմակերպության հայցի հիման վրա:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ 223-րդ հոդվածի համաձայն առաջին ատյանի դատարանների դատավորները քննում են սույն օրենսգրքի նաեւ 189.7-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը: Սույն դրույթից հետեւում է, որ դատարանը մինչ իրավախախտողին Վարչական իրավախախտումների վերաբերյալ 189.7-րդ հոդվածով պատասխանատվության ենթարկելը պետք է քննի վարչական իրավախախտումների վերաբերյալ գործը: Իսկ վարչական իրավախախտումների վերաբերյալ գործը կարող է կազմվել միայն վարչական վարույթ հարուցելուց հետո վարչական մարմինների կողմից: Դատարանի նման դիրքորոշումը հիմնավորված է նաեւ հետեւյալով.

«Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածը սահմանում է վարչական վարույթի վերաբերյալ գործերը վարելու եւ հաշվառելու կարգը, որի 1-ին մասի համաձայն վարչական վարույթ հարուցելու պահից վարչական մարմինը կազմում է առանձին գործ, որում պահվում են տվյալ վարույթին առնչվող բոլոր փաստաթղթերը, այդ թվում՝

վարույթի արդյունքում ընդունված վարչական ակտը (դրա հաստատված պատճենը):

Փաստորեն, ՀՀ վարչական դատարանը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 26-րդ գլխով սահմանված կարգով վարչական պատասխանատվության կարող է ենթարկել միայն վարչական մարմնի կողմից կազմված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործը քննելուց հետո, որի մասին է վկայում նաեւ այն հանգամանքը, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 151-րդ հոդվածի համաձայն վարչական պատասխանատվության ենթարկելու մասին գործերը հարուցվում են օրենքով վարչական իրավախախտումների վերաբերյալ արձանագրություններ կազմելու լիազորություն ունեցող մարմինների եւ պաշտոնատար անձանց հայցադիմումների հիման վրա: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունը չի հանդիսանում վարչական մարմին եւ հետեւաբար չի իրականացնում վարչարարություն, դատարանը գտնում է, որ վերջինիս հայցը՝ Նոր Նորքի թաղային համայնքի ղեկավար Դավիթ Պետրոսյանին 50.000 դրամ տուգանքի չափով վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջի մասով, պետք է մերժել:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 59-րդ, 112-115-րդ եւ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 130-132-րդ հոդվածներով, դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության հայցը քավարարել մասնակի՝ Նոր Նորքի թաղապետարանի անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու պահանջի մասով:

Ոչ իրավաչափ ճանաչել Կազմակերպության կողմից հայցվող տեղեկատվության տրամադրման մերժելուն ուղղված Համայնքի ղեկավարի գործողությունները:

Հայցը՝ Նոր Նորքի թաղապետարանին հնգօրյա ժամկետում տեղեկատվություն տրամադրելուն պարտավորեցնելու եւ Նոր Նորքի թաղային համայնքի ղեկավար Դավիթ Պետրոսյանին 50.000 դրամ տուգանքի չափով վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջների մասով, մերժել:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո եւ կարող է բողոքարկվել վճռաբեկության կարգով ՀՀ վճռաբեկ դատարանին:

Օրինական ուժի մեջ մտնելուց հետո վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

ԴԱՏԱՎՈՐ

Ա. ՍԱՐԳՍՅԱՆ:

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻՆ

Բողոք բերող անձ՝

Հայցվոր՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն»

հասարակական կազմակերպություն

Նախագահ՝ Շուշան Դոյրոյան

Ներկայացուցիչ-փաստաբան՝ Կարեն Մեժլումյան

Գործին մասնակցող անձինք՝

Պատասխանողներ՝ Նոր Նորքի թաղապետարան

Հասցե՝ Երևան, Գայի 19

Նոր Նորքի թաղապետ Դավիթ Պետրոսյան

ՀՀ վարչական դատարան

Նախագահող դատավոր՝ Ա.Սարգսյան

Վարչական գործ թիվ ՎԴ/6279/05/08

23.03.2009թ. վճիռ

14.04.2009թ.

Վ Ճ Ռ Ա Բ Ե Կ Բ Ո Ղ Ո Ք

Նյութական եւ դատավարական իրավունքի խախտման հիմքով

ՀՀ վարչական դատարանը քննել է վարչական գործն ըստ հայցի «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ նաեւ՝ ԻԱԿ) ընդդեմ Նոր Նորքի թաղապետարանի եւ Նոր Նորքի թաղային համայնքի ղեկավար Դավիթ Պետրոսյանի՝ Նոր Նորքի թաղապետարանի անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու, վերջինիս հնգօրյա ժամկետում տեղեկատվություն տրամադրելուն պարտավորեցնելու եւ Նոր Նորքի թաղային համայնքի ղեկավար Դավիթ Պետրոսյանին 50.000 դրամ տուգանքի չափով վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջների մասին:

I. Գործի դատավարական նախապատվությունը.

ՀՀ վարչական դատարանը 23.03.2009թ-ին վճռել է.

««Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության հայցը բավարարել մասնակի՝ Նոր Նորքի թաղապետարանի անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու պահանջի մասով:

Ոչ իրավաչափ ճանաչել Կազմակերպության կողմից հայցվող տեղե-

կատվության տրամադրման մերժելուն ուղղված համայնքի ղեկավարի գործողությունները:

Յայցը՝ Նոր Նորքի թաղապետարանին հնգօրյա ժամկետում տեղեկատվություն տրամադրելուն պարտավորեցնելու եւ Նոր Նորքի թաղային համայնքի ղեկավար Դավիթ Պետրոսյանին 50.000 դրամ տուգանքի չափով վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջների մասով մերժել:

Երեւանի Նոր Նորք համայնքից հօգուտ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության բռնագանձել 4.000 դրամ՝ որպես պետական տուրքի գումար»:

II. Վճռաբեկ բողոքի քննության համար Էական նշանակություն ունեցող փաստերը.

1. «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունը 01.08.2008թ-ին դիմել է Նոր Նորք թաղային համայնքին՝ տեղեկատվություն տրամադրելու խնդրանքով:
2. Նոր Նորքի թաղապետարանը օրենքով սահմանված 5-օրյա եւ/կամ 30-օրյա ժամկետում պահանջվող տեղեկատվությունը չի տրամադրել:
3. 2008թ. հոկտեմբեր ամսին «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՅԿ-ն դիմել է իր իրավունքների դատական պաշտպանության՝ պահանջելով նաեւ թաղապետին ենթարկել վարչական պատասխանատվության:
4. Գործի քննության ընթացքում 2009թ. մարտ ամսին, Նոր Նորքի թաղապետարանը տրամադրել է հայցվող տեղեկատվությունը:

III. Վճռաբեկ բողոքի հիմքերը եւ պատճառաբանությունները.

Բողոքում բարձրացված իրավական խնդիրը.

- Եթե տեղական ինքնակառավարման մարմինն օրենքով սահմանված ժամկետում չի տրամադրել պահանջվող տեղեկատվությունը, ապա այդ մարմնի ղեկավարը ենթակա է վարչական պատասխանատվության, թե՛ ոչ, եթե անգամ դատաքննության ընթացքում, օրենքով սահմանված ժամկետից 6 ամիս անց, այդ տեղեկատվությունը տրամադրել է:

ՀՀ Սահմանադրության՝

- 27 հոդվածի 2-րդ պարբերության համաձայն. «Յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք, ներառյալ տեղեկություններ եւ գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը, տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից».
- 27.1 հոդվածի համաձայն. «Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական կամ հասարակական շահերի պաշտպանության նկատառումներով իրավասու պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններին եւ պաշտոնատար անձանց դիմումներ կամ առաջարկություններ ներկայացնելու եւ ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունք»:

Սահմանադրությամբ երաշխավորված վերը նշված իրավունքներն առարկայանում են նաեւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում, որի 6 հոդվածի 1-ին մասի համաձայն.

«Յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը եւ (կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկատվություն տնօրինողին եւ ստանալու այդ տեղեկությունը»:

Նույն օրենքի 9 հոդվածի 7-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը տրամադրելու համար անհրաժեշտ է կատարել լրացուցիչ աշխատանք, ապա այդ տեղեկությունը դիմողին է տրվում դիմումն ստանալուց հետո՝ 30-օրյա ժամկետում, որի մասին հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում, գրավոր տեղեկացվում է դիմողին՝ նշելով հետաձգման պատճառները եւ տեղեկությունը տրամադրելու վերջնական ժամկետը:

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի կանոնադրության 2-րդ մասով սահմանված են ՀԿ-ի գործունեության առարկան եւ խնդիրները, ըստ որի՝ «Կազմակերպությունը հետապնդում է հետեւյալ նպատակները եւ խնդիրները.

1. նպաստել Հայաստանում տեղեկատվության ազատության զարգացմանը,
2. նպաստել մարդկանց, մասնավորապես լրագրողների տեղեկության ստանալու իրավունքի պաշտպանությանը,
3. աջակցել տեղեկատվության ազատության օրենսդրության կատարելագործմանը,
4. նպաստել մարդկանց՝ տեղեկատվության ազատության ոլորտում իրավագիտակցության բարձրացմանը եւ կրթությանը,
5. աջակցել մարդկանց, մասնավորապես լրագրողներին իրավաբանական եւ մասնագիտական խորհրդատվություն ստանալուն,
6. աջակցել տեղեկատվության ազատության իրավունքի դատական պաշտպանության իրականացմանը:

Դատարանը, գտնելով, որ. «ոչ իրավաչափ են Կազմակերպության կողմից փնտրվող տեղեկատվության տրամադրման մերժելուն ուղղված համայնքի ղեկավարի գործողությունները», միաժամանակ մերժել է Նոր Նորքի թաղային համայնքի ղեկավար Դավիթ Պետրոսյանին 50.000 դրամ տուգանքի չափով վարչական պատասխանատվության ենթարկելու մասին պահանջը, պատճառաբանությամբ, որ ըստ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 198.7 հոդվածի 1-ին մասի պատասխանատվությունը սահմանված է տեղեկատվությունը ապօրինի չտրամադրելու համար, մինչդեռ Նոր Նորքի թաղային համայնքի ղեկավարի կողմից նշված տեղեկատվությունը՝ չնայած ուշացումով, այնուամենայնիվ, տրամադրվել է հայցվորին, որպիսի պայմաններում դատարանը գտել է, որ բացակայում է անձին վարչական պատասխանատվության ենթարկելու հիմքը:

Գտնում ենք, որ դատարանը սխալ է մեկնաբանել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 198.7 հոդվածի 1-ին մասը, որի համաձայն.

«Օրենքով նախատեսված տեղեկությունը պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունների, ինչպես նաեւ հանրային նշանակության կազմակերպությունների պաշտոնատար անձանց կողմից ապօրինաբար չտրամադրելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկից մինչեւ հիսնապատիկի չափով»:

Դատարանը գտել է, որ այս դեպքում դատաքննության ընթացքում պահանջվող տեղեկատվությունը տրամադրելը բացառում է տեղեկատվությունը չտրամադրելու համար անձին վարչական պատասխանատվության ենթարկելու հիմքը: Գտնում ենք, որ նման մեկնաբանությունը չի բխում վերը նշված՝ ՀՀ Սահմանադրության 27, 27.1, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9 հոդվածի 7-րդ մասի 3-րդ կետի եւ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 198.7 հոդվածի 1-ին մասի պահանջներից, քանի որ վերը նշված դրույթների մեկնաբանությունից բխում է, որ տեղեկությունը ապօրինաբար չտրամադրելը, դա օրենքով սահմանված ժամկետում՝ տվյալ դեպքում՝ 30-օրյա ժամկետում չտրամադրելն է, որի խախտումն էլ հենց տեղեկատվությունը ապօրինաբար չտրամադրելն է:

Դա նշանակում է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 198.7 հոդվածի 1-ին մասով նախատեսված զանցակազմը ավարտված է համարվում «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9 հոդվածի 7-րդ մասի 2-րդ եւ 3-րդ կետերով սահմանված ժամկետներում (5-օրյա կամ 30-օրյա) պահանջվող տեղեկատվությունը չտրամադրելու դեպքում:

Հակառակ մոտեցման դեպքում, կստացվի, որ որեւէ մեկի համար ՀՀ Սահմանադրության 27, 27.1 հոդվածներով ու «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9 հոդվածի 7-րդ մասի 2-րդ եւ 3-րդ կետերով երաշխավորված իրավունքը հնարավոր չի լինի արդյունավետորեն իրականացնել ու պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինները պարզապես օրենքով սահմանված ժամկետում չեն տրամադրի տեղեկատվությունը եւ եթե որեւէ մեկը դիմի իր իրավունքի դատական պաշտպանության, ապա դրանից հետո միայն կտրամադրվի պահանջվող տեղեկատվությունը:

Ավելին, եթե նման մոտեցումը նախադեպ դառնա, ապա Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով նախատեսված որեւէ իրավախախտում կատարած անձ, եթե իրավախախտումը հայտնաբերվելուց հետո վերացնի կատարված խախտումը, օրինակ ապօրինի հողազավթումը եւ այլն, ապա նա վարչական պատասխանատվության չի կարող ենթարկվել:

IV. Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու մասին հիմնավորումները.

Գտնում ենք, որ առկա են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234 հոդվածի 1-ին մասի 1-ին եւ 3-րդ կետերով նախատեսված՝ բողոքը վարույթ ընդունելու հիմնավորումները:

1. Գտնում ենք, որ բողոքում բարձրացված հարցերի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է եական նշանակություն ունենալ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 198.7 հոդվածի 1-ին մասի միատեսակ կիրառության համար: Մասնավորապես, վճռաբեկ դատարանի որոշմամբ կպարզաբանվի, թե Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 198.7 հոդվածի 1-ին մասով նախատեսված զանցակազմը երբ է համարվում ավարտված եւ հանդիսանում վարչական պատասխանատվության հիմք՝ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9 հոդվածի 7-րդ մասի 2-րդ եւ 3-րդ կետերով սահմանված 5-օրյա եւ 30-օրյա ժամկետների խախտման փաստով, թե՛ ոչ (այսինքն՝ անկախ նրանից, թե երբ, օրինակ, դիմումը ստանալուց 8 ամիս անց, կտրամադրվի պահանջվող տեղեկատվությունը, եթե տրամադրվում է, ապա վարչական պատասխանատվության հիմքը՝ զանցակազմը բացակայում է):

2. Գտնում ենք, որ բողոքարկվող վճիռը չբեկանվելու դեպքում, այն հայցվորի համար ծանր հետեւանքներ կառաջացնի, քանի որ հայցվորը կզրկվի իր կառնադրական խնդիրների իրականացման եւ իրավունքների պաշտպանության արդյունավետ միջոցի հնարավորությունից: Բացի այդ, վճռի իրավական փաստարկները կիրառելի կլինեն վարչական դատարանի համար եւ որեւէ պետական ու տեղական ինքնակառավարման մարմին այլեւս վարչական պատասխանատվության սպառնալիքի ներքո պարտադրված չի լինի տրամադրել պահանջվող տեղեկատվությունը եւ այն կտրամադրի միայն այն անձանց, որոնք դիմել են իրենց իրավունքների դատական պաշտպանության:

Վերոգրյալից ելնելով եւ ղեկավարվելով ՀՀ քաղ. դատ. օր-ի 5-րդ գլխի պահանջներով՝

Խնդրում եմ՝

1. Սույն վճռաբեկ բողոքն ընդունել վարույթ:
2. Բեկանել ՀՀ վարչական դատարանի թիվ ՎԴ/6279/05/08 վարչական գործով 23.03.2009թ-ին կայացված վճռի՝ Նոր Նորքի թաղապետ Դավիթ Պետրոսյանին 50000 դրամի տուգանքի չափով վարչական պատասխանատվության ենթարկելու մասին պահանջը մերժելու մասը:
3. Փոփոխել վճռի այդ մասը եւ Նոր Նորքի թաղապետ Դավիթ Պետրոսյանին ենթարկել 50000 դրամի տուգանքի չափով վարչական պատասխանատվության:
4. Լուծել պետական տուրքի հարցը:

Կից ներկայացվում են՝

1. պետական տուրքի վճարման անդորրագիր,
2. լիազորագիր,
3. բողոքարկվող վճիռը:

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն»
ՀԿ լիազոր ներկայացուցիչ՝

Կարեն Մեծլումյան:

Գործ 3.
Ինֆորմացիայի ազատության
կենսրոնն
ընդդեմ
Արաբկիրի թաղապետի եւ
թաղապետսարանի

Գործի համառոտ նկարագրությունը

2008թ. հուլիսի 30-ին Ինֆորմացիայի ազատության կենտրոնը տեղեկատվություն ստանալու հարցում է ուղարկել Արաբկիր թաղային համայնքին՝ խնդրելով տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. Արաբկիր համայնքին սեփականության իրավունքով քանի՞ բնակարան է պատկանում, որոնցում բնակվում են այն բնակիչները, որոնք չեն սեփականաշնորհել իրենց բնակարանները:
2. Խնդրում ենք հայտնել այդ բնակարանների հասցեները:
3. Արաբկիրի թաղապետարանը քանի՞ հայց է հարուցել սեփականության իրավունքով համայնքին պատկանող վերը նշված բնակարաններից բնակիչներին վտարելու պահանջով:
4. Խնդրում ենք, ներկայացնել այդ դատական գործերի ելքի մասին տեղեկատվություն (քանի՞սն է բավարարվել, քանի՞սը՝ մերժվել):

06.08.2008թ. գրությամբ Արաբկիրի թաղապետարանը մերժել է 1-ին եւ 2-րդ կետով հարցերը՝ պատճառաբանելով, որ այդ տեղեկատվությանը տնօրինում է համատիրությունը: ԻԱԿ-ը 2008թ. սեպտեմբերին հայց է ներկայացրել ՀՀ վարչական դատարան՝ Արաբկիր համայնքի ղեկավարի գործողությունները ոչ իրավաչափ ճանաչելու եւ որպես հետեւանք տեղեկատվություն տրամադրելուն պարտադրելու պահանջով:

2008թ. դեկտեմբերի 19-ի դատաքննության ժամանակ պատասխանող կողմը հայցն ամբողջությամբ առարկեց՝ պատճառաբանելով, որ դեռեւս

իրենց համայնքում չկա հստակ հաշվառում, այդ իսկ պատճառով էլ իրենք «ոչ թե մերժել են, այլ ընդամենը չեն ունեցել պահանջվող տեղեկությունը»: Դատավոր Հովսեփ Բեդեյանն էլ հստակեցրեց, որ եթե չունենի, պետք է գրավոր պատասխանելն՝ 0 բնակարան, «քանի որ դա եւս տեղեկատվություն է»:

Արաբկիրի թաղապետի ներկայացուցիչ Գեղամ Կարապետյանը տեղեկացրեց, որ համայնքի ղեկավարը հանձնարարել է հաշվառել համայնքի սեփականությունը հանդիսացող բնակարանները, եւ շուտով հստակ տեղեկատվություն կունենան եւ պատրաստ լինելուն պես այն կտրամադրվի ԻԱԿ-ին: Դատավոր Հ. Բեդեյանն էլ նկատեց, որ «դատաքննությունը ունեցավ դրական քայլ. համայնքը սկսեց հաշվառում իրականացնել»: Նաեւ զարմանք արտահայտեց, որ համայնքն այդ գործը սկսում է 10 տարի ուշացումով:

Դեկտեմբերի 30-ին կայացած նիստում ՀՀ վարչական դատարանը լիովին բավարարեց ԻԱԿ-ի հայցն ընդդեմ Արաբկիրի թաղապետարանի՝ պարտավորեցնելով թաղապետարանին 5-օրյա ժամկետում տրամադրել մերժված տեղեկությունները, ինչպես նաեւ փոխհատուցել 4000 դրամ վճարված պետական տուրքը:

Արաբկիրի թաղապետարանը ԻԱԿ-ի հարցմանը լիարժեք պատասխան տվեց: Սակայն 4000 դրամ պետ. տուրքի գումարը թաղապետարանն այնքան ուշացրեց, որ ԻԱԿ-ը ստիպված այն ստացավ հարկադիր կատարման ծառայության օգնությամբ՝ վճռի հրապարակումից 6 ամիս անց:

Գործի նյութերը

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՅԿ

30.07.2008թ.

80-ի 4

Արաբկիր համայնքի թաղապետ
պարոն Զովհաննես Շահինյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Չարգելի պարոն Շահինյան,

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 եւ 27.1 հոդվածների եւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում եմք տրամադրել հետեւյալ տեղեկությունը.

1. Արաբկիր համայնքին սեփականության իրավունքով քանի՞ բնակարան է պատկանում (այդ թվում համայնքի հաշվեկշռում քանի՞ բնակարան է գրանցված), որոնցում բնակվում են այն բնակիչները, որոնք չեն սեփականաշնորհել իրենց բնակարանները:
2. Խնդրում եմք հայտնել այդ բնակարանների հասցեները:
3. Արաբկիրի թաղապետարանը քանի՞ հայր է հարուցել սեփականության իրավունքով համայնքին պատկանող վերը նշված բնակարաններից բնակիչներին վտարելու պահանջով:
4. Խնդրում եմք, ներկայացնել այդ դատական գործերի ելքի մասին տեղեկատվություն (քանի՞սն է բավարարվել, քանի՞սը՝ մերժվել):

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում եմք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում եմ գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին (հոդված 11):

Կանխավ շնորհակալ եմ:

Նախագահ՝ Շուշան Դոյրոյան _____

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՔԱՂԱՔ ԵՐԵՎԱՆ
ԱՐԱՔԿԻՐ ԹԱՂԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

թիվ 25/01-4-1134

«06» 08 2008թ.

**ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆ**

ՀԿ-ի նախագահ տիկին Շ. Դոյոյանին

Հարգելի տիկին Դոյոյան,

Ի պատասխան Արաբկիր համայնքի ղեկավարին ուղղված Ձեր 30.07.08թ. թիվ 80-ի 4 հարցման՝ հայտնում ենք, որ Արաբկիրի թաղապետարանը ստույգ տեղեկատվություն չի կարող տալ չսեփականաշնորհված բնակարանների վերաբերյալ, քանի որ համայնքում բոլոր շենքերը ստեղծել են իրենց առանձին համատիրությունները եւ միայն դրանց միջոցով Դուք կարող եք ստանալ սպառիչ տեղեկատվություն Ձեզ հետաքրքրող հարցի վերաբերյալ:

Ավելացնենք նաեւ, որ չսեփականաշնորհված բնակարանների բնակիչներին վտարելու պահանջով թաղապետարանը երբեւիցե հայց չի ներկայացրել դատարան:

Հ. Շահինյան,

Կատ. Գ. Կարապետյան:

ՀՀ ՎԱՐՉԱՎԱՆ ԴԱՏԱՐԱՆԻՆ

Երեւան, Գարեգին Նժդեհի 23

Հայցվոր՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն»

հասարակական կազմակերպություն

Նախագահ՝ Շուշան Դոյրոյան

Ներկայացուցիչ՝ Կարեն Մեծլումյան

Պատասխանող՝ Արաբկիրի թաղապետարան

Հասցե՝ Երեւան, Ն. Չարյան 27

Հ Ա Յ Ց Ա Դ Ի Մ ՈՒ Մ

Ճանաչման եւ գործողության կատարման հայց

Տեղական ինքնակառավարման մարմնի գործողությունները ոչ իրավաչափ ճանաչելու եւ որպէս հետեւանք տեղեկատվություն տրամադրել պարտադրելու պահանջի մասին

1. Փաստերը, որոնց վրա հիմնված է հայցապահանջը.

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունը 30.07.2008թ-ին հետեւյալ բովանդակությամբ տեղեկատվություն ստանալու հարցում է ներկայացրել Արաբկիր թաղային համայնքին. «Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 եւ 27.1 հոդվածների եւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել հետեւյալ տեղեկությունը.

1. Արաբկիր համայնքին սեփականության իրավունքով քանի՞ բնակարան է պատկանում (այդ թվում համայնքի հաշվեկշռում քանի՞ բնակարան է գրանցված), որոնցում բնակվում են այն բնակիչները, որոնք չեն սեփականաշնորհել իրենց բնակարանները:
2. Խնդրում ենք հայտնել այդ բնակարանների հասցեները:
3. Արաբկիրի թաղապետարանը քանի՞ հայց է հարուցել սեփականության իրավունքով համայնքին պատկանող վերը նշված բնակարաններից բնակիչներին վտարելու պահանջով:
4. Խնդրում ենք, ներկայացնել այդ դատական գործերի ելքի մասին տեղեկատվություն (քանի՞սն է բավարարվել, քանի՞սը՝ մերժվել):

Տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում ենք գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին (հոդված 11)»:

Նշված փաստը հաստատվում է հարցման օրինակով եւ պատասխանողի՝ 06.08.2008թ. թիվ 25/01-4-1134 պատասխանով:

Արաբկիրի թաղապետարանը 06.08.2008թ. գրությամբ մերժել է հայցվող 4 տեղեկություններից 2-ի մասին տեղեկատվության տրամադրումը, այն է՝ տեղեկատվություն չի տրամադրել այն մասին, թե Արաբկիր համայնքին սեփականության իրավունքով քանի բնակարան է պատկանում (այդ թվում համայնքի հաշվեկշռում քանի բնակարան է գրանցված), որոնցում բնակվում են այն բնակիչները, որոնք չեն սեփականաշնորհել իրենց բնակարանները, ինչպես նաև չի հայտնել այդ բնակարանների հասցեները:

Նշված փաստը հաստատվում է պատասխանողի 06.08.2008թ. թիվ 25/01-4-1134 գրությամբ:

Արաբկիրի թաղապետարանի 06.08.2008թ. թիվ 25/01-4-1134 պատասխանը «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ն ստացել է 23.08.2008թ-ին:

Նշված փաստը հաստատվում է ծրարի պատճենով, որի վրա առկա է 22.08.08թ. թվագրմամբ փոստային բաժնի կնիքը, որից հետո էլ այն ստացել է «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ն:

2. Հայցապահանջի իրավական հիմնավորումը.

ՀՀ Սահմանադրության՝

- 27 հոդվածի 2-րդ պարբերության համաձայն. *«Յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք, ներառյալ տեղեկություններ եւ գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը, տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից».*
- 27.1 հոդվածի համաձայն. *«Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական կամ հասարակական շահերի պաշտպանության նկատառումներով իրավասու պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններին եւ պաշտոնատար անձանց դիմումներ կամ առաջարկություններ ներկայացնելու եւ ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունք»:*

Սահմանադրությամբ երաշխավորված վերը նշված իրավունքներն առարկայանում են նաև **«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում, որի 6 հոդվածի 1-ին մասի** համաձայն.

«Յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը եւ (կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկատվություն տնօրինողին եւ ստանալու այդ տեղեկությունը»:

Ի խախտումն Սահմանադրությամբ երաշխավորված հայցվորի իրավունքների ու պատասխանողի պարտականության, պատասխանող Արաբկիրի թաղապետարանը հրաժարվել է պատասխանել, թե Արաբկիր համայնքին սեփականության իրավունքով քանի բնակարան է պատկանում (այդ թվում համայնքի հաշվեկշռում քանի բնակարան է գրանցված), ինչպես նաև հրաժարվել է հայտնել այդ բնակարանների հասցեները, պատճառաբանելով, որ այդ տեղեկությունները կարող ենք ստանալ համատիրություններից:

Գտնում եմ, որ նման պատճառաբանությամբ պահանջվող տեղեկատվության տրամադրումը մերժելն անհիմն է, դրանով խախտվում են հայցվորի սահմանադրական իրավունքները, քանի որ համատիրությունները չեն, որ պետք է տեղեկատվություն տրամադրեն համայնքին պատկանող սեփականության մասին: Այսպես, «Տեղեկան ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16 հոդվածի 29 կետի համաձայն՝ համայնքի ավագանին սույն օրենքով սահմանված կարգով հաստատում է համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը, ինչը նշանակում է, որ համայնքի սեփականությունն ամեն տարի գույքագրվում է հաստատվում է ավագանու կողմից, այսինքն սեփականության վերաբերյալ տեղեկությունը պահպանվում է տեղական ինքնակառավարման մարմին թաղապետարանում, որն էլ պարտավոր է տրամադրել սեփականության վերաբերյալ պահանջվող տեղեկատվությունը, ինչը չկատարելով խախտել է հայցվորի սահմանադրական իրավունքները:

Վերոգրյալից ելնելով եւ ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 11 գլխի պահանջներով՝

Խնդրում եմ՝

1. Ոչ իրավաչափ ճանաչել Արաբկիր թաղապետարանի այն գործողությունները, որոնցով մերժվել է տեղեկատվություն տրամադրել այն մասին, թե Արաբկիր համայնքին սեփականության իրավունքով քանի բնակարան է պատկանում (այդ թվում համայնքի հաշվեկշռում քանի բնակարան է գրանցված), ինչպես նաեւ հայտնել այդ բնակարանների հասցեները:
2. Պարտավորեցնել Արաբկիր թաղապետարանին հնգօրյա ժամկետում տրամադրել տեղեկատվություն այն մասին, թե Արաբկիր համայնքին սեփականության իրավունքով քանի բնակարան է պատկանում (այդ թվում համայնքի հաշվեկշռում քանի բնակարան է գրանցված), ինչպես նաեւ հայտնել այդ բնակարանների հասցեները:
3. Արաբկիրի թաղապետարանից հօգուտ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի բռնագանձել 4000 դրամ պետական տուրքի գումարը:

Կից ներկայացվում են՝

1. Պետական տուրքի վճարման անդորրագիր,
2. լիազորագիր,
3. հարցման օրինակը,
4. պատասխանը,
5. ծրար:

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ նախագահ՝

Լիազոր ներկայացուցիչ՝

Շուշան Դոյրոյան

Կարեն Մեծլումյան:

Վարչական գործ թիվ ՎԴ/5820/05/08

ՎՃԻՌ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅՎԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

«30» դեկտեմբերի 2008թ.

ք. Երեւան

Հայաստանի Հանրապետության վարչական դատարանը
հետեւյալ կազմով՝

Դատավոր՝

Յ. Բեդեւյան,

Քարտուղարությամբ՝

Ա. Մուրադյանի,

Մասնակցությամբ՝

հայցվորի ներկայացուցիչ՝ Կ. Մեժլումյանի,

պատասխանողի ներկայացուցիչ՝ Գ. Կարապետյանի

դռնբաց դատական նիստում քննելով վարչական գործն ըստ հայցի «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության ընդդեմ Երեւան քաղաքի Արաբկիրի թաղապետարանի՝ տեղական ինքնակառավարման մարմնի գործողությունները ոչ իրավաչափ ճանաչելու եւ տեղեկատվություն տրամադրելուն պատրավորեցնելու պահանջի մասին

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

Հայցվոր «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունը 22.09.2008թ. հայց է ներկայացրել ՀՀ վարչական դատարան ընդդեմ Երեւան քաղաքի Արաբկիրի թաղապետարանի՝ ոչ իրավաչափ ճանաչելու Երեւան քաղաքի Արաբկիր թաղապետարանի այն գործողությունները, որոնցով մերժվել է տեղեկատվություն տրամադրել այն մասին, թե Արաբկիր համայնքին սեփականության իրավունքով քանի բնակարան է պատկանում (այդ թվում համայնքի հաշվեկշռում քանի բնակարան է գրանցված), ինչպես նաեւ հայտնելու այդ բնակարանների հասցեները եւ պարտավորեցնելու տրամադրելու նշված տեղեկատվությունը:

Հայաստանի Հանրապետության վարչական դատարանը 29.09.2008 թվականի որոշմամբ նշված հայցադիմումն ընդունել է վարույթ: 03.12.2008թ. գործով հրավիրվել է նախնական դատական նիստ, որտեղ պարզաբանվել են ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 86-րդ հոդվածի 3-րդ մասով նախա-

տեսված հարցերը, որից հետո գործը նշանակվել է դատաքննության: Պատասխանող կողմը հայցադիմումի պատասխանը ներկայացրել է 18.12.2008թ.: Դատաքննությունը հայտարարվել է ավարտված 19.12.2008թ.-ին:

Հայցվորի իրավական դիրքորոշումը.

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունը 30.07.2008թ.-ին հետեւյալ բովանդակությամբ տեղեկատվություն ստանալու հարցում է ներկայացրել Արաբկիր թաղային համայնքին. «Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 եւ 27.1 հոդվածների եւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել հետեւյալ տեղեկությունը.

1. Արաբկիր համայնքին սեփականության իրավունքով քանի՞ բնակարան է պատկանում (այդ թվում համայնքի հաշվեկշռում քանի՞ բնակարան է գրանցված), որոնցում բնակվում են այն բնակիչները, որոնք չեն սեփականաշնորհել իրենց բնակարանները:
2. Խնդրում ենք հայտնել այդ բնակարանների հասցեները:
3. Արաբկիրի թաղապետարանը քանի՞ հայց է հարուցել սեփականության իրավունքով համայնքին պատկանող վերը նշված բնակարաններից բնակիչներին վտարելու պահանջով:
4. Խնդրում ենք, ներկայացնել այդ դատական գործերի ելքի մասին տեղեկատվություն (քանի՞սն է բավարարվել, քանի՞սը՝ մերժվել):

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում:

Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում: Տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում ենք գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին (հոդված 11)»:

Նշված փաստը հաստատվում է հարցման օրինակով եւ պատասխանողի՝ 06.08.2008թ. թիվ 25/01-4-1134 պատասխանով:

Արաբկիրի թաղապետարանը 06.08.2008թ. գրությամբ մերժել է հայցվող 4 տեղեկություններից 2-ի մասին տեղեկատվության տրամադրումը, այն է՝ տեղեկատվություն չի տրամադրել այն մասին, թե Արաբկիր համայնքին սեփականության իրավունքով քանի՞ բնակարան է պատկանում (այդ թվում համայնքի հաշվեկշռում քանի՞ բնակարան է գրանցված), որոնցում բնակվում են այն բնակիչները, որոնք չեն սեփականաշնորհել իրենց բնակարանները, ինչպես նաեւ չի հայտնել այդ բնակարանների հասցեները: Նշված փաստը հաստատվում է պատասխանողի 06.08.2008թ. թիվ 25/01-4-1134 գրությամբ:

Արաբկիրի թաղապետարանի 06.08.2008թ. թիվ 25/01-4-1134 պատասխանը «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ն ստացել է 23.08.2008թ.-ին:

ՀՀ Սահմանադրության 27 հոդվածի 2-րդ պարբերության համաձայն.

«Յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք, ներառյալ տեղեկություններ եւ գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը, տեղեկատվության ցանկացած միջոցով անկախ պետական սահմաններից».

27.1 հոդվածի համաձայն.

«Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական կամ հասարակական շահերի պաշտպանության նկատառումներով իրավասու պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններին եւ պաշտոնատար անձանց դիմումներ կամ առաջարկություններ ներկայացնելու եւ ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունք»:

Սահմանադրությամբ երաշխավորված վերը նշված իրավունքներն առարկայանում են նաեւ **«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում, որի 6 հոդվածի 1-ին մասի** համաձայն.

«Յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը եւ (կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկատվության տնօրինողին եւ ստանալու այդ տեղեկությունը»:

Ի խախտումն Սահմանադրությամբ երաշխավորված հայցվորի իրավունքների ու պատասխանողի պարտականության, պատասխանող Արաբկիրի թաղապետարանը հրաժարվել է պատասխանել, թե Արաբկիր համայնքին սեփականության իրավունքով քանի բնակարան է պատկանում (այդ թվում համայնքի հաշվեկշռում քանի բնակարան է գրանցված), ինչպես նաեւ հրաժարվել է հայտնել այդ բնակարանների հասցեները, պատճառաբանելով, որ այդ տեղեկությունները կարող են ստանալ համատիրություններից:

Գտնում են, որ նման պատճառաբանությամբ պահանջվող տեղեկատվության տրամադրումը մերժելն անհիմն է, դրանով խախտվում են հայցվորի սահմանադրական իրավունքները, քանի որ համատիրությունները չեն, որ պետք է տեղեկատվություն տրամադրեն համայնքին պատկանող սեփականության մասին:

Այսպես, «Տեղեկան ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16 հոդվածի 29 կետի համաձայն՝ համայնքի ավագանին սույն օրենքով սահմանված կարգով հաստատում է համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը, ինչը նշանակում է, որ համայնքի սեփականությունն ամեն տարի գույքագրվում եւ հաստատվում է ավագանու կողմից, այսինքն սեփականության վերաբերյալ տեղեկությունը պահպանվում է տեղական ինքնակառավարման մարմին թաղապետարանում, որն էլ պարտավոր է տրամադրել սեփականության վերաբերյալ պահանջվող տեղեկատվությունը, ինչը չկատարելով խախտել է հայցվորի սահմանադրական իրավունքները:

Վերոգրյալից ելնելով եւ ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 11 գլխի պահանջներով դատարանից խնդրել են.

1. Ոչ իրավաչափ ճանաչել Արաբկիր թաղապետարանի այն գործողությունները, որոնցով մերժվել է տեղեկատվություն տրամադրել այն մասին, թե Արաբկիր համայնքին սեփականության իրավունքով քանի բնակարան է պատկանում (այդ թվում համայնքի հաշվեկշռում քանի բնակարան է գրանցված), ինչպես նաև հայտնել այդ բնակարանների հասցեները:
2. Պարտավորեցնել Երեւան քաղաքի Արաբկիրի թաղապետարանին 5-օրյա ժամկետում տրամադրելու տեղեկատվություն այն մասին, թե Արաբկիր համայնքին սեփականության իրավունքով քանի բնակարան է պատկանում (այդ թվում համայնքի հաշվեկշռում քանի բնակարան է գրանցված), ինչպես նաև հայտնելու այդ բնակարանների հասցեները:

Պատասխանողների իրավական դիրքորոշումը.

Հայցվորը, դիմելով դատարան, հայտնել է, որ Արաբկիրի թաղապետարանը մերժել է ներկայացրած չորս հարցադրումներից երկուսին եւ չի հայտնել տեղեկատվություն, թե Արաբկիր համայնքին սեփականության իրավունքով քանի բնակարան է պատկանում /այդ թվում հաշվեկշռում քանի բնակարան է գրանցված/, որտեղ բնակվում են այն բնակիչները, որոնք չեն սեփականաշնորհել իրենց բնակարանները, ինչպես նաև հայտնել այդ բնակարանների հասցեները:

Հայցի դեմ առարկում են ամբողջությամբ՝ հետեւյալ պատճառաբանությամբ. Իրոք, «**Տեղական ինքնակառավարման մասին**» **ՀՀ օրենքի 16 հոդ. 29-րդ կետի** համաձայն՝ համայնքի ավագանին հաստատում է ամենամյա գույքագրման փաստաթղթերը եւ թաղապետարանում պահպանվում են համայնքի սեփականության վերաբերյալ տեղեկություններ, սակայն դրանց մեջ չկան համայնքի սեփականության իրավունքով պատկանող բնակարաններ:

ՀՀ Կառավարության թիվ 42 որոշման, ինչպես նաև 11.05.07թ. ընդունված «ՀՀ Պետական եւ հանրային բնակության ֆոնդի սեփականաշնորհման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ մինչև 1998թ. չսեփականաշնորհված բնակարանները հանձնվել են համայնքներին: Նմանատիպ բնակարաններ իհարկե համայնքում կան, սակայն դրանք դեռ չեն համարվում համայնքի սեփականություն, քանի որ չունեն պետական գրանցում եւ այնտեղ բնակվում են այն վարձակալները, որոնց ժամանակին օրդերով հատկացված են եղել դրանք: Այն դեպքում, երբ վերջիններս դիմում են համայնքին բնակարանը սեփականաշնորհելու խնդրանքով, իրենց կողմից վերոնշյալ օրենքի եւ որոշման համաձայն կատարվում է պետական գրանցում եւ հաշված օրերի ընթացքում համայնքի ավագանին նվիրաբերության կարգով բնակարանը հատկացնում է տիրապետող բնակիչներին: Շատ դեպքերում վարձակալների՝ թաղապետարան դիմելուց հետո նոր տեղյակ են լինում, որ տվյալ հասցեի բնակարանը սեփականաշնորհված չէ: Չսեփականաշնորհված բնակարանների վերաբերյալ թաղապետարանում պահպանվում են ոչ լիարժեք տեղեկություններ, եթե կազմակերպությանը պետք լիներ ընդամենը իրենց մոտ պահպանվող տվյալները, ապա իրենք կտրամադրեին, սակայն նրանք պահանջում էին ստույգ թիվն՝ իրենց հասցեներով, որոնց կոնկրետ հաշվարկն Արաբկիր հա-

մայնքում դեռ իրականացված չէ: Արաբկիրի թաղապետարանը հայցվորին ոչ թե մերժել է տեղեկատվություն տրամադրելը, այլ ընդամենը չի ունեցել պահանջվող տվյալները, ուստի իրենց կողմից չեն խախտվել հայցվորի սահմանադրական իրավունքները, ինչպես նաև «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը:

Նշել են նաև, որ համայնքի ղեկավարը հանձնարարել է համապատասխան ծառայությանը կատարել չսեփականաշնորհված բնակարանների կոնկրետ հաշվարկ, եւ առաջիկայում, դրա ավարտից հետո, իրենք կարող են հայցվորին տրամադրել պահանջվող տեղեկատվությունը:

Ելնելով վերոգրյալից՝ ներկայացված հայցադիմումն անհիմն է եւ ենթակա մերժման:

Գործի լուծման համար եական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

1. «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունը 30.07.2008թ-ին տեղեկատվություն ստանալու հարցում է ներկայացրել Արաբկիր թաղային համայնքին՝ հետեւյալ բովանդակությամբ. «Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 եւ 27.1 հոդվածների եւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել հետեւյալ տեղեկությունը.

1. Արաբկիր համայնքին սեփականության իրավունքով քանի՞ բնակարան է պատկանում (այդ թվում համայնքի հաշվեկշռում քանի՞ բնակարան է գրանցված), որոնցում բնակվում են այն բնակիչները, որոնք չեն սեփականաշնորհել իրենց բնակարանները:
2. Խնդրում ենք հայտնել այդ բնակարանների հասցեները:
3. Արաբկիրի թաղապետարանը քանի՞ հայց է հարուցել սեփականության իրավունքով համայնքին պատկանող վերը նշված բնակարաններից բնակիչներին վտարելու պահանջով:
4. Խնդրում ենք, ներկայացնել այդ դատական գործերի ելքի մասին տեղեկատվություն (քանի՞սն է բավարարվել, քանի՞սը՝ մերժվել):

2. Արաբկիրի թաղապետարանը 06.08.2008թ. գրությամբ մերժել է հայցվող 4 տեղեկություններից 2-ի մասին տեղեկատվության տրամադրումը, հայտնելով հետեւյալը՝ «Արաբկիրի թաղապետարանը ստույգ տեղեկատվություն չի կարող տալ չսեփականաշնորհված բնակարանների վերաբերյալ, քանի որ համայնքում բոլոր շենքերը ստեղծել են իրենց առանձին համատիրությունները եւ միայն դրանց միջոցով Դուք կարող եք ստանալ սպառիչ տեղեկատվություն Ձեզ հետաքրքրող հարցի վերաբերյալ»:

Դատարանի պատճառաբանությունները եւ հետեւությունը.

Լսելով դատավարության կողմերի բացատրությունները, հետազոտելով ներկայացված գրավոր ապացույցները, եւ դրանցից յուրաքանչյուրը գնահատելով գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ եւ օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմունքով՝ դատարանը եզրակացրեց, որ որ հայցը հիմնավոր է եւ ենթակա բավարարման հետեւյալ պատճառաբանությամբ.

ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածը սահմանում է, որ Հայաստանի Հանրապետությունը ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է:

ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի համաձայն՝ մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները եւ ազատությունները բարձրագույն արժեքներ են:

Պետությունն ապահովում է մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքների եւ ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան:

Պետությունը սահմանափակված է մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքներով եւ ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք:

ՀՀ Սահմանադրության 14-րդ հոդվածը սահմանում է, որ մարդու արժանապատվությունը՝ որպես նրա իրավունքների ու ազատությունների անքակտելի հիմք, հարգվում եւ պաշտպանվում է պետության կողմից:

ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների եւ ազատությունների դատական, ինչպես նաեւ պետական այլ մարմինների առջեւ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք: Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքները եւ ազատություններն օրենքով չարգելված բոլոր միջոցներով պաշտպանելու իրավունք:

ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածը սահմանում է, որ յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք, ներառյալ՝ տեղեկություններ եւ գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը, տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից:

ՀՀ Սահմանադրության 27.1-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր անձնական կամ հասարակական շահերի պաշտպանության նկատառումներով իրավասու պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններին եւ պաշտոնատար անձանց դիմումներ կամ առաջարկություններ ներկայացնելու եւ ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունք:

ՀՀ Սահմանադրության վերը նշված հոդվածներով ամրագրված դրույթներով Հայաստանի Հանրապետությունը երաշխավորում է մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքների եւ ազատությունների պաշտպանությունը՝ միջազ-

գային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան, այդ թվում տեղեկություններ եւ գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատության իրավունքի պաշտպանությունը, ինչն ուղղակիորեն բխում է իրավական պետության սկզբունքից:

Տեղեկատվություն ստանալու հետ կապված հարաբերություններում ֆիզիկական եւ իրավաբանական անձանց՝ ՀՀ Սահմանադրության վերը նշված հոդվածներով սահմանված իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության պատշաճ երաշխիք ապահովելու նպատակով ՀՀ Ազգային ժողովի կողմից 2003թ. սեպտեմբերի 23-ին ընդունվել է «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը /այսուհետ՝ Օրենք/, որի 1-ին հոդվածի համաձայն՝ նույն օրենքը կարգավորում է տեղեկատվության ազատության հետ կապված հարաբերությունները, սահմանում է տեղեկատվության ապահովման բնագավառում տեղեկատվություն տնօրինողների իրավասությունը, ինչպես նաեւ տեղեկություններ ստանալու կարգը, ձեւերը եւ պայմանները:

Օրենքի 3-րդ հոդվածում սահմանվել են օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները, համաձայն որի տեղեկությունը՝ անձի, առարկայի, փաստի, հանգամանքի, իրադարձության, եղելության, երեւոյթի վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված կարգով ստացված եւ ձեւավորված տվյալներն են՝ անկախ դրանց տնօրինման ձեւից կամ նյութական կրիչից (տեքստային, էլեկտրոնային փաստաթղթեր, ձայնագրություններ, տեսագրություններ, լուսաժապավեններ, գծագրեր, սխեմաներ, նոտաներ, քարտեզներ), տեղեկատվություն տնօրինողը՝ տեղեկություններ ունեցող պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններն են, պետական հիմնարկները, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունները, ինչպես նաեւ հանրային նշանակության կազմակերպությունները եւ դրանց պաշտոնատար անձինք:

Օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը եւ (կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկատվություն տնօրինողին եւ ստանալու այդ տեղեկությունը:

Տեղեկատվության ազատությունը կարող է սահմանափակվել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ եւ օրենքով նախատեսված դեպքերում:

Տեղեկատվության ազատության սահմանափակումները սահմանված են նույն օրենքի 8-րդ հոդվածով, համաձայն որի տեղեկատվություն տնօրինողը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասում սահմանված դեպքերի, մերժում է տեղեկության տրամադրումը, եթե դա՝

- 1) պարունակում է պետական, ծառայողական, բանկային, առեւտրային գաղտնիք,
- 2) խախտում է մարդու անձնական եւ ընտանեկան կյանքի գաղտնիությունը, այդ թվում՝ նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական եւ այլ հաղորդումների գաղտնիությունը,

- 3) պարունակում է հրապարակման ոչ ենթակա նախնական քննության տվյալները,
- 4) բացահայտում է մասնագիտական գործունեությամբ պայմանավորված մատչելիության սահմանափակում պահանջող տվյալներ (բժշկական, նոտարական, փաստաբանական գաղտնիք),
- 5) խախտում է հեղինակային իրավունքը եւ (կամ) հարակից իրավունքները:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածում սահմանված են գրավոր հարցմանը պատասխան ներկայացնելու ժամկետները, համաձայն որի՝

- 1) եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը հրապարակված չէ, ապա դրա պատճենը դիմողին է տրվում հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում,
- 2) եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը հրապարակված է, ապա տվյալ հրապարակման միջոցի, վայրի եւ ժամկետի մասին տեղեկությունը դիմողին է տրվում հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում,
- 3) եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը տրամադրելու համար անհրաժեշտ է կատարել լրացուցիչ աշխատանք, ապա այդ տեղեկությունը դիմողին է տրվում դիմումն ստանալուց հետո՝ 30-օրյա ժամկետում, որի մասին հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում, գրավոր տեղեկացվում է դիմողին՝ նշելով հետաձգման պատճառները եւ տեղեկությունը տրամադրելու վերջնական ժամկետը:

Նույն հոդվածում նախատեսված է, որ եթե տեղեկատվություն տնօրինողը չունի փնտրվող տեղեկությունը, կամ դրա տրամադրումն իր լիազորությունների շրջանակից դուրս է, ապա նա տվյալ գրավոր հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում, պարտավոր է այդ մասին գրավոր տեղեկացնել դիմողին, իսկ հնարավորության դեպքում նրան տրամադրել նաեւ այդ տեղեկատվությունը տնօրինողի (այդ թվում՝ արխիվի) գտնվելու վայրը, որն ունի փնտրվող տեղեկությունը:

Եթե տեղեկատվություն տնօրինողը չունի փնտրվող տեղեկությանը վերաբերող բոլոր տվյալները, ապա նա դիմողին տալիս է տվյալների այն մասը, որն ունի, իսկ հնարավորության դեպքում գրավոր հարցման պատասխանում նշում է նաեւ այդ տեղեկատվությունը տնօրինողի (այդ թվում՝ արխիվի) գտնվելու վայրը, որն ունի փնտրվող տեղեկատվությանը վերաբերող մյուս տվյալները:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկության տրամադրումը մերժվում է սույն օրենքի 8-րդ հոդվածում սահմանված դեպքերում կամ այդ տեղեկության տրամադրման համար սահմանված գումարը չվճարվելու դեպքում:

Տեղեկության տրամադրման մերժումը կարող է բողոքարկվել լիազորված պետական կառավարման մարմին կամ դատարան:

Օրենքի 12-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկատվության ազատության ապահովման ոլորտում տեղեկատվություն տնօրինողը պարտավոր է օրենքով սահմանված կարգով՝

- 1) ապահովել տեղեկությունների մատչելիությունը եւ հրապարակայնությունը,
- 2) իրականացնել իր տնօրինության տակ գտնվող տեղեկությունների գրանցումը, դասակարգումը եւ պահպանումը,
- 3) տեղեկություններ փնտրող անձին տրամադրել հավաստի եւ իր տնօրինության տակ գտնվող ամբողջական տեղեկություն,
- 4) սահմանել իր կողմից բանավոր եւ (կամ) գրավոր տեղեկությունների տրամադրման կարգը,
- 5) նշանակել տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու պաշտոնատար անձին:

Օրենքի 14-րդ հոդվածի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքով նախատեսված դեպքերի, տեղեկություն տրամադրելուց հրաժարվելը կամ ոչ հավաստի տեղեկություն տրամադրելը, ինչպես նաեւ սույն օրենքով սահմանված կարգի այլ խախտումներն առաջացնում են օրենքով սահմանված պատասխանատվություն:

Վերը նշված իրավական նորմերի վերլուծությունից հետեւում է, որ տեղեկատվություն տնօրինողը պարտավոր է օրենքով սահմանված կարգով իրեն դիմած ցանկացած անձի տրամադրել հայցվող տեղեկատվությունը՝ եթե առկա չեն օրենքով նախատեսված սահմանափակումներ:

Ակնհայտ է, որ հայցվորի կողմից պահանջվող տեղեկատվության տնօրինողը հանդիսացել է Արաբկիրի թաղապետարանը, ուստի վերջինս պարտավոր էր օրենքի պահանջների պահպանմամբ հայցվորին տրամադրել պահանջվող տեղեկատվությունը, այն է՝ Արաբկիր համայնքին սեփականության իրավունքով քանի բնակարան է պատկանում (այդ թվում համայնքի հաշվեկշռում քանի բնակարան է գրանցված), որոնցում բնակվում են այն բնակիչները, որոնք չեն սեփականաշնորհել իրենց բնակարանները եւ հայտնել այդ բնակարանների հասցեները: Մինչդեռ, վարչական մարմինը, տվյալ դեպքում Արաբկիրի թաղապետարանը, չի տրամադրել պահանջվող տեղեկատվությունը: Դատաքննության ընթացքում պատասխանողի ներկայացուցիչը հայտնեց, որ Արաբկիր համայնքին ներկայումս սեփականության իրավունքով բնակարաններ չեն պատկանում:

Դատարանը գտնում է, որ պատասխանողի ներկայացուցչի վերը նշված տեղեկությունն անհրաժեշտ էր գրավոր պատասխանել հայցվորին, որը կդիտվեր որպես հայցվող տեղեկատվության պատշաճ տրամադրում, մինչդեռ պատասխանող կողմը հայցվորին ուղղված իր պատասխանում նշել է, որ պահանջվող տեղեկատվությունը չեն կարող տրամադրել, քանի որ համայնքում բոլոր շենքերը ստեղծել են համատիրություններ, որոնց միջոցով հնարավոր է ստանալ հայցվող տեղեկատվությունը:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 29-րդ կետի համաձայն համայնքի ավագանին հաստատում է համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը:

Նույն օրենքի 37-րդ հոդվածի 7-րդ կետի համաձայն՝ համայնքի ղեկավարը իրականացնում է համայնքային սեփականություն համարվող շենքերի ու շինությունների հաշվառումը եւ բաշխումը, կազմում է սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը, դրանք ներկայացնում է համայնքի ավագանու հաստատմանը:

Նշված իրավանորմերից ուղղակի բխում է, որ համայնքին սեփականության իրավունքով պատկանող բնակարանների վերաբերյալ տեղեկատվության տնօրինող կարող է հանդիսանալ միայն տեղական ինքնակառավարման մարմինը:

Դատարանը գտնում է, որ պատասխանողի կողմից չի տրամադրվել պահանջվող տեղեկատվությունը, որի հետեւանքով խախտվել է հայցվորի ՀՀ Սահմանադրության եւ Օրենքի վերը նշված դրույթներով ամրագրված իրավունքները: ՀՀ վարչական դատարանի գնահատմամբ Արաբկիրի թաղապետը, վերը նշված իրավական ակտերի համաձայն, պարտավոր էր, պահպանելով ՀՀ Սահմանադրության 3-րդ, 14-րդ, 18-րդ, 27-րդ, 27.1-րդ հոդվածներով ամրագրված եւ պաշտպանվող անձի իրավունքները, ինչպես նաեւ գործելով վարչարարության օրինականության եւ իրավական պետության սկզբունքների պահպանմամբ, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածում սահմանված հատուկ ժամկետներում տրամադրել հայցվող տեղեկատվությունը:

Վերը նշված իրավական նորմերի վերլուծության արդյունքում ՀՀ վարչական դատարանը եզրակացրեց, որ հայցվորն ունեցել է եւ ունի ՀՀ Սահմանադրությամբ, «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին», «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքներով երաշխավորված՝ Արաբկիրի թաղապետարանին 2008թ. հուլիսի 30-ին հասցեագրած հարցմանը օրենքով սահմանված ժամկետում եւ կարգով պատասխան ստանալու իրավունք:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ սույն օրենսգրքով սահմանված կարգով իրավունք ունի դիմելու վարչական դատարան, եթե համարում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց վարչական ակտերով, գործողություններով կամ անգործությամբ՝

- 1) *խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել նրա՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով եւ այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները եւ ազատությունները, այդ թվում, եթե՝*

ա. խոչընդոտներ են հարուցվել այդ իրավունքների եւ ազատությունների իրականացման համար,

բ. չեն ապահովվել անհրաժեշտ պայմաններ՝ այդ իրավունքների իրականացման համար, սակայն դրանք պետք է ապահովվեին Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, միջազգային պայմանագրի, օրենքի կամ այլ իրավական ակտերի ուժով.

2) նրա վրա ոչ իրավաչափորեն դրվել է որեւէ պարտականություն...:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը (պաշտոնատար անձը), որն ընդունել է վիճարկվող իրավական ակտը կամ կատարել է վիճարկվող գործողությունը կամ չի կատարել որեւէ հայցվող գործողություն, սակայն հայցվորի պնդմամբ պարտավոր էր այն կատարել, կրում է իր որոշման, գործողության կամ անգործության համար հիմք ծառայած հանգամանքների ապացուցման բեռը:

Տվյալ դեպքում Արաբկիրի թաղապետարանի գործողության համար հիմք ծառայած հանգամանքների ապացուցման բեռը կրում է Արաբկիրի թաղապետարանը, հետեւաբար վերջինս պարտավոր էր հիմնավորել, թե Հայաստանի Հանրապետությունում գործող որ իրավական ակտի հիման վրա չի տրամադրել պահանջվող տեղեկատվությունը: Պատասխանողի ներկայացուցիչը դատարանին չներկայացրեց նշված գործողության համար օրինական հիմք լինելու վերաբերյալ որեւէ ապացույց:

Այսպիսով, դատարանը հաստատված է համարում, որ Արաբկիրի թաղապետարանի դրսեւորած գործողությունը ոչ իրավաչափ /անվավեր/ է, քանի որ չի բխում ՀՀ Սահմանադրության, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքների վերոհիշյալ նորմերի պահանջներից, ուստի այն ենթակա է ոչ իրավաչափ /անվավեր/ ճանաչման: ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով լուծելով դատավարության մասնակիցների միջեւ դատական ծախսերի բաշխման հարցը՝ դատարանը եզրակացրեց, որ Արաբկիրի թաղապետարանից հօգուտ հայցվորի ենթակա է բռնազանձման 4.000 դրամ՝ որպես վերջինիս կրած դատական ծախսի փոխհատուցում:

Վերոգրյալի հիման վրա, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 59-րդ, 112-115-րդ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 130-132-րդ հոդվածներով, ՀՀ դատական օրենսգրքի 35-րդ հոդվածի 2-րդ կետով՝ դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության հայրը քավարարել:

Ոչ իրավաչափ ճանաչել Երեւան քաղաքի Արաբկիրի թաղապետարանի այն գործողությունները, որոնցով մերժվել է տեղեկատվություն տրամադրել այն մասին, թե Արաբկիր համայնքին սեփականության իրավունքով քանի բնակարան է պատկանում (այդ թվում համայնքի հաշվեկշռում քանի բնակարան է գրանցված), ինչպես նաեւ՝ հայտնել այդ բնակարանների հասցեները:

Պարտավորեցնել Երեւան քաղաքի Արաբկիրի թաղապետարանին 5-օրյա ժամկետում տրամադրելու տեղեկատվություն այն մասին, թե Արաբկիր համայնքին սեփականության իրավունքով քանի բնակարան է պատկանում (այդ թվում համայնքի հաշվեկշռում քանի բնակարան է գրանցված), ինչպես նաեւ հայտնելու այդ բնակարանների հասցեները:

Երեւան քաղաքի Արաբկիրի թաղապետարանից հօգուտ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության բռնագանձել 4.000 դրամ, որպես վճարված պետական տուրքի գումարի փոխհատուցում:

Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից եւ կարող է բողոքարկվել վճռաբեկության կարգով՝ ՀՀ վճռաբեկ դատարան:

ԴԱՏԱՎՈՐ

Յ. ԲԵՂԵՎՅԱՆ:

Գործ 4.

**Ինֆորմացիայի ազատության
կենսրոնն
ընդդեմ
Գավթաճենի թաղապետի և
թաղապետարանի**

Գործի համառոտ նկարագրությունը

2008թ. հուլիսի 30-ին Ինֆորմացիայի ազատության կենտրոնը տեղեկատվություն ստանալու հարցում է ուղարկել Երեւան քաղաքի Դավթաշեն թաղային համայնքին հետեւյալ բովանդակությամբ. «Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 եւ 27.1 հոդվածների եւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել հետեւյալ տեղեկությունը.

1. Դավթաշեն համայնքին սեփականության իրավունքով քանի՞ բնակարան է պատկանում (այդ թվում համայնքի հաշվեկշռում քանի՞ բնակարան է գրանցված), որոնցում բնակվում են այն բնակիչները, որոնք չեն սեփականաշնորհել իրենց բնակարանները:
2. Խնդրում ենք հայտնել այդ բնակարանների հասցեները:
3. Դավթաշենի թաղապետարանը քանի՞ հայց է հարուցել սեփականության իրավունքով համայնքին պատկանող վերը նշված բնակարաններից բնակիչներին վտարելու պահանջով:
4. Խնդրում ենք, ներկայացնել այդ դատական գործերի ելքի մասին տեղեկատվություն (քանի՞սն է բավարարվել, քանի՞սը՝ մերժվել):

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում ենք գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին (հոդված 11)»:

Դավթաշենի թաղապետարանը օրենքով սահմանված առավելագույն՝ 30 օրյա ժամկետում հայցվող տեղեկատվությունը չի տրամադրել, իսկ երբ դատարան դիմելու մասին որոշում կայացնելու համար հեռախոսազանգով փորձ արվեց ճշտել հայցվող տեղեկատվության վերաբերյալ պատասխան տրվելու է, թե՞ ոչ, բանավոր հայտնվեց, որ այդ տեղեկությունները կարող ենք ստանալ կադաստրից:

Դավթաշենի թաղապետարանի կողմից հայցվող տեղեկատվությունը չտրամադրելու մասին փաստը հաստատվում է պատասխանի բացակայությամբ:

Արդյունքում, ԻԱԿ-ը գործողության կատարման հայցով դիմեց ՀՀ վարչական դատարան՝ տեղեկատվություն տրամադրել պարտադրելու եւ վարչական տույժի ենթարկելու պահանջների մասին:

ՀՀ վարչական դատարանը ԻԱԿ-ի հայցը վարույթ է ընդունել եւ 2009թ. հունվարի 20-ին նշանակել նախնական դատական քննություն:

Դավթաշեն համայնքի ղեկավարը, ստանալով դատական նիստի մասին ծանուցումը, շտապել էր զանգահարել ԻԱԿ նախագահին՝ հանդիպելու եւ գրուցելու առաջարկով, ինչի արդյունքում ԻԱԿ-ը 13.01.09թ. ստացել է լրացուցիչ գրություն Դավթաշենի համայնքապետից, որում համայնքի ղեկավարը 1 ամիս ժամանակ է խնդրել պահանաջված տեղե-

կատվությունը պատշաճ ձեւով տրամադրելու համար:

Նախնական դատական քննության ժամանակ ԻԱԿ Նախագահ Շուշան Դոյրոյանը հրաժարվեց հայցից՝ վերոնշյալ գրությունը հաշվի առնելով:

ՀՀ վարչական դատարանը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 90-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն, վճռեց վարչական գործի վարույթը կարճել:

ԻԱԿ-ն ընդդեմ Դավթաշենի թաղապետարանի եւ թաղային համայնքի ղեկավարի դատական հայցի դրական արդյունքն ի հայտ եկավ. Դավթաշենի թաղապետարանը ԻԱԿ-ին տրամադրեց այն տեղեկատվությունը, որի չտրամադրման համար Ինֆորմացիայի ազատության կենտրոնը դատական հայց էր ներկայացրել ՀՀ վարչական դատարան:

ԻԱԿ-ի շնորհիվ Դավթաշենի թաղապետարանի անգործությունը փոխարինվեց գործունեությամբ, ինչի արդյունքում նշյալ համայնքն իրականացրեց իր համայնքի չսեփականաշնորհված բնակարանների հաշվառում:

Գործի նյութերը

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԲԿ

30.07.2008թ.

80-ի 5

Դավթաշեն համայնքի թաղապետ
պարոն Արթուր Գեւորգյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Գեւորգյան,

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 եւ 27.1 հոդվածների եւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել հետեւյալ տեղեկությունը.

1. Դավթաշեն համայնքին սեփականության իրավունքով քանի՞ բնակարան է պատկանում (այդ թվում համայնքի հաշվեկշռում քանի՞ բնակարան է գրանցված), որոնցում բնակվում են այն բնակիչները, որոնք չեն սեփականաշնորհել իրենց բնակարանները:
2. Խնդրում ենք հայտնել այդ բնակարանների հասցեները:
3. Դավթաշենի թաղապետարանը քանի՞ հայց է հարուցել սեփականության իրավունքով համայնքին պատկանող վերը նշված բնակարաններից բնակիչներին վտարելու պահանջով:
4. Խնդրում ենք, ներկայացնել այդ դատական գործերի ելքի մասին տեղեկատվություն (քանի՞սն է բավարարվել, քանի՞սը՝ մերժվել):

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում ենք գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին (հոդված 11):

Կանխավ շնորհակալ եմ:

Նախագահ՝ Շուշան Դոյրոյան _____

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ԴԱՎԹԱՇԵՆ ԹԱՂԱՅԻՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

«09» 10 2008թ.

No 29/01-798

**ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՆԱԽԱԳԱՅ Ե. ԴՈՅՂՈՅԱՆԻՆ**

Հարգելի Դոյդոյան,

Ի պատասխան Ձեր 30.07.08թ. թիվ 80-ի 5 գրության, Դավթաշեն համայնքի տարածքում բազմաբնակարան շենքերում սեփականաշնորհված բնակարանների վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելու խնդրանքին՝ պատասխանում ենք, որ բնակարանների սեփականաշնորհման գործընթացը սկսած 1991թ. իրականացրել են Մաշտոցի շրջանի գործադիր կոմիտեի, Երեւանի քաղաքապետարանի, Դավթաշեն թաղապետարանի կողմից, եւ մեր ունեցած տեղեկությունները ոչ լիարժեք են, ուստի Ձեր խնդրանքը բավարարել չենք կարող:

Նման տեղեկատվության խնդրանքով կարող եք դիմել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Դավթաշենի տարածքային ստորաբաժանմանը:

Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ,

Կատ.՝ Հ. Բաղալյան:

ՀՀ ՎԱՐՉԱՎԱՆ ԴԱՏԱՐԱՆԻՆ

Երեւան, Գարեգին Նժդեհի 23

Հայցվոր՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն»

հասարակական կազմակերպություն

Նախագահ՝ Շուշան Դոյրոյան

Ներկայացուցիչ՝ Կարեն Մեժլումյան

Պատասխանողներ՝ Դավթաշենի թաղապետարան

Հասցե՝ Երեւան, Դավթաշեն 3-րդ թաղամաս,
վարչական շենք

Դավթաշենի թաղապետ Արթուր Գեւորգյան

14 հոկտեմբերի 2008թ.

Հ Ա Յ Ց Ա Դ Ի Մ ՈՒ Մ

Գործողության կատարման հայց

Տեղեկատվություն տրամադրել պարտադրելու եւ վարչական

սույժի ենթարկելու պահանջների մասին

1. Փաստերը որոնց վրա հիմնված է հայցապահանջը.

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունը 30.07.2008թ-ին հետեւյալ բովանդակությամբ տեղեկատվություն ստանալու հարցում է ներկայացրել Դավթաշեն թաղային համայնքին. «Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 եւ 27.1 հոդվածների եւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել հետեւյալ տեղեկությունը.

1. Դավթաշեն համայնքին սեփականության իրավունքով քանի՞ բնակարան է պատկանում (այդ թվում համայնքի հաշվեկշռում քանի՞ բնակարան է գրանցված), որոնցում բնակվում են այն բնակիչները, որոնք չեն սեփականաշնորհել իրենց բնակարանները:
2. Խնդրում ենք հայտնել այդ բնակարանների հասցեները:
3. Դավթաշենի թաղապետարանը քանի՞ հայց է հարուցել սեփականության իրավունքով համայնքին պատկանող վերը նշված բնակարաններից բնակիչներին վտարելու պահանջով:
4. Խնդրում ենք, ներկայացնել այդ դատական գործերի ելքի մասին տեղեկատվություն (քանի՞սն է բավարարվել, քանի՞սը՝ մերժվել):

Տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում ենք գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին (հոդված 11)»:

Նշված փաստը հաստատվում է հարցման կրկնօրինակով եւ անդորրագրով:

Դավիթաշենի թաղապետարանը օրենքով սահմանված առավելագույն՝ 30 օրյա ժամկետում հայցվող տեղեկատվությունը չի տրամադրել, իսկ երբ դատարան դիմելու մասին որոշում կայացնելու համար հեռախոսազանգով փորձ արվեց ճշտելու հայցվող տեղեկատվության վերաբերյալ պատասխան տրվելու է, թե՛ ոչ, բանավոր հայտնվել է, որ այդ տեղեկությունները կարող են ստանալ կադաստրից:

Դավիթաշենի թաղապետարանի կողմից հայցվող տեղեկատվությունը չտրամադրելու մասին փաստը հաստատվում է պատասխանի բացակայությամբ:

2. Հայցապահանջի իրավական հիմնավորումը

ՀՀ Սահմանադրության՝

- 27 հոդվածի 2-րդ պարբերության համաձայն. *«Յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք, ներառյալ տեղեկություններ եւ գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը, տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից».*
- 27.1 հոդվածի համաձայն. *«Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական կամ հասարակական շահերի պաշտպանության նկատառումներով իրավասու պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններին եւ պաշտոնատար անձանց դիմումներ կամ առաջարկություններ ներկայացնելու եւ ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունք»:*

Սահմանադրությամբ երաշխավորված վերը նշված իրավունքներն առարկայանում են նաեւ **«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում, որի 6 հոդվածի 1-ին մասի** համաձայն.

«Յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը եւ (կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկատվություն տնօրինողին եւ ստանալու այդ տեղեկությունը»:

Նույն օրենքի 9 հոդվածի 7-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝

եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը տրամադրելու համար անհրաժեշտ է կատարել լրացուցիչ աշխատանք, ապա այդ տեղեկությունը դիմողին է տրվում դիմումն ստանալուց հետո՝ 30-օրյա ժամկետում, որի մասին հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում, գրավոր տեղեկացվում է դիմողին՝ նշելով հետաձգման պատճառները եւ տեղեկությունը տրամադրելու վերջնական ժամկետը:

Ի խախտումն Սահմանադրությամբ ու օրենքով երաշխավորված հայցվորի իրավունքների ու պատասխանողի պարտականության, պատասխանող Դավթաշենի թաղապետարանն օրենքով սահմանված ժամկետում եւ դրա

ավարտից հետո էլ, մինչ օրս չի տրամադրել պահանջվող տեղեկատվությունը:

«Տեղեկան ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16 հոդվածի 29 կետի համաձայն՝ համայնքի ավագանին սույն օրենքով սահմանված կարգով հաստատում է համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը, ինչը նշանակում է, որ համայնքի սեփականությունն ամեն տարի գույքագրվում է հաստատվում է ավագանու կողմից, այսինքն սեփականության վերաբերյալ տեղեկությունը պահպանվում է տեղական ինքնակառավարման մարմին թաղապետարանում, որն էլ պարտավոր էր տրամադրել սեփականության վերաբերյալ պահանջվող տեղեկատվությունը, ինչը չկատարելով խախտել է հայցվորի՝ Սահմանադրությամբ եւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով երաշխավորված իրավունքները, որպիսի խախտման համար հայցվորը ենթակա է վարչական պատասխանատվության:

Այսպես, **Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 189⁷ հոդվածը** պատասխանատվություն է սահմանում տեղեկություն տալու պարտականությունը չկատարելու համար, որի համաձայն.

«Օրենքով նախատեսված տեղեկությունը պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունների, ինչպես նաեւ հանրային նշանակության կազմակերպությունների պաշտոնատար անձանց կողմից ապօրինաբար չտրամադրելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկից մինչեւ հիսնապատիկի չափով:

Սույն խախտումը, որը կատարվել է կրկին անգամ՝ վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո մեկ տարվա ընթացքում՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից մինչեւ հարյուրապատիկի չափով»:

Սույն օրենսգրքի 223 հոդվածի համաձայն՝ առաջին ատյանի դատարանների դատավորները քննում են սույն օրենսգրքի 189⁷ հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը:

Գտնում ենք, որ արդարացի իրավունք ունենք դատարանից հայցել վարչական տույժի ենթարկել պատասխանող՝ Դավթաշենի թաղապետ Արթուր Գեորգյանին իր ապօրինի անգործության համար, որն արտահայտվել է՝ օրենքով սահմանված իր պարտականություններից խուսափելու՝ այն է հայցված տեղեկատվությունը չտրամադրելու արարքով եւ պահանջելու, որ դրա համար որպես պատասխանատվության միջոց կիրառվի տուգանքը, ընդ որում տուգանքի առավելագույն չափի, այն է 50.000 /հիսուն հազար/ դրամ գումարի չափով:

Վերոգրյալից ելնելով եւ ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 11 գլխի պահանջներով՝

Խնդրում եմ՝

1. Պարտավորեցնել Երեւան քաղաքի Դավթաշենի թաղապետարանին հնգօրյա ժամկետում տրամադրել տեղեկատվություն այն մասին, թե
 - Դավթաշենի համայնքին սեփականության իրավունքով քանի բնակարան է պատկանում (այդ թվում համայնքի հաշվեկշռում քանի բնակարան է գրանցված), որոնցում բնակվում են այն բնակիչները, որոնք չեն սեփականաշնորհել իրենց բնակարանները:
 - հայտնել այդ բնակարանների հասցեները:
 - Դավթաշենի թաղապետարանը քանի հայց է հարուցել սեփականության իրավունքով համայնքին պատկանող վերը նշված բնակարաններից բնակիչներին վտարելու պահանջով:
 - ներկայացնել այդ դատական գործերի ելքի մասին տեղեկատվություն (քանիսն է բավարարվել, քանիսը՝ մերժվել):
2. Դավթաշենի թաղապետ Արթուր Գեւորգյան ենթարկել վարչական պատասխանատվության՝ տուգանքի՝ 50000 դրամի չափով:
3. Դավթաշենի թաղապետարանից հօգուտ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի բռնագանձել 8000 դրամ պետական տուրքի գումարը:

Կից ներկայացվում են՝

1. Պետական տուրքի վճարման անդորրագիր,
2. լիազորագիր,
3. հարցման կրկնօրինակը,
4. փոստային անդորրագրի պատճեն,
5. հայցադիմումը պատասխանողներին եւ ՀՀ Ֆինանսների նախարարությանը ուղարկելու մասին ապացույցներ՝ փոստային անդորրագրեր (հայցադիմումները ստանալու մասին ծանուցումները կներկայացվեն լրացուցիչ):

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ նախագահ՝

Շուշան Դոյոյան

Լիազոր ներկայացուցիչ՝

Կարեն Մեժլումյան:

Վ Ճ Ի Ռ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

20.01.2009թ.

ք. Երեւան

Հայաստանի Հանրապետության վարչական դատարանը
հետեւյալ կազմով՝

Նախագահող դատավոր՝ Ա. Սարգսյան,

քարտուղարությամբ՝ Գ. Տոբեյանի,

մասնակցությամբ՝

հայցվոր՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի

(ներկայացուցիչ Շ. Դոյոյան),

պատասխանողներ՝ Դավթաշենի թաղապետարանի

եւ Դավթաշենի

թաղային համայնքի ղեկավար Արթուր Գեւորգյանի

(ներկայացուցիչ Մ. Խենիկյան),

դռնբաց դատական նիստում քննելով վարչական գործն ըստ հայցի «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի ընդդեմ Դավթաշենի թաղապետարանի եւ Դավթաշենի թաղային համայնքի ղեկավար Արթուր Գեւորգյանի՝ Դավթաշենի թաղապետարանի անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու, վերջինիս հնգօրյա ժամկետում տեղեկատվություն տրամադրելուն պարտավորեցնելու եւ Դավթաշենի թաղային համայնքի ղեկավար Արթուր Գեւորգյանին 50.000 դրամ տուգանքի չափով վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջների մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի հայցադիմումն ընդդեմ Դավթաշենի թաղապետարանի (այսուհետ՝ նաեւ Թաղապետարան) եւ Դավթաշենի թաղային համայնքի ղեկավար Արթուր Գեւորգյանի՝ Դավթաշենի թաղապետարանի անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու, վերջինիս հնգօրյա ժամկետում տեղեկատվություն տրամադրելուն պարտավորեցնելու եւ Դավթաշենի թաղային համայնքի ղեկավար Արթուր Գեւորգյանին 50.000 դրամ տուգանքի չափով վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջների մասին, ՀՀ վարչական դատարանի որոշմամբ ընդունվել է վա-

րույթ, այնուհետեւ նշանակվել է քննության:

Նախնական դատական նիստի ժամանակ հայցվորը հայցից հրաժարվեց եւ խնդրեց գործի վարույթը կարճել:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 90-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ վարչական դատարանը գործի քննության ցանկացած փուլում կարճում է գործի վարույթը, եթե հայցվորը հրաժարվել է հայցից:

Նույն օրենսգրքի 100-րդ հոդվածի համաձայն՝ մինչեւ դատաքննության ավարտը հայցվորն իրավունք ունի առանց որեւէ պատճառաբանության լրիվ կամ մասնակի հրաժարվել իր պահանջներից: Այդ դեպքում դատարանը կայացնում է վճիռ գործի վարույթը կարճելու մասին այն պահանջի մասով, որից հրաժարվել է հայցվորը:

Տվյալ դեպքում հայցվորը հրաժարվել է հայցից, ուստի սույն վարչական գործի վարույթը ենթակա է կարճման:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածով, 90-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 100-րդ, 112-րդ, 115-րդ եւ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 130-132-րդ հոդվածներով՝ դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

Ըստ հայցի «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի ընդդեմ Դավթաշենի թաղապետարանի եւ Դավթաշենի թաղային համայնքի ղեկավար Արթուր Գեւորգյանի՝ Դավթաշենի թաղապետարանի անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու, վերջինիս հնգօրյա ժամկետում տեղեկատվություն տրամադրելուն պարտավորեցնելու եւ Դավթաշենի թաղային համայնքի ղեկավար Արթուր Գեւորգյանին 50.000 դրամ տուգանքի չափով վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջների մասին վարչական գործի վարույթը կարճել:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից եւ կարող է բողոքարկվել վճռաբեկության կարգով ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական եւ վարչական պալատին:

ԴԱՏԱՎՈՐ՝

Ա. ՍԱՐԳՍՅԱՆ:

Գործ 5.
Ինֆորմացիայի ազատության
կենսրոնն
ընդդեմ
Չարթունի գյուղադեպարտմանի

Գործի համառոտ նկարագրությունը

2009թ. փետրվարի 7-ին Ինֆորմացիայի ազատության կենտրոնը տեղեկատվություն ստանալու հարցում է ուղարկել Արմավիրի մարզի Չարթոնք համայնքի գյուղապետին՝ խնդրելով տրամադրել.

1. Չարթոնք համայնքի 2008թ. բյուջեն,
2. Չարթոնք համայնքի 2008թ. բյուջեի կատարման հաշվետվության պատճեն:

Չարթոնքի գյուղապետը չի պատասխանել ԻԱԿ-ի հարցմանը:

2009թ. մարտի 20-ին ԻԱԿ-ը տեղեկատվություն տրամադրել պարտադրելու եւ վարչական տույժի ենթարկելու պահանջների մասին հայց է ներկայացրել ՀՀ վարչական դատարան:

ՀՀ վարչական դատարանը մասամբ է վարույթ ընդունել ԻԱԿ-ի հայցը՝ մերժելով Չարթոնքի գյուղապետին վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջը: 23.04.2009թ.-ին ԻԱԿ-ը բողոք է ներկայացրել ՀՀ վարչական դատարան՝ խնդրելով վերացնել ՀՀ վարչական դատարանի դատավորի որոշումը՝ Չարթոնքի գյուղապետին 50.000 դրամի չափով վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջի մասով հայցադիմումի ընդունումը մերժելու մասը:

Ապրիլի 28-ին ՀՀ վարչական դատարանը (Նախագահող դատավոր՝ Ա. Առաքելյան) բավարարեց ԻԱԿ-ի բողոքը, որով հիմնավորեց, որ Ինֆորմացիայի ազատության կենտրոնը կարող է դիմել դատարան՝ պաշտոնատար անձանց վարչական պատասխանատվության ենթարկելու հայցապահանջով:

Հուլիսի 30-ին կայացած դատական նիստի ժամանակ ԻԱԿ ներկայացուցիչ Կարեն Մեժլումյանը հրաժարվեց հայցի՝ տեղեկատվություն տրամադրել պարտավորեցնելու եւ Չարթոնքի գյուղապետին 50.000 դրամի չափով վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջներից: Սակայն պնդեց Չարթոնքի գյուղապետի անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու մասին պահանջը:

Օգոստոսի 13-ին ՀՀ վարչական դատարանը /Նախագահող դատավոր՝ Ա. Ծատուրյան/ վճռեց կարճել ԻԱԿ-ն ընդդեմ Չարթոնքի գյուղապետարանի վարչական գործի վարույթը, քանի որ ԻԱԿ ներկայացուցիչը հրաժարվել էր հայցի երկու պահանջներից, իսկ դատարանն էլ գտել էր, որ սույն գործի վարույթը ենթակա է կարճման նաեւ ԻԱԿ-ի այն պահանջի մասով, որը վերաբերում է Չարթոնքի գյուղապետարանի անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելուն, քանի որ դատավոր Ա. Ծատուրյանը գտնում էր, որ «ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը գործողությունները կամ անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու հայցատեսակ չի սահմանում, հետեւաբար այդ պահանջով վարչական դատարանը իրավասու է»:

Ի դեպ, սա առաջին դեպքն է, երբ ՀՀ վարչական դատարանը մերժել է տեղական ինքնակառավարման մարմնի գործողությունները ոչ իրավաչափ ճանաչելու պահանջը: ԻԱԿ-ի բազմաթիվ հայցեր՝ նշյալ պահանջով, բավարարվել են ՀՀ վարչական դատարանի կողմից:

15.09.2009թ ԻԱԿ-ը վճռաբեկության կարգով բողոքարկեց ՀՀ վարչական դատարանի վճիռը՝ ՀՀ վճռաբեկ դատարանից խնդրելով բեկանել ՀՀ վարչական դատարանի 13.08.2009թ. թիվ ՎԴ 4/0074/05/09 վճռի՝ Չարթունքի գյուղապետարանի անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու մասին պահանջով գործի վարույթը կարճելու մասը, այն փոփոխել եւ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի այդ հայցապահանջը բավարարել: ՀՀ վճռաբեկ դատարանն իր որոշումը դեռ չի կայացրել:

Գործի նյութերը

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԶԿ

03.02.2009թ.

98-ի 3

**Չարթունքի համայնքապետ
պարոն Պարույր Սարգսյանին**

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Սարգսյան,

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 եւ 27.1 հոդվածների եւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում եմք տրամադրել հետեւյալ տեղեկությունը.

1. Չարթունք համայնքի 2008թ. բյուջեի պատճեն:
2. Չարթունք համայնքի 2008թ. բյուջեի կատարման հաշվետվության պատճեն:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում եմք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում եմք գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին (հոդված 11):

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ Հանրային կապերի պատասխանատու՝ Անահիտ Զոչարյան:

ՀՀ ՎԱՐՉԱՎԱՆ ԴԱՏԱՐԱՆԻՆ

Էջմիածնի նստավայր

Հայցվոր՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն»
հասարակական կազմակերպություն
Նախագահ՝ Շուշան Դոյրոյան
Ներկայացուցիչ՝ Կարեն Մեծլումյան
Պատասխանողներ՝ Չարթոնքի գյուղապետարան
Հասցե՝ Արմավիրի մարզ, գ. Չարթոնք
Չարթոնքի գյուղապետ Պարույր Սարգսյան

20.03.2009թ.

Հ Ա Յ Ց Ա Դ Ի Մ ՈՒ Մ

Գործողության կատարման հայց

Տեղեկատվություն տրամադրել պարտադրելու եւ վարչական
տույժի ենթարկելու պահանջների մասին

1. Փաստերը որոնց վրա հիմնված է հայցապահանջը.

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունը 07.02.2009թ-ին հետեւյալ բովանդակությամբ տեղեկատվություն ստանալու հարցում է ներկայացրել Չարթոնքի գյուղապետ Պարույր Սարգսյանին. «Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 եւ 27.1 հոդվածների եւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել հետեւյալ տեղեկությունը.

1. Չարթոնք համայնքի 2008թ.բյուջեի պատճեն:

2. Չարթոնք համայնքի 2008թ. բյուջեի կատարման հաշվետվության պատճեն:
«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում: Տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում ենք գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին (հոդված 11)»:

Նշված փաստը հաստատվում է հարցման կրկնօրինակով եւ փոստային անդորրագրով:

Չարթոնքի գյուղապետարանը օրենքով սահմանված 5-օրյա ժամկետում տեղեկություն չի տրամադրել, ավելին՝ 30 օրյա ժամկետում եւս հայցվող տեղեկատվությունը չի ստացվել: Հայցվող տեղեկատվությունը չտրամադրելու մասին փաստը հաստատվում է պատասխանի բացակայությամբ:

2. Հայցապահանջի իրավական հիմնավորումը

ՀՀ Սահմանադրության՝

- 27 հոդվածի 2-րդ պարբերության համաձայն. «Յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք, ներառյալ տեղեկություններ եւ գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը, տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից».
- 27.1 հոդվածի համաձայն. «Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական կամ հասարակական շահերի պաշտպանության նկատառումներով իրավասու պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններին եւ պաշտոնատար անձանց դիմումներ կամ առաջարկություններ ներկայացնելու եւ ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունք»:

Սահմանադրությամբ երաշխավորված վերը նշված իրավունքներն առարկայանում են նաեւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում, որի 6 հոդվածի 1-ին մասի համաձայն.

«Յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը եւ (կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկատվություն տնօրինողին եւ ստանալու այդ տեղեկությունը»:

Նույն օրենքի 9 հոդվածի 7-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝

եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը տրամադրելու համար անհրաժեշտ է կատարել լրացուցիչ աշխատանք, ապա այդ տեղեկությունը դիմողին է տրվում դիմումն ստանալուց հետո՝ 30-օրյա ժամկետում, որի մասին հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում, գրավոր տեղեկացվում է դիմողին՝ նշելով հետաձգման պատճառները եւ տեղեկությունը տրամադրելու վերջնական ժամկետը:

Ի խախտումն Սահմանադրությամբ ու օրենքով երաշխավորված հայցվորի իրավունքների ու պատասխանողի պարտականության, պատասխանող Չարթոնքի գյուղապետարանն օրենքով սահմանված ժամկետում եւ դրա ավարտից հետո էլ, մինչ օրս չի տրամադրել պահանջվող տեղեկատվությունը:

Այսպես, **Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրքի 189⁷ հոդվածը** պատասխանատվություն է սահմանում տեղեկություն տալու պարտականությունը չկատարելու համար, որի համաձայն.

«Օրենքով նախատեսված տեղեկությունը պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունների, ինչպես նաեւ հանրային նշանակության կազմակերպությունների պաշտոնատար անձանց կողմից ապօրինաբար չտրամադրելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխա-

տավարձի տասնապատիկից մինչև հիսնապատիկի չափով:

Նույն խախտումը, որը կատարվել է կրկին անգամ՝ վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո մեկ տարվա ընթացքում՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից մինչև հարյուրապատիկի չափով»:

Նույն օրենսգրքի 223 հոդվածի համաձայն՝ առաջին ատյանի դատարանների դատավորները քննում են սույն օրենսգրքի 189.7 հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը:

Գտնում ենք, որ եթե դատարանը գործի քննության ընթացքում հաստատված համարի պատասխանողի կողմից հայցվող տեղեկատվությունը օրենքով սահմանված ժամկետում չտրամադրելու փաստը, արդարացի իրավունք ունենք դատարանից հայցել՝ վարչական տույժի ենթարկել պատասխանող՝ Չարթոնքի գյուղապետ Պարույր Սարգսյանին իր ապօրինի անգործության համար, որն արտահայտվել է օրենքով սահմանված իր պարտականություններից խուսափելու, այն է՝ հայցված տեղեկատվությունը չտրամադրելու արարքով եւ պահանջել, որ դրա համար որպես պատասխանատվության միջոց կիրառվի տուգանք 50.000 /հիսուն հազար/ դրամ գումարի չափով:

Վերոգրյալից ելնելով եւ ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 11 գլխի պահանջներով՝

Խնդրում եմ՝

1. Ոչ իրավաչափ ճանաչել Չարթոնքի գյուղապետարանի այն գործողությունները կամ անգործությունը, որով օրենքով սահմանված առավելագույն ժամկետում սպառնիչ եւ լրիվ պատասխան չի տրվել հայցվող տեղեկատվության վերաբերյալ եւ պարտավորեցնել Չարթոնքի գյուղապետարանին հինգօրյա ժամկետում տրամադրելու Չարթոնք համայնքի 2008թ. բյուջեի եւ Չարթոնք համայնքի 2008թ. բյուջեի կատարման հաշվետվության պատճենները:
2. Չարթոնքի գյուղապետ Պարույր Սարգսյանն ենթարկել վարչական պատասխանատվության՝ տուգանքի՝ 50000 դրամի չափով:
3. Չարթոնքի գյուղապետարանից հօգուտ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի բռնագանձել 8000 դրամ պետական տուրքի գումարը:

Կից ներկայացվում են՝

1. պետական տուրքի վճարման անդորրագիր,
2. լիազորագիր,
3. հարցման կրկնօրինակը,
4. փոստային անդորրագրի պատճեն,

5. հայցադիմումը պատասխանողներին եւ ՀՀ Ֆինանսների նախարարությանը հանձնելու մասին ապացույցներ:

«Ինֆորմացիայի ազատության
կենտրոն» ՀԿ նախագահ՝
Լիազոր ներկայացուցիչ՝

Շուշան Դոյդոյան
Կարեն Մեժլումյան:

Վ Ճ Ի Ռ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

13.08.2009թ.

ք. Էջմիածին

Հայաստանի Հանրապետության վարչական դատարանը
հետեւյալ կազմով՝

Նախագահությամբ՝ դատավոր Արթուր Ծատուրյանի,

Քարտուղարությամբ՝ Էլենորա Կարապետյանի,

Մասնակցությամբ՝

Հայցվոր՝ «Ինֆորմացիայի ազատության

կենտրոն» հասարակական

կազմակերպություն

Պատասխանողներ՝ 1. ՀՀ Արմավիրի մարզի

Չարթոնքի գյուղապետարան

2. Չարթոնքի գյուղապետ Պարույր Սարգսյան

Էջմիածնի նստավայրում, դռնբաց դատական նիստում քննեց վարչական գործն ըստ հայցի «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության ընդդեմ Չարթոնքի գյուղապետարանի՝ Չարթոնքի գյուղապետարանի գործողությունները կամ անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու, տեղեկատվություն տրամադրելուն պարտավորեցնելու եւ Չարթոնքի գյուղապետին 50.000 դրամի չափով վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջների մասին:

1. Գործի դատավարական նախապատմությունը.

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն) հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան ընդդեմ Չարթոնքի գյուղապետարանի (այսուհետ՝ Գյուղապետարան) Չարթոնքի գյուղապետարանի գործողությունները կամ անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու, տեղեկատվություն տրամադրելուն պարտավորեցնելու եւ Չարթոնքի գյուղապետին 50.000 դրամի չափով վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջներով:

Դատարանը 2009թ. ապրիլի 10-ի որոշմամբ հայցադիմումը Չարթոնքի գյուղապետարանի գործողությունները կամ անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու, տեղեկատվություն տրամադրելուն պարտավորեցնելու մասով ընդունել է վարույթ, իսկ Չարթոնքի գյուղապետին 50.000 դրամի չափով վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջի մասով հայցադիմումի ընդունումը մերժել է:

Հայցվորը բողոքարկել է ՀՀ վարչական դատարանի Էջմիածնի նստավայրի 10.04.2009թ. որոշումը ՀՀ վարչական դատարանի կենտրոնական նստավայր՝ խնդրելով վերացնել Չարթունքի գյուղապետին 50.000 դրամի չափով վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջի մասով՝ հայցադիմումի ընդունումը մերժելու մասը: 2009թ. ապրիլի 28-ի որոշմամբ բողոքը բավարարվել է: Որպես իր պահանջի հիմնավորում՝ Կազմակերպությունը դատարան է ներկայացրել Չարթունքի գյուղապետ Պ. Սարգսյանին ուղղված տեղեկատվություն ստանալու հարցման պատճենը, ինչպես նաև պետական տուրքի վճարումը հավաստող 2009թ. ապրիլի 3-ի թիվ 212 դրամարկղի մուտքի օրդերը:

2. Հայցվորի իրավական դիրքորոշումը.

Հայցվորը, դիմելով դատարան, հայտնում է, որ 07.02.2009թ. տեղեկատվություն ստանալու հարցում է ներկայացրել Չարթունքի գյուղապետ Պ. Սարգսյանին: Հայցվորը խնդրել է տրամադրել 2008թ. բյուջեի պատճենը, ինչպես նաև դրա կատարման հաշվետվությունը:

Հայցվորը նաև, հայտնում է, որ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում: Ուստի խնդրում է տեղեկատվությունը տրամադրել օրենքով սահմանված ժամկետներում: Տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում է գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին:

Գյուղապետարանն օրենքով սահմանված հնգօրյա ժամկետում եւ նույնիսկ առավելագույն՝ երեսնօրյա ժամկետում, հայցվող տեղեկատվությունը չի տրամադրել:

Ելնելով վերոգրյալից եւ վկայակոչելով ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի 2-րդ պարբերությունը, 271-րդ հոդվածը, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 189.7-րդ հոդվածը՝ Կազմակերպությունը դատարանից խնդրում է ոչ իրավաչափ ճանաչել Գյուղապետարանի գործողությունները կամ անգործությունը, պարտավորեցնել Գյուղապետարանին հնգօրյա ժամկետում տրամադրել Չարթունք համայնքի 2008թ. բյուջեի եւ Չարթունք համայնքի 2008թ. բյուջեի կատարման հաշվետվությունների պատճենները, ինչպես նաև 50.000 դրամի չափով վարչական պատասխանատվության ենթարկել Չարթունքի գյուղապետ Պ. Սարգսյանին:

3. Պատասխանողների իրավական դիրքորոշումը.

Պատասխանողներ Գյուղապետարանը եւ գյուղապետը հայցադիմումի պատասխան չեն ներկայացրել: Դատաքննության ընթացքում Չարթունքի գյուղապետ Պ. Սարգսյանը հայտնեց, որ պաշտոնական որբեւ փաստաթուղթ չի ստացել: Հարցման մասին իմացել է հեռախոսազանգով:

4. Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը եւ դատական ակտի պատճառաբանությունները.

2009թ. հուլիսի 3-ի դատաքննության ընթացքում Կազմակերպության ներկայացուցիչը հրաժարվեց հայցապահանջի՝ տեղեկատվություն տրամադրել պարտավորեցնելու եւ Չարթոնքի գյուղապետին 50.000 դրամ տուգանքի չափով վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջներից: Սակայն պնդեց Չարթոնքի գյուղապետի անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու մասին պահանջը:

Դատարանը գտնում է, որ հայցապահանջի երկու մասերից հայցվորի հրաժարվելու կապակցությամբ սույն գործի վարույթն այդ մասերով ենթակա է կարճման:

Դատարանի այս եզրահանգումը բխում է **ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 100-րդ հոդվածի** դրույթից, ըստ որի մինչեւ դատաքննության ավարտը հայցվորն իրավունք ունի առանց որեւէ պատճառաբանության լրիվ կամ մասնակի հրաժարվելու իր պահանջներից: Այդ դեպքում դատարանը կայացնում է վճիռ գործի վարույթը կարճելու մասին այն պահանջի մասով որից հրաժարվել է հայցվորը: Դատարանը գտնում է նաեւ, որ սույն գործի վարույթը ենթակա է կարճման նաեւ հայցվորի այն պահանջի մասով, որը վերաբերում է Չարթոնքի գյուղապետարանի անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելուն՝ հետեւյալ պատճառաբանությամբ:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածն է կարգավորում ճանաչման հայցի հետ կապված հարաբերությունները: Ըստ այդ հոդվածի 2-3-րդ մասերի՝ ճանաչման հայց կարող է ներկայացվել

- 1) *վարչական ակտն առոչինչ ճանաչելու համար,*
- 2) *այլեւս իրավաբանական ուժ չունեցող միջամտող վարչական ակտը կամ գործողությունը ոչ իրավաչափ ճանաչելու համար:*

Վերոշարադրյալից հետեւում է, որ գործողությունները կամ անգործությունն անվավեր ճանաչելու հայցով վարչական դատարան դիմելու իրավունք վերապահված չէ: Ուստի վարչական դատարանին ընդդատյա չէ Չարթոնքի գյուղապետի գործողությունները կամ անգործությունը ճանաչելու պահանջը:

Բացի դա, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով գործողությունները կամ անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու հայցատեսակ չի սահմանվում: Յետեւաբար հայցվորի պահանջը կարող է վերաբերել միայն անվավեր ճանաչմանը, մինչդեռ նշված օրենսգրքով գործողությունները կամ անգործությունը անվավեր ճանաչելու հայցով վարչական դատարան դիմելու հնարավորություն չի նախատեսվում: Իսկ նույն օրենսգրքի 65-րդ հոդվածով հնարավոր է միայն վիճարկման հայց ներկայացնել՝ պահանջելով ամբողջությամբ կամ մասամբ վերացնելու միջամտող վարչական ակտը:

Սույն օրենսգրքի 67-րդ հոդվածով էլ սահմանված է, որ կարող է ներկայացվել գործողության կատարման հայցը, որով հայցվորը կարող է պահանջել կատարելու որոշակի գործողություններ, որոնք ուղղված չեն վարչական ակտի ընդունմանը: Այսինքն, ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը գործողությունները կամ անգործությունները ոչ իրավաչափ ճանաչելու հայցատեսակ չի սահմանում, հետեւաբար հայցվորի այդ պահանջով վարչական դատարանը իրավասու չէ:

Դրանից ելնելով եւ հիմնվելով **ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 90-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի** վրա, ըստ որի վարչական դատարանը գործի քննության ցանկացած փուլում կարճում է գործի վարույթը, եթե վեճն ընդդատյա չէ վարչական դատարանին, դատարանը գտնում է, որ այդ մասով եւս գործի վարույթը ենթակա է կարճման:

5. Եզրափակիչ մաս.

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 90-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 100-րդ հոդվածով, 112-րդ հոդվածով, 113-րդ հոդվածի 1-ին մասով, ինչպես նաեւ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 130-132-րդ հոդվածներով՝ դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

1. **Վարչական գործի վարույթը, ըստ հայցի՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության հայցն ընդդեմ Չարթոնքի գյուղապետարանի՝ Չարթոնքի գյուղապետարանի գործողությունները կամ անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու, տեղեկատվություն տրամադրելուն պարտավորեցնելու եւ Չարթոնքի գյուղապետին 50.000 դրամի չափով վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջների մասին, կարճել:**

Պետական տուրքի վճարման հարցը համարել լուծված:

Պետական տուրքի վճարումից բացի սույն գործով դատական այլ ծախսեր չեն առաջացել:

2. ՀՀ դատական օրենսգրքի 36-րդ հոդվածի եւ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 115-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից՝ 2009թ.-ի օգոստոսի 13-ից մեկ ամիս հետո:

3. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 229-րդ հոդվածի համաձայն սույն վճիռը կարող է բողոքարկվել վճռաբեկության կարգով ՀՀ վճռաբեկ դատարան՝ հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ

Ա. ԾԱՏՈՒՐՅԱՆ:

Գործ 6.
Ինֆորմացիայի ազատության
կենսրոնն
ընդդեմ
Փարաֆարի գյուղադեֆարանի

Գործի համառոտ նկարագրությունը

2008թ. դեկտեմբերին Ինֆորմացիայի ազատության կենտրոնին էին դիմել Փարաքար համայնքի բնակիչներ Սեդա Ղազարյանը եւ Արմեն Ներսիսյանը՝ բողոքելով, որ Փարաքարի գյուղապետն իրենց տեղեկատվություն չի տրամադրում:

ԻԱԿ-ը դեկտեմբերի 12-ին տեղեկատվություն ստանալու հարցում էր ուղարկել Փարաքարի գյուղապետին, որի մեջ ներառել էր գյուղի բնակիչների պատասխան չստացված հարցերը, որոնք են.

1. Փարաքար գյուղի Մեքենագործների փող. 1-ին շենքի մոտով անցնող մայր առվի ձախ ափին, ճանապարհին կից տարածքում գտնվող 250-260քմ հողամասը ներառված է արդյոք ՀՀ հողային օրենսգրքի 60 հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում:
2. Եթե այո, խնդրում ենք հայտնել, թե ի՞նչ հիմքով եւ պատճառով,
3. Եթե ոչ, խնդրում ենք հայտնել այդ մասին:

2009թ. հունվարի 10-ին գյուղապետից ստացված պատասխանը թերի էր: Հետեւաբար, ԻԱԿ-ը դիմել էր դատարան, որպեսզի դատական կարգով ամբողջական եւ սպառիչ պատասխան ստանա համայնքապետից: Հունիսի 30-ին ՀՀ վարչական դատարանում (դատավոր Ա. Ծատուրյան) քննվեց ԻԱԿ-ն ընդդեմ Փարաքարի գյուղապետի եւ գյուղապետարանի գործը:

Գյուղապետը դատարանում պարզաբանեց, որ ԻԱԿ-ի տեղեկատվություն ստանալու հարցմանը սպառիչ չի պատասխանել գործնականում անհետար լինելու պատճառով: Զանի որ հողի սեփականության իրավունքով չփոխանցվող ցանկն իր մեջ ներառում է այն հողային զանգվածները, որի վերաբերյալ կառավարության հատուկ որոշումներ են ընդունված, ուստի Փարաքարի գյուղապետարանը ԻԱԿ-ի պահանջած տեղեկատվությունը տրամադրելու համար պետք է ունենա հիշատակվող հողատարածքի արգելքների վերաբերյալ կառավարության համապատասխան որոշումը:

Օգոստոսի 13-ին ՀՀ վարչական դատարանը վճռեց ԻԱԿ-ի հայցն ընդդեմ Փարաքարի գյուղապետարանի մերժել՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ կառավարությունը դեռեւս չի հաստատել համապատասխան ծրագիրը, որի մեջ ընդգրկվելու են ԻԱԿ-ին հետաքրքրող հողամասին առնչվող տեղեկությունները:

15.09.2009թ. ԻԱԿ-ը ՀՀ վարչական դատարանի վճիռը բողոքարկեց վճռաբեկության կարգով՝ Նյութական եւ դատավարական իրավունքի խախտման հիմքով: ՀՀ վճռաբեկ դատարանը ԻԱԿ-ի բողոքն ամբողջությամբ բավարարեց եւ գործն ուղարկեց նոր քննության:

Գործի նյութերը

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՅԿ

26.12.2008թ.

95-ի 7

**Փարաքար գյուղական համայնքի ղեկավար
պարոն Սամվել Գեղամի Վարդանյանին**

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Վարդանյան,

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՅԿ են դիմել Փարաքար համայնքի Մեքենագործների փող. 1-ին շենքի 6-րդ բնակարանի համասեփականատերեր Սեդա Ղազարյանն ու Արմեն Լիպարիտի Ներսիսյանը, տեղեկացնելով, որ Փարաքարի գյուղապետն իրենց տեղեկատվություն չի տալիս այն մասին, թե ավելի քան 20 տարի իրենց կողմից օգտագործվող Մեքենագործների փող. 1-ին շենքի մոտով անցնող մայր առվի ձախ ափին, ճանապարհին կից տարածքում գտնվող՝ մոտ 250-260քմ հողամասը ներառված է արդյոք ՀՀ հողային օրենսգրքի 60 հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում:

Սույնով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի պահանջների համաձայն խնդրում ենք հայտնել.

1. վերը նշված 250-260քմ հողամասը ներառված է արդյոք ՀՀ հողային օրենսգրքի 60 հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում:
2. Եթե այո, խնդրում ենք հայտնել, թե ի՞նչ հիմքով եւ պատճառով,
3. Եթե ոչ, խնդրում ենք հայտնել այդ մասին:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Հարգանքներով՝

ԻԱԿ նախագահ

Շուշան Դոյրոյան:

ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻՆ

Էջմիածնի ստատվայր

Հայցվոր՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն»
հասարակական կազմակերպություն
Նախագահ՝ Շուշան Դոյրոյան
Ներկայացուցիչ՝ Կարեն Մեժլումյան
Պատասխանողներ՝ Փարաքարի գյուղապետարան
Հասցե՝ Արմավիրի մարզ, Փարաքար, Նաիրի 42
Փարաքարի գյուղապետ՝ Սամվել Վարդանյան

03.03.2009թ.

Հ Ա Յ Ց Ա Դ Ի Մ ՈՒ Մ

Ճանաչման եւ գործողության կատարման հայց

Տեղական ինքնակառավարման մարմնի գործողությունները ոչ իրավա-
չափ ճանաչելու, որպես հետեւանք տեղեկատվություն տրամադրել
պարտադրելու եւ վարչական տույժի ենթարկելու պահանջների մասին

1. Փաստերը որոնց վրա հիմնված է հայցապահանջը.

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպու-
թյունը 26.12.2008թ-ին հետեւյալ բովանդակությամբ տեղեկատվություն ստա-
նալու հարցում է ներկայացրել Փարաքար գյուղական համայնքի ղեկավար
պարոն Սամվել Վարդանյանին. «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ
են դիմել Փարաքար համայնքի Մեքենագործների փող. 1-ին շենքի 6-րդ բնա-
կարանի համասեփականատերեր Սեդա Ղազարյանն ու Արմեն Լիպարիտի
Ներսիսյանը, տեղեկացնելով, որ Փարաքարի գյուղապետն իրենց տեղեկատ-
վություն չի տալիս այն մասին, թե ավելի քան 20 տարի իրենց կողմից օգտա-
գործվող Մեքենագործների փող. 1-ին շենքի մոտով անցնող մայր առվի ձախ
ափին, ճանապարհին կից տարածքում գտնվող՝ մոտ 250-260քմ հողամասը
ներառված է արդյոք ՀՀ հողային օրենսգրքի 60 հոդվածով նախատեսված
սահմանափակումների ցանկում:

Սույնով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի պահանջների
համաձայն խնդրում ենք հայտնել.

1. վերը նշված 250-260քմ հողամասը ներառված է արդյոք ՀՀ հողային
օրենսգրքի 60 հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում:
2. Եթե այո, խնդրում ենք հայտնել, թե ինչ հիմքով եւ պատճառով,
3. Եթե ոչ, խնդրում ենք հայտնել այդ մասին:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համա-
ձայն՝ տեղեկատվություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տր-

վում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում»:

Նշված փաստը հաստատվում է հարցման օրինակով եւ պատասխանողի՝ 10.01.2009թ. թիվ N 7 պատասխան գրությունով:

Պատասխանողի մոտ 1 էջանոց պատասխան գրությամբ այդպես էլ տեղեկատվություն չի տրվում այն մասին, թե վերը նշված 250-260քմ հողամասը ներառված է արդյոք ՀՀ հողային օրենսգրքի 60 հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, թե ոչ, եթե այո՝ ինչ հիմքով եւ պատճառով:

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ն լիարժեք եւ սպառիչ պատասխան ստանալու համար սպասել է օրենքով սահմանված 30-օրյա ժամկետի լրանալուն, սակայն այդ ժամկետը լրանալուց հետո էլ նման պատասխան չի ստացել: Նշված փաստը հաստատվում է հարցված տեղեկատվությամբ պատասխանի բացակայությամբ:

2. Հայցապահանջի իրավական հիմնավորումը

ՀՀ Սահմանադրության՝

- 27 հոդվածի 2-րդ պարբերության համաձայն. *«Յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք, ներառյալ տեղեկություններ եւ գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը, տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից».*
- 27.1 հոդվածի համաձայն. *«Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական կամ հասարակական շահերի պաշտպանության նկատառումներով իրավասու պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններին եւ պաշտոնատար անձանց դիմումներ կամ առաջարկություններ ներկայացնելու եւ ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունք»:*

Սահմանադրությամբ երաշխավորված վերը նշված իրավունքներն առարկայանում են նաեւ **«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում, որի 6 հոդվածի 1-ին մասի** համաձայն.

«Յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը եւ (կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկատվություն տնօրինողին եւ ստանալու այդ տեղեկությունը»:

Նույն օրենքի 9 հոդվածի 7-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝

եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը տրամադրելու համար անհրաժեշտ է կատարել լրացուցիչ աշխատանք, ապա այդ տեղեկությունը դիմողին է տրվում դիմումն ստանալուց հետո՝ 30-օրյա ժամկետում, որի մասին հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում, գրավոր տեղեկացվում է դիմողին՝ նշելով հետաձգման պատճառները եւ տեղեկությունը տրամադրելու վերջնական ժամկետը:

Ի խախտումն Սահմանադրությամբ ու օրենքով երաշխավորված հայցվորի իրավունքների ու պատասխանողի պարտականության, պատասխանող Փարաքարի գյուղապետարանը օրենքով սահմանված ժամկետում եւ դրա ավարտից հետո էլ, մինչ օրս չի տրամադրել պահանջվող տեղեկատվությունը, այն դեպքում, երբ պահանջվող տեղեկատվությունը վերաբերում է համայնքային սեփականություն հանդիսացող հողամասին եւ այն տեղեկությունը, թե այդ հողամասը ՀՀ հողային օրենսգրքի 60 հոդվածով նախատեսված սահմանափակումների մեջ ներառված է, թե ոչ, պարտավոր էր տրամադրել համայնքի ղեկավարը, ինչը չի կատարվել:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրքի 189.7. հոդվածը պատասխանատվություն է սահմանում տեղեկություն տալու պարտականությունը չկատարելու համար, որի համաձայն.

«Օրենքով նախատեսված տեղեկությունը պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունների, ինչպես նաեւ հանրային նշանակության կազմակերպությունների պաշտոնատար անձանց կողմից ապօրինաբար չտրամադրելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկից մինչեւ հիսնապատիկի չափով:

Նույն խախտումը, որը կատարվել է կրկին անգամ՝ վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո մեկ տարվա ընթացքում՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից մինչեւ հարյուրապատիկի չափով»:

Նույն օրենսգրքի 223 հոդվածի համաձայն՝ առաջին ատյանի դատարանների դատավորները քննում են սույն օրենսգրքի 189.7 հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը:

Գտնում ենք, որ եթե դատարանը գործի քննության ընթացքում հաստատված համարի պատասխանողի կողմից հայցվող տեղեկատվությունն օրենքով սահմանված ժամկետում չտրամադրելու փաստը, արդարացի իրավունք ունենք դատարանից հայցել վարչական տույժի ենթարկել պատասխանող Փարաքարի գյուղապետ Սամվել Վարդանյանին իր ապօրինի արարքի /անգործության/ համար, որն արտահայտվել է օրենքով սահմանված իր պարտականություններից խուսափելու, այն է՝ հայցված տեղեկատվությունը չտրամադրելու արարքով եւ պահանջել, որ դրա համար որպես պատասխանատվության միջոց կիրառվի տուգանքը՝ 50.000 դրամ գումարի չափով:

Վերոգրյալից ելնելով եւ ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 11 գլխի պահանջներով՝

Խնդրում եմ՝

1. Ոչ իրավաչափ ճանաչել Փարաքարի գյուղապետարանի այն գործողությունները կամ անգործությունը, որով օրենքով սահմանված առավելագույն ժամկետում սպառիչ եւ լրիվ պատասխան չի տրվել հայցվող տեղեկատվության վերաբերյալ եւ պարտավորեցնել Փարաքարի գյուղապետարանին հնգօրյա ժամկետում տրամադրել տեղեկատվություն այն մասին, թե Փարաքար գյուղի Մեքենագործների փող. 1-ին շենքի մոտով անցնող մայր առվի ձախ ափին, ճանապարհին կից տարածքում գտնվող՝ մոտ 250-260քմ հողամասը ներառված է արդյոք ՀՀ հողային օրենսգրքի 60 հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, թե՛ ոչ, եթե այո՝ ինչ հիմքով եւ պատճառով:
2. Փարաքարի գյուղապետ Սամվել Վարդանյանին ենթարկել վարչական պատասխանատվության՝ տուգանքի՝ 50000 դրամի չափով:
3. Փարաքարի գյուղապետարանից հօգուտ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի բռնագանձել 12000 դրամ պետական տուրքի գումարը:

Կից ներկայացվում են՝

1. պետական տուրքի վճարման անդորրագիր,
2. հայցադիմումը պատասխանողներին եւ ՀՀ ֆինանսների նախարարությանը հանձնելու մասին ապացույցներ,
3. լիազորագիր.,
4. հարցման օրինակը,
5. Պատասխանն իր ծրարով:

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն»
ՀԿ նախագահ՝

Շուշան Դոյդոյան

Լիազոր ներկայացուցիչ՝

Կարեն Մեժլումյան:

ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻՆ

Երևան Գ. Նժդեհի 23

Հայցվոր՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն»
հասարակական կազմակերպության
Ներկայացուցիչ՝ Կարեն Մեժլումյան
Պատասխանողներ՝ Փարաքարի գյուղապետարան
Հասցե՝ Արմավիրի մարզ, Փարաքար, Նաիրի 42
Փարաքարի գյուղապետ՝ Սամվել Վարդանյան

Բողոքարկվող դատական ակտ՝

ՀՀ վարչական դատարանի 31.03.2009թ. թիվ ՎԴ4/0063/05/09 որոշում՝ հայցադիմումը մասով վարույթ ընդունելու եւ մյուս մասով ընդունումը մերժելու մասին

Էջմիածնի նստավայր,
Դատավոր՝ Ա. Ծատուրյան
03.03.2009թ.

Բ Ո Ղ Ո Ք

ՀՀ վարչական դատարանի 31.03.2009թ.
թիվ ՎԴ4/0063/05/09 որոշման դեմ

1. Գործի դատավարական նախապատմությունը.

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունը հայցով դիմել է ՀՀ վարչական դատարանի Էջմիածնի նստավայր ընդդեմ Փարաքարի գյուղապետարանի եւ Փարաքարի գյուղապետ Սամվել Վարդանյանի՝ խնդրելով

1. ոչ իրավաչափ ճանաչել Փարաքարի գյուղապետարանի այն գործողությունները կամ անգործությունը, որով օրենքով սահմանված առավելագույն ժամկետում սպառիչ եւ լրիվ պատասխան չի տրվել հայցվող տեղեկատվության վերաբերյալ՝ պարտավորեցնել Փարաքարի գյուղապետարանին հնգօրյա ժամկետում տրամադրել տեղեկատվություն այն մասին, թե Փարաքար գյուղի Մեքենագործների փող. 1-ին շենքի մոտով անցնող մայր առվի ձախ ափին, ճանապարհին կից տարածքում գտնվող՝ մոտ 250-260քմ հողամասը ներառված է արդյոք ՀՀ հողային օրենսգրքի 60 հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, թե՛ ոչ, եթե այո՝ ինչ հիմքով եւ պատճառով:

2. Փարաքարի գյուղապետ Սամվել Վարդանյանին ենթարկել վարչական պատասխանատվության՝ տուգանքի՝ 50000 դրամի չափով:

3. Փարաքարի գյուղապետարանից հոգուտ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի բռնագանձել 12000 դրամ պետական տուրքի գումարը:

ՀՀ վարչական դատարանը 31.03.2009թ-ին թիվ ՎԴ4/0063/05/09 որոշում է կայացրել: Նշված որոշումը ՀԿ-ն ստացել է 06.04.2009թ-ին (երկուշաբթի) եւ բողոք բերելու համար սահմանված հնգօրյա ժամկետը լրանալու էր 11.04.2009թ-ին՝ շաբաթ:

Սույն բողոքը բերվում է Փարաքարի գյուղապետին 50.000 դրամի չափով վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջի մասով հայցադիմումի ընդունումը մերժելու մասի դեմ:

2. Բողոքի հիմքը եւ իրավական փաստարկները

ՀՀ Սահմանադրության՝

- 27 հոդվածի 2-րդ պարբերության համաձայն. «Յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք, ներառյալ տեղեկություններ եւ գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը, տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից».
- 27.1 հոդվածի համաձայն. «Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական կամ հասարակական շահերի պաշտպանության նկատառումներով իրավասու պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններին եւ պաշտոնատար անձանց դիմումներ կամ առաջարկություններ ներկայացնելու եւ ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունք»:

Սահմանադրությամբ երաշխավորված վերը նշված իրավունքներն առարկայանում են նաեւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում, որի 6 հոդվածի 1-ին մասի համաձայն.

«Յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը եւ (կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկատվություն տնօրինողին եւ ստանալու այդ տեղեկությունը»:

Նույն օրենքի 9 հոդվածի 7-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝

եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը տրամադրելու համար անհրաժեշտ է կատարել լրացուցիչ աշխատանք, ապա այդ տեղեկությունը դիմողին է տրվում դիմումն ստանալուց հետո՝ 30-օրյա ժամկետում, որի մասին հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում, գրավոր տեղեկացվում է դիմողին՝ նշելով հետաձգման պատճառները եւ տեղեկությունը տրամադրելու վերջնական ժամկետը:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրքի 189.7 հոդվածը պատասխանատվություն է սահմանում տեղեկություն տալու պարտականությունը չկատարելու համար, որի համաձայն.

«Օրենքով նախատեսված տեղեկությունը պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունների, ինչպես նաեւ հանրային նշանակության կազմակերպությունների պաշտոնատար անձանց կողմից ապօրինաբար չտրամադրելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկից մինչեւ հիսնապատիկի չափով:

Նույն խախտումը, որը կատարվել է կրկին անգամ՝ վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո մեկ տարվա ընթացքում՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից մինչեւ հարյուրապատիկի չափով»:

Նույն օրենսգրքի 223 հոդվածի համաձայն՝ առաջին ատյանի դատարանների դատավորները քննում են սույն օրենսգրքի 189.7 հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 17 Գլուխը՝ 219-244¹⁴ հոդվածներ, սահմանում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի ենթակայությունը: Նշված՝ 219-244¹⁴ հոդվածներից յուրաքանչյուրով սահմանված են այն մարմինները, որոնց ենթակա են կոնկրետ վարչական գործերի քննությունը:

Այդ մարմինների պաշտոնատար անձինք էլ իրավասու են իրենց ենթակայության գործերով կազմել վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն եւ Սահմանադրության 5-րդ հոդվածի պահանջից ելնելով իրավասու չեն կազմել իրենց ենթակայությանը չվերապահված իրավախախտումների վերաբերյալ արձանագրություններ, օրինակ, լեզվի տեսչության աշխատակիցը չի կարող ճանապարհային երթուղիների կանոնների խախտման վերաբերյալ արձանագրություն կազմել եւ՝ հակառակը:

Դա նշանակում է, որ օրենսգրքով դատարանի դատավորից բացի չկա մի մարմին, որն իրավասու է կազմել օրենսգրքի 223 հոդվածում նշված, այդ թվում 189.7 հոդվածներով նախատեսված, առաջին ատյանի դատարանների դատավորների քննությանը ենթակա վարչական իրավախախտումների վերաբերյալ արձանագրություն, որով ընդամենը արձանագրում է իրավախախտման փաստը:

Նշվածից հետեւում է, որ եթե դատարանը գործի քննությամբ հաստատված է համարում, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը պահանջվող տեղեկատվությունը չի տրամադրել, ապա հենց դա էլ իրավախախտման փաստի արձանագրումն է ու տվյալ պաշտոնատար անձին պատասխանատվության ենթարկելու հիմքը:

Չակառակ մոտեցման դեպքում կստացվի, որ օրենսգրքի 223 հոդվածում թվարկված՝ 40.1-40.7, 44, 53, 53.1, 97.2, 97.3, 104.3, 147, 166.1, 170.5, 172 հոդվածներով, 175 հոդվածի երրորդ մասով եւ 180.1, 182, 183.1, 185, 189.2, 189.3, 189.4, 189.5, 189.6, 189.7, 189.8, 189.9, 189.10 եւ 198.2 հոդվածի չորրորդ եւ հինգերորդ մասերով, 206.1, 206.2, 206.3, 206.4, 206.5, 206.6 եւ 206.7, 206.8 հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումներով որեւէ անձ վարչական պատասխանատվության չի ենթարկվի, քանի որ չկա արձանագրությունը կազմող մարմինը, ինչը կհանգեցնի սահմանադրական իրավունքների, մեր դեպքում՝ տեղեկատվություն ստանալու իրավունքի խախտման, քանի որ եթե տեղեկատվությունը տնօրինող պաշտոնատար անձը վստահ լինի, որ այն չտրամադրելու համար պատասխանատվություն չի կրի արձանագրության բացակայության պատճառաբանությամբ, ապա այն չի տրամադրի:

Նշենք նաեւ, որ համանման պահանջներով այլ գործերով ՀՀ վարչական դատարանը գործերը բոլոր հայցապահանջներով վարույթ է ընդունել եւ, օրինակ, 23.03.2009թ. թիվ ՎԴ/6279/05/08 վճռով Նոր Նորքի թաղապետին վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջը մերժել է, պատճառաբանությամբ, որ գործի քննության ժամանակ պահանջվող տեղեկատվությունը տրվել է:

Դա նշանակում է, որ դատարանի այն հետեւությունը, որ հայցվորն ակնհայտորեն իրավունք չունի նման պահանջով դիմելու դատարան, քանի որ տեղեկությունը ապօրինաբար չտրամադրելը հաստատող որեւէ ապացույց չի ներկայացրել, անհիմն է, ավելին, ըստ էության նախագահող դատավորի կողմից հայտնած նախնական կարծիք է ներկայացված ապացույցների վերաբերյալ, ինչն արդեն կասկածի տակ է դնում նրա անաչառությունն ու ինքնաբացարկի հիմք է:

Վերոգրյալից ելնելով եւ ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 18 եւ 19 հոդվածներով, Կոնվենցիայի 6 հոդվածով, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 125 եւ այլ հոդվածներով

Խնդրում ենք՝

Վերացնել ՀՀ վարչական դատարանի 31.03.2009թ. թիվ ՎԴ4/0063/05/09 որոշման՝ Փարաքարի գյուղապետին 50.000 դրամի չափով վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջի մասով՝ հայցադիմումի ընդունումը մերժելու մասը:

Կից ներկայացվում են՝

1. բողոքարկվող որոշումը,
2. վարչական դատարանի 23.03.2009թ. վճիռը,
3. բողոքը կողմերին ուղարկելու մասին ապացույցներ:

Լիազոր ներկայացուցիչ՝

Կարեն Մեծլումյան:

Վ Ճ Ի Ռ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

13.08.2009թ.

ք. Էջմիածին

Հայաստանի Հանրապետության վարչական դատարանը
հետեւյալ կազմով՝

Նախագահությամբ՝ դատավոր Արթուր Ծատուրյանի,
Քարտուղարությամբ՝ Էլենուրա Կարապետյանի,
Մասնակցությամբ՝

Հայցվոր՝ «Ինֆորմացիայի ազատության
կենտրոն» հասարակական
կազմակերպություն

Պատասխանողներ՝ ՀՀ Արմավիրի մարզի
Փարաքարի գյուղապետարան

Էջմիածնի նստավայրում, դռնբաց դատական նիստում քննեց վարչա-
կան գործն ըստ հայցի «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հա-
սարակական կազմակերպության ընդդեմ Փարաքարի գյուղապետա-
րանի՝ Փարաքարի գյուղապետարանի գործողությունները կամ անգոր-
ծությունը ոչ իրավաչափ ճանաչելու եւ տեղեկատվություն տրամադրե-
լուն պարտավորեցնելու պահանջների մասին:

1. Գործի դատավարական նախապատմությունը.

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպու-
թյունը (այսուհետ՝ Կազմակերպություն) հայցադիմումն է ներկայացրել ՀՀ
վարչական դատարան ընդդեմ Փարաքարի գյուղապետարանի (այսուհետ՝
Գյուղապետարան) Փարաքարի գյուղապետարանի գործողությունները կամ
անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու եւ տեղեկատվություն տրամադրե-
լուն պարտավորեցնելու պահանջներով:

Դատարանը 2009թ. մարտի 31-ի որոշմամբ հայցադիմումը Փարաքարի գյու-
ղապետարանի գործողությունները կամ անգործությունը ոչ իրավաչափ ճա-
նաչելու եւ տեղեկատվություն տրամադրելուն պարտավորեցնելու մասով ըն-
դունել է վարույթ, իսկ Փարաքարի գյուղապետին 50.000 դրամի չափով վար-
չական պատասխանատվության ենթարկելու պահանջի մասով հայցադիմու-
մի ընդունումը մերժել է:

Հայցվորը բողոքարկել է ՀՀ վարչական դատարանի Էջմիածնի նստավայրի
31.03.2009թ. որոշումը ՀՀ վարչական դատարանի կենտրոնական նստավայր՝

խնդրելով վերացնել Փարաքարի գյուղապետին 50.000 դրամի չափով վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջի մասով՝ հայցադիմումի ընդունումը մերժելու մասը: 2009թ. ապրիլի 28-ի որոշմամբ բողոքը վերադարձվել է:

Որպես իր պահանջի հիմնավորում՝ Կազմակերպությունը դատարան է ներկայացրել Գյուղապետարանի՝ Կազմակերպության նախագահ Շ. Դոյրոյանին ուղղված պատասխան գրության, համայնքի ղեկավար Ս. Ծարդանյանին ուղղված տեղեկատվություն ստանալու հարցման պատճենները, ինչպես նաև պետական տուրքի վճարումը հավաստող 2009թ. մարտի 23-ի անդորրագիրը:

2. Հայցվորի իրավական դիրքորոշումը.

Հայցվորը, դիմելով դատարան, հայտնում է, որ Կազմակերպության 26.12.2008թ. տեղեկատվություն ստանալու հարցում է ներկայացրել ՀՀ Արմավիրի մարզի Փարաքար գյուղական համայնքի ղեկավար Ս. Վարդանյանին՝ հայտնելով, որ Փարաքար համայնքի Մեքենագործների փող. 1-ին շենքի 6-րդ բնակարանի համասեփականատերեր Սեդա Ղազարյանն ու Արմեն Լիպարիտի Ներսիսյանը դիմել են Կազմակերպությանը՝ տեղեկացնելով, որ Փարաքարի գյուղապետն իրենց տեղեկատվություն չի տալիս այն մասին, թե ավելի քան 20 տարի իրենց կողմից օգտագործվող Մեքենագործների փող. 1-ին շենքի մոտով անցնող մայր առվի ձախ ափին, ճանապարհին կից տարածքում գտնվող մոտ 250-260քմ հողամասը ներառված է արդյոք ՀՀ հողային օրենսգրքի 60 հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում:

Հայցվորը նաև, հայտնում է, որ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում: Ուստի խնդրում է տեղեկատվությունը տրամադրել օրենքով սահմանված ժամկետներում: Տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում է գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին:

Գյուղապետարանն օրենքով սահմանված հնգօրյա ժամկետում եւ նույնիսկ առավելագույն՝ երեսնօրյա ժամկետում հայցվող տեղեկատվությունը չի տրամադրել:

Ելնելով վերոգրյալից եւ վկայակոչելով ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի 2-րդ պարբերությունը, 27.1-րդ հոդվածը, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 189.7-րդ հոդվածը՝ Կազմակերպությունը դատարանից խնդրում է ոչ իրավաչափ ճանաչել Գյուղապետարանի գործողությունները կամ անգործությունը, որով օրենքով սահմանված առավելագույն ժամկետում սպառիչ եւ լրիվ պատասխան չի տվել հայցվող տեղեկատվության վերաբերյալ եւ պարտավորեցնել Գյուղապետարանին հնգօրյա ժամկետում տրամադրել տեղեկատվություն այն մասին, թե Փարաքար գյուղի Մեքենագործների փող. 1-ին շենքի մոտով անցնող մայր առվի ձախ ափին, ճանապարհին կից տարածքում գտնվող՝ մոտ 250-260քմ հողամասը ներառված է արդյոք ՀՀ հողային օրենսգրքի 60 հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, եթե այո, ապա ինչ հիմքով եւ պատճառով:

Պատաքննության ընթացքում հայցվորի ներկայացուցիչ Կ. Մեժլումյանը հայտնեց, որ պատասխանողը երկու տարի առաջ էլ նույն հիմքով, ինչպես Կազմակերպությանը, մերժել է տրամադրել տեղեկատվությունը՝ որել է ապացույց չներկայացնելով այն մասին, որ կառավարությունը քննարկում է հիշատակվող հողատարածքի վերաբերյալ հարցը: Նա խնդրեց դատաքննության ընթացքում պատասխանողի կողմից որպես լրացուցիչ ապացույց ներկայացրած՝ գործին կցված վճռում հաստատված հանգամանքներ լինելու դեպքում դրանք չկիրառել Կազմակերպության նկատմամբ, քանի որ վերջինս այդ վճռի հետ որել է առնչություն չունի:

3. Պատասխանողների իրավական դիրքորոշումը.

Պատասխանողը դատարան ներկայացրած հայցադիմումի պատասխանում հայտնում է, որ Փարաքարի գյուղապետի 25.07.1997թ. թիվ 154 որոշմամբ Լիպարիտ Ներսիսյանին հատկացվել է 100քմ հողամասը, որը ոչ թե հողի սեփականությունը հաստատող փաստ է, այլ ընդամենը օգտագործման (վարձակալության) իրավունք, քանի որ նշված տարածքը կարող է օտարվել միայն վաճառքի կարգով, կադաստրային լրիվ արժեքի մուծման դեպքում, որը կազմում է 452.400 դրամ: Օրենսդիրը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի մեջ ամրագրել է սեփականատիրոջը բնութագրական երեք բաղադրիչների առկայությունը՝ տիրապետում, տնօրինում եւ օգտագործում: Նշված հանգամանքներում հողամասի նկատմամբ առկա է օգտագործման իրավունք: Փարաքար համայնքի բնակիչներ Սեդա Ղազարյանը եւ Կրմեն Ներսիսյանը բազմիցս դիմել են Փարաքարի գյուղապետարան՝ 250-260քմ մակերեսով հողամասի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով: Նրանց, ինչպես նաեւ Կազմակերպության հարցմանը Գյուղապետարանի կողմից տրվել է պատասխան՝ կազմված կոյուղու ներհամայնքային ցանցի վերակառուցման ծրագրի նախագծին համահունչ: Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի դրույթները հայցապահանջի բովանդակության գերակշիռ մաս են կազմում, ուստի սեփականության իրավունքով չփոխանցվող հողերի ցանկի սահմանումը կատարվել է հասարակական շահի պաշտպանության նպատակով եւ գործում է արդարացի հավասարակշռություն հասարակական շահի եւ անհատի իրավունքների պաշտպանության միջեւ:

ՀՀ կառավարության 02.05. 2003թ. թիվ 625 որոշման հողերի գոտիավորման եւ օգտագործման սխեմաների մշակման եւ հաստատման կարգի հավելված 2-րդ կետի համաձայն՝ «սխեման քաղաքային կամ գյուղական համայնքի սահմաններում ընդգրկված բոլոր հողատարածքների հողօգտագործումը կանոնակարգող, պետական ու համայնքի հողերի տարածքային զարգացման եւ արդյունավետ օգտագործման հիմնական ուղղություններն ամրագրող քաղաքաշինական ու հողաշինարարական միացյալ գոտիավորման փաստաթուղթ է, որը ներառում է հողերի բաշխումն նպատակային նշանակության հիմնական տեսակների սահմանմամբ եւ քաղաքաշինական, բնապահպանական, պատմամշակութային, գյուղատնտեսական, ջրային, ինժեներատեխնիկական եւ այլ բնույթի սահմանափակումների ամրագրմամբ»:

Նույն կարգի հավելվածի 14-րդ կետի համաձայն՝ մարզպետը 5-օրյա ժամկետում համաձայնություն է տալիս առաջադրանքի նախագծին եւ այն ներկայացնում ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների գործունեությունը համակարգով նախարարին, ՀՀ բնապահպանության նախարարին, ՀՀ գյուղատնտեսության նախարարին, ՀՀ մշակույթի, երիտասարդության հարցերի նախարարին, ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ նախագահին, ՀՀ ԿԱ արտակարգ իրավիճակների վարչության պետին, շահագրգիռ պետական կառավարման մարմինների համաձայնեցման: ՀՀ կառավարության 02.05.2003թ. թիվ 609-Ն որոշման համաձայն՝ հողերի գոտիավորման եւ օգտագործման սխեմաները սահմանված կարգով հաստատում է կառավարությունը:

Հողի սեփականության իրավունքով չփոխանցվող ցանկը իր մեջ ներառում է այն հողային զանգվածները, որոնց վերաբերյալ կառավարության հատուկ որոշումներ են ընդունված: Ուստի Գյուղապետարանը կողմի պահանջված տեղեկատվությունը տրամադրելու համար պետք է ունենա կառավարության համապատասխան որոշումը հիշատակվող հողատարածքի արգելքների վերաբերյալ, ապա տրամադրվի տեղեկատվություն: Նշված դիրքորոշումը բազմիցս հայտնել են կողմերին՝ գրավոր ձեւով՝ մանրամասն տեղեկացնելով, որ կոյուղու ցանցի վերակառուցման ծրագրի վերաբերյալ կառավարության դիրքորոշումը դեռ պարզ չէ, ուստի չհաստատված նախագծի տվյալներ տրամադրելը քաղաքացու իրավունքների եւ օրինական շահերի պաշտպանության խնդրում իրավաչափ վարքագիծ չէ:

Նախագիծը դեռեւս իրավական փաստաթուղթ չէ, եւ նրանում առկա ինֆորմացիան չի կարող որեւէ ազդեցություն ունենալ համայնքի ղեկավարի պարտականությունների կատարման վրա: Երբ նախագիծը հավանության արժանանա կառավարության կողմից, միայն այդ դեպքում իրավական հետեւանքներ կարող է առաջացնել համայնքի համար եւ տեղեկատվության ազատության սկզբունքի հիման վրա ծրագրի մասին պատշաճ կերպով կտեղեկանան բոլոր շահագրգիռ անձինք:

Դատաքննության ընթացքում Գյուղապետարանի ներկայացուցիչ Ա. Տոնոյանը հայտնեց, որ մինչեւ կառավարության կողմից չհաստատվի նախագիծը, տեղեկատվություն չի կարող տրամադրվել:

4. Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը եւ դատական ակտի պատճառաբանությունները.

Լսելով դատավարության մասնակիցներին, վերլուծելով եւ գնահատելով գործում եղած գրավոր ապացույցները, դատարանը հաստատված համարեց հետեւյալ հանգամանքները:

Հայցվորը իր 2008թ. դեկտեմբերի 26-ի գրությամբ դիմել է պատասխանողին՝ որոշակի տեղեկատվություն տրամադրելու խնդրանքով: Պատասխանողը 2009թ. հունվարի 10-ի գրությամբ նրան պատասխանել է, որ համայնքի սեփականություն հաղիսացող եւ հայցվորին հետաքրքրող հողատարածքի հետագա տնօրինման վերաբերյալ Գյուղապետարանը, ելնելով համայնքի քաղաքաշինական, սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերից, այդ

թվում՝ համայնքի կոյուղու ցանցի վերակառուցման ծրագրից, հայտ է ներկայացրել ՀՀ կառավարություն, որտեղ այն դեռեւս քննարկման փուլում է: Այսինքն, պատասխանողը հայցվորի դիմումը տալու դրությամբ դեռեւս հնարավորություն չի ունեցել ըստ էության պատասխանելու դրանում առաջադրված հարցին, քանի որ համապատասխան հողամասի առնչությամբ ՀՀ կառավարություն ներկայացված ծրագրով որոշակի դիրքորոշումներ դեռեւս պետք է պարզվեն, որն իրականություն կդառնա այդ ծրագիրը հաստատելու դեպքում:

Դատարան ներկայացված հայցադիմումի պատասխանում պատասխանողը նշում է, որ հողի սեփականության իրավունքով չփոխանցվող ցանկն իր մեջ ներառում է այն հողային զանգվածները, որի վերաբերյալ կառավարության հատուկ որոշումներ են ընդունված: Ուստի Գյուղապետարանը հայցվորի պահանջած տեղեկատվությունը տրամադրելու համար պետք է ունենա կառավարության համապատասխան որոշումը հիշատակվող հողատարածքի արգելքների վերաբերյալ, ապա տրամադրի տեղեկատվություն:

Պատասխանողը նշում է նաեւ, որ երբ նախագիծը հավանության արժանանա կառավարության կողմից, միայն այդ դեպքում իրավական հետեւանքներ կարող է առաջացնել համայնքի համար եւ տեղեկատվության ազատության սկզբունքի հիման վրա ծրագրի մասին պատշաճ կերպով կտեղեկանան բոլոր շահագրգիռ անձինք:

Այսպիսով, դատարանը հաստատված է համարում այն հանգամանքը, որ պատասխանողը չի հրաժարվել ըստ էության հայցվորի հարցին պատասխանելուց, այլ մատնանշել է, որ որոշակի հարցերի լուծումից հետո, որոնք կախված չեն իրենից, բայց նշանակություն ունեն հայցվորին հետաքրքրող հարցի ըստ էության պարզաբանման համար, կրկին անդրադառնալ եւ տալ բովանդակային պատասխան նրա առաջադրած հարցին: Դատարանը, եթե պարտավորեցնի էլ պատասխանողին կատարել հայցվորի պահանջը, ապա գործնականում հնարավոր չի լինի այն կատարել, քանի դեռ ՀՀ կառավարությունը չի հաստատել համապատասխան ծրագիրը, որի մեջ ընդգրկվելու են հայցվորին հետաքրքրող հողամասին առնչվող տեղեկատվության մասին լուծումները:

5. Եզրափակիչ մաս.

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածով, 113-րդ հոդվածի 1-ին մասով, ինչպես նաեւ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 130-132-րդ հոդվածներով՝ դատարարը

Վ Ճ Ռ Ե Ց

1. «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության հայցը ընդդեմ Փարաքարի գյուղապետարանի՝ Փարաքարի գյուղապետարանի գործողությունները կամ անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու եւ տեղեկատվություն տրամադրելուն պարտավորեցնելու պահանջների մասին մերժել:

Պետական տուրքի վճարման հարցը համարել լուծված:

Պետական տուրքի վճարումից բացի սույն գործով դատական այլ ծախսեր չեն առաջացել:

2. ՀՀ դատական օրենսգրքի 36-րդ հոդվածի եւ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 115-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից՝ 2009թ.-ի օգոստոսի 13-ից մեկ ամիս հետո:
3. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 229-րդ հոդվածի համաձայն սույն վճիռը կարող է բողոքարկվել վճռաբեկության կարգով ՀՀ վճռաբեկ դատարան՝ հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ

Ա. ԾԱՏՈՒՐՅԱՆ:

Գործ 7.

**Ինֆորմացիայի ազատության
կենսրոնն
ընդդեմ
Ելփինի գյուղադատի եւ
գյուղադատարանի**

Գործի համառոտ նկարագրությունը

ՀՀ վարչական դատարանն առաջին անգամ վարչական պատասխանատվության՝ տուգանքի ենթարկեց պաշտոնյայի՝ անձի տեղեկատվություն ստանալու իրավունքը խախտելու համար:

2009թ. փետրվարի 2-ին Ինֆորմացիայի ազատության կենտրոնը դիմել էր Ելփինի գյուղապետին՝ խնդրելով տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. Ելփին համայնքի 2008թ. բյուջեի պատճեն:
2. Ելփին համայնքի 2008թ. բյուջեի կատարման հաշվետվության պատճեն:

ԻԱԿ-ի հարցումը մնացել էր անպատասխան:

Մարտի 18-ին ԻԱԿ-ը դիմել էր ՀՀ վարչական դատարան՝ խնդրելով.

1. Ոչ իրավաչափ ճանաչել Ելփինի գյուղապետարանի այն գործողությունները կամ անգործությունը, որով օրենքով սահմանված առավելագույն ժամկետում սպառիչ ելրիվ պատասխան չի տրվել հայցվող տեղեկատվության վերաբերյալ եւ պարտավորեցնել Ելփինի գյուղապետարանին հնգօրյա ժամկետում տրամադրել Ելփինի համայնքի 2008թ. բյուջեի եւ Ելփին համայնքի 2008թ. բյուջեի կատարման հաշվետվության պատճենները:
2. Ելփինի գյուղապետ Խորեն Ավետիսյանին ենթարկել վարչական պատասխանատվության՝ տուգանքի՝ 50000 դրամի չափով:

3. Ելփինի գյուղապետարանից հոգուտ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի բռնագանձել

Մինչ դատական նիստի օրը Ելփինի գյուղապետը ԻԱԿ-ին տրամադրել էր հայցվող տեղեկությունները:

Հունիսի 6-ին ՀՀ վարչական դատարանը՝ դատավոր Արթուր Պողոսյանի նախագահությամբ, դատական պրակտիկայում աննախադեպ վճիռ կայացրեց՝ բավարարելով Ինֆորմացիայի ազատության կենտրոնի հայցը՝ պաշտոնատար անձին տեղեկատվություն չտրամադրելու համար վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջի մասով, որի արդյունքում Վայոց ձորի մարզի Ելփինի գյուղապետ Խորեն Ավետիսյանը 50.000 դրամ տուգանք է մուծելու՝ պահանջվող տեղեկատվությունը ԻԱԿ-ին ժամանակին չտրամադրելու համար:

Ի դեպ, սա Հայաստանում առաջին դատական նախադեպն է, որով պաշտոնյան ենթարկվեց վարչական տուգանքի՝ պարտավորվելով վճարել սեփական գրպանից:

Գործի նյութերը

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՅԿ

11.02.2009թ.

98-ի 1

**Ելփինի համայնքապետ
պարոն Խորեն Ավետիսյանին**

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Ավետիսյան,

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 եւ 27.1 հոդվածների եւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում եմք տրամադրել հետեւյալ տեղեկությունը.

1. Ելփին համայնքի 2008թ. բյուջեի պատճեն:
2. Ելփին համայնքի 2008թ. բյուջեի կատարման հաշվետվության պատճեն:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում եմք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում եմք գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին (հոդված 11):

Կանխավ շնորհակալ եմ:

Հանրային կապերի պատասխանատու՝ Անահիտ Քոչարյան:

ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻՆ

քաղաք Վեդի, Արարատյան 55

Հայցվոր՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն»

հասարակական կազմակերպություն

Նախագահ՝ Շուշան Դոյրոյան

Ներկայացուցիչ՝ Կարեն Մեծլումյան

Պատասխանողներ՝ Ելփինի գյուղապետարան

Ելփինի գյուղապետ՝

Խորեն Ավետիսյան

18.03.2009թ.

Հ Ա Յ Ց Ա Դ Ի Մ ՈՒ Մ

Ճանաչման եւ գործողության կատարման հայց

Տեղական ինքնակառավարման մարմնի անգործությունը ոչ իրավա-
չափ ճանաչելու, որպես հետեւանք տեղեկատվություն տրամադրել
պարտադրելու եւ վարչական տույժի ենթարկելու պահանջների մասին

1. Փաստերը որոնց վրա հիմնված է հայցապահանջը.

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպու-
թյունը 11.02.2009թ-ին հետեւյալ բովանդակությամբ տեղեկատվություն ստա-
նալու հարցում է ներկայացրել Ելփինի համայնքապետ Խորեն Ավետիսյանին.
«Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 եւ 27.1 հոդվածների եւ «Տեղեկատ-
վության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդ-
րում ենք տրամադրել հետեւյալ տեղեկությունը.

1. Ելփին համայնքի 2008թ. բյուջեի պատճեն:

2. Ելփին համայնքի 2008թ. բյուջեի կատարման հաշվետվության պատճեն:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համա-
ձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է
այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկու-
թյուն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետ-
ներում:

Տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում ենք գրավոր
տեղյակ պահել մերժման հիմքի մասին (հոդված 11)»:

Նշված փաստը հաստատվում է հարցման կրկնօրինակով եւ փոստային ան-
դրրագրով:

Ելփինի գյուղապետարանը օրենքով սահմանված 5-օրյա ժամկետում տեղեկություն չի տրամադրել, ավելին՝ 30 օրյա ժամկետում եւս հայցվող տեղեկատվությունը չի ստացվել:

Հայցվող տեղեկատվությունը չտրամադրելու մասին փաստը հաստատվում է պատասխանի բացակայությամբ:

2. Հայցապահանջի իրավական հիմնավորումը

ՀՀ Սահմանադրության՝

- 27 հոդվածի 2-րդ պարբերության համաձայն. «Յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք, ներառյալ տեղեկություններ եւ գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը, տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից»:
- 27.1 հոդվածի համաձայն. «Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական կամ հասարակական շահերի պաշտպանության նկատառումներով իրավասու պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններին եւ պաշտոնատար անձանց դիմումներ կամ առաջարկություններ ներկայացնելու եւ ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունք»:

Սահմանադրությամբ երաշխավորված վերը նշված իրավունքներն առարկայանում են նաեւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում, որի 6 հոդվածի 1-ին մասի համաձայն.

«Յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը եւ (կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկատվություն տնօրինողին եւ ստանալու այդ տեղեկությունը»:

Նույն օրենքի 9 հոդվածի 7-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝

եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը տրամադրելու համար անհրաժեշտ է կատարել լրացուցիչ աշխատանք, ապա այդ տեղեկությունը դիմողին է տրվում դիմումն ստանալուց հետո՝ 30-օրյա ժամկետում, որի մասին հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում, գրավոր տեղեկացվում է դիմողին՝ նշելով հետաձգման պատճառները եւ տեղեկությունը տրամադրելու վերջնական ժամկետը:

Ի խախտումն Սահմանադրությամբ ու օրենքով երաշխավորված հայցվորի իրավունքների ու պատասխանողի պարտականության, պատասխանող Ելփինի գյուղապետարանը օրենքով սահմանված ժամկետում եւ դրա ավարտից հետո էլ, մինչ օրս չի տրամադրել պահանջվող տեղեկատվությունը:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրքի 189.7 հոդվածը պատասխանատվություն է սահմանում տեղեկություն տալու պարտականությունը չկատարելու համար, որի համաձայն.

«Օրենքով նախատեսված տեղեկությունը պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների, բյուջեներից ֆի-

Նանսավորվող կազմակերպությունների, ինչպես նաև հանրային նշանակության կազմակերպությունների պաշտոնատար անձանց կողմից ապօրինաբար չտրամադրելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկից մինչև հիսնապատիկի չափով:

Նույն խախտումը, որը կատարվել է կրկին անգամ՝ վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո մեկ տարվա ընթացքում՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից մինչև հարյուրապատիկի չափով»:

Նույն օրենսգրքի 223 հոդվածի համաձայն՝ առաջին ատյանի դատարանների դատավորները քննում են սույն օրենսգրքի 189.7 հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը:

Գտնում ենք, որ եթե դատարանը գործի քննության ընթացքում հաստատված համարի պատասխանողի կողմից հայցվող տեղեկատվությունը օրենքով սահմանված ժամկետում չտրամադրելու փաստը, արդարացի իրավունք ունենք դատարանից հայցել վարչական տույժի ենթարկել պատասխանող Ելփինի գյուղապետ Խորեն Ավետիսյանին իր ապօրինի անգործության համար, որն արտահայտվել է օրենքով սահմանված իր պարտականություններից խուսափելու, այն է՝ հայցված տեղեկատվությունը չտրամադրելու արարքով եւ պահանջել, որ դրա համար որպես պատասխանատվության միջոց կիրառվի տուգանք 50.000 /հիսուն հազար/ դրամ գումարի չափով:

Վերոգրյալից ելնելով եւ ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 11 գլխի պահանջներով՝

խնդրում եմ՝

1. ոչ իրավաչափ ճանաչել Ելփինի գյուղապետարանի այն գործողությունները կամ անգործությունը, որով օրենքով սահմանված առավելագույն ժամկետում սպառնիչ եւ լրիվ պատասխան չի տրվել հայցվող տեղեկատվության վերաբերյալ եւ պարտավորեցնել Ելփինի գյուղապետարանին հնգօրյա ժամկետում տրամադրել Ելփինի համայնքի 2008թ. բյուջեի եւ Ելփին համայնքի 2008թ. բյուջեի կատարման հաշվետվության պատճենները:
2. Ելփինի գյուղապետ Խորեն Ավետիսյանին ենթարկել վարչական պատասխանատվության՝ տուգանքի՝ 50000 դրամի չափով:
3. Ելփինի գյուղապետարանից հօգուտ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի բռնագանձել 8000 դրամ պետական տուրքի գումարը:

Կից ներկայացվում են՝

1. պետական տուրքի վճարման անդորրագիր,
2. լիազորագիր,
3. հարցման կրկնօրինակը,
4. փոստային անդորրագրի պատճեն,
5. հայցադիմումը պատասխանողներին եւ ՀՀ Ֆինանսների նախարարությանը հանձնելու մասին ապացույցներ:

«Ինֆորմացիայի ազատության
կենտրոն» ՀԿ նախագահ՝
Լիազոր ներկայացուցիչ՝

Շուշան Դոյդոյան
Կարեն Մեժլումյան:

Վ Ճ Ի Ռ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վարչական դատարանը
(Վեդու Նստավայր)

Նախագահությամբ դատավոր՝ Ա. Պողոսյանի

Քարտուղարությամբ՝ Լ. Օհանյանի

Մասնակցությամբ՝

հայցվոր՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն»

հասարակական կազմակերպություն

Նախագահ՝ Շուշան Դոյրոյան,

Ներկայացուցիչ՝ փաստաբան Կ.Մեծլումյանի

պատասխանողներ՝ ՀՀ Վայոց ձորի մարզի

Ելփինի գյուղապետարան

ՀՀ Վայոց ձորի մարզի Ելփինի գյուղապետ

Խորեն Ավետիսյան

Վեդի քաղաքում դռնբաց դատական նիստում քննեց /գործի քննություն-
նը հայտարարվել է ավարտված 2009 թվականի հունիսի 29-ին, վճիռը
հրապարակվել է 2009 թվականի հուլիսի 06-ին/ վարչական գործն ըստ
հայցի՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական
կազմակերպության /այսուհետ նաեւ՝ Կազմակերպություն/ ընդդեմ ՀՀ
Վայոց ձորի մարզի Ելփինի գյուղապետարանի, ՀՀ Վայոց ձորի մարզի
Ելփինի գյուղապետ Խորեն Ավետիսյանի՝ տեղական ինքնակառավար-
ման մարմնի անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու, որպես հե-
տեւանք՝ տեղեկատվության տրամադրել պարտադրելու եւ վարչական
տույժի ենթարկելու պահանջների մասին:

Հայցի առարկան կազմող պահանջները.

1. Ոչ իրավաչափ ճանաչել Ելփինի գյուղապետարանի այն գործողությունները
կամ անգործությունը, որով օրենքով սահմանված առավելագույն ժամկե-
տում սպառիչ եւ լրիվ պատասխան չի տրվել հայցվող տեղեկատվության վե-
րաբերյալ եւ պարտավորեցնել Ելփինի գյուղապետարանին հնգօրյա ժամ-
կետում տրամադրել Ելփինի համայնքի 2008թ. բյուջեի եւ Ելփին համայնքի
2008թ. բյուջեի կատարման հաշվետվության պատճենները:
2. Ելփինի գյուղապետ Խորեն Ավետիսյանին ենթարկել վարչական պատաս-
խանատվության՝ տուգանքի՝ 50.000 դրամի չափով:

3. Ելփինի գյուղապետարանից հոգուտ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության բռնագանձել 8.000 դրամ պետական տուրքի գումար:

Չայցի հիմքը կազմող հանգամանքները

Կազմակերպությունը 11.02.2009թ. տեղեկատվություն ստանալու հարցում է ներկայացրել Ելփինի համայնքապետ Խորեն Ավետիսյանին: Գյուղապետարանն օրենքով սահմանված 5-օրյա ժամկետում տեղեկություն չի տրամադրել, ավելին՝ 30-օրյա ժամկետում եւս հայցվող տեղեկատվությունը չի ստացվել: Չայցվող տեղեկատվությունը չտրամադրելու մասին փաստը հաստատվում է պատասխանի բացակայությամբ:

Չայցի առարկայի օրինական լինելու հաստատման համար հայցվորի կողմից վկայակոչված նյութաիրավական եւ դատավարական իրավական ակտերի դրույթները

1. **ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի 2-րդ պարբերություն, 27.1-րդ հոդված,**
2. **«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մաս, 9-րդ հոդվածի 7-րդ մասի 1-3-րդ կետեր,**
3. **Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի /այսուհետև՝ ՎԻՎ օր-ք/ 189.7-րդ, 223-րդ հոդվածներ,**
4. **ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 11-րդ գլուխ:**

Չայցադիմումի պատասխանի համառոտ բովանդակությունը.

Պատասխանողը նշում է, որ 10.04.2009թ. Կազմակերպությանն ուղարկվել է Ելփին համայնքի 2008թ. բյուջեի պատճեն ամբողջությամբ եւ 2008թ. բյուջեի կատարողականի հաշվետվությունը: Սակայն իրենց անհասկանալի պատճառներով հայցվորը գործ է հարուցել Ելփինի գյուղապետարանի դեմ: Այս ընթացքում հայցվորի կողմից իրենց չի ներկայացվել ոչ մի լրացուցիչ պահանջ :

Դատաքննության ընթացքում ներկայացված բացման խոսքերը, դիմումները, միջնորդությունները եւ հետազոտված ապացույցները.

1. Չայցվոր կողմի բացման խոսքի համառոտ բովանդակությունը

Դատաքննության ընթացքում հայցվորի ներկայացուցիչը պնդեց հայցապահանջը մասնակի. իրաժարվեց հայցապահանջների 1-ին կետի 2-րդ պահանջից, որը վերաբերում է Ելփինի գյուղապետարանին հնգօրյա ժամկետում Ելփինի համայնքի 2008թ. բյուջեի եւ Ելփին համայնքի 2008թ. բյուջեի կատարման հաշվետվության պատճենները տրամադրել պարտավորեցնելուն, քանի որ հայցադիմումը դատարան ներկայացնելուց հետո պատասխանողը հայցվորին է ներկայացրել պահանջվող փաստաթղթերի պատճենները: Պնդեց մնացած պահանջներն ամբողջությամբ: Չայցադիմումի պատասխանի դեմ առարկեց, քանի որ այն զուրկ է իրավական հիմքերից: Երբ դիմել են գյուղապետարանին, նա որեւէ գործողություն չի կատարել:

2. Պատասխանող կողմի բացման խոսքի համառոտ բովանդակությունը

Պատասխանողները, պատշաճ ծանուցված լինելով դատական նիստի վայրի եւ ժամանակի մասին /գ.թ. 20-24, 26/, չէին ներկայացել դատական նիստին եւ չէին միջնորդել իրենց բացակայությամբ գործը քննելու մասին, ուստի դատարանը, ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 95-րդ հոդվածի 2-րդ մասով, որոշեց գործը քննել պատասխանողների բացակայությամբ:

3. Գրավոր ապացույցները

Հրապարակվեցին եւ հետազոտվեցին գործում առկա գրավոր ապացույցները:

4. Կողմերի ամփոփիչ ճառերը

Կողմը հրաժարվեց հանդես գալ ամփոփիչ ճառով:

Դատարանի պատճառաբանություններն ու եզրահանգումները.

Լսելով կողմին, հետազոտելով եւ գնահատելով վարչական գործում առկա բոլոր գրավոր ապացույցները, բազմակողմանի, լրիվ եւ օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ՝ Վարչական դատարանն եզրակացրեց, որ հայցը հիմնավոր է եւ ենթակա բավարարման մասնակի, իսկ մյուս մասով՝ ենթակա կարճման հետեւյալ պատճառաբանությամբ.

1. Դատարանի կողմից պարզված գործի հանգամանքները եւ ապացույցները, որոնց վրա հիմնվում են դատարանի հետեւությունները

1. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի ուժով սույն գործի փաստերը վարչական դատարանը պարզում է ի պաշտոնե («ex officio»): Նույն օրենսգրքի 22-րդ եւ 24-րդ հոդվածների 1-ին մասերի ուժով դատարանը օրենսգրքով սահմանված կարգով հավաքված ապացույցների հետազոտման եւ գնահատման միջոցով պարզում է գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը, ինչպես նաեւ անմիջականորեն գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները՝ որոշում է փաստի հաստատված լինելու հարցը՝ բազմակողմանի, լրիվ եւ օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ:

Սույն գործով Վարչական դատարանը հաստատված է համարում հետեւյալ փաստական հանգամանքները.

- 11.02.2009թ. թիվ 98-ի 1 գրությամբ Կազմակերպությունը դիմել է Ելփինի համայնքապետ Խորեն Ավետիսյանին՝ հետեւյալ տեղեկությունը տրամադրելու ինդրանքով. 1. Ելփին համայնքի 2008թ. բյուջեի պատճեն, 2. Ելփին համայնքի 2008թ. բյուջեի կատարման հաշվետվության պատճեն /գ.թ. 13/: Տվյալ գրությունն ուղարկվել է գյուղապետին նույն օրը՝ 11.02.2009թ., փոստային ծառայության միջոցով /հիմք՝ 11.02.2009թ. թիվ 103 պատվիրված նամակ, գ.թ. 8/:
- Դատարան ներկայացված հայցադիմումը եւ կից փաստաթղթերը պատասխանողներն ստացել են 07.04.2009թ. /հիմք՝ փոստային ծառայության ստացման վերաբերյալ ծանուցագրերը /գ.թ. 9-10/:

- 10.04.2009թ. թիվ 21 ուղեկցական գրությամբ Ելփին համայնքի ղեկավար Խ.Ավետիսյանը Կազմակերպությանն է ուղարկել պահանջվող տեղեկատվությունը՝ Ելփին համայնքի 2008թ. բյուջեի եւ Ելփին համայնքի 2008թ. բյուջեի կատարման հաշվետվության պատճենները /գ.թ. 43/:

2. Համաձայն ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 4-րդ մասի՝ ապացուցման կարիք չունեն այն փաստերը, որոնք հակառակ կողմը չի վիճարկում, բացառությամբ այն դեպքի, երբ դատարանը գտնում է, որ դրանց ապացուցումն անհրաժեշտ է: Հայցվորի ներկայացուցիչը դատաքննության ընթացքում ընդունեց այն փաստը, որ հայցադիմումը դատարան ներկայացնելուց հետո պատասխանողը հայցվորին է ներկայացրել պահանջվող փաստաթղթերի պատճենները եւ այս կապակցությամբ մասնակի հրաժարվեց հայցից: Պահանջվող տեղեկատվությունը միայն հայցադիմումը եւ կից փաստաթղթերն ստանալուց հետո հայցվորին ներկայացնելն ապացուցվում է նաեւ վերը նշված այն փաստերով, որ թիվ 21 ուղեկցական գրությունը թվագրված է 10.04.2009թ. այն դեպքում, երբ հայցադիմումն ստացվել է 07.04.2009թ., այսինքն՝ գյուղապետն ուղարկել է փաստաթղթերի պատճենները հայցադիմումն ստանալուց երեք օր, Կազմակերպության 11.02.2009թ. գրավոր հարցումն ստանալուց շուրջ երկու ամիս հետո:

Համաձայն ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 100-րդ հոդվածի՝ մինչեւ դատաքննության ավարտը հայցվորն իրավունք ունի առանց որեւէ պատճառաբանության լրիվ կամ մասնակի հրաժարվելու իր պահանջներից: Այդ դեպքում դատարանը կայացնում է վճիռ գործի վարույթը կարճելու մասին այն պահանջի մասով, որից հրաժարվել է հայցվորը, բացառությամբ սույն օրենսգրքի 24-րդ գլխով սահմանված գործերի: Իսկ համաձայն ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 90-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի՝ վարչական դատարանը գործի քննության ցանկացած փուլում կարճում է գործի վարույթը, եթե հայցվորը հրաժարվել է հայցից:

Հետեւաբար, սույն գործի վարույթն Ելփինի գյուղապետարանին հնգօրյա ժամկետում Ելփինի համայնքի 2008թ. բյուջեի եւ Ելփին համայնքի 2008թ. բյուջեի կատարման հաշվետվության պատճենները տրամադրելուն պարտավորեցնելու պահանջի մասով ենթակա է կարճման:

3. Ըստ ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի 2-րդ մասի՝ յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք, ներառյալ՝ տեղեկություններ եւ գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը, տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից: Նույն, Սահմանադրության 27.1-րդ հոդվածը նախատեսում է, որ յուրաքանչյուր ոք ունի իր անձնական կամ հասարակական շահերի պաշտպանության նկատառումներով իրավասու պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններին եւ պաշտոնատար անձանց դիմումներ կամ առաջարկություններ ներկայացնելու եւ ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունք:

Յուրաքանչյուրի վերը նշված սահմանադրական իրավունքներն իրենց կոնկրետացումն են գտել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում, որի 6-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը եւ (կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկատվություն տնօրինողին եւ ստանալու այդ տեղեկությունը: Ըստ որում, տեղեկատվության ազատության սահմանափակումները նախատեսված են նույն օրենքի 8-րդ հոդվածով: Ըստ նույն օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ մասի 1-3-րդ կետերի՝ գրավոր հարցման պատասխանը տրվում է հետեւյալ ժամկետներում.

- 1) եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը հրապարակված չէ, ապա դրա պատճենը դիմողին է տրվում հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում.
- 2) եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը հրապարակված է, ապա տվյալ հրապարակման միջոցի, վայրի եւ ժամկետի մասին տեղեկությունը դիմողին է տրվում հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում.
- 3) եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը տրամադրելու համար անհրաժեշտ է կատարել լրացուցիչ աշխատանք, ապա այդ տեղեկությունը դիմողին է տրվում դիմումն ստանալուց հետո՝ 30-օրյա ժամկետում, որի մասին հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում, գրավոր տեղեկացվում է դիմողին՝ նշելով հետաձգման պատճառները եւ տեղեկությունը տրամադրելու վերջնական ժամկետը:

Այս կապակցությամբ Վարչական դատարանը գտնում է, որ պատասխանողների կողմից խախտվել են վերը նշված իրավական նորմերի իմպերատիվ պահանջները, քանի որ սահմանված 5-օրյա ժամկետում Կազմակերպությանը չի տրամադրվել պահանջվող փաստաթղթերի պատճենները կամ գրավոր չի տեղեկացվել հետաձգման պատճառների եւ տեղեկությունը տրամադրելու վերջնական ժամկետի մասին: Այսինքն՝ պատասխանողները Կազմակերպության հանդեպ դրսեւորել են ոչ իրավաչափ անգործություն: Ավելին, հայցադիմումն ստանալուց հետո նոր ուղարկելով Կազմակերպությանը պահանջվող փաստաթղթերի պատճենները՝ դրանով իսկ պատասխանողներն ընդունել են հայցվորի գրավոր հարցման իրավաչափությունը եւ փորձել են վերացնել իրենց անգործության բացասական հետեւանքները՝ թեկուզեւ շուրջ երկու ամիս ուշացումով:

4. Համաձայն ՎԻՎ օր-քի 189.7-րդ հոդվածի՝ օրենքով նախատեսված տեղեկությունը պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունների, ինչպես նաեւ հանրային նշանակության կազմակերպությունների պաշտոնատար անձանց կողմից ապօրինաբար չտրամադրելն առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկից մինչեւ հիսնապատիկի չափով:

Նույն օրենսգրքի 223-րդ հոդվածը սահմանում է, որ առաջին ատյանի դատարանների դատավորները քննում են սույն օրենսգրքի 401-407, 44, 53, 53.1, 97.2, 97.3, 104.3, 147, 166.1, 170.5, 172 հոդվածներով, 175 հոդվածի երրորդ մասով եւ 180.1, 182, 183.1, 185, 189.2, 189.3, 189.4, 189.5, 189.6, 189.7, 189.8 189.9, 189.10 եւ 198.2 հոդվածի չորրորդ եւ հինգերորդ մասերով, 206.1, 206.2, 206.3, 206.4, 206.5, 206.6, 206.7, 206.8 հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը:

Քանի որ դատարանը հաստատված է համարում պատասխանող Ելփինի գյուղապետ Խ.Ավետիսյանի կողմից պահանջվող տեղեկատվությունն օրենքով սահմանված ժամկետում ապօրինաբար չտրամադրելու փաստը՝ ոչ իրավաչափ անգործության դրսեւորումը, հետեւաբար ՎԻՎ օր-քի 9-րդ, 14-րդ եւ 189.7-րդ հոդվածների դիսպոզիցիաների իմաստով սույն գործով առկա է նաեւ գյուղապետի կողմից վարչական իրավախախտում /զանցանք/, որի համար վերջինս ենթակա է վարչական պատասխանատվության՝ 50.000 դրամի չափով տուգանքի նշանակման:

5. Ինչ վերաբերում է հայցվորի նախապես վճարված 8.000 դրամ պետական տուրքը բռնագանձելու մասին պահանջին, ապա դատարանը գտնում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածի ուժով դատական ծախսերը դրվում են համապատասխան համայնքի, մեր դեպքում՝ ՀՀ Վայոց ձորի մարզի Ելփին գյուղական համայնքի եւ ոչ թե գյուղապետարանի վրա: Ըստ որում, հայցվորը, նախապես վճարելով 12.000 դրամ պետական տուրք, պահանջում է բռնագանձել միայն 8.000 դրամ:

2. Դատարանի կողմից չպարզված գործի հանգամանքները

Դատարանի կողմից չպարզված հանգամանքներ առկա չեն:

3. Ապացույցները մերժելու փաստարկները

Ապացույցները մերժելու փաստարկներ առկա չեն:

4. Գործով կիրառման ենթակա իրավական ակտերը.

1. ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի 2-րդ մաս, 27.1-րդ հոդված,.
2. «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մաս, 9-րդ հոդվածի 7-րդ մասի 1-3-րդ կետեր,
3. ՎԻՎ օր-քի 9-րդ, 14-րդ, 189.7-րդ, 223-րդ հոդվածներ,
4. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մաս, 6-րդ, 22-րդ, 24-րդ, 25-27, 100-րդ հոդվածներ:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 59-րդ, 112-115-րդ, 161-րդ հոդվածների, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 130-132-րդ, 229-րդ հոդվածների պահանջներով՝ դատարանը

Վ Ճ Ո Շ Ց

Սույն վարչական գործի վարույթը ՀՀ Վայոց ձորի մարզի Ելփինի գյուղապետարանին հնգօրյա ժամկետում Ելփին համայնքի 2008 թվականի բյուջեի եւ Ելփին համայնքի 2008 թվականի բյուջեի կատարման հաշվետվության պատճենները տրամադրելու և պարտավորեցնելու պահանջի մասով կարճել:

Հայցը պահանջի մնացած մասով բավարարել՝

- ոչ իրավաչափ ճանաչել ՀՀ Վայոց ձորի մարզի Ելփինի գյուղապետարանի՝ ի դեմս գյուղապետ Խորեն Ավետիսյանի, այն անգործությունը, որով օրենքով սահմանված առավելագույն ժամկետում սպառիչ եւ լրիվ պատասխան չի տրվել հայցվող տեղեկատվության վերաբերյալ,
- ՀՀ Վայոց ձորի մարզի Ելփինի գյուղապետ Խորեն Ավետիսյանին ենթարկել վարչական պատասխանատվության՝ նրա նկատմամբ նշանակել 50.000 /հիսուն հազար/ ՀՀ դրամի չափով տուգանք:

Սույն վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

ՀՀ Վայոց ձորի մարզի Ելփին գյուղական համայնքից հօգուտ հայցվոր «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության բռնագանձել 8.000 /ութ հազար/ դրամ գումար՝ որպես նախապես վճարված պետական տուրք: Դատական մյուս ծախսերի բաշխման հարցը համարել լուծված:

Դատական ծախսերի փոխհատուցման վճարումը պետք է կատարվի սույն վճռի օրինական ուժի մեջ մտնելուց ոչ ուշ, քան 10 օր հետո, որի չկատարման դեպքում այն ենթակա է բռնագանձման դատական ակտի հարկադիր կատարման կարգով:

Սույն վճիռն օրինական ուժի մեջ է մտնում իրապարակման պահից մեկ ամիս հետո եւ կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարան:

ԴԱՏԱՎՈՐ

Ա.ՊՈՂՈՍՅԱՆ:

Գործ 8.

**Ինֆորմացիայի ազատության
կենսրոնն**

ընդդեմ

**Բջնիի գյուղադատարանի
գյուղադատարանի**

Գործի համառոտ նկարագրությունը

Ինֆորմացիայի ազատության կենտրոնը 11.02.2009թ.-ին դիմել է Կոտայքի մարզի Բջնի համայնքի ղեկավարին՝ խնդրելով տրամադրել հետևյալ տեղեկությունները.

1. Բջնի համայնքի 2008թ. բյուջեի պատճեն:
2. Բջնի համայնքի 2008թ. բյուջեի կատարման հաշվետվությունը:

Սակայն ԻԱԿ-ի հարցումը մնացել է անպատասխան:

2009թ. մարտի 19-ին Ինֆորմացիայի ազատության կենտրոնը տեղեկատվություն տրամադրել պարտադրելու եւ վարչական տույժի ենթարկելու պահանջների մասին հայց է ներկայացրել ՀՀ վարչական դատարան՝ խնդրելով.

1. Ոչ իրավաչափ ճանաչել Բջնիի գյուղապետարանի այն գործողությունները կամ անգործությունը, որով օրենքով սահմանված առա-

վելագույն ժամկետում սպառիչ եւ լրիվ պատասխան չի տրվել հայցվող տեղեկատվության վերաբերյալ եւ պարտավորեցնել Բջնիի գյուղապետարանին հնգօրյա ժամկետում տրամադրել Բջնի համայնքի 2008թ. բյուջեի եւ Բջնի համայնքի 2008թ. բյուջեի կատարման հաշվետվության պատճենները:

2. Բջնիի գյուղապետ Արմեն Մաթեոսյանին ենթարկել վարչական պատասխանատվության՝ տուգանքի՝ 50000 դրամի չափով:

2009թ. հունիսի 11-ին նախնական դատական նիստի ժամանակ ԻԱԿ-ը հրաժարվեց իր հայցապահանջից, քանի որ մինչ դատական նիստի օրը Բջնիի գյուղապետն անձամբ բերել է ԻԱԿ-ին եր տրամադրել պահանջվող ամբողջ տեղեկությունները: Դատարանն էլ, հաշվի առնելով այս հանգամանքը, գործը կարճեց:

Գործի նյութերը

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԶԿ

11.02.2009թ.

97-ի 9

**Բջնիի համայնքապետ
պարոն Արմեն Մաթեոսյանին**

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Մաթեոսյան,

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 եւ 27.1 հոդվածների եւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում եմք տրամադրել հետեւյալ տեղեկությունը.

1. Բջնի համայնքի 2008թ. բյուջեի պատճեն:
2. Բջնի համայնքի 2008թ. բյուջեի կատարման հաշվետվության պատճեն:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում եմք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում եմք գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին (հոդված 11):

Կանխավ շնորհակալ եմ:

Հանրային կապերի պատասխանատու՝ Անահիտ Զոչարյան:

ՀՀ ՎԱՐՉԱՎԱՆ ԴԱՏԱՐԱՆԻՆ

Հայցվոր՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն»
հասարակական կազմակերպություն
Նախագահ՝ Շուշան Դոյրոյան
Ներկայացուցիչ՝ Կարեն Մեժլումյան
Պատասխանողներ՝ Բջնիի գյուղապետարան
Հասցե՝ Կոտայքի մարզ, գ. Բջնի
Բջնիի համայնքապետ Արմեն Մաթեւոսյան

19.03.2009թ.

Հ Ա Յ Ց Ա Դ Ի Մ ՈՒ Մ

Գործողության կատարման հայց

Տեղեկատվություն տրամադրել պարտադրելու եւ վարչական տույժի ենթարկելու պահանջների մասին

1. Փաստերը որոնց վրա հիմնված է հայցապահանջը.

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունը 11.02.2009թ-ին հետեւյալ բովանդակությամբ տեղեկատվություն ստանալու հարցում է ներկայացրել Բջնիի գյուղապետ Արմեն Մաթեւոսյանին. «Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 եւ 27.1 հոդվածների եւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել հետեւյալ տեղեկությունը.

1. Բջնի համայնքի 2008թ. բյուջեի պատճեն:
2. Բջնի համայնքի 2008թ. բյուջեի կատարման հաշվետվության պատճեն:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում ենք գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին (հոդված 11)»:

Նշված փաստը հաստատվում է հարցման կրկնօրինակով եւ փոստային անդորրագրով:

Բջնիի գյուղապետարանը օրենքով սահմանված 5-օրյա ժամկետում տեղեկություն չի տրամադրել, ավելին՝ 30 օրյա ժամկետում եւս հայցվող տեղեկատվությունը չի ստացվել:

Հայցվող տեղեկատվությունը չտրամադրելու մասին փաստը հաստատվում է պատասխանի բացակայությամբ:

2. Հայցապահանջի իրավական հիմնավորումը.

ՀՀ Սահմանադրության՝

- 27 հոդվածի 2-րդ պարբերության համաձայն. «Յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք, ներառյալ տեղեկություններ եւ գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը, տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից».
- 27.1 հոդվածի համաձայն. «Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական կամ հասարակական շահերի պաշտպանության նկատառումներով իրավասու պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններին եւ պաշտոնատար անձանց դիմումներ կամ առաջարկություններ ներկայացնելու եւ ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունք»:

Սահմանադրությամբ երաշխավորված վերը նշված իրավունքներն առարկայանում են նաեւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում, որի 6 հոդվածի 1-ին մասի համաձայն.

«Յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը եւ (կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկատվություն տնօրինողին եւ ստանալու այդ տեղեկությունը»:

Նույն օրենքի 9 հոդվածի 7-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝

եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը տրամադրելու համար անհրաժեշտ է կատարել լրացուցիչ աշխատանք, ապա այդ տեղեկությունը դիմողին է տրվում դիմումն ստանալուց հետո՝ 30-օրյա ժամկետում, որի մասին հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում, գրավոր տեղեկացվում է դիմողին՝ նշելով հետաձգման պատճառները եւ տեղեկությունը տրամադրելու վերջնական ժամկետը:

Ի խախտումն Սահմանադրությամբ ու օրենքով երաշխավորված հայցվորի իրավունքների ու պատասխանողի պարտականության, պատասխանող Բջնիի գյուղապետարանը օրենքով սահմանված ժամկետում եւ դրա ավարտից հետո էլ, մինչ օրս չի տրամադրել պահանջվող տեղեկատվությունը:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրքի 189.7. հոդվածը պատասխանատվություն է սահմանում տեղեկություն տալու պարտականությունը չկատարելու համար, որի համաձայն.

«Օրենքով նախատեսված տեղեկությունը պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունների, ինչպես նաեւ հանրային նշանակության կազմակերպությունների պաշտոնատար անձանց կողմից ապօրինաբար չտրամադրելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկից մինչեւ հիսնապատիկի չափով:

Նույն խախտումը, որը կատարվել է կրկին անգամ՝ վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո մեկ տարվա ընթացքում՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից մինչև հարյուրապատիկի չափով»:

Նույն օրենսգրքի 223 հոդվածի համաձայն՝ առաջին ատյանի դատարանների դատավորները քննում են սույն օրենսգրքի 189.7 հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը:

Գտնում ենք, որ եթե դատարանը գործի քննության ընթացքում հաստատված համարի պատասխանողի կողմից հայցվող տեղեկատվությունը օրենքով սահմանված ժամկետում չտրամադրելու փաստը, արդարացի իրավունք ունենք դատարանից հայցել՝ վարչական տույժի ենթարկելու պատասխանող Բջնիի գյուղապետ Արմեն Մաթեոսյանին իր ապօրինի անգործության համար, որն արտահայտվել է օրենքով սահմանված իր պարտականություններից խուսափելու, այն է՝ հայցված տեղեկատվությունը չտրամադրելու արարքով եւ պահանջելու, որ դրա համար որպես պատասխանատվության միջոց կիրառվի տուգանք 50.000 դրամ գումարի չափով:

Վերոգրյալից ելնելով եւ ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 11 գլխի պահանջներով՝

Խնդրում եմ՝

1. Ոչ իրավաչափ ճանաչել Բջնիի գյուղապետարանի այն գործողությունները կամ անգործությունը, որով օրենքով սահմանված առավելագույն ժամկետում սպառիչ եւ լրիվ պատասխան չի տրվել հայցվող տեղեկատվության վերաբերյալ եւ պարտավորեցնել Բջնիի գյուղապետարանին հնգօրյա ժամկետում տրամադրել Բջնի համայնքի 2008թ. բյուջեի եւ Բջնի համայնքի 2008թ. բյուջեի կատարման հաշվետվության պատճենները:
2. Բջնիի գյուղապետ Արմեն Մաթեոսյանին ենթարկել վարչական պատասխանատվության՝ տուգանքի՝ 50000 դրամի չափով:
3. Բջնիի գյուղապետարանից հօգուտ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի բռնագանձել 8000 դրամ պետական տուրքի գումարը:

Կից ներկայացվում են՝

1. Պետական տուրքի վճարման անդորրագիր.
2. Լիազորագիր.
3. Հարցման կրկնօրինակը.
4. Փոստային անդորրագրի պատճեն.
5. Հայցադիմումը պատասխանողներին եւ ՀՀ Ֆինանսների նախարարությանը հանձնելու մասին ապացույցներ:

«Ինֆորմացիայի ազատության
կենտրոն» ՀԿ նախագահ՝

Լիազոր ներկայացուցիչ՝

Շուշան Դոյոյան

Կարեն Մեծումյան:

Վարչական գործ թիվ ՎԴ/2014/05/09

Վ Ճ Ի Ռ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

11 հունիսի 2009թ.

ք. Երեւան

Հայաստանի Հանրապետության վարչական դատարանը՝
Նախագահությամբ՝ դատավոր Կ.Բաղդասարյանի,
քարտուղարությամբ՝ Ռ.Սինանյանի,

դռնբաց նախնական դատական նիստում քննության առնելով վարչական գործն ըստ հայցի «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության հայցն ընդդեմ Բջնիի գյուղապետարանի եւ Բջնիի համայնքապետ Արմեն Մաթեոսյանի՝ տեղեկատվություն տրամադրել պարտադրելու եւ վարչական տույժի ենթարկելու պահանջների մասին

Պ Ա Ր Չ Ե Ց

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունը դիմելով Է ՀՀ Վարչական դատարան՝ խնդրել է Բջնիի գյուղապետարանին եւ Բջնիի համայնքապետ՝ Արմեն Մաթեոսյանին պարտադրել տեղեկատվություն տրամադրել եւ վարչական տույժի ենթարկել:

ՀՀ վարչական դատարանի 05.05.09 թվականի որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ:

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունը 21.05.2009թ-ի գրությամբ հրաժարվել է հայցից եւ խնդրել է գործի վարույթը կարճել:

Նախնական դատական նիստի ժամանակի եւ վայրի մասին պատշաճ կարգով ծանուցված կողմերը դատական նիստին չեն ներկայացել: Դատարանը, ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 86-րդ հոդվածի 2-րդ մասով, որոշեց նախնական դատական նիստն անցկացնել կողմերի բացակայությամբ:

Ծանոթանալով հայցվորի 21.05.2009թ-ի գրությանը՝ դատարանը գտնում է, որ սույն վարչական գործի վարույթը պետք է կարճել հետեւյալ պատճառաբանությամբ:

Համաձայն ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 90-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի՝ վարչական դատարանը գործի քննության ցանկացած փուլում կարճում է գործի վարույթը, եթե հայցվորը հրաժարվել է հայցից: Տվյալ դեպքում հայցվորն ամբողջությամբ հրաժարվել է հայցից, հետեւաբար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 90-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի հիմքով սույն վարչական գործի վարույթը պետք է կարճել:

Ինչ վերաբերում է պետական տուրքի հարցին, ապա համաձայն ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածի 2-րդ մասի՝ դատական ծախսերի փոխհատուցման պարտականությունը դրվում է հայցվորի վրա, եթե գործի վարույթը կարճվում է: Վերոգրյալի հիման վրա եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 59-րդ, 90-րդ, 112-րդ, 115-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 130-132-րդ հոդվածներով՝ վարչական դատարանը

Վ Ճ Ո Շ Ց

Ըստ հայցի «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունը ընդդեմ Բջնիի գյուղապետարանի եւ Բջնիի համայնքապետ Արմեն Մաթեոսյանի՝ տեղեկատվություն տրամադրել պարտադրելու եւ վարչական տույժի ենթարկելու պահանջի մասին վարչական վարույթը կարճել:

Պետական տուրքի հարցը համարել լուծված:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո եւ կարող է բողոքարկվել վճռաբեկության կարգով ՀՀ վճռաբեկ դատարան:

ՆԱԽԱԳԱՅՐՈՂ ԴԱՏԱՎՈՐ

Կ. ԲԱՂՂԱՍԱՐՅԱՆ:

Գործ 9.

**Ինֆորմացիայի ազատության
կենսրոնն
ընդդեմ
Լենուդու գյուղադեֆի եւ
գյուղադեֆսարանի**

Գործի համառոտ նկարագրությունը

Ինֆորմացիայի ազատության կենտրոնը 2009թ.-ի փետրվարի 3-ին դիմել է Արմավիրի մարզի Լենուղի համայնքի ղեկավարին՝ խնդրելով տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. Համայնքի 2008թ. բյուջեի պատճեն,
2. 2008թ. 2-րդ կիսամյակի ընթացքում հողհատկացումների վերաբերյալ համայնքի ավագանու կայացրած որոշումների պատճենները:

Հարցումը մնացել էր անպատասխան:

2009թ. ապրիլի 1-ին ԻԱԿ-ը դիմել է ՀՀ վարչական դատարան՝ Լենուղու գյուղապետարանին տեղեկատվություն տրամադրել պարտադրելու հայցով:

2009թ. հուլիսի 2-ին ՀՀ վարչական դատարանում լսվեց ԻԱԿ-ն ընդդեմ Լենուղու գյուղապետարանի հայցի քննությունը: Քանի որ Լենուղու գյուղապետարանը մինչ դատական նիստի օրն արդեն իսկ տրամադրել էր ԻԱԿ-ի պահանջած տեղեկությունները, ուստի, ԻԱԿ-ը դատարանում հրաժարվեց իր հայցապահանջից:

Գործի նյութերը

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՅԿ

03.02.2009թ.

ՀՀ Արմավիրի մարզի Լենուղու
գյուղապետ պրն Գ. Ղազարյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Ղազարյան,

Ղեկավարվելով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում եմք տրամադրել հետևյալ տեղեկությունը.

1. 2008թ.-ի բյուջեի պատճեն, ինչպես նաև դրա կատարման հաշվետվությունը:
2. 2008թ.-ի ավագանու կողմից կայացրած 2-րդ կիսամյակի որոշումների պատճենները:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի պահանջների համաձայն՝ հարցմանը պատասխան տրվում է 5-օրյա ժամկետում, բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության /30-օրյա ժամկետ/: Ուստի, խնդրում եմք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում եմք գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին (հոդված 11):

Պատրաստ եմք վճարել տեղեկատվության պատճենահանման ծախսերը, եթե գերազանցում է 10 էջը:

Կանխավ շնորհակալություն:

Ա. Մկրտչյան

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՅԿ

N Ա - 09 - 04

«15» 02 2009թ.

ՀՀ Արմավիրի մարզի Լենուղու
գյուղապետ արև Գ. Ղազարյանին

Տեղեկատվություն ստանալու կրկնակի հարցում

Հարգելի պարոն Ղազարյան,

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ն 03.02.2009թ.-ին կատարել է հարցում ի դեմս Ա. Մկրտչյանի, եւ խնդրել ղեկավարվելով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով, տրամադրել հետեւյալ տեղեկությունը.

1. 2008թ.-ի բյուջեի պատճեն, ինչպես նաեւ դրա կատարման հաշվետվությունը:
2. 2008թ.-ի ավագանու կողմից կայացրած 2-րդ կիսամյակի որոշումների պատճենները:

Առայսօր Ձեր կողմից պատասխան չենք ստացել:

Կրկին անգամ խնդրում ենք՝ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի պահանջների համաձայն՝ հարցմանը պատասխանել 5-օրյա ժամկետում, բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության /30-օրյա ժամկետ/: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում չպատասխանելու դեպքում Ձեր անգործությունը ենթակա է վարչական պատասխանատվության ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում ենք գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին (հոդված 11):

Կանխավ շնորհակալություն:

Նախագահ՝

Շ. Դոյրոյան

կատարող՝

Ա. Մկրտչյան:

ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻՆ

Հայցվոր՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն»
հասարակական կազմակերպություն
Նախագահ՝ Շուշան Դոյդոյան
Ներկայացուցիչ՝ Արթուր Մկրտչյան
Պատասխանողներ՝ ՀՀ Արմավիրի մարզի Լենուղիի
գյուղապետարան
Հասցե՝ ՀՀ Արմավիրի մարզ, գյուղ Լենուղի
ՀՀ Արմավիրի մարզի Լենուղիի
գյուղապետ Գեղամ Ղազարյան

11 մարտի 2009թ.

Հ Ա Յ Ց Ա Դ Ի Մ ՈՒ Մ

Գործողության կատարման հայց
Տեղեկատվություն տրամադրել պարտադրելու եւ վարչական
տույժի ենթարկելու պահանջների մասին

1. Փաստերը որոնց վրա հիմնված է հայցապահանջը.

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունը կրկնակի անգամ՝ 03.02.2009թ.-ին եւ 15.02.2009թ.-ին, հետեւյալ բովանդակությամբ տեղեկատվություն ստանալու հարցում է ներկայացրել ՀՀ Արմավիրի մարզի Լենուղիի համայնքին. «Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 եւ 27.1 հոդվածների եւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել հետեւյալ տեղեկությունը.

1. 2008թ.-ի բյուջեի պատճեն, ինչպես նաեւ դրա կատարման հաշվետվությունը:
2. 2008թ.-ի ավագանու կողմից կայացրած 2-րդ կիսամյակի որոշումների պատճենները:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում ենք գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին (հոդված 11)»:

Նշված փաստը հաստատվում է հարցման կրկնօրինակով եւ փոստային անդորրագրով:

ՀՀ Արմավիրի մարզի Լենուղիի գյուղապետարանը օրենքով սահմանված առավելագույն՝ 30-օրյա ժամկետում հայցվող տեղեկատվությունը չի տրամադրել եւ ոչ մի կերպ չի արձագանքել:

Պատասխանողի կողմից հայցվող տեղեկատվությունը չտրամադրելու մասին փաստը հաստատվում է պատասխանի բացակայությամբ:

2. Հայցապահանջի իրավական հիմնավորումը

ՀՀ Սահմանադրության՝

- 27 հոդվածի 2-րդ պարբերության համաձայն. *«Յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք, ներառյալ տեղեկություններ եւ գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը, տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից».*
- 27.1 հոդվածի համաձայն. *«Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական կամ հասարակական շահերի պաշտպանության նկատառումներով իրավասու պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններին եւ պաշտոնատար անձանց դիմումներ կամ առաջարկություններ ներկայացնելու եւ ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունք»:*

Սահմանադրությամբ երաշխավորված վերը նշված իրավունքներն առարկայանում են նաեւ **«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում, որի 6 հոդվածի 1-ին մասի** համաձայն.

«Յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը եւ (կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկատվություն տնօրինողին եւ ստանալու այդ տեղեկությունը»:

Նույն օրենքի 9 հոդվածի 7-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝

եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը տրամադրելու համար անհրաժեշտ է կատարել լրացուցիչ աշխատանք, ապա այդ տեղեկությունը դիմողին է տրվում դիմումն ստանալուց հետո՝ 30-օրյա ժամկետում, որի մասին հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում, գրավոր տեղեկացվում է դիմողին՝ նշելով հետաձգման պատճառները եւ տեղեկությունը տրամադրելու վերջնական ժամկետը:

Ի խախտումն Սահմանադրությամբ ու օրենքով երաշխավորված հայցվորի իրավունքների ու պատասխանողի պարտականության, պատասխանող Չարթունքի գյուղապետարանը օրենքով սահմանված ժամկետում եւ դրա ավարտից հետո էլ, մինչ օրս չի տրամադրել պահանջվող տեղեկատվությունը:

Համաձայն **«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի՝** համայնքի ավագանին իր իրավասությունների սահմաններում ընդունում է որոշումներ եւ նույն օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ նույն օրեն-

քով սահմանված կարգով հաստատում է համայնքի բյուջեն եւ բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը, ինչը նշանակում է, որ փնտրվող տեղեկատվությունը պահպանվում է տեղական ինքնակառավարման մարմին համայնքում, որն էլ պարտավոր էր տրամադրել պահանջվող տեղեկատվությունը, ինչը չկատարելով խախտել է հայցվորի՝ Սահմանադրությամբ եւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով երաշխավորված իրավունքները, որպես խախտում, պատասխանող կողմը ենթակա է վարչական պատասխանատվության:

Այսպես, **Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրքի 189.7. հոդվածը** պատասխանատվություն է սահմանում տեղեկություն տալու պարտականությունը չկատարելու համար, որի համաձայն.

«Օրենքով նախատեսված տեղեկությունը պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունների, ինչպես նաեւ հանրային նշանակության կազմակերպությունների պաշտոնատար անձանց կողմից ապօրինաբար չտրամադրելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկից մինչեւ հիսնապատիկի չափով:

Նույն խախտումը, որը կատարվել է կրկին անգամ՝ վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո մեկ տարվա ընթացքում՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից մինչեւ հարյուրապատիկի չափով»:

Նույն օրենսգրքի 223 հոդվածի համաձայն՝ առաջին ատյանի դատարանների դատավորները քննում են սույն օրենսգրքի 189.7 հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը:

Կրկնակի հարցման մեջ պատասխանող՝ ՀՀ Արմավիրի մարզի Լենուղի համայնքի ղեկավար Գեղամ Ղազարյանին նախազգուշացվել է, որ իր անգործությունը ենթակա է վարչական պատասխանատվության, ուստի գտնում ենք, որ արդարացի իրավունք ունենք դատարանից հայցել վարչական տույժի ենթարկել պատասխանող ՀՀ Արմավիրի մարզի Լենուղիի գյուղապետ /համայնքի ղեկավար/ Գեղամ Ղազարյանին իր ապօրինի անգործության համար, որն արտահայտվել է օրենքով սահմանված իր պարտականություններից խուսափելու, այն է՝ հայցված տեղեկատվությունը չտրամադրելու արարքով եւ պահանջելու, որ դրա համար որպես պատասխանատվության միջոց կիրառվի տուգանք 30.000 /երեսուն հազար/ դրամ գումարի չափով:

Վերոգրյալից ելնելով և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 11 գլխի պահանջներով՝

Խնդրում եմ՝

1. Պարտավորեցնել ՀՀ Արմավիրի մարզի Լենուղիի գյուղապետարանին /համայնքին/ հնգօրյա ժամկետում տրամադրել հայցվող տեղեկատվությունը:
 - 2008թ.-ի բյուջեի պատճեն, ինչպես նաև դրա կատարման հաշվետվությունը:
 - 2008թ.-ի ավագանու կողմից կայացրած 2-րդ կիսամյակի որոշումների պատճենները:
2. Պատասխանող ՀՀ Արմավիրի մարզի Լենուղիի գյուղապետ /համայնքի ղեկավար/ Գեղամ Ղազարյանից հօգուտ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի բռնագանձել 30.000 ՀՀ դրամ՝ որպես վարչական տուգանք:
3. Խնդրում եմք պետական տուրքի վճարումը հետաձգել և վճարման հարցը լուծել վճռով, քանի որ հայցվոր կազմակերպությունը հասարակական կազմակերպություն է:

Կից ներկայացվում են՝

1. Լիազորագիրը:
2. Հարցման, կրկնակի հարցման և փոստային անդորրագրի պատճենները:
3. Հայցադիմումը պատասխանողներին և ՀՀ Ֆինանսների նախարարությանը ուղարկելու մասին ապացույցներ՝ փոստային անդորրագրեր (հայցադիմումը ստանալու մասին ապացույց):

Հայցվորի լիազոր ներկայացուցիչ՝

Արթուր Մկրտչյան:

Գործ թիվ ՎԴ4/0069/05/09

Վ Ճ Ի Ռ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

16.07.2009թ.

ք. Էջմիածին

Հայաստանի Հանրապետության վարչական դատարանը
հետեւյալ կազմով՝
Նախագահությամբ՝ դատավոր Արթուր Ծատուրյանի,
Քարտուղարությամբ՝ Էլեննորա Կարապետյանի,
Մասնակցությամբ՝
Հայցվոր՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն»
հասարակական կազմակերպություն
Պատասխանողներ՝ ՀՀ Արմավիրի մարզի
Լենուդիի գյուղապետարան

Էջմիածնի նստավայրում, դռնբաց դատական նիստում քննեց վարչական գործն ըստ հայցի «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության ընդդեմ Լենուդիի գյուղապետարանի՝ տեղեկատվություն տրամադրել պարտադրելու պահանջի մասին:

1. Գործի դատավարական նախապատմությունը.

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն) հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան ընդդեմ Լենուդիի գյուղապետարանի (այսուհետ՝ Գյուղապետարան) տեղեկատվություն տրամադրել պարտադրելու եւ Լենուդիի գյուղապետին 30.000 դրամի չափով վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջներով:

Դատարանը 2009թ. ապրիլի 3-ի որոշմամբ հայցադիմումը տեղեկատվություն տրամադրել պարտադրելու պահանջի մասով ընդունել է վարույթ, իսկ Լենուդիի գյուղապետին 30.000 դրամի չափով վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջի մասով՝ հայցադիմումի ընդունումը մերժել է:

Որպես իր պահանջի հիմնավորում՝ Կազմակերպությունը դատարան է ներկայացրել Լենուդիի գյուղապետ Գ. Ղազարյանին ուղղված տեղեկատվություն ստանալու հարցման եւ տեղեկատվություն ստանալու կրկնակի հարցման պատճենները:

Հայցադիմումը ներկայացնելիս Կազմակերպությունը խնդրել է պետական տուրքի վճարումը հետաձգել եւ վճարման հարցը լուծել վճռով:

2. Հայցվորի իրավական դիրքորոշումը.

Հայցվորը, դիմելով դատարան, հայտնում է, որ Կազմակերպությունը երկու անգամ՝ 03.02.2009թ. եւ 15.02.2009թ. տեղեկատվություն ստանալու հարցում է ներկայացրել ՀՀ Արմավիրի մարզի Լենուդի համայնքին: Հայցվորը խնդրել է տրամադրել հետեւյալ տեղեկատվությունը՝

1. 2008թ.-ի բյուջեի պատճեն, ինչպես նաեւ դրա կատարման հաշվետվությունը:
2. 2008թ.-ի ավագանու կողմից կայացրած 2-րդ կիսամյակի որոշումների պատճենները:

Հայցվորը նաեւ, հայտնում է, որ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում: Ուստի խնդրում է տեղեկատվությունը տրամադրել օրենքով սահմանված ժամկետներում:

Տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում է գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին:

Գյուղապետարանն օրենքով սահմանված առավելագույն՝ երեսնօրյա ժամկետում հայցվող տեղեկատվությունը չի տրամադրել եւ ոչ մի կերպ չի արձագանքել: Պատասխանող կողմից հայցվող տեղեկությունը չտրամադրելու մասին փաստը հաստատովում է պատասխանի բացակայությամբ:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի՝ համայնքի ավագանին իր իրավասությունների սահմաններում ընդունում է որոշումներ եւ նույն օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ նույն օրենքով սահմանված կարգով հաստատում է համայնքի բյուջեն եւ բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը, ինչը նշանակում է, որ փնտրվող տեղեկատվությունը պահպանվում է տեղական ինքնակառավարման մարմին համայնքում, որն էլ պարտավոր էր տրամադրել պահանջվող տեղեկատվությունը, ինչը չկատարելով խախտել է իր՝ Սահմանադրությամբ եւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով երաշխավորված իրավունքները:

Ելնելով վերոգրյալից՝ հայցվորը դատարանից խնդրում է պարտավորեցնել գյուղապետարանին հնգօրյա ժամկետում տրամադրել հայցվող տեղեկատվությունը:

Հայցվորի ներկայացուցիչ Ա. Մրտչյանը մասնակցել է գործի դատաքննությանը, որի ժամանակ գրավոր միջնորդություն է ներկայացրել հայցից հրաժարվելու վերաբերյալ:

3. Պատասխանողների իրավական դիրքորոշումը.

Պատասխանողը հայցադիմումի պատասխան չի ներկայացրել: Նրա ներկայացուցիչը մասնակցել է գործի դատաքննությանը:

4. Հայցվորի հրաժարվելը հայցից.

2009թ. հուլիսի 2-ի գրությամբ Կազմակերպությունը հրաժարվել է հայցից, պատճառաբանելով, որ իրենց կողմից ակնկալվող տեղեկատվությունը պատասխանողն արդեն տրամադրել է:

Դատարանը գտնում է, որ հայցից հայցվորի հրաժարվելու կապակցությամբ սույն գործի վարույթը ենթակա է կարճման:

Դատարանն այս եզրահանգումը բխում է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 90-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի դրույթից, ըստ որի՝ գործի քննության ցանկացած փուլում դատարանը կարճում է գործի վարույթը, եթե հայցվորը հրաժարվել է հայցից:

5. Եզրափակիչ մաս

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի րքի 90-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 112-րդ հոդվածով, 113-րդ հոդվածի 1-ին մասով, ինչպես նաեւ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 130-132-րդ հոդվածներով՝ դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

1. Վարչական գործի վարույթը ըստ հայցի՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության ընդդեմ Լենուղիի գյուղապետարանի՝ տեղեկատվություն տրամադրելուն պարտադրելու պահանջի մասին կարճել:

Գործի վարույթը կարճելու կապակցությամբ բռնագանձել «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունից հոգուտ պետական բյուջեի նախապես չվճարված պետական տուրքի գումարը՝ 4000 դրամի չափով:

2. ՀՀ դատական օրենսգրքի 36-րդ հոդվածի եւ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 115-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից՝ 2009թ.-ի հուլիսի 16-ից, մեկ ամիս հետո:

3. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 229-րդ հոդվածի համաձայն՝ սույն վճիռը կարող է բողոքարկվել վճռաբեկության կարգով ՀՀ վճռաբեկ դատարան՝ հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

4. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 132-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ սույն վճիռը կամովին չկատարելու դեպքում դա կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

ԴԱՏԱՎՈՐ

Ա. ԾԱՏՈՒՐՅԱՆ:

Գործ 10.
Ինֆորմացիայի ազատության
կենսրոնն
ընդդեմ
Տալվորիկի գյուղադեֆի եւ
գյուղադեֆսարանի

Գործի համառոտ նկարագրությունը

Ինֆորմացիայի ազատության կենտրոնը 2009թ.-ի փետրվարի 3-ին դիմել է Արմավիրի մարզի Տալվորիկ համայնքի ղեկավարին՝ խնդրելով տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. Համայնքի 2008թ. բյուջեի պատճեն, ինչպես նաեւ դրա կատարման հաշվետվությունը,
2. 2008թ. 2-րդ կիսամյակի ընթացքում հողհատկացումների վերաբերյալ համայնքի ավագանու կայացրած որոշումների պատճենները:

Հարցումը մնացել էր անպատասխան:

2009թ. մարտի 31-ին ԻԱԿ-ը դիմել է ՀՀ վարչական դատարան՝ Տալվորիկի գյուղապետարանին տեղեկատվություն տրամադրել պարտադրելու, նաեւ՝ հայցվորի ներկայացուցչի համար կատարված ծախսերը հատուցելու հայցով:

Հուլիսի 23-ին ՀՀ վարչական դատարանը (դատավոր՝ Ա. Ծատուրյան) վճ-

ռեց վարչական գործի վարույթը, ըստ հայցի՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության ընդդեմ Տալվորիկի գյուղապետարանի՝ տեղեկատվություն տրամադրելուն պարտադրելու պահանջի մասին կարճել, քանի որ դատավարության ընթացքում Տալվորիկի գյուղապետը ԻԱԿ-ին առձեռն տրամադրել էր պահանջվող տեղեկատվությունը:

Դատարանը նաեւ վճռեց «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունից հոգուտ պետական բյուջեի բռնագանձել նախապես չվճարված պետական տուրքի գումարը՝ 4000 դրամի չափով, քանի որ վարչական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածի 2-րդ համաձայն՝ եթե հայցը թողնվում է առանց քննության կամ վարույթը կարճվում է, դատական ծախսերի փոխհատուցման պարտականությունը դրվում է հայցվորի վրա:

Գործի նյութերը

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՅԿ

03.02.2009թ.

**ՀՀ Արմավիրի մարզի Տավորիկի
գյուղապետ պրն Կ. Սաղաթեյանին**

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Սաղաթեյան,

Ղեկավարվելով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում եմք տրամադրել հետևյալ տեղեկությունները.

1. 2008թ.-ի բյուջեի պատճեն, ինչպես նաև դրա կատարման հաշվետվությունը:
2. 2008թ.-ի ավագանու կողմից կայացրած 2-րդ կիսամյակի որոշումների պատճենները:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի պահանջների համաձայն՝ հարցմանը պատասխանը տրվում է 5-օրյա ժամկետում, բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության /30-օրյա ժամկետ/: Ուստի, խնդրում եմք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում եմք գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին (հոդված 11):

Պատրաստ եմք վճարել տեղեկատվության պատճենահանման ծախսերը, եթե գերազանցում է 10 էջը:

Կանխավ շնորհակալություն:

Ա. Մկրտչյան/

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԶԿ

N Ա - 09 -04

«15» 02 2009թ.

**ՀՀ Արմավիրի մարզի Տավորիկի
գյուղապետ պրն Կ. Սաղաթեյանին**

Տեղեկատվություն ստանալու կրկնակի հարցում

Հարգելի պարոն Սաղաթեյան,

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ն 03.02.2009թ.-ին կատարել է հարցում ի դեմս Ա. Մկրտչյանի, եւ խնդրել ղեկավարվելով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով, տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. 2008թ.-ի բյուջեի պատճեն, ինչպես նաեւ դրա կատարման հաշվետվությունը:
2. 2008թ.-ի ավագանու կողմից կայացրած 2-րդ կիսամյակի որոշումների պատճենները:

Առ այսօր Ձեր կողմից պատասխան չենք ստացել:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի պահանջների համաձայն՝ հարցմանը պատասխանել 5-օրյա ժամկետում, բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության /30-օրյա ժամկետ/: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում, չպատասխանելու դեպքում Ձեր անգործությունը ենթակա է վարչական պատասխանատվության ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում ենք գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին (հոդված 11):

Կանխավ շնորհակալություն:

ԻԱԿ Նախագահ՝

Շ. Դոյրոյան

կատարող

Ա. Մկրտչյան:

ՀՀ ՎԱՐՉԱՎԱՆ ԴԱՏԱՐԱՆԻՆ

Հայցվոր՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն»
հասարակական կազմակերպություն
Նախագահ՝ Շուշան Դոյրոյան
Ներկայացուցիչ՝ Արթուր Մկրտչյան

Պատասխանողներ՝ ՀՀ Արմավիրի մարզի Տալվորիկի
գյուղապետարան
ՀՀ Արմավիրի մարզի Տալվորիկի
գյուղապետ Կիրակոս Սաղաթեյանին

11 մարտի 2009թ.

Հ Ա Յ Ց Ա Դ Ի Մ ՈՒ Մ

Գործողության կատարման հայց

Տեղեկատվություն տրամադրել պարտադրելու եւ վարչական
տույժի ենթարկելու պահանջների մասին

1. Փաստերը, որոնց վրա հիմնված է հայցապահանջը.

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունը կրկնակի անգամ՝ 03.02.2009թ.-ին եւ 15.02.2009թ.-ին, հետեւյալ բովանդակությամբ տեղեկատվություն ստանալու հարցում է ներկայացրել ՀՀ Արմավիրի մարզի Տալվորիկ համայնքին. «Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 եւ 27.1 հոդվածների եւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. 2008թ.-ի բյուջեի պատճեն, ինչպես նաեւ դրա կատարման հաշվետվությունը:
2. 2008թ.-ի ավագանու կողմից կայացրած 2-րդ կիսամյակի որոշումների պատճենները:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում ենք գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին (հոդված 11)»:

Նշված փաստը հաստատվում է հարցման կրկնօրինակով եւ փոստային անդորրագրով:

ՀՀ Արմավիրի մարզի Տավրոիկի գյուղապետարանն օրենքով սահմանված առավելագույն՝ 30-օրյա ժամկետում հայցվող տեղեկատվությունը չի տրամադրել եւ ոչ մի կերպ չի արձագանքել:

Պատասխանողի կողմից հայցվող տեղեկատվությունը չտրամադրելու մասին փաստը հաստատվում է պատասխանի բացակայությամբ:

2. Հայցապահանջի իրավական հիմնավորումը.

ՀՀ Սահմանադրության՝

- 27 հոդվածի 2-րդ պարբերության համաձայն. *«Յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք, ներառյալ տեղեկություններ եւ գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը, տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից».*
- 27.1 հոդվածի համաձայն. *«Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական կամ հասարակական շահերի պաշտպանության նկատառումներով իրավասու պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններին եւ պաշտոնատար անձանց դիմումներ կամ առաջարկություններ ներկայացնելու եւ ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունք»:*

Սահմանադրությամբ երաշխավորված վերը նշված իրավունքներն առարկայանում են նաեւ **«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում, որի 6 հոդվածի 1-ին մասի** համաձայն.

«Յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը եւ (կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկատվություն տնօրինողին եւ ստանալու այդ տեղեկությունը»:

Նույն օրենքի 9 հոդվածի 7-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝

եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը տրամադրելու համար անհրաժեշտ է կատարել լրացուցիչ աշխատանք, ապա այդ տեղեկությունը դիմողին է տրվում դիմումն ստանալուց հետո՝ 30-օրյա ժամկետում, որի մասին հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում, գրավոր տեղեկացվում է դիմողին՝ նշելով հետաձգման պատճառները եւ տեղեկությունը տրամադրելու վերջնական ժամկետը:

Ի խախտումն Սահմանադրությամբ ու օրենքով երաշխավորված հայցվորի իրավունքների ու պատասխանողի պարտականության, պատասխանող՝ ՀՀ Արմավիրի մարզի Տավրոիկի գյուղապետարանը օրենքով սահմանված ժամկետում եւ դրա ավարտից հետո էլ, մինչ օրս չի տրամադրել պահանջվող տեղեկատվությունը:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի՝ համայնքի ավագանին իր իրավասությունների սահմաններում ընդունում է որոշումներ եւ նույն օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ նույն օրենքով սահմանված կարգով հաստատում է համայնքի բյուջեն եւ բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը, ինչը նշանակում է, որ փնտրվող տեղեկատվությունը պահպանվում է տեղական ինքնակառավարման մարմին համայնքում, որն էլ պարտավոր էր տրամադրել պահանջվող տեղեկատվությունը, ինչը չկատարելով խախտել է հայցվորի՝ Սահմանադրությամբ եւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով երաշխավորված իրավունքները, որպես խախտում, պատասխանող կողմը ենթակա է վարչական պատասխանատվության:

Այսպես, **Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 189.7 հոդվածը** պատասխանատվություն է սահմանում տեղեկություն տալու պարտականությունը չկատարելու համար, որի համաձայն.

«Օրենքով նախատեսված տեղեկությունը պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունների, ինչպես նաեւ հանրային նշանակության կազմակերպությունների պաշտոնատար անձանց կողմից ապօրինաբար չտրամադրելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկից մինչեւ հիսնապատիկի չափով:

Նույն խախտումը, որը կատարվել է կրկին անգամ՝ վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո մեկ տարվա ընթացքում՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից մինչեւ հարյուրապատիկի չափով»:

Նույն օրենսգրքի 223 հոդվածի համաձայն՝ առաջին ատյանի դատարանների դատավորները քննում են սույն օրենսգրքի 189.7 հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը:

Կրկնակի հարցման մեջ պատասխանող՝ ՀՀ Արմավիրի մարզի Տավորիկ համայնքի ղեկավար Կիրակոս Սաղաթեյանին նախազուշացվել է, որ իր անգործությունը ենթակա է վարչական պատասխանատվության, ուստի գտնում ենք, որ արդարացի իրավունք ունենք դատարանից հայցել՝ վարչական տույժի ենթարկել պատասխանող ՀՀ Արմավիրի մարզի Տավորիկի գյուղապետ /համայնքի ղեկավար/ Կիրակոս Սաղաթեյանին իր ապօրինի անգործության համար, որն արտահայտվել է օրենքով սահմանված իր պարտականություններից խուսափելու, այն է՝ հայցված տեղեկատվությունը չտրամադրելու արարքով եւ պահանջել, որ դրա համար որպես պատասխանատվության միջոց կիրառվի տուգանք 30.000 /երեսուն հազար/ դրամ գումարի չափով:

Վերոգրյալից ելնելով և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 11 գլխի պահանջներով՝

Խնդրում եմ՝

1. Պարտավորեցնել ՀՀ Արմավիրի մարզի Տավորիկի գյուղապետարանին հնգօրյա ժամկետում տրամադրել հայցվող տեղեկատվությունը:
ա. 2008թ.-ի բյուջեի պատճեն, ինչպես նաև դրա կատարման հաշվետվությունը:
բ. 2008թ.-ի ավագանու կողմից կայացրած 2-րդ կիսամյակի որոշումների պատճենները:
2. Պատասխանող ՀՀ Արմավիրի մարզի Տավորիկ համայնքի ղեկավար Կիրակոս Սաղաթեյանին հօգուտ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի բռնագանձել 30.000 դրամ՝ որպես վարչական տուգանք:
3. Խնդրում եմ պետական տուրքի վճարումը հետաձգել և վճարման հարցը լուծել վճռով, քանի որ հայցվոր կազմակերպությունը հասարակական կազմակերպություն է:
4. Ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 57 հոդվածի 3 կետով՝ պատասխանող ՀՀ Արմավիրի մարզի Տավորիկ համայնքից հօգուտ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի բռնագանձել 76.250 դրամ՝ որպես հայցվորի ներկայացուցչին վճարված գումար:

Կից ներկայացնում եմ՝

1. Լիազորագիրը:
2. Հարցման, կրկնակի հարցման և փոստային անդորրագրի պատճենները:
3. Ներկայացուցչին վճարված գումարը հաստատող ապացույց:
4. Հայցադիմումը պատասխանողներին և ՀՀ Ֆինանսների նախարարությանը ուղարկելու մասին ապացույցներ՝ փոստային անդորրագրեր (հայցադիմումը ստանալու մասին ապացույց):

Հայցվորի լիազոր ներկայացուցիչ՝

Արթուր Մկրտչյան:

Վ Ճ Ի Ռ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

13.08.2009թ.

ք. Էջմիածին

Հայաստանի Հանրապետության վարչական դատարանը
հետեւյալ կազմով՝
Նախագահությամբ՝ դատավոր Արթուր Ծատուրյանի,
Քարտուղարությամբ՝ Էլենորա Կարապետյանի,
Մասնակցությամբ՝
Հայցվոր՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն»
հասարակական կազմակերպություն
Պատասխանողներ՝ ՀՀ Արմավիրի մարզի
Տալվորիկի գյուղապետարան

Էջմիածնի նստավայրում, դռնբաց դատական նիստում քննեց վարչական գործն ըստ հայցի «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության ընդդեմ Տալվորիկի գյուղապետարանի՝ տեղեկատվություն տրամադրել պարտադրելու պահանջի մասին:

1. Գործի դատավարական նախապատմությունը.

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն) հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան ընդդեմ Տալվորիկի գյուղապետարանի (այսուհետ՝ Գյուղապետարան) տեղեկատվություն տրամադրել պարտադրելու Տալվորիկի գյուղապետ Կիրակոս Սաղաթեյանին դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու եւ հայցվորի ներկայացուցչի համար կատարված ծախսերը հատուցելու պահանջներով:

Դատարանը 2009թ. ապրիլի 7-ի որոշմամբ հայցադիմումը տեղեկատվություն տրամադրել պարտադրելու եւ ներկայացուցչի համար կատարված ծախսերը հատուցելու պահանջների մասով ընդունել է վարույթ, իսկ Տալվորիկի գյուղապետին 30.000 դրամի չափով վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջի մասով՝ հայցադիմումի ընդունումը մերժել է:

Հայցադիմումը ներկայացնելիս Կազմակերպությունը խնդրել է պետական տուրքի վճարումը հետաձգել եւ վճարման հարցը լուծել վճռով:

Որպես իր պահանջի հիմնավորում՝ Կազմակերպությունը դատարան է ներկայացրել Տալվորիկի գյուղապետ Կ. Սաղաթեյանին ուղղված տեղեկատվություն ստանալու հարցման, տեղեկատվություն ստանալու կրկնակի հարցման եւ ըստ նախագծի աշխատավարձի տեղեկագրի պատճենները:

2. Հայցվորի իրավական դիրքորոշումը.

Հայցվորը, դիմելով դատարան, հայտնում է, որ Կազմակերպությունը երկու անգամ՝ 03.02.2009թ. եւ 15.02.2009թ. տեղեկատվություն ստանալու հարցում է ներկայացրել ՀՀ Արմավիրի մարզի Տալորիկի համայնքին: Հայցվորը խնդրել է տրամադրել հետեւյալ տեղեկատվությունը՝

1. 2008թ.-ի բյուջեի պատճեն, ինչպես նաեւ դրա կատարման հաշվետվությունը:
2. 2008թ.-ի ավագանու կողմից կայացրած 2-րդ կիսամյակի որոշումների պատճենները:

Հայցվորը նաեւ, հայտնում է, որ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում: Ուստի խնդրում է տեղեկատվությունը տրամադրել օրենքով սահմանված ժամկետներում:

Տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում է գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին: Գյուղապետարանն օրենքով սահմանված առավելագույն՝ երեսօրյա ժամկետում հայցվող տեղեկատվությունը չի տրամադրել եւ ոչ մի կերպ չի արձագանքել:

Պատասխանող կողմից հայցվող տեղեկությունը չտրամադրելու մասին փաստը հաստատվում է պատասխանի բացակայությամբ:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի՝ համայնքի ավագանին իր իրավասությունների սահմաններում ընդունում է որոշումներ եւ նույն օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն հաստատում է համայնքի բյուջեն եւ բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը, ինչը նշանակում է, որ փնտրվող տեղեկատվությունը պահպանվում է տեղական ինքնակառավարման մարմին համայնքում, որն էլ պարտավոր էր տրամադրել պահանջվող տեղեկատվությունը, ինչը չկատարելով խախտել է իր՝ Սահմանադրությամբ եւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով երաշխավորված իրավունքները:

Ելնելով վերոգրյալից՝ հայցվորը դատարանից խնդրում է պարտավորեցնել գյուղապետարանին հնգօրյա ժամկետում տրամադրել հայցվող տեղեկատվությունը եւ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 57-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ բռնազանձել Տալվորիկ համայնքից հոգուտ Կազմակերպության 76.250 դրամ՝ որպես հայցվորի ներկայացուցչին վճարված գումար:

Դատաքննության ընթացքում հայցվորի ներկայացուցիչ Ա. Մրտչյանը հայտնեց, որ պատասխանողը տրամադրել է ակնկալվող տեղեկատվությունը, ուստի Կազմակերպությունը հրաժարվում է հայցապահանջի այդ մասից: Սակայն հայցվորի ներկայացուցիչը պնդեց կատարված ծախսերը հատուցելու պահանջի մասով հայցը բավարարելու իր խնդրանքը:

3. Պատասխանողների իրավական դիրքորոշումը.

Պատասխանողը հայցադիմումի պատասխան չի ներկայացրել: Նրա ներկայացուցիչ Կ. Սաղաթեյանը մասնակցել է գործի դատաքննությանը, որի ընթացքում առարկեց ներկայացուցչի համար կատարված ծախսերը հատուցելու մասով հայցապահանջի դեմ՝ հայտնելով հետեյալ դիրքորոշումը: Հայցվորի ներկայացուցիչը Կազմակերպության կողմից ստանում է աշխատավարձ, եւ Գյուղապետարանը պարտավոր չէ հատուցել նրան մատուցված ծառայությունների համար ծախսված գումարը:

4. Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը եւ դատական ակտի պատճառաբանությունները.

Լսելով դատավարության մասնակիցներին, վերլուծելով եւ գնահատելով գործում եղած գրավոր ապացույցները՝ դատարանը հաստատված համարեց հետեյալ հանգամանքները:

Հայցապահանջի մասից հայցվորի հրաժարվելու մասով գործի վարույթը ենթակա է կարճման: Գործի վարույթը ենթակա է կարճման տեղեկատվություն տրամադրելուն պարտավորեցնելու պահանջից հրաժարվելու մասով:

Դատարանը այդ եզրահանգմանը գալով հիմնվում է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 100-րդ հոդվածի վրա, ըստ որի մինչեւ դատաքննության ավարտը հայցվորն իրավունք ունի առանց որեւէ պատճառաբանության լրիվ կամ մասնակի հրաժարվելու իր պահանջներից, որի դեպքում դատարանը կայացնում է վճիռ գործի վարույթը կարճելու մասին այն պահանջի մասով որից հրաժարվել է հայցվորը:

Ինչ վերաբերում է ներկայացուցչի համար կատարված ծախսերը հատուցելու պահանջին, ապա դատարանը գտնում է, որ այդ մասով հայցը ենթակա չէ բավարարման հետեյալ պատճառաբանությամբ: Քանի որ հայցվորը տեղեկատվություն տրամադրելուն պարտավորեցնելու մասով հայցից հրաժարվել է, եւ այդ մասով գործի վարույթն օրենքի ուժով ենթակա է կարճման, ուստի սույն դատական ակտով այդ մասով հայցվորի օգտին վճիռ չի կայացվում: Իսկ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ ներկայացուցիչներին վճարվող գումարների գծով դատական ծախսի փոխհատուցումը դրվում է համապատասխանաբար Հայաստանի Հանրապետության կամ համայնքի վրա միայն այն դեպքում, եթե գործը լուծվել է ի վնաս նրանց:

Դատարանը գտնում, որ գործը կհամարվեր ի վնաս գյուղապետարանի, եթե հայցը բավարարվեր: Քանի որ գործի վարույթը կարճվելու է, դատարանը գտ-

Նում է, որ դա պատասխանողի համար ի վնաս գործի լուծում չէ, ուստի նրա վրա չի կարող դրվել հայցվորի ներկայացուցչին վճարված ծախսերի հատուցումը:

Բացի դա, որպես ներկայացուցչին վճարված ծախսերի հատուցում՝ հայցվորը ներկայացրել է 2009թ. փետրվարի 1-ի պայմանագիրը, ըստ որի «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունը, որպես «պատվիրատու», պարտավորվել է սույն գործով իր ներկայացուցիչ Արթուր Մկրտչյանին վճարել 152.500 դրամ՝ «Տեղեկատվության ազատությունը որպես համայնքային մասնակցության միջոց» ծրագրի շրջանակներում ՀՀ դատարաններում 2 դատական գործ հարուցելու եւ վարելու համար՝ տեղեկատվություն ստանալու իրավունքի վերաբերյալ: Այդ պայմանագրում նշված է, որ այդ գումարները վճարվում են երկու անգամ՝ 2009թ. փետրվարի 28-ին՝ 76.250 դրամ, եւ 2009թ. ապրիլի 30-ին՝ 76.250 դրամ:

Հայցվորը դատարան է ներկայացրել նաեւ «Աշխատավարձի տեղեկագիր ըստ Նախագծի» փաստաթուղթը, որտեղ երեւում է, որ հայցվորը 2009թ. փետրվարի 27-ին Արթուր Մկրտչյանին վճարել է 76.250 դրամ: Նշված փաստաթղթից չի երեւում, որ հայցվորը Արթուր Մկրտչյանին 76.250 դրամ վճարել է՝ սույն գործով հայց վարչական դատարան ներկայացնելու համար: Բացի դա, սույն գործով հայցը առձեռն վարչական դատարան է ներկայացվել 2009թ. ապրիլի 1-ին կամ մեկ ամսից ավել անց այն օրվանից, երբ հայցվորը 76.250 դրամ է վճարած եղել Արթուր Մկրտչյանին:

Այսինքն, հայցվորը Արթուր Մկրտչյանին վճարել է այն ժամանակ, երբ դեռեւս հայտնի չի եղել, որ վերջինս վարչական դատարան հայց է ներկայացրել: Հետեւաբար, դատարանը եզրահանգում է, որ որպես ներկայացուցիչ Արթուր Մկրտչյանին 76.250 դրամ վճարելն ուղղակի կապ չունի սույն գործում նրա՝ որպես վարչական դատարանում հայցվորի ներկայացուցչի գործառույթների հետ:

Դատարանը, այդ եզրահանգմանը գալով, նկատի է ունենում նաեւ այն հանգամանքը, որ հայցվոր կողմը չի ապացուցել, որ երկու դատական գործ հարուցելու մասին 2009թ. փետրվարի 1-ի պայմանագրի առարկայի մեջ է մտնում նաեւ սույն գործը: Հայցվորը չի ապացուցել, որ այդ երկու դատական գործերից մեկը հենց սույն գործն է: Բացի դա, հայցվորն ինքն իր գործունեության կազմակերպման համար Արթուր Մկրտչյանի հետ կնքել է 2009թ. փետրվարի 1-ի պայմանագիրը, որտեղ նշվում է, որ ինքն իր վրա է վերցրել ներկայացուցչի ծախսերի հատուցման պարտավորությունը, որից ուղղակիորեն չի հետեւում, որ դատարանը պետք է որոշի ծախսերի հատուցման հարցը, քանի որ ըստ արդեն իսկ հիշատակված ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածի 8-րդ մասի՝ հատուցումը հնարավոր է միայն գործն ի վնաս Գյուղապետարանի լուծելու, այն է՝ նրա դեմ ներկայացված հայցը բավարարելու դեպքում, մինչդեռ հայցվորի հայցապահանջից հրաժարվելու հիմքով գործի վարույթը կարճելու դեպքում չի կարող համարվել, որ գործը լուծվել է ի վնաս պատասխանողի:

Հայցվորի ներկայացուցչի ծախսերի փոխհատուցումը Գյուղապետարանի վրա դնելու հայցվորի պահանջը մերժելու եզրահանգմանը գալով՝ դատարանը

նը հիմնվում է նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքին 59-րդ հոդվածի 2-րդ մասի այն դրույթի վրա, ըստ որի նշված հոդվածի 1-ին մասով նախատեսված դատական ծախսերի փոխհատուցման պարտականությունը դրվում է հայցվորի վրա, եթե հայցը թողնվում է առանց քննության կամ վարույթը կարճվում է:

Ելնելով վերոհիշյալ փաստական եւ իրավական հանգամանքներից՝ դատարանը եզրահանգում է, որ սույն գործի վարույթը եթակա է կարճման:

5. Եզրափակիչ մաս.

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 100-րդ հոդվածով, 112-րդ հոդվածով, 113-րդ հոդվածի 1-ին մասով, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 130-132-րդ հոդվածներով՝ դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

1. Վարչական գործի վարույթը ըստ հայցի՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության ընդդեմ Տալվորիկի գյուղապետարանի՝ տեղեկատվություն տրամադրելուն պարտադրելու պահանջի մասին կարճել:

Բռնագանձել «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունից հոգուտ պետական բյուջեի նախապես չվճարված պետական տուրքի գումարը՝ 4000 դրամի չափով:

Հայցվորի կատարած ծախսերի հարցը համարել լուծված:

Սույն գործով պետական տուրքի վճարման եւ հայցվորի ներկայացուցչի հետ կապված ծախսերից բացի այլ ծախսեր չեն առաջացել:

2. ՀՀ դատական օրենսգրքի 36-րդ հոդվածի եւ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 115-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից՝ 2009թ.-ի օգոստոսի 13-ից մեկ ամիս հետո:

3. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 229-րդ հոդվածի համաձայն սույն վճիռը կարող է բողոքարկվել վճռաբեկության կարգով ՀՀ վճռաբեկ դատարան՝ հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

4. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 132-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ սույն վճիռը կամովին չկատարելու դեպքում դա կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

ԴԱՏԱՎՈՐ

Ա. ԾԱՏՈՒՐՅԱՆ:

Գործ 11.

**Ինֆորմացիայի ազատության
կենսրոնն
ընդդեմ**

«Տայ ազգային կոնգրես» դաշինքի

Գործի համառոտ նկարագրությունը

Ինֆորմացիայի ազատության կենտրոնը 2009թ. ապրիլի 21-ին դիմել էր «Հայ ազգային կոնգրես» դաշինքի ղեկավար Լեւոն Տեր-Պետրոսյանին՝ խնդրելով տրամադրել.

1. Դաշինքի 2008թ.-ի ֆինանսական հաշվետվության պատճեն:
2. Օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից ավել արժողությամբ նվիրատվության աղբյուրների մասին տեղեկատվություն:

Սակայն տեղեկատվություն ստանալու հարցումը մնացել է անպատասխան: ԻԱԿ-ը 2009թ.-ի հունիսի 26-ին հայց է ներկայացրել դատարան՝ պահանջելով Հայ Ազգային Կոնգրես դաշինքին պարտավորեցնել հնգօրյա ժամկետում տրամադրել հայցված տեղեկությունները:

Նախնական դատական նիստի ժամանակ ՀԱԿ ներկայացուցիչները չէին ներկայացել դատարան, սակայն գրավոր պատասխան էին ուղարկել, որում մասնավորապես նշել էին, որ ՀԱԿ-ը իրավաբանական անձ, սուբյեկտ, այսինքն՝ տեղեկատվություն տնօրինող չէ, հետեւապես իրենք չէին կարող պատասխանել ԻԱԿ-ի՝ տեղեկություն ստանալու հարցմանը:

22.12.2009թ.-ին Կենտրոն եւ Նորք Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում հրապարակվեց «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ն ընդդեմ «Հայ Ազգային Կոնգրես» դաշինքի դատական գործով դատարանի վճիռը:

Դատարանը որոշեց կարճել գործը՝ առանց ըստ էության քննելու: Գործը կարճելու պատճառը հետեւյալն է.

ըստ ՀՀ Զաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ քաղաքացիական գործերով որպես պատասխանող դատարանում կարող են հանդես գալ իրավաբանական կամ ֆիզիկական անձինք: Հետեւաբար, քանի որ Հայ Ազգային Կոնգրեսը կուսակցությունների դաշինք է, իսկ դաշինքը ոչ իրավաբանական անձ է, ոչ էլ՝ ֆիզիկական, ուստի Հայ Ազգային Կոնգրես դաշինքը չի կարող դատարանում հանդես գալ որպես պատասխանող: Այսինքն՝ չնայած այն բանին, որ համաձայն ՀՀ Ընտրական օրենսգրքի՝ դաշինքը որոշակի իրավունքներով եւ պարտականություններով օժտված մարմին է, Հայ ազգային կոնգրեսը պատշաճ պատասխանող չէ:

Օրենսդրական այս կազուսի պատճառով էլ այս անգամ տուժեց տեղեկատվության ստանալու իրավունքը:

Գործի նյութերը

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԶԿ

21.04.2009թ.

102-ի 6

Հայ Ազգային Կոնգրեսի ղեկավար
պարոն Լեւոն Տեր-Պետրոսյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Տեր-Պետրոսյան,

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 եւ 27.1 հոդվածների, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի եւ «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքի 28 հոդվածի դրույթներով՝ խնդրում եմք տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. Դաշինքի 2008թ.-ի ֆինանսական հաշվետվության պատճեն:
2. Օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից ավել արժողությամբ նվիրատվության աղբյուրների մասին տեղեկատվություն:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում եմք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Կանխավ շնորհակալ եմ:

Հանրային կապերի պատասխանատու՝

Անահիտ Զոհարյան:

ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻՆ

Հայցվոր՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն»
հասարակական կազմակերպություն
Նախագահ՝ Շուշան Դոյրոյան
Ներկայացուցիչ՝ Կարեն Մեծլումյան
Պատասխանող՝ «Հայ Ազգային Կոնգրես» դաշինք
Հասցե՝ Երեւան, Կորյունի 19ա, 4

26.06.2009թ.

Հ Ա Յ Ց Ա Դ Ի Մ ՈՒ Մ

Գործողության կատարման հայց

Տեղեկատվություն տրամադրել պարտադրելու պահանջի մասին

1. Փաստերը որոնց վրա հիմնված է հայցապահանջը.

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունը 21.04.2009թ.-ին Հայ Ազգային Կոնգրես դաշինքի ղեկավար Լեւոն Տեր-Պետրոսյանին հետեւյալ բովանդակությամբ տեղեկատվություն ստանալու հարցում է ներկայացրել. «Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 եւ 27.1 հոդվածների, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի եւ «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքի 28 հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. Դաշինքի 2008թ.-ի ֆինանսական հաշվետվության պատճեն:
2. Օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից ավել արժողությամբ նվիրատվության աղբյուրների մասին տեղեկատվություն:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում»:

Նշված փաստը հաստատվում է հարցման եւ փոստային անդորրագրի օրինակներով:

Պատասխանողը գրավոր հարցմանը չի պատասխանել եւ պահանջվող տեղեկատվությունը չի տրամադրել: Նշված փաստը հաստատվում է պատասխանի բացակայությամբ:

2. Հայցապահանջի իրավական հիմնավորումը.

ՀՀ Սահմանադրության՝

- 27 հոդվածի 2-րդ պարբերության համաձայն. «Յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք, ներառյալ տեղեկություններ եւ գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը, տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից».
- 27.1 հոդվածի համաձայն. «Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական կամ հասարակական շահերի պաշտպանության նկատառումներով իրավասու պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններին եւ պաշտոնատար անձանց դիմումներ կամ առաջարկություններ ներկայացնելու եւ ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունք»:

Սահմանադրությամբ երաշխավորված վերը նշված իրավունքներն առարկայանում են նաեւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում, որի 6 հոդվածի 1-ին մասի համաձայն.

«Յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը եւ (կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկատվություն տնօրինողին եւ ստանալու այդ տեղեկությունը»:

Նույն օրենքի 9 հոդվածի 7-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝

եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը տրամադրելու համար անհրաժեշտ է կատարել լրացուցիչ աշխատանք, ապա այդ տեղեկությունը դիմողին է տրվում դիմումն ստանալուց հետո՝ 30-օրյա ժամկետում, որի մասին հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում, գրավոր տեղեկացվում է դիմողին՝ նշելով հետաձգման պատճառները եւ տեղեկությունը տրամադրելու վերջնական ժամկետը:

«Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի համաձայն.

- «1. Կուսակցությունները ֆինանսական ու հաշվապահական հաշվետվություններ են ներկայացնում իրավաբանական անձանց համար օրենսդրությամբ սահմանված կարգով եւ ժամկետներում:
- 2. Կուսակցությունը պարտավոր է յուրաքանչյուր տարի՝ հաշվետու տարվան հաջորդող մարտի 25-ից ոչ ուշ, պետական լիազոր մարմին ներկայացնել ֆինանսական հաշվետվություն՝ հաշվետու տարվա ընթացքում կուսակցության ստացած եւ ծախսած միջոցների մասին:
- 3. Հաշվետու տարվա ընթացքում կուսակցության ստացած եւ ծախսած միջոցների մասին հաշվետվությունը պետք է տվյալներ պարունակի կուսակցության հաշվում մուտք արված միջոցների աղբյուրների եւ ծավալի, այդ միջոցների ծախսման, ինչպես նաեւ ունեցած գույքի մասին՝ նշելով դրա արժեքը: Հաշվառման եւ հաշվետվության (ներառյալ՝ հաշվետվության ձեւերի) կարգը որոշում է պետական լիազոր մարմինը: Կուսակցության կողմից ընտրարշավների նախապատրաստման եւ անցկացման համար

ծախսված միջոցների հաշվառումը կատարվում է առանձին:

4. Կուսակցությունը, հաշվետու տարվան հաջորդող մարտի 25-ից ոչ ուշ, զանգվածային լրատվության միջոցներում հրապարակում է իր ֆինանսական հաշվետվությունը:
5. Կուսակցության ֆինանսական գործունեության վերահսկողությունն իրականացվում է օրենսդրությամբ սահմանված կարգով:
6. Կուսակցության ստացած՝ օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից ավելի արժողությամբ նվիրատվության աղբյուրը նշվում է կուսակցության ֆինանսական հաշվետվությունում»:

Ինչպես տեսնում ենք, պահանջվող տեղեկատվությունը գաղտնի չի եղել, սակայն ի խախտումն Սահմանադրությամբ ու օրենքներով երաշխավորված հայցվորի իրավունքների ու պատասխանողի պարտականության, պատասխանողը չի տրամադրել 21.04.2009թ. գրավոր հարցմամբ պահանջվող տեղեկատվությունը, այն դեպքում, երբ՝ պարտավոր էր տրամադրել:

Վերոգրյալից ելնելով եւ ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 11 գլխի պահանջներով՝

Խնդրում եմ՝

Պարտավորեցնել Հայ Ազգային Կոնգրես դաշինքին հնգօրյա ժամկետում տրամադրել հայցված տեղեկատվությունը հետեւյալի մասին.

1. Դաշինքի 2008թ.-ի ֆինանսական հաշվետվության պատճեն:
2. Օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից ավել արժողությամբ նվիրատվության աղբյուրների մասին տեղեկատվություն:

Որպես հետեւանք խնդրում ենք լուծել պետական տուրքի հարցը:

Կից ներկայացվում են՝

1. պետական տուրքի վճարման անդորրագիր,
2. հայցադիմումը պատասխանողներին ուղարկելու մասին ապացույց,
3. լիազորագիր,
4. հարցման օրինակը,
5. փոստային անդորրագիր:

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն»

ՀԿ Նախագահ՝

Լիազոր ներկայացուցիչ՝

Շուշան Դոյրոյան

Կարեն Մեծլումյան:

Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ-1392/02/2009թ.

Վ Ճ Ի Ռ

Հանուն Հայաստանի Հանրապետության

22.12.2009թ.

ք. Երեւան

Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը հետեւյալ կազմով՝
Նախագահությամբ դատավոր Ա. Սուքոյանի,
քարտուղարությամբ՝ Ա. Արոյանի

09.12.2009թ. դռնբաց դատական նիստում քննելով քաղաքացիական գործն ըստ հայցի «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության ընդդեմ «Հայ Ազգային Կոնգրես» դաշինքի՝ տեղեկատվություն տրամադրելուն պարտադրելու պահանջի մասին

Պ Ա Ր Չ Ե Ց

Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 13.02.2009թ. որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ:

13.02.2009թ. որոշմամբ գործը նախապատրաստվել է դատաքննության:

19.11.2009թ. որոշմամբ գործով նշանակվել է դատաքննություն:

Հայցվորը եւ հայցվորի կողմից որպես պատասխանող նշված անձը, պատշաճ ձեւով տեղեկացված լինելով դատական նիստի ժամանակի եւ վայրի մասին, չեն ներկայացել:

Դատարանը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 118-րդ հոդվածի 2-րդ մասով, գործը քննել է նրանց բացակայությամբ:

Հայցվորի ներկայացուցիչ Կ. Մեծլումյանը, դիմելով դատարան, հայտնել է, որ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունը 21.04.2009 թվականին հարցում է ներկայացրել «Հայ Ազգային Կոնգրես» դաշինքին՝ հետեւյալ տեղեկությունները տրամադրելու վերաբերյալ՝ 1. Հայ Ազգային Կոնգրեսի 2008թ. ֆինանսական հաշվետվության պատճեն, 2. Հայ Ազգային Կոնգրեսի ստացած՝ օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից ավելի արժողությամբ նվիրատվության աղբյուրների մասին տեղեկատվություն: Սակայն «Հայ Ազգային Կոնգրես» դաշինքը գրավոր հարցմանը չի պատասխանել եւ պահանջվող տեղեկատվությունը չի տրամադրել:

Հայցվորի ներկայացուցիչը հայտնել է, որ **ՀՀ Սահմանադրության 27 հոդվածի 2-րդ պարբերության** համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք, ներառյալ տեղեկություններ եւ գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը, տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից:

27.1 հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր անձնական կամ հասարակական շահերի պաշտպանության նկատառումներով իրավասու պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններին եւ պաշտոնատար անձանց դիմումներ կամ առաջարկություններ ներկայացնելու եւ ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունք:

Սահմանադրությամբ երաշխավորված վերը նշված իրավունքներն առարկայանում են նաեւ «**Տեղեկատվության ազատության մասին**» **ՀՀ օրենքում, որի 1-ին հոդվածի 2-րդ մասի** համաձայն՝ սույն օրենքի գործողությունը տարածվում է պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունների, ինչպես նաեւ հանրային նշանակության կազմակերպությունների եւ դրանց պաշտոնատար անձանց վրա:

Նույն օրենքի 6 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությունը եւ (կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկատվություն տնօրինողին եւ ստանալու այդ տեղեկությունը:

Նույն օրենքի 9 հոդվածի 7-րդ մասի 1-ին եւ 2-րդ կետերի համաձայն հայցվող տեղեկատվությունը պետք է տրամադրվեր 5-օրյա ժամկետում, իսկ 3-րդ կետի համաձայն՝ եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը տրամադրելու համար անհրաժեշտ է կատարել լրացուցիչ աշխատանք, ապա այդ տեղեկությունը դիմողին է տրվում դիմումն ստանալուց հետո՝ 30-օրյա ժամկետում, որի մասին հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում, գրավոր տեղեկացվում է դիմողին՝ նշելով հետաձգման պատճառները եւ տեղեկությունը տրամադրելու վերջնական ժամկետը:

«**Կուսակցությունների մասին**» **ՀՀ օրենքի 28 հոդվածի** համաձայն՝ կուսակցությունները ֆինանսական ու հաշվապահական հաշվետվություններ են ներկայացնում իրավաբանական անձանց համար օրենսդրությամբ սահմանված կարգով եւ ժամկետներում:

Կուսակցությունը պարտավոր է յուրաքանչյուր տարի՝ հաշվետու տարվան հաջորդող մարտի 25-ից ոչ ուշ, պետական լիազոր մարմին ներկայացնել ֆինանսական հաշվետվություն՝ հաշվետու տարվա ընթացքում կուսակցության ստացած եւ ծախսած միջոցների մասին:

Հաշվետու տարվա ընթացքում կուսակցության ստացած եւ ծախսած միջոցների մասին հաշվետվությունը պետք է տվյալներ պարունակի կուսակցության հաշվում մուտք արված միջոցների աղբյուրների եւ ծավալի, այդ միջոցների ծախսման, ինչպես նաեւ ունեցած գույքի մասին՝ նշելով դրա արժեքը: Հաշվառման եւ հաշվետվության (ներառյալ՝ հաշվետվության ձեւերի) կարգը

որոշում է պետական լիազոր մարմինը: Կուսակցության կողմից ընտրարշավների նախապատրաստման եւ անցկացման համար ծախսված միջոցների հաշվառումը կատարվում է առանձին:

Կուսակցությունը, հաշվետու տարվան հաջորդող մարտի 25-ից ոչ ուշ, զանգվածային լրատվության միջոցներում հրապարակում է իր ֆինանսական հաշվետվությունը:

Կուսակցության ֆինանսական գործունեության վերահսկողությունն իրականացվում է օրենսդրությամբ սահմանված կարգով:

Կուսակցության ստացած՝ օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից ավելի արժողությամբ նվիրատվության աղբյուրը նշվում է կուսակցության ֆինանսական հաշվետվությունում»:

Վերոգրյալի հիման վրա հայցվորի ներկայացուցիչ Կ. Մեժլումյանը խնդրել է ոչ իրավաչափ ճանաչել «Հայ Ազգային Կոնգրես» դաշինքի անգործությունը, որով օրենքով սահմանված առավելագույն ժամկետում սպառիչ եւ լրիվ պատասխան չի տրվել հայցվող տեղեկատվության վերաբերյալ, եւ պարտավորեցնել հնգօրյա ժամկետում տրամադրել հայցված տեղեկատվությունը 2008թ.-ի ֆինանսական հաշվետվության պատճենի ձեւով եւ օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից ավելի արժողությամբ նվիրատվության աղբյուրների մասին:

05.08.2009 թվականին դատարանում ստացվել է հայցադիմումի պատասխան՝ ստորագրված Արմեն Խաչատրյանի կողմից՝ նշված որպես պատասխանող: Վերջինս, առարկելով հայցի դեմ, հայտնել է, որ Հայ Ազգային Կոնգրեսը չի հանդիսանում իրավաբանական անձ, այն գրանցված չէ պետական համապատասխան մարմիններում եւ այս պարագայում չի կարող հանդես գալ որպես սուբյեկտ, իսկ հայցվորի նշած իրավական հիմքերը՝ պահանջված տեղեկատվության ազատության եւ դրա տրամադրման մասին գործում են ՀՀ օրենքներով պետական գրանցում ստացած սուբյեկտների վերաբերյալ:

Հայ Ազգային Կոնգրեսը կուսակցություն չէ, այն որոշակի սկզբունքների եւ նպատակների շուրջ, հռչակագրային հիմունքներով մի շարք կուսակցությունների եւ հասարակական կազմակերպությունների միավորում է եւ երբեք չի դիմել պետական իրավասու մարմիններին գրանցվելու եւ պետական գրանցման՝ օրենքով նախատեսված ընթացակարգը անցնելու համար:

Հայ Ազգային Կոնգրեսը հանրային նշանակության կազմակերպություն չէ, քանի որ չի համապատասխանում նման կառույցի համար օրենքով նախատեսված չափանիշներին: Հայ Ազգային Կոնգրեսում չկան նաեւ պաշտոնատար անձինք:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայ Ազգային Կոնգրեսը չի հանդիսանում իրավունքի սուբյեկտ՝ Արմեն Խաչատրյանը խնդրել է հայցը մերժել:

Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստեր.

1. Համաձայն ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 11.11.2009 թվականի 01-519 գրության՝ «Հայ Ազգային Կոնգրես» կուսակցությունների դաշինքը կազմված է հետևյալ կուսակցություններից. «Ազատություն», «Ժողովրդավարական հայրենիք», «Ժողովրդավարական ուղի», Հայաստանի Ժողովրդական, Հայաստանի լիբերալ, Հայաստանի կանաչների, Հայաստանի Մարքսիստական, «Հայոց Համազգային Շարժում», «Հայոց հայրենիք», «Հայրենիք ու Պատիվ», «Հանրապետություն», Սոցիալ-Դեմոկրատ Հնչակյան, Պահպանողական, «Զրիստոնեա-ժողովրդական վերածնունդ»:
2. «Հայ Ազգային Կոնգրես» կուսակցությունների դաշինքը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 56-րդ հոդվածի իմաստով պետական գրանցում չունի:

Դատարանի պատճառաբանությունները եւ եզրահանգումը.

Վերլուծելով եւ գնահատելով գործի տվյալներն ու դատաքննությամբ հետազոտված ապացույցները՝ դատարանը գտնում է, որ քաղաքացիական գործի վարույթը ենթակա է կարճման՝ դատաքննությամբ հաստատված վերոգրյալ փաստական հանգամանքների եւ դրանց նկատմամբ կիրառելի իրավական ակտերի հիման վրա:

Հայցային վարույթում քաղաքացիական դատավարական իրավահարաբերությունների համակարգի օբյեկտը նյութական իրավունքի մասին վեճն է, որը ենթադրում է առնվազն երկու կողմերի առկայություն՝ հայցվորի եւ պատասխանողի, որոնք ըստ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածի 1-ին կետի, քաղաքացիական դատավարության կողմերն են: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ հայցվորներ են քաղաքացիները եւ իրավաբանական անձինք, որոնք հայց են հարուցել: Սույն քաղաքացիական գործով, որպես հայցվոր հանդես է եկել «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունը, որի կազմակերպատ-իրավական ձեւը համապատասխանում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 50 հոդվածով սահմանված իրավաբանական անձի հատկանիշներին: Վերջինս, որպես իրավաբանական անձ (ՊԳՎ թիվ 21117101863), օգտվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածից եւ հայց է հարուցել դատարանում:

Ըստ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածի 3-րդ կետի՝ պատասխանողներ են քաղաքացիները եւ իրավաբանական անձինք, որոնց դեմ հայց է հարուցված: Նշված իրավանորմի մեկնաբանությունից հետեւում է, որ պատասխանողն այն անձն է, ով, ըստ հայցվորի դիմումի, խախտել կամ վիճարկում է հայցվորի սուբյեկտիվ իրավունքը կամ օրինական շահը, ում դեմ հարուցվում է քաղաքացիական գործ, եւ ով այդ կապակցությամբ կանչվում է պատասխանատվության: Ընդ որում, պատասխանող կարող են լինել քաղաքացիները եւ իրավաբանական անձինք: Քաղաքացին ֆիզիկական անձ է, որը քաղաքացիական շրջանառությանը կամ առանձին իրավահարաբերություններին մասնակցում է իրավասուբյեկտիվության շնորհիվ:

Չամաձայն ՅՅ քաղաքացիական օրենսգրքի 50 հոդվածի 1-ին կետի՝ իրավաբանական անձ է համարվում այն կազմակերպությունը, որը որպես սեփականություն ունի առանձնացված գույք եւ իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով, կարող է իր անունից ձեռք բերել եւ իրականացնել գույքային եւ անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող: Նույն օրենսգրքի 56-րդ հոդվածը սահմանում է, որ իրավաբանական անձը օրենքով սահմանված կարգով, ենթակա է պետական գրանցման:

Սույն քաղաքացիական գործով հայցվորի կողմից որպես պատասխանող նշված «Յայ Ազգային Կոնգրես» դաշինքը քաղաքացի կամ իրավաբանական անձ չէ, որպիսի պայմաններում դատարանը գտնում է, որ հայցը հարուցված է ՅՅ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածի 3-րդ կետի իմաստով պատասխանող չհանդիսացող անձի նկատմամբ: Այսինքն, որպես այդպիսին, վեճի պատասխանող կողմը առկա չէ, ուստի եւ առանց պատասխանողի հարուցված վեճը դատարանում քննության ենթակա չլինելու հիմքով քաղաքացիական գործի վարույթը ՅՅ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին կետի կարգով ենթակա է կարճման:

Վերոգրյալի հիման վրա եւ ղեկավարվելով ՅՅ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ, 130-132-րդ, 140-րդ, 140.1-րդ հոդվածներով՝ դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

Ըստ հայցի՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության ընդդեմ «Յայ Ազգային Կոնգրես» դաշինքի՝ տեղեկատվություն տրամադրելուն պարտադրելու պահանջի մասին քաղաքացիական գործի վարույթը կարճել:

Պետական տուրքի հարցը համարել լուծված:

Սույն վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո եւ կարող է բողոքարկվել միայն վերաքննության կարգով:

Վճիռը կամովին չկատարելու դեպքում դա կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

ԴԱՏԱՎՈՐ Ա. ՍՈՒԶՈՅԱՆ:

Գործ 12.
Ինֆորմացիայի ազատության
կենսրոնն
ընդդեմ
«Օրինաց երկիր» կուսակցության

Գործի համառոտ նկարագրությունը

2009թ.-ի հունիսի 26-ին ԻԱԿ-ը հայց էր ներկայացրել դատարան՝ պահանջելով «Օրինաց Երկիր» կուսակցությանը պարտավորեցնել հնգօրյա ժամկետում տրամադրել հայցված տեղեկություններ հետեւյալի մասին.

1. 2008թ. ֆինանսական հաշվետվության պատճեն, որը կպարունակի «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքի 28 հոդվածի 3-րդ մասով նախատեսված ողջ տեղեկատվությունը:
2. Օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից ավել արժողությամբ նվիրատվության աղբյուրների մասին տեղեկատվություն:

ԻԱԿ-ը տեղեկություն ստանալու հարցմամբ կուսակցության ղեկավար Արթուր Բաղդասարյանից խնդրել էր տրամադրել վերոնշյալ տեղեկությունները դեռեւս 2009թ.-ի ապրիլի 21-ին, իսկ պատասխանը ստացվել էր թերի եւ ժամկետների խախտմամբ:

2009թ.-ի սեպտեմբերի 4-ին Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանում՝ դատավոր Գ. Կարախանյանի նախագահությամբ, տեղի ունեցավ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության հայցադիմումի քննությունն ընդդեմ «Օրինաց Երկիր» կուսակցության:

Դատական նիստի ժամանակ դատավորը՝ որպէս ապացույց, պետքէ գիտորից պահանջեց ՕԵԿ-ի ֆինանսական հաշվետվության օրինակը,

ինչի հետեւանքով էլ դատական նիստը հետաձգվեց:

2009թ.-ի հոկտեմբերի 22-ին Կենտրոն եւ Նորք Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում դատավոր Գայանե Կարախանյանի նախագահությամբ տեղի ունեցավ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ն ընդդեմ «Օրինաց Երկիր» կուսակցության դատական գործով վերջին նիստը: Նիստի ժամանակ հրապարակվեց դատարանի վճիռը:

Դատարանը վճռեց ԻԱԿ-ի հայցն ընդդեմ «Օրինաց Երկիր» կուսակցության մերժել: Դատարանի վերլուծությամբ՝ եթէ Ինֆորմացիայի ազատության կենտրոնն իրեն ուղարկված տեղեկատվությունը համարել է ոչ լիարժեք, ապա կարող էր գրավոր դիմումով հայտնել «Օրինաց Երկիր» կուսակցությանը, իսկ եթէ վերջինս անվճար չտրամադրեր ճշգրտված տվյալներ, ապա այդ դեպքում նոր խախտված կլիներ ՏԱ մասին ՀՀ օրենքի պահանջը:

Ինչ վերաբերում է նվիրատվություններին, ապա հաշվետվությունների բլանկում նվիրատվությունների աղբյուրների մասին գրառում չլինելու հանգամանքը վկայում է դրանց բացակայության մասին, քանի որ համաձայն ՀՀ արդարադատության նախարարի 31.03.2005թ.-ի թիվ 39-Ն հրամանի՝ հաշվետվության բլանկի համապատասխան սյունում նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից ավելի արժողությամբ նվիրատվության աղբյուրը նշվում է միայն նման աղբյուրի առկայության դեպքում: Սրանից հետեւում է, որ

ԻԱԿ-ը պարտավոր էր տեղյակ լինել Արդարադատության նախարարի հրամանի մասին, վերլուծել հաշվետվությունը եւ ինքնուրույն վերհանել իր հարցման երկրորդ հարցի պատասխանը:

Սակայն, հաշվետվությունը վերաբերում էր միայն 2008թ.-ին, իսկ ԻԱԿ-ը խնդրել էր տրամադրել նվիրատվությունների աղբյուրը առանց տարեթիվ նշելու: Այս առումով դատարանը համարել է, որ ԻԱԿ-ի երկրորդ հարցը առաջին հարցի տրամաբանական շարունակությունն է եւ նույնպես վերաբերում է 2008թ.-ին, այնինչ, իրականում դա ինքնուրույն հարց է եւ չի վերաբերում միայն 2008 թվականին:

Ամեն դեպքում՝ դատարանը գտել է, որ ԻԱԿ-ին տրամադրվել է լիարժեք եւ սպառիչ տեղեկատվություն:

Գործի նյութերը

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԶԿ

21.04.2009թ.

102-ի 8

**«Օրինաց երկիր» Կուսակցության նախագահ
պարոն Արթուր Բաղդասարյանին**

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Բաղդասարյան,

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 եւ 27.1 հոդվածների, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի եւ «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքի 28 հոդվածի դրույթներով՝ խնդրում եմք տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. 2008թ. ֆինանսական հաշվետվության պատճեն, որը կպարունակի «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքի 28 հոդվածի 3-րդ մասով նախատեսված ողջ տեղեկատվությունը:
2. Օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից ավել արժողությամբ նվիրատվության աղբյուրների մասին տեղեկատվություն:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում եմք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Կանխավ շնորհակալ եմ:

Հանրային կապերի պատասխանատու՝ Անահիտ Զոչարյան:

ՀՀ ՎԱՐՉԱՎԱՆ ԴԱՏԱՐԱՆԻՆ

Հայցվոր՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն»
հասարակական կազմակերպություն
Նախագահ՝ Շուշան Դոյրոյան
Ներկայացուցիչ՝ Կարեն Մեծլումյան
Պատասխանող՝ «Օրինաց երկիր» Կուսակցություն
Հասցե՝ Երեւան, Աբովյան 43

26.06.2009թ.

Հ Ա Յ Ց Ա Դ Ի Մ ՈՒ Մ

Գործողության կատարման հայց

Տեղեկատվություն տրամադրել պարտադրելու պահանջի մասին

1. Փաստերը որոնց վրա հիմնված է հայցապահանջը.

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունը 21.04.2009թ-ին «Օրինաց երկիր» Կուսակցության նախագահ Արթուր Բաղդասարյանին հետեւյալ բովանդակությամբ տեղեկատվություն ստանալու հարցում է ներկայացրել. «Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 եւ 27.1 հոդվածների, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի եւ «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքի 28 հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. «Օրինաց երկիր» Կուսակցության 2008թ. ֆինանսական հաշվետվության պատճեն, որը կպարունակի «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքի 28 հոդվածի 3-րդ մասով նախատեսված ողջ տեղեկատվությունը:
2. «Օրինաց երկիր» Կուսակցության ստացած՝ օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից ավել արժողությամբ նվիրատվության աղբյուրների մասին տեղեկատվություն:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում»:

Նշված փաստը հաստատվում է հարցման եւ փոստային անդորրագրի օրինակներով:

Պատասխանողը գրավոր հարցմանն ի պատասխան ուղարկել է 5 էջից բաղկացած տեղեկատվություն՝ մուտք արված դրամական միջոցների չափի, անշարժ գույքի, շարժական գույքի, ծախսված դրամական միջոցների եւ տարվա

վերջում մնացորդի մասին, սակայն չի տրամադրել տեղեկատվությունը «Օրինաց երկիր» Կուսակցության ստացած՝ օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից ավելի արժողությամբ նվիրատվության աղբյուրների մասին: Ի դեպ, որպես հաշվետվություն ներկայացված 5 էջերը թերի են լրացված, այսինքն պատասխանողը չի ուղարկել ֆինանսական հաշվետվության պատշաճ օրինակ:

Նշված փաստը հաստատվում է կից ներկայացվող 5 էջանոց թերի հաշվետվությամբ:

2. Հայցապահանջի իրավական հիմնավորումը.

ՀՀ Սահմանադրության՝

- 27 հոդվածի 2-րդ պարբերության համաձայն. «Յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք, ներառյալ տեղեկություններ եւ գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը, տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից».
- 27.1 հոդվածի համաձայն. «Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական կամ հասարակական շահերի պաշտպանության նկատառումներով իրավասու պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններին եւ պաշտոնատար անձանց դիմումներ կամ առաջարկություններ ներկայացնելու եւ ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունք»:

Սահմանադրությամբ երաշխավորված վերը նշված իրավունքներն առարկայանում են նաեւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում, որի 6 հոդվածի 1-ին մասի համաձայն.

«Յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը եւ (կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկատվություն տնօրինողին եւ ստանալու այդ տեղեկությունը»:

Նույն օրենքի 9 հոդվածի 7-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝

եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը տրամադրելու համար անհրաժեշտ է կատարել լրացուցիչ աշխատանք, ապա այդ տեղեկությունը դիմողին է տրվում դիմումն ստանալուց հետո՝ 30-օրյա ժամկետում, որի մասին հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում, գրավոր տեղեկացվում է դիմողին՝ նշելով հետաձգման պատճառները եւ տեղեկությունը տրամադրելու վերջնական ժամկետը:

«Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքի 28 հոդվածի համաձայն.

- «1. Կուսակցությունները ֆինանսական ու հաշվապահական հաշվետվություններ են ներկայացնում իրավաբանական անձանց համար օրենսդրությամբ սահմանված կարգով եւ ժամկետներում:
- 2. Կուսակցությունը պարտավոր է յուրաքանչյուր տարի՝ հաշվետու տարվան հաջորդող մարտի 25-ից ոչ ուշ, պետական լիազոր մարմին ներկայացնել

Ֆինանսական հաշվետվություն՝ հաշվետու տարվա ընթացքում կուսակցության ստացած եւ ծախսած միջոցների մասին:

3. Հաշվետու տարվա ընթացքում կուսակցության ստացած եւ ծախսած միջոցների մասին հաշվետվությունը պետք է տվյալներ պարունակի կուսակցության հաշվում մուտք արված միջոցների աղբյուրների եւ ծավալի, այդ միջոցների ծախսման, ինչպես նաեւ ունեցած գույքի մասին՝ նշելով դրա արժեքը: Հաշվառման եւ հաշվետվության կարգը որոշում է պետական լիազոր մարմինը: Կուսակցության կողմից ընտրարշավների նախապատրաստման եւ անցկացման համար ծախսված միջոցների հաշվառումը կատարվում է առանձին:
4. Կուսակցությունը, հաշվետու տարվան հաջորդող մարտի 25-ից ոչ ուշ, գանգվածային լրատվության միջոցներում հրապարակում է իր ֆինանսական հաշվետվությունը:
5. Կուսակցության ֆինանսական գործունեության վերահսկողությունն իրականացվում է օրենսդրությամբ սահմանված կարգով:
6. Կուսակցության ստացած՝ օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից ավելի արժողությամբ նվիրատվության աղբյուրը նշվում է կուսակցության ֆինանսական հաշվետվությունում:

Ինչպես տեսնում ենք, պահանջվող տեղեկատվությունը գաղտնի չի եղել, սակայն, ի խախտումն Սահմանադրությամբ ու օրենքներով երաշխավորված հայցվորի իրավունքների ու պատասխանողի պարտականության, պատասխանողը չի տրամադրել 21.04.2009թ. գրավոր հարցմամբ պահանջվող տեղեկատվությունն ամբողջությամբ, տրամադրել է մահայն թերի լրացված հաշվետվություն, այն դեպքում, երբ պարտավոր էր տրամադրել պահանջվող տեղեկատվությունն ամբողջությամբ:

Վերոգրյալից ելնելով եւ ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 11 գլխի պահանջներով՝

Խնդրում եմ՝

Պարտավորեցնել «Օրինաց երկիր» Կուսակցությանը հնգօրյա ժամկետում տրամադրել հայցված տեղեկատվությունը հետեւյալի մասին.

1. 2008թ. ֆինանսական հաշվետվության պատճեն, որը կպարունակի «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքի 28 հոդվածի 3-րդ մասով նախատեսված ողջ տեղեկատվությունը:
2. Օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից ավել արժողությամբ նվիրատվության աղբյուրների մասին տեղեկատվություն:

Որպես հետեւանք խնդրում ենք լուծել պետական տուրքի հարցը:

Կից ներկայացվում են՝

1. պետական տուրքի վճարման անդորրագիր,
2. հայցադիմումը պատասխանողներին ուղարկելու մասին ապացույց,
3. լիազորագիր,
4. հարցման օրինակը,
5. փոստային անդորրագիր:

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն»

ՋԿ նախագահ՝

Շուշան Դոյդոյան

Լիազոր ներկայացուցիչ՝

Կարեն Մեժլումյան:

Գործ ԵԿԴ-1389/02. 2009թ

Վ Ճ Ի Ռ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

22.10.2009թ

ք. Երեւան

ԵՐԵՎԱՆ ԶԱՂԱՔԻ ԿԵՆՏՐՈՆ ԵՎ ՆՈՐՔ ՄԱՐԱՇ
ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ
ԴԱՏԱՐԱՆԸ ՀԵՏԵՎՅԱԼ ԿԱԶՄՈՎ

Նախագահությամբ՝ Դատավոր՝ Գ.Կարախանյան

Քարտուղարությամբ՝ Ա.Սայադյան

Մասնակցությամբ՝

Հայցվորի ներկայացուցիչ՝ Կ.Մեծլումյան

Պատասխանողի ներկայացուցիչներ՝

Ա.Ավագյան, Ռ. Սարգսյան

դռնբաց դատական նիստում, քննելով քաղաքացիական գործն ըստ հայցի «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության ընդդեմ «Օրինաց երկիր» կուսակցության՝ տեղեկատվություն տրամադրել պարտադրելու պահանջի մասին

Պ Ա Ր Չ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

Հայցադիմումը մուտք է եղել 09.07.2009 թվականին, նախագահի կողմից մակագրվել է 10.07.2009 թվականին, վարույթ է ընդունվել 13.07.2009 թ.-ին:

04.09.2009թ. պատասխանողի կողմից ներկայացվել է հայցադիմումի պատասխան:

04.09.2009թ. հայցվորը ներկայացրել է հայցային պահանջը հստակեցնելու մասին դիմում:

07.10.2009թ. պատասխանողի կողմից ներկայացվել է հայցային պահանջները հստակեցնելու մասին դիմումի պատասխան:

Հայցվորի դիրքորոշումը.

Հայցվորը դիմելով դատարան հայտնել է, որ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունը 21.04.2009 թվականին «Օրինաց երկիր» կուսակցության նախագահ Արթուր Բաղդասարյանին հետեյալ բովանդակությամբ տեղեկատվություն ստանալու հարցում է ներկայացրել .

Դեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 եւ 27.1 հոդվածների, «Տեղեկատ-

վություն ստանալու մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի եւ «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքի 28 հոդվածի դրույթներով՝ խնդրել է տրամադրել հետեւյալ տեղեկատվությունները.

1. «Օրինաց երկիր» Կուսակցության 2008թ ֆինանսական հաշվետվության պատճեն:
2. «Օրինաց երկիր» Կուսակցության ստացած՝ օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից ավելի արժողությամբ նվիրատվության աղբյուրների մասին տեղեկատվություն:

Պատասխանողը գրավոր հարցմանն ի պատասխան ուղարկել է 5 էջից բաղկացած տեղեկատվություն՝ մուտք արված դրամական միջոցների չափի, անշարժ գույքի, շարժական գույքի, ծախսված դրամական միջոցների եւ տարվա վերջում մնացորդի մասին, սակայն չի ներկայացրել տեղեկատվությունը «Օրինաց երկիր» կուսակցության ստացած՝ օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից ավելի արժողությամբ նվիրատվության աղբյուրների մասին տեղեկատվություն:

Բացի այդ որպես հաշվետվություն ներկայացրած 5 էջերը թերի են լրացված, այսինքն՝ պատասխանողը չի ներկայացրել ֆինանսական հաշվետվության պատշաճ օրինակը:

Խնդրել է ոչ իրավաչափ ճանաչել «Օրինաց երկիր» Կուսակցության գործողությունը, որով օրենքով սահմանված ժամկետում սպառիչ եւ լրիվ պատասխան չի տրվել հայցվող տեղեկատվության վերաբերյալ եւ պարտավորեցնել 5-օրյա ժամկետում տրամադրել հայցված տեղեկատվությունը հետեւյալի մասին.

1. 2008թ. ֆինանսական հաշվետվության պատճեն, որը կպարունակի «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքի 28 հոդվածի 3-րդ մասով նախատեսված ողջ տեղեկատվությունը:
2. Օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից ավելի արժողությամբ նվիրատվության աղբյուրների մասին:

Ներկայացնելով դիմում հայցային պահանջները հստակեցնելու մասին՝ հայտնել է, որ օրենքով սահմանված հնգօրյա ժամկետի խախտումով 1-ին հարցի մասով ներկայացվել է «Օրինաց երկիր» Կուսակցության 2008թ. ֆինանսական հաշվետվությունը 2008թ.-ի հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածի համար, իսկ երկրորդ հարցի կապացությամբ որեւէ գրավոր պատասխան չի տրվել, դրանով իսկ խախտելով տեղեկատվություն ստանալու հայցվորի իրավունքը:

Խնդրել է պարտավորեցնել «Օրինաց երկիր» Կուսակցությանը 5-օրյա ժամկետում գրավոր պատասխանի ձեւով տեղեկատվություն տրամադրել օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից ավելի արժողությամբ նվիրատվության աղբյուրների մասին: Դատաքննությամբ պնդեց նաեւ առաջին պահանջը՝ համարելով ստացված տեղեկատվությունը ոչ լիարժեք:

Պատասխանողի դիրքորոշումը.

Ներկայացնելով հայցադիմումի պատասխան՝ պատասխանողի ներկայացուցիչը հայցի դեմ առարկել է եւ հայտնել, որ հայցվորը նշել է, որ նշված տեղեկատվությունը հայցելուց հետո ստացել է 5 էջից բաղկացած տեղեկատվություն՝ մուտք արված դրամական միջոցների չափի, անշարժ գույքի, ծախսված դրամական միջոցների եւ տարվա վերջում մնացորդի մասին: Սակայն հայցվորը հավանաբար չի նկատել, որ իրենց տրամադրված այդ, ինչպես ինքն է նշել՝ 5 էջից բաղկացած տեղեկատվությունը, ֆինանսահաշվապահական փաստաթուղթ է եւ հանդիսանում է «Օրինաց երկիր» կուսակցության 2008թ. ֆինանսական հաշվետվության պատճենը:

Կուսակցությունների մասին ՀՀ օրենքի 28 հոդվածի 6-րդ կետը հստակ նշել է, որ Կուսակցության ստացած՝ օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից ավելի արժողությամբ նվիրատվության աղբյուրը նշվում է կուսակցության ֆինանսական հաշվետվությունում, իսկ նույն հոդվածի 3-րդ կետը սահմանում է, որ հաշվառման եւ հաշվետվության /ներառյալ հաշվետվության ձեւերի/ կարգը որոշում է պետական լիազոր մարմինը:

ՀՀ կառավարության 2004 թվականի փետրվարի 5-ի «Լիազոր մարմին ճանաչելու մասին» ԹԻՎ 56-Ն որոշմամբ՝ պետական լիազոր մարմին ճանաչված ՀՀ արդարադատության նախարարի 31.03.2005թ թիվ 39-Ն հրամանով նախատեսված կարգն ու ձեւը նախատեսում է բլանկի համապատասխան սյունում նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից ավելի արժողությամբ նվիրատվության աղբյուրի նշումը միայն նման աղբյուրների առկայության դեպքում:

Կուսակցությունը ստանալով «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության հարցումը, եւ կուսակցության ստացած օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից ավելի արժողությամբ նվիրատվության աղբյուրների մասին տեղեկատվություն տրամադրելու համար ի պատասխան՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությանը տրամադրել է «Օրինաց երկիր» Կուսակցության ֆինանսական հաշվետվության պատշաճ ընդամենը 5 էջից բաղկացած, կնիքով եւ ստորագրությամբ հաստված պատճենը, որի բնօրինակը օրենքով սահմանված կարգով ներկայացվել է ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությանը: Հայտնել են, որ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությանը իրենց կողմից տրամադրված հաշվետվության պատճենը լրացված է ճիշտ եւ փաստորեն հայցվող տեղեկատվության լիարժեք եւ սպառիչ պատասխան է հանդիսացել: Այդ հաշվետվությունը կազմվել է լրացվել է ՀՀ կառավարության վերը նշված որոշման եւ ՀՀ արդարադատության նախարարի վերը նված կարգին եւ ձեւին համապատասխան եւ իր մեջ ներառում է ամբողջ ինֆորմացիան, որը հարցմամբ հայցել է հայցվոր կողմը, այսինքն՝ նաեւ պարունակում է տեղեկատվություն «Օրինաց երկիր» Կուսակցության ստացած՝ օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից ավելի արժողությամբ նվիրատվության աղբյուրների մասին, այսինքն՝ այդ-

պիսի աղբյուրների մասին ֆինանսական հաշվետվության բլանկում գրառում չի ներկայացվելու հանգամանքը վկայում է նման աղբյուրներ չունենալու մասին, ոչ թե հայցվորի ենթադրությամբ իբր վկայում է թերի լրացված հաշվետվության մասին:

Ներկայացնելով հայցային պահանջները հստակեցնելու դիմումի պատասխան հայտել են, որ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունը ստանալով ի պատասխան իր հարցմանը «Օրինաց երկիր» Կուսակցության 2008թ. ֆինանսական հաշվետվության պատշաճ օրինակը, ստացել է նաև տեղեկատվություն «Օրինաց երկիր» Կուսակցության ստացած՝ օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից ավելի արժողությամբ նվիրատվության աղբյուրների մասին:

Պնդելով հացադիմումի պատասխանում նշված փաստարկները՝ ավելացրել են նաև, որ ընդունելով հաշվետվությունը, որպես հայցվոր տեղեկատվության պատասխան եւ գտնելով, որ այն սպառիչ պատասխան չէ, ապա ինչու «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունը կրկնակի հարցմամբ չի ցանկացել ունենալ իր ենթադրությամբ առավել սպառիչ պատասխան, ինչպես նախատեսում է «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետը, այն մասին, որ ոչ հավաստի, ոչ իրավաչափ, կամ ոչ լրիվ տվյալներ պարունակող տեղեկություն տրամադրած մարմինը կամ կազմակերպությունը այդ տեղեկությունն ստացած անձի գրավոր հարցման հիման վրա պարտավոր է սույն օրենքով սահմանված կարգով անվճար տրամադրել ճշգրտված տվյալներով տեղեկություն:

Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը եւ այն, որ հայցվորի հարցումն ստանալուց հետո «Օրինաց երկիր» կուսակցությունը տրամադրելով նրան կուսակցության 2008թ ֆինանսական հաշվետվության պատճենը գործել է իրավաչափ եւ դրանով իսկ սպառիչ եւ լիարժեք պատասխան է տվել հայցվոր տեղեկատվության վերաբերյալ, ինչպես նաև, որ հայցվորը չի ապացուցում իր վկայակոչած փաստերը, ուստի խնդրել են հայցադիմումը մերժել անհիմն լինելու պատճառաբանությամբ:

Լսելով կողմերի ներկայացուցիչներին, հետազոտելով գործում առկա ապացույցները եւ գնահատելով դրանք՝ դատարանը գտնում է, որ հայցը ենթակա է մերժման հետեւյալ պատճառաբանությամբ:

Դատաքննությամբ հաստատված փաստերն են.

Դատաքննությամբ հիմնավորվել է, որ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունը 21.04.2009 թվականին «Օրինաց երկիր» կուսակցության նախագահ Արթուր Բաղդասարյանին հետեւյալ բովանդակությամբ տեղեկատվություն ստանալու հարցում է ներկայացրել, խնդրել են տրամադրել հետեւյալ տեղեկատվությունները.

1. «Օրինաց երկիր» Կուսակցության 2008թ ֆինանսական հաշվետվության պատճեն:

2. «Օրինաց երկիր» Կուսակցության ստացած՝ օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից ավելի արժողությամբ նվիրատվության աղբյուրների մասին տեղեկատվություն:

«Օրինաց երկիր» Կուսակցությունը ստանալով «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության հարցումը, ի պատասխան՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությանը տրամադրել է «Օրինաց երկիր» Կուսակցության ֆինանսական հաշվետվության պատշաճ՝ ընդամենը 5 էջից բաղկացած, կնիքով եւ ստորագրությամբ հաստատված պատճենը, որի բնօրինակը օրենքով սահմանված կարգով ներկայացվել է ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությանը:

Ի պատասխան «Օրինաց երկիր» կուսակցության 28.07.2009 թվականի գրությանը՝ ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունը իր 28.07.2009թ գրությամբ հայտնել է, որ 25.03.2009 թվականին ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կենտրոնական մարմին է ներկայացվել «Օրինաց երկիր» կուսակցության 2008թ. ֆինանսական հաշվետվությունը, որը համապատասխանում է «Կուսակցությունների կողմից ՀՀ արդարադատության նախարարություն ֆինանսական հաշվետվությունների ներկայացնելու կարգը հաստատելու մասին» ՀՀ արդարադատության նախարարի 2005թ. մարտի 31-ի թիվ 39-Ն հրամանով հաստատված ձեւին:

Ինչ վերաբերում է Ձեր կողմից այն հարցմանը, թե սահմանված ֆինանսական հաշվետվության բլանկի համապատասխան բաժնում՝ օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից ավելի արժողությամբ նվիրատվության աղբյուրների մասին նշում կատարելը պարտադիր է թե ոչ, ապա նշել են, որ նշում կատարելը պարտադիր է միայն նման աղբյուրների առկայության դեպքում: Հայտնվել է, որ Ձեր կողմից ներկայացված հաշվետվությունից հետեւում է, որ նման աղբյուրներ կուսակցությունը չունի: Ի պատասխան դատարանի 04.09.2009թ գրության ուղարկվել է «Օրինաց երկիր» կուսակցության 25.03.2009 թվականին ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն ներկայացված 2008թ.-ի տարեկան ֆինանսական հաշվետվությունը, որը դատաքննությամբ տրամադրվել է հայցվորի ներկայացուցչին:

Դատարանի իրավական վերլուծությունները.

«Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքի 28 հոդվածի 6-րդ կետը հստակ նշել է, որ Կուսակցության ստացած՝ օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից ավելի արժողությամբ նվիրատվության աղբյուրը նշվում է կուսակցության ֆինանսական հաշվետվությունում, իսկ նույն հոդվածի 3-րդ կետը սահմանում է, որ հաշվառման եւ հաշվետվության /ներառյալ հաշվետվության ձեւերի/ կարգը որոշում է պետական լիազոր մարմինը:

ՀՀ կառավարության 2004 թվականի փետրվարի 5-ի «Լիազոր մարմին ճանաչելու մասին» ԹԻՎ 56-Ն որոշմամբ պետական լիազոր մարմին ճանաչված ՀՀ արդարադատության նախարարի 31.03.2005թ թիվ 39-Ն հրամանով նախատեսված կարգն ու ձևերը նախատեսում է բլանկի համապատասխան սյունում նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից ավելի արժողությամբ նվիրատվության աղբյուրի նշումը միայն նման աղբյուրների առկայության դեպքում:

Հայցվորի ներկայացուցչի այն պատճառաբանությունը, որ 5 էջից բաղկացած իրենց ուղարկված հաշվետվությունը թերի է, լիարժեք չի, քանի որ նշում չկա այն ներկայացնելու տարվա, ամսի եւ ամսաթվի մասին, հիմնավոր չէ, այն իրականությանը չի համապատասխանում, քանի որ նրան տրամադրվել է նաեւ ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից դատարանին ուղարկված՝ «Օրինաց երկիր» կուսակցության 25.03.2009 թվականին գործակալություն ներկայացրած 2008թ. ֆինանսական հաշվետվության բնօրինակը ուսումնասիրելու, ինչպես նաեւ դրանց լուսապատճենները: Բացի այդ ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունից ստացված հաշվետվությունը համեմատելով ՀՀ արդարադատության նախարարի 31.03.2005 թվականի թիվ 39 հրամանով հաստատված «Կուսակցությունների կողմից ՀՀ արդարադատության նախարարություն ֆինանսական հաշվետվություններ ներկայացնելու» կարգի հավելված 2-ի հետ՝ պարզ երեւում է, որ այն լրացվել է պատշաճ, այդ ձեւին համապատասխան:

Սյուս պատճառաբանությունը, որ իբր իրենք ոչ թե միայն 2008 թվականի տեղեկատվությունն են պահանջել՝ կուսակցության օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից ավելի արժողությամբ նվիրատվության աղբյուրների մասին, այլ ընդհանրապես հարցը վերաբերել է մի քանի տարիների, ընդհուպ կուսակցության ստեղծման օրվանից սկսած, նույնպես հիմնավոր չէ, քանի որ եթե առաջին հարցում հստակ նշվել է, որ պահանջվում են 2008թ ֆինանսական հաշվետվությունը, ապա 2-րդ հարցում նման նշում չկա եւ որպես առաջին հարցի տրամաբանական շարունակություն հասկացվում է, որ երկրորդ հարցն էլ է վերաբերվում 2008 թվականին, որի մասին տվյալները նշված են հաշվետվությունում:

Բացի այդ, եթե հայցվորը իրեն ուղարկված տեղեկատվությունը համարել է ոչ հավաստի, կամ ոչ լրիվ, ինչպես պնդում է դատաքննությամբ, ապա կարող էր «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 10 հոդվածի 4-րդ կետի համաձայն գրավոր դիմումով այդ մասին հայտնել պատասխանողին, իսկ եթե վերջինս նշված օրենքով սահմանված կարգով անվճար չտրամադրեր ճշգրտված տվյալներով տեղեկատվություն, ապա այդ դեպքում խախտված կլիներ օրենքի պահանջը:

Պատասխանողին տրամադրված հաշվետվության պատճենը լրացված է ճիշտ եւ փաստորեն հայցվող տեղեկատվության լիարժեք եւ սպառիչ պատասխան է հանդիսացել: Այդ հաշվետվությունը կազմվել է լրացվել է ՀՀ կառավարության վերը նշված որոշման եւ ՀՀ արդարադատության նախարարի

վերը նշված կարգին եւ ձեւին համապատասխան եւ իր մեջ ներառում է ամբողջ ինֆորմացիան: Նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից ավելի արժողությամբ նվիրատվության աղբյուրների մասին ֆինանսական հաշվետվության բլանկում գրառում չլինելու հանգամանքը վկայում է նման աղբյուրներ չունենալու մասին, ոչ թե թերի լրացված հաշվետվության մասին:

Այն հանգամանքը, որ «Օրինաց երկիր» կուսակցության 2008թ ֆինանսական հաշվետվությունը համապատասխանում է «Կուսակցությունների կողմից ՀՀ արդարադատության նախարարություն ֆինանսական հաշվետվությունների ներկայացնելու կարգը հաստատելու մասին» ՀՀ արդարադատության նախարարի 2005թ մարտի 31-ի թիվ 39-Ն հրամանով հաստատված ձեւին, հաստատվում է նաեւ ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության 28.07.2009թ գրությամբ :

Առաջնորդվելով վերոգրյալ պատճառաբանությամբ եւ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 130-132 -րդ հոդվածներով, դատարանը

Վ Ճ Ո Ւ Շ Ց

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության հայցն ընդդեմ «Օրինաց երկիր» կուսակցության՝ տեղեկատվություն տրամադրել պարտադրելու պահանջի մասին, մերժել:

Պետական տուրքի հարցը համարել լուծված:

Սույն դատական ակտը կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ՝

Գ. ԿԱՐԱԽԱՆՅԱՆ:

Գործ 13.

**Ինֆորմացիայի ազատության
կենսրոնն
ընդդեմ
Տայասանի Աշխատանքային
սոցիալիստական կուսակցության**

Գործի համառոտ նկարագրությունը

Ինֆորմացիայի ազատության կենտրոնը 21.04.2009թ-ին Հայաստանի Աշխատավորական Սոցիալիստական Կուսակցության նախագահ Մովսես Շահվերդյանին տեղեկատվություն ստանալու հարցում է ուղարկել՝ խնդրելով տրամադրել հետևյալ տեղեկությունները.

1. Հայաստանի Աշխատավորական Սոցիալիստական Կուսակցության 2008թ. ֆինանսական հաշվետվության պատճեն:
2. Հայաստանի Աշխատավորական Սոցիալիստական Կուսակցության ստացած՝ օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից ավելի արժողությամբ նվիրատվության աղբյուրների մասին տեղեկատվություն:

Հարցումը, սակայն, մնացել է անպատասխան: ԻԱԿ-ը 09.07.2009թ. ՀՀ Կենտրոն եւ Լորք Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարան տեղեկատվություն տրամադրել պարտադրելու պահանջի մասին հայց է ներկայացրել: Մի քանի ամիս շարունակ դատական նիստի օրը չէր նշանակվում, քանի որ դատարանը չէր կարողանում ճշտել ՀԱՍԿ-ի հասցեն եւ պատշաճ կերպով ծանուցել /ծանուցագիր ուղարկել/ դատական նիստի օրվա մասին:

2010թ.-ի հունվարի 19-ին Կենտրոն եւ Լորք Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում տեղի ունեցավ Ինֆորմացիայի ազատության կենտրոնն ընդդեմ Հայաստանի աշխատավորական սոցիալիստական կուսակցության

դատական գործով հերթական դատական նիստը:

Դատարանին ի վերջո հաջողվել էր պարզել պատասխանողի հասցեն եւ պատշաճ կերպով ծանուցել դատական նիստի մասին: Սակայն Հայաստանի աշխատավորական սոցիալիստական կուսակցությունը չէր ներկայացել դատարան: Դատարանը որոշեց նիստն անցկացնել պատասխանող կողմի բացակայությամբ: ԻԱԿ-ի ներկայացուցիչ Կարեն Մեծլումյանը ներկայացրեց հայցը: Առարկություններ, բնականաբար, չեղան:

ԻԱԿ-ն ընդդեմ ՀԱՍԿ-ի դատական նիստերը տեղի չէին ունենում, քանի որ ՀԱՍԿ-ն այդպես էլ դատարան չէր ներկայանում, եւ դատարանը ստիպված էր լինում դատական նիստը հետաձգել:

2010թ. մարտի 18-ին Երեւան քաղաքի Կենտրոն եւ Լորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը՝ դատավոր Էդիկ Ավետիսյանի նախագահությամբ, լիովին բավարարեց ԻԱԿ-ի հայցն ընդդեմ Հայաստանի Աշխատավորական սոցիալիստական կուսակցության:

Դատարանը ՀԱՍԿ-ին պարտավորեցրեց 5-օրյա ժամկետում տրամադրել ԻԱԿ-ի պահանջած ողջ տեղեկատվությունը, այն է՝ ՀԱՍԿ-ի 2008թ. ֆինանսական հաշվետվության պատճեն եւ ՀԱՍԿ-ի ստացած՝ օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից ավելի արժողությամբ նվիրատվության աղբյուրների մասին տեղեկատվություն:

Գործի նյութերը

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՅԿ

21.04.2009թ.

102-ի 7

**Հայաստանի Աշխատավորական Սոցիալիստական
Կուսակցության նախագահ պարոն Մովսես Շահվերդյանին**

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Շահվերդյան,

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 եւ 27.1 հոդվածների, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի եւ «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքի 28 հոդվածի դրույթներով՝ խնդրում եմք տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. Հայաստանի Աշխատավորական Սոցիալիստական Կուսակցության 2008թ. ֆինանսական հաշվետվության պատճեն:
2. Հայաստանի Աշխատավորական Սոցիալիստական Կուսակցության ստացած՝ օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից ավելի արժողությամբ նվիրատվության աղբյուրների մասին տեղեկատվություն:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում եմք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Կանխավ շնորհակալ եմ:

Հանրային կապերի պատասխանատու՝ Անահիտ Քոչարյան:

ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ ՂԱՏԱՐԱՆԻՆ

Հայցվոր՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն»
հասարակական կազմակերպություն
Նախագահ՝ Շուշան Դոյրոյան
Ներկայացուցիչ՝ Կարեն Մեծլումյան
Պատասխանող՝ Հայաստանի Աշխատավորական
Սոցիալիստական Կուսակցության
Հասցե՝ Երեւան, Պարոնյան 18, բն. 8

26.06.2009թ.

Հ Ա Յ Ց Ա Դ Ի Մ ՈՒ Մ

Գործողության կատարման հայց

Տեղեկատվություն տրամադրել պարտադրելու պահանջի մասին

1. Փաստերը որոնց վրա հիմնված է հայցապահանջը.

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունը 21.04.2009թ-ին Հայաստանի Աշխատավորական Սոցիալիստական Կուսակցության նախագահ Մովսես Շահվերդյանին հետեւյալ բովանդակությամբ տեղեկատվություն ստանալու հարցում է ներկայացրել. «Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 եւ 27.1 հոդվածների, «Տեղեկատվության ազատության մասինՄՆ ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի եւ «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքի 28 հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. Հայաստանի Աշխատավորական Սոցիալիստական Կուսակցության 2008թ. ֆինանսական հաշվետվության պատճեն:
2. Հայաստանի Աշխատավորական Սոցիալիստական Կուսակցության ստացած՝ օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից ավելի արժողությամբ նվիրատվության աղբյուրների մասին տեղեկատվություն:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում եմ տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում»:

Նշված փաստը հաստատվում է հարցման եւ փոստային անդորրագրի օրինակներով:

Պատասխանողը գրավոր հարցմանը չի պատասխանել եւ պահանջվող տեղե-

կատվությունը չի տրամադրել: Նշված փաստը հաստատվում է պատասխանի բացակայությամբ:

2. Հայցապահանջի իրավական հիմնավորումը

ՀՀ Սահմանադրության՝

- 27 հոդվածի 2-րդ պարբերության համաձայն. «Յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք, ներառյալ տեղեկություններ եւ գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը, տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից».
- 27.1 հոդվածի համաձայն. «Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական կամ հասարակական շահերի պաշտպանության նկատառումներով իրավասու պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններին եւ պաշտոնատար անձանց դիմումներ կամ առաջարկություններ ներկայացնելու եւ ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունք»:

Սահմանադրությամբ երաշխավորված վերը նշված իրավունքներն առարկայանում են նաեւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում, որի 6 հոդվածի 1-ին մասի համաձայն.

«Յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը եւ (կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկատվություն տնօրինողին եւ ստանալու այդ տեղեկությունը»:

Նույն օրենքի 9 հոդվածի 7-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝

եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը տրամադրելու համար անհրաժեշտ է կատարել լրացուցիչ աշխատանք, ապա այդ տեղեկությունը դիմողին է տրվում դիմումն ստանալուց հետո՝ 30-օրյա ժամկետում, որի մասին հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում, գրավոր տեղեկացվում է դիմողին՝ նշելով հետաձգման պատճառները եւ տեղեկությունը տրամադրելու վերջնական ժամկետը:

«Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքի 28 հոդվածի համաձայն.

- «1. Կուսակցությունները ֆինանսական ու հաշվապահական հաշվետվություններ են ներկայացնում իրավաբանական անձանց համար օրենսդրությամբ սահմանված կարգով եւ ժամկետներում:
2. Կուսակցությունը պարտավոր է յուրաքանչյուր տարի՝ հաշվետու տարվան հաջորդող մարտի 25-ից ոչ ուշ, պետական լիազոր մարմին ներկայացնել ֆինանսական հաշվետվություն՝ հաշվետու տարվա ընթացքում կուսակցության ստացած եւ ծախսած միջոցների մասին:
3. Հաշվետու տարվա ընթացքում կուսակցության ստացած եւ ծախսած միջոցների մասին հաշվետվությունը պետք է տվյալներ պարունակի կուսակցության հաշվում մուտք արված միջոցների աղբյուրների եւ ծավալի, այդ միջոցների ծախսման, ինչպես նաեւ ունեցած գույքի մասին՝ նշելով դրա արժեքը: Հաշվառման եւ հաշվետվության (ներառյալ՝ հաշվետվության

ձեւերի) կարգը որոշում է պետական լիազոր մարմինը: Կուսակցության կողմից ընտրարշավների նախապատրաստման եւ անցկացման համար ծախսված միջոցների հաշվառումը կատարվում է առանձին:

4. Կուսակցությունը, հաշվետու տարվան հաջորդող մարտի 25-ից ոչ ուշ, գանգվածային լրատվության միջոցներում հրապարակում է իր ֆինանսական հաշվետվությունը:
5. Կուսակցության ֆինանսական գործունեության վերահսկողությունն իրականացվում է օրենսդրությամբ սահմանված կարգով:
6. Կուսակցության ստացած՝ օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից ավելի արժողությամբ նվիրատվության աղբյուրը նշվում է կուսակցության ֆինանսական հաշվետվությունում»:

Ինչպես տեսնում ենք, պահանջվող տեղեկատվությունը գաղտնի չի եղել, սակայն, ի խախտումն Սահմանադրությամբ ու օրենքներով երաշխավորված հայցվորի իրավունքների ու պատասխանողի պարտականության, պատասխանողը չի տրամադրել 21.04.2009թ. գրավոր հարցմամբ պահանջվող տեղեկատվությունը, այն դեպքում, երբ պարտավոր էր տրամադրել:

Վերոգրյալից ելնելով եւ ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 11 գլխի պահանջներով՝

Խնդրում եմ՝

Պարտավորեցնել Հայաստանի Աշխատավորական Սոցիալիստական Կուսակցությանը հնգօրյա ժամկետում տրամադրել հայցված տեղեկատվությունը հետեւյալի մասին.

1. 2008թ. ֆինանսական հաշվետվության պատճեն:
2. Օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից ավելի արժողությամբ նվիրատվության աղբյուրների մասին տեղեկատվություն:

Որպես հետեւանք խնդրում ենք լուծել պետական տուրքի հարցը:

Կից ներկայացվում են՝

1. Պետական տուրքի վճարման անդորրագիր,
2. հայցադիմումը պատասխանողներին ուղարկելու մասին ապացույց,
3. լիազորագիր,
4. հարցման օրինակը,
5. փոստային անդորրագիր:

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն»

ՀԿ Նախագահ՝

Լիազոր ներկայացուցիչ՝

Շուշան Դոյրոյան

Կարեն Մեծլումյան:

գործ ԵԿԴ 1391/02/09թ.

Վ Ճ Ի Ռ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

18.03.2010թվ.

ք.Երեւան

Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը
Նախագահությամբ՝ դատավոր Էդիկ Ավետիսյանի
Քարտուղարությամբ՝ Աննա Հակոբյանի
Մասնակությամբ՝
Հայցվորի ներկայացուցիչ՝ Կարեն Մեժլումյանի

Դատարանում, դռնբաց դատական նիստում քննելով քաղաքացիական գործն ըստ հայցի «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության ընդդեմ Հայաստանի Աշխատավորական Սոցիալիստական կուսակցության՝ տեղեկատվություն տրամադրելուն պարտավորեցնելու պահանջի մասին

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը.

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության ներկայացուցիչ Կարեն Մեժլումյանը հայցադիմում է ներկայացրել դատարան ընդդեմ պատասխանող Հայաստանի Աշխատավորական Սոցիալիստական կուսակցության՝ վերջինիս անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու եւ տեղեկատվություն տրամադրելուն պարտավորեցնելու պահանջի մասին:

13.07.2009թվականի որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է:

Նշված որոշման դեմ բերվել է վերաքննիչ բողոք:

Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քաղաքացիական դատարանի 18.08.2009 թվականի որոշմամբ հայցադիմումը վերադարձնելու մասին 13.07.2009 թվականի որոշումը վերացվել է:

2009 թվականի սեպտեմբերի 12-ի որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ: Գործի վարույթն իրականացվել է նախապատրաստական փուլով: Հայցադիմումին պատասխան չի ներկայացվել:

02.02.2010թ. որոշմամբ գործը նշանակվել է դատաքննության:

04.03.2010թ. գործի քննությունը հայտարարվել է ավարտված:

Վճռի հրապարակման օր է հայտարարվել 18.03.2010թ., ժամը 15:00-ին:

2. Հայցվորի դիրքորոշումը.

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունը 21.04.2009թ. Հայաստանի Աշխատավորական Սոցիալիստական կուսակցության նախագահ Մովսես Շահվերդյանին հետեյալ բովանդակությամբ տեղեկատվություն ստանալու հարցում է ներկայացրել. «Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 27 եւ 27.1 հոդվածների, «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի եւ «Կուսակցությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 28 հոդվածի դրույթներով՝ խնդրելով տրամադրել հետեյալ տեղեկատվությունները.

1. Հայաստանի Աշխատավորական Սոցիալիստական Կուսակցության 2008թ. ֆինանսական հաշվետվության պատճեն:
2. Հայաստանի Աշխատավորական Սոցիալիստական Կուսակցության ստացած՝ օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից ավելի արժողությամբ նվիրատվության աղբյուրների մասին տեղեկատվություն:

«Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում, ուստի խնդրում է տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Նշված փաստը հաստատվում է հարցման եւ փոստային անդորրագրի օրինակներով:

Պատասխանողը գրավոր հարցմանը չի պատասխանել եւ պահանջվող տեղեկատվությունը չի տրամադրել: Նշված փաստը հաստատվում է պատասխանի բացակայությամբ:

Հայցապահանջի իրավական հիմնավորումը.

Համաձայն **Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 27 հոդվածի 2-րդ պարբերության**՝ յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք, ներառյալ՝ տեղեկություններ եւ գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը, տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից:

27.1 հոդվածի՝ յուրաքանչյուր ոք ունի իր անձնական կամ հասարակական շահերի պաշտպանության նկատառումներով իրավասու պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններին եւ պաշտոնատար անձանց դիմումներ կամ առաջարկություններ ներկայացնելու եւ ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունք:

Սահմանադրությամբ երաշխավորված վերը նշված իրավունքներն առարկայանում են նաեւ «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում, որի 1-ին հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն օրենքի գործողությունը տարածվում է պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունների, ինչպես նաեւ հանրային նշանակության կազմակերպությունների եւ դրանց պաշտոնատար անձանց վրա:

Նույն օրենքի 6 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը եւ (կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկատվությունը տնօրինողին եւ ստանալու այդ տեղեկությունը:

Նույն օրենքի 9 հոդվածի 7-րդ մասի 1-ին եւ 2-րդ կետերի համաձայն՝ հայցվող տեղեկատվությունը պետք է տրամադրվի 5-օրյա ժամկետում, իսկ 3-րդ կետի համաձայն՝ եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը տրամադրելու համար անհրաժեշտ է կատարել լրացուցիչ աշխատանք, ապա այդ տեղեկությունը դիմողին է տրվում դիմումն ստանալուց հետո՝ 30-օրյա ժամկետում, որի մասին հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում գրավոր տեղեկացվում է դիմողին՝ նշելով հետաձգման պատճառները եւ տեղեկությունը տրամադրելու վերջնական ժամկետը:

«Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքի 28 հոդվածի համաձայն.

- «1. Կուսակցությունները ֆինանսական ու հաշվապահական հաշվետվություններ են ներկայացնում իրավաբանական անձանց համար օրենսդրությամբ սահմանված կարգով եւ ժամկետներում:*
- 2. Կուսակցությունը պարտավոր է յուրաքանչյուր տարի՝ հաշվետու տարվան հաջորդող մարտի 25-ից ոչ ուշ, պետական լիազոր մարմին ներկայացնել ֆինանսական հաշվետվություն՝ հաշվետու տարվա ընթացքում կուսակցության ստացած եւ ծախսած միջոցների մասին:*
- 3. Հաշվետու տարվա ընթացքում կուսակցության ստացած եւ ծախսած միջոցների մասին հաշվետվությունը պետք է սվյալներ պարունակի կուսակցության հաշվում մուտք արված միջոցների աղբյուրների եւ ծավալի, այդ միջոցների ծախսման, ինչպես նաեւ ունեցած գույքի մասին՝ նշելով դրա արժեքը: Հաշվառման եւ հաշվետվության (ներառյալ՝ հաշվետվության ձեւերի) կարգը որոշում է պետական լիազոր մարմինը: Կուսակցության կողմից ընտրարշավների նախապատրաստման եւ անցկացման համար ծախսված միջոցների հաշվառումը կատարվում է առանձին:*
- 4. Կուսակցությունը, հաշվետու տարվան հաջորդող մարտի 25-ից ոչ ուշ, զանգվածային լրատվության միջոցներում հրապարակում է իր ֆինանսական հաշվետվությունը:*
- 5. Կուսակցության ֆինանսական գործունեության վերահսկողությունն իրականացվում է օրենսդրությամբ սահմանված կարգով:*

6. *Կուսակցության ստացած՝ օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից ավելի արժողությամբ նվիրատվության աղբյուրը նշվում է կուսակցության ֆինանսական հաշվետվությունում»:*

Ինչպես երեւում է, պահանջվող տեղեկատվությունը գաղտնի չի եղել, սակայն ի խախտումն Սահմանադրությամբ ու օրենքներով երաշխավորված հայցվորի իրավունքների ու պատասխանողի պարտականության, պատասխանող չի տրամադրել 21.04.2009թ. գրավոր հարցմամբ պահանջվող տեղեկատվությունը, այն դեպքում, երբ պարտավոր էր տրամադրել:

Հայցվորը դատարանից խնդրել էր ոչ իրավաչափ ճանաչել Հայաստանի Աշխատավորական Սոցիալիստական կուսակցության անգործությունը, որով օրենքով սահմանված առավելագույն ժամկետում սպառիչ էլ լրիվ պատասխան չի տրվել հայցվող տեղեկատվության վերաբերյալ, եւ պարտավորեցնել հնգօրյա ժամկետում տրամադրել հարցված տեղեկատվությունը 2008թ. ֆինանսական հաշվետվության պատճենի ձեւով եւ օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից ավելի արժողության նվիրատվության աղբյուրների մասին եւ որպես հետեւանք լուծել պետական տուրքի հարցը:

Հայցվորի ներկայացուցիչը հրաժարվեց անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու պահանջից, մնացած մասով հայցը պնդեց:

3. Պատասխանողի դիրքորոշումը.

Պատասխանող կողմը պատշաճ կարգով ծանուցվել է դատական նիստի օրվա եւ վայրի մասին, չի ներկայացրել դատական նիստին, հայցադիմումի պատասխան չի ներկայացրել, իսկ համաձայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 95 հոդվածի 5-րդ մասի պատասխան չներկայացնելը դատարանը կարող է գնահատել որպես պատասխանողի կողմից հայցվորի վկայակոչած փաստերի ընդունում:

4. Գործի փաստերը.

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունը 21.04.2009թ. Հայաստանի Աշխատավորական Սոցիալիստական կուսակցության նախագահ Մովսես Շահվերդյանին, համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 27 եւ 27.1 հոդվածների, «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի եւ «Կուսակցությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 28 հոդվածի դրույթների, տեղեկատվություն ստանալու հարցում է ներկայացրել՝ խնդրելով տրամադրել հետեւյալ տեղեկատվությունները.

1. Հայաստանի Աշխատավորական Սոցիալիստական Կուսակցության 2008թ. ֆինանսական հաշվետվության պատճեն:
2. Հայաստանի Աշխատավորական Սոցիալիստական Կուսակցության ստացած՝ օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից ավելի արժողությամբ նվիրատվության աղբյուրները:

տիկից ավելի արժողությամբ նվիրատվության աղբյուրների մասին տեղեկատվություն:

Պատասխանողը գրավոր հարցմանը չի պատասխանել եւ պահանջվող տեղեկատվությունը չի տրամադրել:

5. Դատարանի պատճառաբանությունները եւ եզրահանգումները.

Դատարանը քննելով հայցը, գնահատելով ապացույցները՝ գտնում է, որ հայցը ենթակա է բավարարման հետեւյալ պատճառաբանությամբ՝

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունը Հայաստանի Աշխատավորական սոցիալիստական կուսակցության նախագահ Մովսես Շահվերդյանին, համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 27 եւ 27.1 հոդվածների, «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի եւ «Կուսակցությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 28 հոդվածի դրույթների, 21.04.2009թ. տեղեկատվություն ստանալու հարցում է ներկայացրել՝ խնդրելով տրամադրել հետեւյալ տեղեկատվությունը.

1. Հայաստանի Աշխատավորական Սոցիալիստական Կուսակցության 2008թ. ֆինանսական հաշվետվության պատճեն:
2. Հայաստանի Աշխատավորական Սոցիալիստական Կուսակցության ստացած՝ օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից ավելի արժողությամբ նվիրատվության աղբյուրների մասին տեղեկատվություն:

Պատասխանողը գրավոր հարցմանը չի պատասխանել եւ պահանջվող տեղեկատվությունը չի տրամադրել:

Հայցվորը դատարանից խնդրել է պարտավորեցնել պատասխանողին հնգօրյա ժամկետում տրամադրել հայցված տեղեկատվությունը:

Համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 27 հոդվածի 2-րդ պարբերության՝ յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք, ներառյալ՝ տեղեկություններ եւ գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը, տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից:

27.1 հոդվածի՝ յուրաքանչյուր ոք ունի իր անձնական կամ հասարակական շահերի պաշտպանության նկատառումներով իրավասու պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններին եւ պաշտոնատար անձանց դիմումներ կամ առաջարկություններ ներկայացնելու եւ ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունք:

Սահմանադրությամբ երաշխավորված վերը նշված իրավունքներն առարկայանում են նաեւ «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում:

Համաձայն «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի՝ սույն օրենքի գործողությունը տարածվում է պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունների, ինչպես նաեւ հանրային նշանակության կազմակերպությունների եւ դրանց պաշտոնատար անձանց վրա:

6 հոդվածի 1-ին մասի՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությունը եւ (կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկատվությունը տնօրինողին եւ ստանալու այդ տեղեկությունը:

9 հոդվածի 7-րդ մասի 1-ին եւ 2-րդ կետերի՝ հայցվող տեղեկատվությունը պետք է տրամադրվի 5-օրյա ժամկետում, իսկ 3-րդ կետի համաձայն՝ եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը տրամադրելու համար անհրաժեշտ է կատարել լրացուցիչ աշխատանք, ապա այդ տեղեկությունը դիմողին է տրվում դիմումն ստանալուց հետո՝ 30-օրյա ժամկետում, որի մասին հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում գրավոր տեղեկացվում է դիմողին՝ նշելով հետաձգման պատճառները եւ տեղեկությունը տրամադրելու վերջնական ժամկետը:

«Կուսակցությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 28 հոդվածի համաձայն՝

1. Կուսակցությունները ֆինանսական ու հաշվապահական հաշվետվություններ են ներկայացնում իրավաբանական անձանց համար օրենսդրությամբ սահմանված կարգով եւ ժամկետներում:
2. Կուսակցությունը պարտավոր է յուրաքանչյուր տարի՝ հաշվետու տարվան հաջորդող մարտի 25-ից ոչ ուշ, պետական լիազոր մարմին ներկայացնել ֆինանսական հաշվետվություն՝ հաշվետու տարվա ընթացքում կուսակցության ստացած եւ ծախսած միջոցների մասին:
3. Հաշվետու տարվա ընթացքում կուսակցության ստացած եւ ծախսած միջոցների մասին հաշվետվությունը պետք է տվյալներ պարունակի կուսակցության հաշվում մուտք արված միջոցների աղբյուրների եւ ծավալի, այդ միջոցների ծախսման, ինչպես նաեւ ունեցած գույքի մասին՝ նշելով դրա արժեքը: Հաշվառման եւ հաշվետվության (ներառյալ՝ հաշվետվության ձեւերի) կարգը որոշում է պետական լիազոր մարմինը:

Կուսակցության կողմից ընտրարշավների նախապատրաստման անցկացման համար ծախսված միջոցների հաշվառումը կատարվում է առանձին:

4. Կուսակցությունը, հաշվետու տարվան հաջորդող մարտի 25-ից ոչ ուշ, գանգվածային լրատվության միջոցներում հրապարակում է իր ֆինանսական հաշվետվությունը:
5. Կուսակցության ֆինանսական գործունեության վերահսկողությունն իրականացվում է օրենսդրությամբ սահմանված կարգով:

6. Կուսակցության ստացած՝ օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից ավելի արժողությամբ նվիրատվության աղբյուրը նշվում է կուսակցության ֆինանսական հաշվետվությունում:

Դատարանը դատաքնությամբ պարզեց, որ պահանջվող տեղեկատվությունը գաղտնի չի եղել եւ պատասխանողը, խախտելով Սահմանադրությամբ ու օրենքներով երաշխավորված հայցվորի իրավունքները, 21.04.2009թ. գրավոր հարցմամբ պահանջվող տեղեկատվությունը չի տրամադրել:

Համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48 հոդվածի՝

1. *Գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը:*
2. *Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող ապացուցման ենթակա փաստերը որոշում է դատարանը՝ գործին մասնակցող անձանց պահանջների եւ առարկությունների հիման վրա:*

53 հոդվածի՝

դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ եւ օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

Վերոգրյալի հիման վրա եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 130-132, 140-1401 հոդվածներով՝ դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

1. **«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության հայցը քավարարել՝**

պարտավորեցնել պատասխանող Հայաստանի Աշխատավորական Սոցիալիստական կուսակցությանը հնգօրյա ժամկետում հայցվորին տրամադրել.

1. Հայաստանի Աշխատավորական Սոցիալիստական Կուսակցության 2008թ. ֆինանսական հաշվետվության պատճեն:
2. Հայաստանի Աշխատավորական Սոցիալիստական Կուսակցության ստացած՝ օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից ավելի արժողությամբ նվիրատվության աղբյուրների մասին տեղեկատվություն:

Միաժամանակ պատասխանողից հօգուտ հայցվորի բռնագանձել նաեւ նախապես վճարված 4000 դրամի չափով պետական տուրքը

2. Սույն վճիռը կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակման պահից մեկ ամսյա ժամկետում եւ այն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո:

Սույն վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո այն կամովին չկատարելու դեպքում դա կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

ԴԱՏԱԿՈՐ

ԷԴԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ:

Գործ 14.

**Ինֆորմացիայի ազատության
կենսրոնն
ընդդեմ**

**«Տեխնիկական անվտանգության
ազգային կենսրոն» ՊՈԱԿ-ի**

Գործի համառոտ նկարագրությունը

Ինֆորմացիայի ազատության կենտրոնը 2009թ. սեպտեմբերի 17-ին տեղեկություն ստանալու հարցում է ուղարկել «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն Աշոտ Պետրոսյանին՝ խնդրելով տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. Մինչեւ սույն թվականի օգոստոսի 1-ը ՊՈԱԿ-ի ռեեստրում փորձաքննություն իրականացնող քանի՞ մասնավոր ընկերություն է գրանցված եւ այդ ընկերություններն ու՞մ անունով են գրանցված: Նշեք հավատարմագիր ստացած ընկերությունների անունները:
2. Տրամադրեք նաեւ ՊՈԱԿ-ի աշխատողների 2008 եւ 2009 թվականների հաստիքացուցակներն ու նույն ժամանակահատվածի աշխատողների աշխատավարձերի չափը հաստատող ցուցակը:

ՊՈԱԿ-ից ստացված կես էջանոց պատասխան գրության մեջ նշված է. «ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարի 04.08.2009թ-ի թիվ 99-Ա հրամանի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության կառուցվածքային եւ առանձնացված ստորաբաժանումների կամ նրանց կողմից իրականացվող գործառնությունների վերաբերյալ տեղեկատվությունը տրվում է ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության մամուլի ծառայության միջոցով:

Վերոգրյալի հիման վրա առաջարկում եմ տեղեկատվության ստացման նպատակով Ձեր հարցումն ուղղել ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության մամուլի ծառայությանը»:

Այս գրությամբ, փաստորեն, պատասխան չի տրվել ԻԱԿ-ի հարցմանը: 2009թ.-ի սեպտեմբերի 29-ին Ինֆորմացիայի ազատության կենտրոնն ընդդեմ «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի տեղեկատվություն տրամադրել պարտավորեցնելու եւ վարչական պատասխանատվության ենթարկելու մասին վարչական հայց է ներկայացրել դատարան:

2010թ.-ի հունվարի 14-ին Կենտրոնն եւ Նորք Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում դատավոր Գայանե Կարախանյանի նախագահությամբ տեղի ունեցավ Ինֆորմացիայի ազատության կենտրոնն ընդդեմ «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի դատական գործի դատաքննությունը:

Ինֆորմացիայի ազատության կենտրոնը պնդեց հայցը, իսկ պատասխանող կողմն էլ շարունակեց առարկել ԻԱԿ-ի պահանջների դեմ: «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի ներկայացուցիչը դատաքննության ժամանակ պնդեց ՊՈԱԿ-ի մերժման օրինականությունը (այն է՝ ԻԱԿ խնդրած տեղեկությունները պետք է ստանալ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության մամուլի ծառայությունից)՝ որպես հիմք նշելով ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարի 04.08.2009թ-ի թիվ 99-Ա հրամանը: Սակայն, ինչպես պարզվեց դատաքննության ժամանակ, վերոնշյալ հրամանի համաձայն ՊՈԱԿ-ին ոչ թե պարտադրվում էր հղում անել ԱԻՆ-ի մամուլի ծառայությանը, այլ տեղեկատվություն տրամադրելու պահան-

ջի դեպքում տեղեկությունների տրամադրումը համաձայնեցնել ԱԻՆ-ի մամուլի ծառայության հետ: Այսինքն, սա, ըստ էության, տեղեկատվության տրամադրման ներքին կարգ, պայման սահմանող հանձնարարական է:

2010թ.-ի հունվարի 29-ին հրապարակվեց Ինֆորմացիայի ազատության կենտրոնն ընդդեմ «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի դատական գործով դատարանի վճիռը: Դատարանը վճռեց հայցը ամբողջությամբ բավարարել՝ պարտավորեցնելով «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ին հնգօրյա ժամկետում տրամադրել հայցվող տեղեկատվությունը:

Գործի նյութերը

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԶԿ

15.09.2009թ.

110-ի 6

**«Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրեն պարոն Աշոտ Պետրոսյանին**

Տեղեկատվություն ստանալու հարցում

Չարգելի պարոն Պետրոսյան,

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 եւ 27.1 հոդվածների, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում ենք տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. Մինչեւ սույն թվականի օգոստոսի 1-ը ՊՈԱԿ-ի ռեեստրում փորձաքննություն իրականացնող քանի՞ մասնավոր ընկերություն է գրանցված եւ այդ ընկերություններն ու՞մ անունով են գրանցված: Նշեք հավատարմագիր ստացած ընկերությունների անունները:
2. Տրամադրեք նաեւ ՊՈԱԿ-ի աշխատողների 2008 եւ 2009 թվականների հաստիքացուցակներն ու նույն ժամանակահատվածի աշխատողների աշխատավարձերի չափը հաստատող ցուցակը:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Կանխավ շնորհակալ եմ:

Չանրային կապերի պատասխանատու՝ Անահիտ Զոչարյան:

**ԿԵՆՏՐՈՆ ԵՎ ՆՈՐԲ-ՄԱՐԱՇ ՀԱՍԱՅՆՔՆԵՐԻ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻՆ**

Հայցվոր՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն»
հասարակական կազմակերպություն
Նախագահ՝ Շուշան Դոյրոյան
Ներկայացուցիչ՝ Կարեն Մեժլումյան
Պատասխանողներ՝ «Տեխնիկական անվտանգության ազգային
կենտրոն» ՊՈԱԿ
Հասցե՝ Երեւան, Ջրաշատի 1,
ՊՈԱԿ-ի տնօրեն Աշոտ Պետրոսյան

29.09.2009թ.

Հ Ա Յ Ց Ա Դ Ի Մ ՈՒ Մ

Տեղեկատվություն տրամադրել պարտավորեցնելու եւ
վարչական պատասխանատվության ենթարկելու մասին

1. Փաստերը, որոնց վրա հիմնված է հայցապահանջը.

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպու-
թյունը 17.09.2009թ.-ին հետեւյալ բովանդակությամբ գրավոր հարցում է արել
«Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն Աշոտ
Պետրոսյանին. «Դեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 եւ 27.1 հոդվածնե-
րով, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով՝
խնդրում ենք տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. Մինչեւ սույն թվականի օգոստոսի 1-ը ՊՈԱԿ-ի ռեեստրում փորձաքննու-
թյուն իրականացնող քանի՞ մասնավոր ընկերություն է գրանցված եւ այդ
ընկերություններն ու՞մ անունով են գրանցված: Նշեք հավատարմագիր
ստացած ընկերությունների անունները:
2. Տրամադրեք նաեւ ՊՈԱԿ-ի աշխատողների 2008 եւ 2009 թվականների հաս-
տիքացուցակներն ու նույն ժամանակահատվածի աշխատողների աշխա-
տավարձերի չափը հաստատող ցուցակը:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համա-
ձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն
ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն
ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում»:
Նշված փաստը հաստատվում է հարցման օրինակով, փոստային ծանուցա-
գրով եւ պատասխանողի՝ 22.09.2009թ. N 9/418 պատասխան գրությամբ:

Պատասխանողի կես էջանոց պատասխան գրությամբ պատասխան չի տրվել հարցմանը, այլ նշված է. «ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարի 04.08.2009թ-ի թիվ 99-Ա հրամանի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության կառուցվածքային եւ առանձնացված ստորաբաժանումների կամ նրանց կողմից իրականացվող գործառնությունների վերաբերյալ տեղեկատվությունը տրվում է ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության մամուլի ծառայության միջոցով: Վերոգրյալի հիման վրա առաջարկում եմ տեղեկատվության ստացման նպատակով Ձեր հարցումն ուղղել ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության մամուլի ծառայությանը»:

2. Հայցապահանջի իրավական հիմնավորումը.

ՀՀ Սահմանադրության՝

- 27 հոդվածի 2-րդ պարբերության համաձայն. «Յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք, ներառյալ տեղեկություններ եւ գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը, տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից».
- 27.1 հոդվածի համաձայն. «Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական կամ հասարակական շահերի պաշտպանության նկատառումներով իրավասու պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններին եւ պաշտոնատար անձանց դիմումներ կամ առաջարկություններ ներկայացնելու եւ ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունք»:

Սահմանադրությամբ երաշխավորված վերը նշված իրավունքներն առարկայանում են նաեւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում, որի 6 հոդվածի 1-ին մասի համաձայն.

«Յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը եւ (կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկատվություն տնօրինողին եւ ստանալու այդ տեղեկությունը»:

Նույն օրենքի 9 հոդվածի 7-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝

Եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը տրամադրելու համար անհրաժեշտ է կատարել լրացուցիչ աշխատանք, ապա այդ տեղեկությունը դիմողին է տրվում դիմումն ստանալուց հետո՝ 30-օրյա ժամկետում, որի մասին հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում, գրավոր տեղեկացվում է դիմողին՝ նշելով հետաձգման պատճառները եւ տեղեկությունը տրամադրելու վերջնական ժամկետը:

Ի խախտումն Սահմանադրությամբ ու օրենքով երաշխավորված հայցվորի իրավունքների ու ՊՈԱԿ-ի պարտականության, ՊՈԱԿ-ը, ի դեմս իր ղեկավարի, չի տրամադրել գրավոր հարցմամբ պահանջվող տեղեկատվությունը, այն դեպքում, երբ պարտավոր էր տրամադրել: Ինչ վերաբերում է պատասխանում նշված՝ նախարարի 04.08.2009թ. թիվ 99-Ա հրամանին, ապա դրան ծանոթ չլինելով հանդերձ հայտնում ենք, որ դրանով իրավաբանական անձի

կարգավիճակ ունեցող ՊՈԱԿ-ը չի կարող ազատվել հայցվող տեղեկատվությունը տրամադրելու սահմանադրական եւ օրենքով սահմանված պարտականությունից, ավելին, ՊՈԱԿ-ը կառուցվածքային եւ առանձնացված ստորաբաժանում չէ:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՅՅ օրենսգիրքի 189.7 հոդվածը պատասխանատվություն է սահմանում տեղեկություն տալու պարտականությունը չկատարելու համար, որի համաձայն.

«Օրենքով նախատեսված տեղեկությունը պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունների, ինչպես նաեւ հանրային նշանակության կազմակերպությունների պաշտոնատար անձանց կողմից ապօրինաբար չտրամադրելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկից մինչեւ հիսնապատիկի չափով:

Նույն խախտումը, որը կատարվել է կրկին անգամ՝ վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո մեկ տարվա ընթացքում՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից մինչեւ հարյուրապատիկի չափով»:

Նույն օրենսգրքի 223 հոդվածի համաձայն՝ առաջին աստիճանի դատարանների դատավորները քննում են սույն օրենսգրքի 189.7 հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը:

Գտնում ենք, որ եթե դատարանը գործի քննության ընթացքում հաստատված համարի պատասխանողի կողմից հայցվող տեղեկատվությունը չտրամադրելու փաստը, արդարացի իրավունք ունենք դատարանից հայցել վարչական տույժի ենթարկել ՊՈԱԿ-ի տնօրեն, պատասխանող Աշոտ Պետրոսյանին իր ապօրինի արարքի /անգործության/ համար, որն արտահայտվել է օրենքով սահմանված իր պարտականություններից խուսափելու, այն է՝ հայցված տեղեկատվությունը չտրամադրելու արարքով եւ պահանջելու, որ դրա համար որպես պատասխանատվության միջոց կիրառվի տուգանքը՝ 50.000 /հիսուն հազար/ դրամ գումարի չափով:

Վերոգրյալից ելնելով եւ ղեկավարվելով ՅՅ վարչական դատավարության օրենսգրքի 11 գլխի պահանջներով՝

Խնդրում եմ՝

1. Պարտավորեցնել «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ին հնգօրյա ժամկետում տրամադրելու հայցվող տեղեկատվությունը:
2. «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն Աշոտ Պետրոսյանին ենթարկել վարչական պատասխանատվության՝ տուգանքի՝ 50.000 դրամի չափով:

Կից ներկայացվում են՝

1. պետական տուրքի վճարման անդորրագիր,
2. լիազորագիր,
3. հարցումների օրինակը,
4. ծանուցագիրը,
5. պատասխանը:

«Ինֆորմացիայի ազատության
կենտրոն» ՀԿ նախագահ՝
Լիազոր ներկայացուցիչ՝

Շուշան Դոյրոյան
Կարեն Մեծլումյան:

Գործ ԵԿԴ-2221/02, 2009թ

Վ Ճ Ի Ռ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

29.01.2010թ

ք. Երեւան

ԵՐԵՎԱՆ ԶԱՂԱՔԻ ԿԵՆՏՐՈՆ ԵՎ ՆՈՐՔ ՄԱՐԱԾ
ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ

ԴԱՏԱՐԱՆԸ ՀԵՏԵՎՅԱԼ ԿԱԶՄՈՎ

Նախագահությամբ՝ Դատավոր՝ Գ. Կարախանյան

Քարտուղարությամբ՝ Ա. Սայադյան

Մասնակցությամբ՝

Հայցվորի ներկայացուցիչ՝ Կ. Մեժլումյան

Պատասխանողի ներկայացուցիչ՝ Ա. Միլիտոնյան

Դռնբաց դատական նիստում, քննելով քաղաքացիական գործն ըստ հայցի «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության ընդդեմ «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի՝ տեղեկատվություն տրամադրել պարտավորեցնելու պահանջի մասին

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

Հայցադիմումը մուտք է եղել 30.09.2009 թվականին, նախագահի կողմից մակագրվել է 01.10.2009 թվականին, վարույթ է ընդունվել 05.10.2009 թ.-ին:

Հայցվորի դիրքորոշումը.

Հայցվորը դիմելով դատարան հայտնել է, որ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունը 17.09.2009թ.-ին գրավոր հարցում է արել «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն Աշոտ Պետրոսյանին «Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 եւ 27.1 հոդվածների եւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրել են տրամադրել հետեւյալ տեղեկությունը.

1. Մինչև սույն թվականի օգոստոսի 1-ը ՊՈԱԿ-ի ռեեստրում փորձաքննություն իրականացնող քանի՞ մասնավոր ընկերություն է գրանցված եւ այդ ընկերություններն ու՞մ անունով են գրանցված: Նշեք հավատարմագիր ստացած ընկերությունների անունները:
2. Տրամադրեք նաեւ ՊՈԱԿ-ի աշխատողների 2008 եւ 2009 թվականների հաստիքացուցակներն ու նույն ժամանակահատվածի աշխատողների աշխատավարձերի չափը հաստատող ցուցակը:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրել են տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Նշված փաստը հաստատվում է հարցման օրինակով եւ պատասխանողի՝ 22.09.2009թ թիվ 9/418 պատասխան գրությունով:

Պատասխանողի կես էջանոց պատասխան գրությամբ պատասխան չի տրվել հարցմանը, այլ նշվել է. «ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարի 04.08.2009թ-ի թիվ 99 Ա հրամանի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության կառուցվածքային եւ առանձնացված ստորաբաժանումների կամ նրանց իրականացվող գործառույթների վերաբերյալ տեղեկատվությունը տրվում է ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության մամուլի ծառայության միջոցով»:

Վերոգրյալի հիման վրա առաջարկել են տեղեկատվության ստացման նպատակով հարցումն ուղարկել ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության մամուլի ծառայությանը:

ՀՀ Սահմանադրության՝ 27 հոդվածի 2-րդ պարբերության, 27.1 հոդվածի, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի համաձայն, նույն օրենքի 6 հոդվածի 1-ին մասի համաձայն, եւ 9 հոդվածի 7-րդ մասի 1-ին եւ 2-րդ կետերի համաձայն խնդրել են պարտավորեցնել «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ին հնգօրյա ժամկետում տրամադրել հայցվող տեղեկատվությունը:

Պատասխանողի դիրքորոշումը.

Հայցվորի հայցն անհիմն է եւ ամբողջությամբ ենթակա է մերժման, հետեւյալ պատճառաբանությամբ.

Հայցվորը տեղեկատվության ստացման, ինչպես նաեւ հայցի հիմքում դրել է «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի մի շարք դրույթները, որոնք սակայն չեն ապացուցում Պատասխանողի պարտավորությունը տեղեկատվության տրամադրման համար:

1. Հայցվորը հարցման առաջին կետով Պատասխանողից խնդրել է տրամադրել ՊՈԱԿ-ի ռեեստրում հաշվառված փորձաքննություն իրականացնող մասնավոր ընկերությունների պատկանելիության եւ ում անունով գրանցված լինելուն վերաբերվող տեղեկատվություն, սակայն Հայցվորը հաշվի չի առել այն

հանգամանքը, որ «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ը նման տեղեկատվության չի տիրապետում եւ չէր կարող տրամադրել, քանի որ ՀՀ կառավարության 16 փետրվարի 2006 թվականի «Տեխնիկական անվտանգության փորձաքննություն իրականացնող անձանց հավատարմագրման եւ հաշվառման կարգը հաստատելու մասին» N 302-Ն որոշման համաձայն՝ տեխնիկական անվտանգության փորձաքննություն իրականացնող անձանց հավատարմագրումն իրականացվում է լիազոր մարմնում գործող հավատարմագրման հանձնաժողովի կողմից, իսկ հավատարմագրման նպատակով ներկայացված նյութերը պահպանվում են լիազոր մարմնում:

«Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ը, վերը նշված կառավարության որոշման 5-րդ մասի համաձայն, իրականացնում է հավատարմագրված փորձագիտական կազմակերպությունների հաշվառումը, որը իրականացվում է փորձագիտական կազմակերպությունների հաշվառման մատյանում գրառում կատարելու միջոցով:

Նույն որոշման 28-րդ կետի համաձայն.

«28. Ըստ հաշվառման մատյանի՝ սյունակներում լրացվում են փորձագիտական կազմակերպության հավատարմագրման վկայագրի համարը, անվանումը, գտնվելու վայրը, պետական գրանցման համարը, հավատարմագրման վկայագրի տալու ամսաթիվը, գործողության ժամկետը եւ հավատարմագրման ոլորտը (ոլորտները)»:

Սրանից հետեւում է, որ «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ում չի գրառվում փորձաքննություն իրականացնող մասնավոր ընկերությունների պատկանելիության եւ ում անունով գրանցված լինելուն վերաբերվող տեղեկատվություն, ուստի եւ «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ը չէր կարող տիրապետել հայցվորի կողմից հայցվող տեղեկատվությանը:

2. Հայցվորը հարցման երկրորդ կետով Պատասխանողից խնդրել է տրամադրել ՊՈԱԿ-ի աշխատողների 2008 եւ 2009 թվականների հաստիքացուցակներն ու նույն ժամանակահատվածի աշխատողների աշխատավարձերի չափը հաստատող ցուցակը, սակայն այս անգամ եւս Հայցվորը անտեսել է այն հանգամանքը, որ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի գործողությունը որեւէ կերպ չի տարածվում «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի վրա, քանի որ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի համաձայն «Սույն օրենքի գործողությունը տարածվում է պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունների, ինչպես նաեւ հանրային նշանակության կազմակերպությունների եւ դրանց պաշտոնատար անձանց վրա», իսկ «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ը չի հանդիսանում դրանցից եւ ոչ մեկը:

«Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ը հանդիսանում է պետական ոչ առետրային կազմակերպություն,

Իսկ «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

«Պետական կազմակերպությունը շահույթ ստանալու նպատակ չիետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ առևտրային կազմակերպություն է, որն ստեղծվում է միայն մշակույթի, առողջապահության, սոցիալական, սպորտի, կրթության, գիտության, բնապահպանական եւ ոչ առևտրային այլ բնագավառներում գործունեություն իրականացնելու նպատակով»:

հետևաբար «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի դրույթները չեն կարող տարածվել «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի վրա:

3. «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով օրենսդիրը հստակ սահմանել է թե ինչն է համարվում տեղեկություն. «տեղեկություն՝ անձի, առարկայի, փաստի, հանգամանքի, իրադարձության, եղելության, երեւոյթի վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված կարգով ստացված եւ ձեւավորված տվյալներ՝ անկախ դրանց տնօրինման ձեւից կամ նյութական կրիչից (տեքստային, էլեկտրոնային փաստաթղթեր, ձայնագրություններ, տեսագրություններ, լուսաժապավեններ, գծագրեր, սխեմաներ, նոտաներ, քարտեզներ): Օրենքի հիշյալ դրույթից հետեւում է, որ ՊՈԱԿ-ի աշխատողների 2008 եւ 2009 թվականների հաստիքացուցակներն ու նույն ժամանակահատվածի աշխատողների աշխատավարձերի չափը հաստատող ցուցակը ոչ մի կերպ չի դասվում տեղեկության շարքին:

4. Հայցվորի կողմից հայցվող տեղեկատվության տրամադրումը սահմանափակվում են նաեւ.

ա/ **«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասով**, համաձայն որի. «Տեղեկատվություն տնօրինողը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասում սահմանված դեպքերի, մերժում է տեղեկության տրամադրումը, եթե դա՝

- 1) պարունակում է պետական, ծառայողական, բանկային, առևտրային գաղտնիք,
- 2) խախտում է մարդու անձնական եւ ընտանեկան կյանքի գաղտնիությունը, այդ թվում՝ նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական եւ այլ հաղորդումների գաղտնիությունը»:

բ/ **ՀՀ աշխատանքային օրենսգրքի 134-րդ հոդվածով**, համաձայն որի. «Աշխատողի անձնական տվյալները փոխանցելիս գործատուն պարտավոր է պահպանել հետեւյալ պահանջները.

- 1) աշխատողի անձնական տվյալները չհայտնել երրորդ անձանց՝ առանց աշխատողի գրավոր համաձայնության, բացառությամբ այն դեպքերի, երբ դա անհրաժեշտ է աշխատողի կյանքին եւ առողջությանը սպառնացող վտանգը կանխելու համար, ինչպես նաեւ օրենքով նախատեսված այլ դեպքերում,

2) առանց աշխատողի գրավոր համաձայնության՝ առեւտրային նպատակներով չհայտնել նրա անձնական տվյալները,

3) աշխատողի անձնական տվյալներն ստացող անձանց նախազգուշացնել եւ պահանջել հավաստում, որ այդ տվյալները կարող են օգտագործվել միայն այն նպատակներով, որոնց համար աշխատողները տեղեկացված են: Աշխատողների անձնական տվյալներն ստացող անձինք պարտավոր են պահպանել գաղտնիությունը: Այս դրույթը չի տարածվում օրենքով սահմանված կարգով աշխատողների անձնական տվյալների փոխանցման վրա,

4) աշխատողների անձնական տվյալների փոխանցումը կազմակերպության ներսում իրականացնել գործատուի ներքին իրավական ակտերին համապատասխան,

5) աշխատողների անձնական տվյալներին ծանոթանալու իրավունք վերապահել միայն հատուկ լիազորություններ ունեցող անձանց, ընդ որում՝ այդ անձինք կարող են ստանալ աշխատողի միայն անձնական այն տվյալները, որոնք անհրաժեշտ են որոշակի գործառույթ իրականացնելու համար»:

5. ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարի 04.08.2009թ-ի թիվ 99-Ա հրամանը, որի 1-ին կետով հստակ հանձնարարական է տրվել «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն Ա. Պետրոսյանին՝ ՉԼՍ-ների եւ հասարակության հետ կապերի ոլորտում տեղեկատվության տարածման եւ իրազեկման հիմնական համակարգող ճանաչել արտակարգ իրավիճակների նախարարի մամուլի քարտուղարին, առաջացած ցանկացած տեղեկատվություն փոխանցել եւ համաձայնեցնել ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարի մամուլի քարտուղար Ս. Աբրահամյանի հետ:

Նշված հրամանով «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ը հստակ հանձնարարական ունենալով, այն նաեւ 22.09.2009թ-ին թիվ 1/418 գրությամբ փոխանցել է հայցվորին, որպիսի նա իր կողմից փնտրվող տեղեկատվության համար դիմի Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության մամուլի ծառայությանը: Վերոգրյալով հաստատվում է, որ «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ը ի դեմս տնօրեն Աշոտ Պետրոսյանի պարտավոր եւ իրավասու չէր Հայցվորին տրամադրել պահանջվող տեղեկատվությունը: Հիմք ընդունելով վերոգրյալը գտնում են, որ հայցը ամբողջությամբ անհիմն է եւ դատարանին խնդրել են հայցվորի պահանջը ամբողջությամբ մերժել:

Լսելով կողմերի ներկայացուցիչներին, հետազոտելով գործում առկա ապացույցները եւ գնահատելով դրանք՝ դատարանը գտնում է, որ հայցը ենթակա է բավարարման հետեւյալ պատճառաբանությամբ:

Դատաքննությամբ հաստատված փաստերն են.

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունը 17.09.2009թ-ին հարցում է արել «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ եւ խնդրել տրամադրել հետեւյալ տեղեկատվությունը.

1. Մինչեւ սույն թվականի օգոստոսի 1-ը ՊՈԱԿ-ի ռեեստրում փորձաքննություն իրականացնող քանի՞ մասնավոր ընկերություն է գրանցված եւ այդ ընկերություններն ու՞մ անունով են գրանցված: Նշեք հավատարմագիր ստացած ընկերությունների անունները:
2. Տրամադրեք նաեւ ՊՈԱԿ-ի աշխատողների 2008 եւ 2009 թվականների հաստիքացուցակներն ու նույն ժամանակահատվածի աշխատողների աշխատավարձերի չափը հաստատող ցուցակը:

«Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ը ղեկավարվելով ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարի 04.08.2009թ-ի թիվ 99-Ա հրամանով 22.09.2009թ-ին թիվ 1/418 գրությամբ պատասխան է ներկայացրել «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությանը, հայտնելով, որ. «Ի պատասխան Ձեր 15.09.2009թ-ի տեղեկատվություն ստանալու վերաբերյալ հարցմանը, հայտնում են, որ Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարի 04.08.2009թ-ի թիվ 99-Ա հրամանի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության կառուցվածքային եւ առանձնացված ստորաբաժանումների կամ նրանց կողմից իրականացվող գործառնությունների վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրվում է Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության մամուլի ծառայության միջոցով:

Վերոգրյալի հիման վրա առաջարկել են տեղեկատվության ստացման նպատակով հարցումն ուղղել Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության մամուլի ծառայությանը»:

Դատարանի իրավական վերլուծությունները.

ՀՀ Սահմանադրության՝

- 27 հոդվածի 2-րդ պարբերության համաձայն. *«Յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք, ներառյալ տեղեկություններ եւ գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը, տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից»:*
- 27.1 հոդվածի համաձայն. *«Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական կամ հասարակական շահերի պաշտպանության նկատառումներով իրավասու պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններին եւ պաշտոնատար անձանց դիմումներ կամ առաջարկություններ ներկայացնելու եւ ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունք»:*

Սահմանադրությամբ երաշխավորված վերը նշված իրավունքներն առարկայանում են նաեւ **«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում, որի 6 հոդվածի 1-ին մասի** համաձայն.

«Յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը եւ (կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկատվություն տնօրինողին եւ ստանալու այդ տեղեկությունը»:

Նույն օրենքի 9 հոդվածի 7-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝

եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը տրամադրելու համար անհրաժեշտ է կատարել լրացուցիչ աշխատանք, ապա այդ տեղեկությունը դիմողին է տրվում դիմումն ստանալուց հետո՝ 30-օրյա ժամկետում, որի մասին հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում, գրավոր տեղեկացվում է դիմողին՝ նշելով հետաձգման պատճառները եւ տեղեկությունը տրամադրելու վերջնական ժամկետը:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 10-րդ կետի համաձայն՝ եթե տեղեկատվություն տնօրինողը չունի փնտրվող տեղեկությունը, կամ դրա տրամադրումն իր լիազորությունների շրջանակից դուրս է, ապա նա տվյալ գրավոր հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում, պարտավոր է այդ մասին գրավոր տեղեկացնել դիմողին, իսկ հնարավորության դեպքում՝ նրան տրամադրել նաեւ այդ տեղեկատվությունը տնօրինողի գտնվելու վայրը, որն ունի փնտրվող տեղեկությանը վերաբերող մյուս տվյալները:

Պատասխանողը իր գրավոր պատասխանում ոչ թե հայտնել է, որ ինքն այդ տեղեկություններին չի տիրապետում, կամ տրամադրումն իր լիազորությունների շրջանակից դուրս է, այլ հայտնել է, որ Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարի 04.08.2009թ-ի թիվ 99-Ա հրամանի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության կառուցվածքային եւ առանձնացված ստորաբաժանումների կամ նրանց կողմից իրականացվող գործառույթների վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրվում է Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության մամուլի ծառայության միջոցով:

Նշված որոշման մեջ նշված է, որ ՉԼՄ-ների եւ հասարակայնության հետ կապերի ոլորտում տեղեկատվության տարածման եւ իրազեկման հիմնական համակարգող ճանաչել արտակարգ իրավիճակների նախարարի մամուլի քարտուղարին, առաջացած ցանկացած տեղեկատվություն փոխանցել եւ համաձայնեցնել ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարի մամուլի քարտուղար Ս. Աբրահամյանի հետ: Այսինքն՝ սա նշանակում է, որ պատասխանողի խնդիրն է նրանց հետ համաձայնեցնել տեղեկատվության տրամադրումը, ինչպես նշված է հրամանում:

Բացի այդ, ինչպես գրավոր պատասխանում, այնպես էլ դատաքննությամբ պատասխանողի ներկայացուցիչը պնդեց, որ իրենք իրականացնում են հավատարմագրված փորձագիտական կազմակերպությունների հաշվառումը, այսինքն՝ ինքը տիրապետում է այն տեղեկատվությանը, որը պահանջում է հայցվորը:

Պատասխանողի ներկայացուցչի մյուս պատճառաբանությունը, որ «Տեղեկատվության ազատության մասին» օրենքն իրենց վրա չի տարածվում, նույնպես հիմնավոր չէ, քանի որ այն հերքվում է հենց իրենց իսկ կողմից ներկայացված Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարի 04.08.2009թ-ի թիվ 99-Ա հրամանով: /Վերը նշված հրամանի 1-ին կետի, 2-րդ պարբերություն/:

Պատասխանողի ներկայացուցչի այն պատճառաբանությանը, որ ՊՈԱԿ-ի աշխատողների 2008 եւ 2009 թվականների հաստիքացուցակներն ու նույն ժամանակահատվածի աշխատավարձերի չափը հաստատող ցուցակը անձնական գաղտնիք է պարունակում եւ այն տրամադրման ենթակա չէ, նույնպես անհիմն է, քանի որ «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի 8-րդ հոդվածը ուղղակի մատնանշում է տեղեկատվության ազատության սահմանափակումները, որի ցանկում նշված չէ աշխատողների հաստիքացուցակներն ու աշխատավարձերի չափը հաստատող ցուցակների գաղտնիությունը:

Առաջնորդվելով վերոգրյալ պատճառաբանությամբ եւ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 130-132 -րդ հոդվածներով՝ դատարանը

Վ Ճ Ո Շ Ց

Հայցը բավարարել: Պարտավորեցնել «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ին հնգօրյա ժամկետում տրամադրել «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության 17.09.2009թ գրությամբ հայցվող տեղեկատվությունը:

Պետական տուրքի հարցը համարել լուծված:

Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

Սույն դատական ակտը կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ՝

Գ. ԿԱՐԱԽԱՆՅԱՆ:

Գործ 15.

**Ինֆորմացիայի ազատության
կենսրոնն**

ընդդեմ

**«Երեւանի կառուցադասման եւ
ներդրումային ծրագրերի
իրականացման գրասենյակ»
ՊՈԱԿ-ի**

Գործի համառոտ նկարագրությունը

Ինֆորմացիայի ազատության կենտրոնը 2009թ. փետրվարի 27-ին «Երեւանի կառուցապատման եւ ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ին հարցում է ուղարկում՝ խնդրելով տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. «Երեւանի կառուցապատման եւ ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ի ֆինանսավորումը ՀՀ պետական բյուջեից 2006, 2007 եւ 2008թթ-ին որքա՞ն գումար է կազմել:
2. ՊՈԱԿ-ը 2006, 2007 եւ 2008թթ-ին ո՞ր կազմակերպությունների հետ է կնքել հանձնարարության եւ նկարագրության պայմանագրեր:
3. ՊՈԱԿ-ը 2006, 2007 եւ 2008թթ-ին որքա՞ն հասույթ է ստացել հանձնարարության եւ նկարագրության պայմանագրերից:

Պատասխանում ՊՈԱԿ-ը նշել է, որ 1-ին կետով ներկայացված հարցի պատասխանը պաշտոնապես հրապարակված է «ՀՀ պետական բյուջեի մասին» համապատասխան օրենքներում, իսկ 2-րդ եւ 3-րդ կետերով ներկայացված հարցերի պատասխանները պարունակում են առեւտրային գաղտնիք, հետեւաբար նման տեղեկատվություն չի կարող տրամադրվել: 2009թ. մարտին Ինֆորմացիայի ազատության կենտրոնը ՊՈԱԿ-ի պատասխանը բողոքարկեց ՀՀ վարչական դատարան՝ խնդրելով.

1. Ոչ իրավաչափ ճանաչել «Երեւանի կառուցապատման եւ ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ի այն գործո-

ղությունները կամ անգործությունը, որով սպառնիչ եւ լրիվ պատասխան չի տրվել հայցվող տեղեկատվության վերաբերյալ եւ պարտավորեցնել «Երեւանի կառուցապատման եւ ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ին հնգօրյա ժամկետում տրամադրելու պահանջվող տեղեկատվություն:

2. «Երեւանի կառուցապատման եւ ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ի տնօրեն Ռոբերտ Հարությունյանին ենթարկել վարչական պատասխանատվության՝ տուգանքի՝ 50000 դրամի չափով:

ՀՀ վարչական դատարանը մասամբ վարույթ ընդունեց ԻԱԿ-ի հայցը՝ մերժելով ՊՈԱԿ-ի տնօրենին վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջը: ԻԱԿ-ը ՀՀ վարչական դատարանի վճիռը այս մասով բողոքարկեց:

Ինֆորմացիայի ազատության կենտրոնն ընդդեմ «Երեւանի կառուցապատման եւ ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ի գործի քննությունը վարչական դատարանում 15.07.09թ.-ին հետաձգվեց անորոշ ժամանակով: Պատճառն այն էր, որ «Երեւանի կառուցապատման եւ ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ը լուծարվում էր, եւ մինչեւ իրավահաջորդության հարցը չլուծվեր, գործի հետագա քննությունն անհնար էր:

Սակայն ՊՈԱԿ-ն այդպես էլ չլուծարվեց, եւ դատաքննությունը շարունակվեց:

2009թ.-ի նոյեմբերի 20-ի դատական նիստի ժամանակ դատարանն ուսումնասիրեց բոլոր գրավոր ապացույցները, լսեց կողմերին: ԻԱԿ-ի ներկայացուցիչ Կարեն Մեժլումյանը ամբողջությամբ պնդեց հայցը, իսկ ՊՈԱԿ-ի ներկայացուցիչը չընդունեց ԻԱԿ-ի որեւէ հայցապահանջի ճշտությունը՝ ամբողջությամբ առարկելով հայցի դեմ:

2009թ.-ի դեկտեմբերի 7-ին ՀՀ վարչական դատարանը հրապարակեց ԻԱԿ-ն ընդդեմ «Երեւանի կառուցապատման եւ ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ի գործով վճիռը, որով մերժեց ԻԱԿ-ի հայցը:

Դատարանը գտել էր, որ ՊՈԱԿ-ը ըստ էության պատասխանել է ԻԱԿ-ի տեղեկատվություն ստանալու հարցմանը. 1-ին կետով պահանջվող հարցին տվել է հստակ պատասխան, իսկ 2-րդ եւ 3-րդ կետերով ներկայացված

հարցերի պատասխանները պարունակում են առեւտրային գաղտնիք, քանի որ, ճիշտ է, ՊՈԱԿ-ը ոչ առեւտրային կազմակերպություն է, առեւտրային շահ չունի, սակայն առեւտրային շահ ունեն այն կազմակերպությունները, որոնց հետ ՊՈԱԿ-ը կնքել է պայմանագրեր, եւ եթե ԻԱԿ-ին տրամադրեր այդ տեղեկությունը, կստացվեր, որ հրապարակում է տվյալ կազմակերպությունների առեւտրային գաղտնիքը:

2009թ. դեկտեմբերին ԻԱԿ-ը վճռաբեկության կարգով բողոքարկեց ՀՀ վարչական դատարանի վճիռը: ՀՀ վճռաբեկ դատարանը գործն ընդունել է վարույթ, սակայն այն դեռեւս չի քննվել:

Գործի նյութերը

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՅԿ

27.02.2009թ.

100-ի 18

**«Երեւանի կառուցապատման եւ ներդրումային
ծրագրերի իրականացման գրասենյակ»
ՊՈԱԿ-ի տնօրեն՝ Ռոբերտ Յարությունյանին**

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Յարությունյան,

Շնորհակալությամբ հայտնում եմ, որ ի պատասխան «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության 06.02.2009թ-ի հարցման ստացվել է Ձեր 12.02.2009թ. պատասխանը:

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 եւ 27.1 հոդվածների եւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. «Երեւանի կառուցապատման եւ ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ի ֆինանսավորումը ՀՀ պետական բյուջեից 2006, 2007 եւ 2008թթ-ին որքա՞ն գումար է կազմել:
2. «Երեւանի կառուցապատման եւ ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ը 2006, 2007 եւ 2008թթ-ին ո՞ր կազմակերպությունների հետ է կնքել հանձնարարության եւ նկարագրության պայմանագրեր:
3. «Երեւանի կառուցապատման եւ ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ը 2006, 2007 եւ 2008թթ-ին որքա՞ն հատույթ է ստացել հանձնարարության եւ նկարագրության պայմանագրերից:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ նախագահ՝

Շուշան Դոյոյան:

ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻՆ

Հայցվոր՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն»
հասարակական կազմակերպություն
Նախագահ՝ Շուշան Դոյոյան,
Ներկայացուցիչ՝ Կարեն Մեծլումյան,
Պատասխանողներ՝ «Երեւանի կառուցապատման
եւ ներդրումային ծրագրերի իրականացման
գրասենյակ» ՊՈԱԿ,
ՊՈԱԿ-ի տնօրեն Ռոբերտ Հարությունյան
Հասցե՝ Երեւան, Փ. Բուզանդի 1/3

03.03.2009թ.

Հ Ա Յ Ց Ա Դ Ի Մ ՈՒ Մ

Ճանաչման եւ գործողության կատարման հայց

ՊՈԱԿ-ի գործողությունները ոչ իրավաչափ ճանաչելու, որպես
հետեւանք տեղեկատվություն տրամադրել պարտադրելու եւ
վարչական տույժի ենթարկելու պահանջների մասին

1. Փաստերը, որոնց վրա հիմնված է հայցապահանջը.

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպու-
թյունը 06.02.2009թ-ին «Երեւանի կառուցապատման եւ ներդրումային ծրագրե-
րի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ի տնօրեն Ռոբերտ Հարությունյան ին
հետեւյալ բովանդակությամբ տեղեկատվություն ստանալու հարցում է ներկա-
յացրել. «Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 եւ 27.1 հոդվածների եւ «Տե-
ղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝
խնդրում ենք տրամադրել հետեւյալ տեղեկությունը.

1. 2008թ. ընթացքում ո՞ր հարկատեսակներից որքա՞ն հարկ է վճարել «Երեւ-
անի կառուցապատման եւ ներդրումային ծրագրերի իրականացման գրա-
սենյակ» պետական ոչ առետրային կազմակերպությունը:
2. 2006, 2007, 2008թ.թ. ընթացքում Երեւան քաղաքում հողի իրացման իրա-
վունք ստացած քանի՞ իրավաբանական եւ ֆիզիկական անձի շահ է Ձեր
կազմակերպությունը ներկայացրել ՀՀ դատարաններում:
3. 2-րդ հարցում նշված անձանցից ուրաքանչյուրի հետ ծառայություններ
մատուցելու ի՞նչ գումարի պայմանագիր ունեք կնքած:
4. Այդ մատուցված ծառայություններից որքա՞ն հասույթ եք ստացել:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում ենք գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին (հոդված 11)»:

Նշված փաստը հաստատվում է հարցման օրինակով եւ պատասխանողի՝ 12.02.2009թ. թիվ N 38/01-189 պատասխան գրությունով:

Պատասխանողի կես էջանոց պատասխան գրությամբ պատասխան չի տրվել հարցված 3-րդ եւ 4-րդ հարցերի վերաբերյալ, պատճառաբանությամբ, որ դրանք առեւտրային գաղտնիք են իրենց մեջ պարունակում եւ որ ՊՈԱԿ-ը ֆինանսավորվում է պետական բյուջեից, որի վերաբերյալ տեղեկատվությունը կարող ենք նայել «ՀՀ պետական բյուջեի մասին» օրենքում:

Նշված փաստը հաստատվում է հարցման՝ պատասխանողի՝ 12.02.2009թ. թիվ N 38/01-189 պատասխան գրությունով:

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ն 27.02.2009թ-ին «Երեւանի կառուցապատման եւ ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ի տնօրեն Ռոբերտ Հարությունյանին հետեւյալ բովանդակությամբ տեղեկատվություն ստանալու հարցում է ներկայացրել. «Շնորհակալությամբ հայտնում եմ, որ ի պատասխան «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության 06.02.2009թ-ի հարցման ստացվել է Ձեր 12.02.2009թ. պատասխանը:

Դեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 եւ 27.1 հոդվածների եւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. «Երեւանի կառուցապատման եւ ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ի ֆինանսավորումը ՀՀ պետական բյուջեից 2006, 2007 եւ 2008թթ-ին որքա՞ն գումար է կազմել:
2. «Երեւանի կառուցապատման եւ ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ը 2006, 2007 եւ 2008թ.թ.-ին ո՞ր կազմակերպությունների հետ է կնքել հանձնարարության եւ նկարագրության պայմանագրեր:
3. «Երեւանի կառուցապատման եւ ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ը 2006, 2007 եւ 2008թթ-ին որքա՞ն հասույթ է ստացել հանձնարարության եւ նկարագրության պայմանագրերից:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում»:

Նշված փաստը հաստատվում է հարցման օրինակով եւ պատասխանողի՝ 06.03.2009թ. թիվ N 38/01-322 պատասխան գրությունով:

Պատասխանում նշվել է, որ 1-ին կետով ներկայացված հարցի պատասխանը պաշտոնապես հրապարակված է «ՀՀ պետական բյուջեի մասին» համապատասխան օրենքներում, իսկ 2-րդ եւ 3-րդ կետերով ներկայացված հարցերի պատասխանները պարունակում են առեւտրային գաղտնիք, հետեւաբար նման տեղեկատվություն չի կարող տրամադրվել:

Նշված փաստը հաստատվում է պատասխանողի՝ 06.03.2009թ. թիվ N 38/01-322 պատասխան գրությունով:

2. Հայցապահանջի իրավական հիմնավորումը.

ՀՀ Սահմանադրության՝

- 27 հոդվածի 2-րդ պարբերության համաձայն. «Յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք, ներառյալ տեղեկություններ եւ գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը, տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից».
- 27.1 հոդվածի համաձայն. «Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական կամ հասարակական շահերի պաշտպանության նկատառումներով իրավասու պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններին եւ պաշտոնատար անձանց դիմումներ կամ առաջարկություններ ներկայացնելու եւ ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունք»:

Սահմանադրությամբ երաշխավորված վերը նշված իրավունքներն առարկայանում են նաեւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում, որի 6 հոդվածի 1-ին մասի համաձայն.

«Յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը եւ (կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկատվություն տնօրինողին եւ ստանալու այդ տեղեկությունը»:

Նույն օրենքի 9 հոդվածի 7-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝

եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը տրամադրելու համար անհրաժեշտ է կատարել լրացուցիչ աշխատանք, ապա այդ տեղեկությունը դիմողին է տրվում դիմումն ստանալուց հետո՝ 30-օրյա ժամկետում, որի մասին հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում, գրավոր տեղեկացվում է դիմողին՝ նշելով հետաձգման պատճառները եւ տեղեկությունը տրամադրելու վերջնական ժամկետը:

Ի խախտումն Սահմանադրությամբ ու օրենքով երաշխավորված հայցվորի իրավունքների ու պատասխանողի պարտականության, պատասխանող ՊՈԱԿ-ը չի տրամադրել 27.02.2009թ. գրավոր հարցմամբ պահանջվող տեղեկատվությունը, այն դեպքում, երբ պարտավոր էր տրամադրել:

Գտնում ենք, որ եթե անգամ «ՀՀ պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքներում սահմանված են եղել 2006, 2007 եւ 2008թթ. ՊՈԱԿ-ի ֆինանսավորման չափը, դա հիմք չէ դրա վերաբերյալ տեղեկատվությունը չտրամադրելու համար:

Ինչ վերաբերում է 2-րդ եւ 3-րդ կետերով հայցվող տեղեկատվությանը, ապա ըստ մեզ այն առեւտրային գաղտնիք չի պարունակում, մասնավորապես, այն, թե որ ընկերությունների հետ է պետական բյուջեից ֆինանսավորվող կազմակերպությունը հանձնարարության եւ նկարագրության պայմանագիր կնքել, կամ 2006-2008թթ. ընթացքում որքան հասույթ է ստացել նման պայմանագրերից, չի կարող առեւտրային գաղտնիք լինել, մասնավորապես, եթե պատասխանում նշվեր, որ ՊՈԱԿ-ը 2007թ.-ին նման պայմանագրերից ստացել է օրինակ 30.000.000 դրամ հասույթ, դա որեւէ ձեւով չի կարող առեւտրային գաղտնիք լինել, քանի որ ՊՈԱԿ-ն առեւտրային կազմակերպություն չէ, այլ՝ հակառակը՝ պետական ոչ առեւտրային կազմակերպություն է, հետեւաբար առեւտրային շահ չունի:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրքի 189.7. հոդվածը պատասխանատվություն է սահմանում տեղեկություն տալու պարտականությունը չկատարելու համար, որի համաձայն.

«Օրենքով նախատեսված տեղեկությունը պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունների, ինչպես նաեւ հանրային նշանակության կազմակերպությունների պաշտոնատար անձանց կողմից ապօրինաբար չտրամադրելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկից մինչեւ հիսնապատիկի չափով:

Նույն խախտումը, որը կատարվել է կրկին անգամ՝ վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո մեկ տարվա ընթացքում՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից մինչեւ հարյուրապատիկի չափով»:

Նույն օրենսգրքի 223 հոդվածի համաձայն՝ առաջին ատյանի դատարանների դատավորները քննում են սույն օրենսգրքի 189.7 հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը:

Գտնում ենք, որ եթե դատարանը գործի քննության ընթացքում հաստատված համարի պատասխանողի կողմից հայցվող տեղեկատվությունը չտրամադրելու փաստը, արդարացի իրավունք ունենք դատարանից հայցել վարչական տույժի ենթարկել պատասխանող ՊՈԱԿ-ի տնօրեն Ռ. Հարությունյանին իր ապօրինի արարքի /անգործության/ համար, որն արտահայտվել է օրենքով սահմանված իր պարտականություններից խուսափելու, այն է՝ հայցված տեղեկատվությունը չտրամադրելու արարքով եւ պահանջելու, որ դրա համար որպես պատասխանատվության միջոց կիրառվի տուգանքը՝ 50.000 /հիսուն հազար/ դրամ գումարի չափով:

Վերոգրյալից ելնելով եւ ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 11 գլխի պահանջներով՝

Խնդրում եմ՝

1. Ոչ իրավաչափ ճանաչել «Երեւանի կառուցապատման եւ ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ի այն գործողությունները կամ անգործությունը, որով սպառնիչ եւ լրիվ պատասխան չի տրվել հայցվող տեղեկատվության վերաբերյալ եւ պարտավորեցնել «Երեւանի կառուցապատման եւ ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ին հնգօրյա ժամկետում տրամադրել տեղեկատվություն այն մասին, թե
 - «Երեւանի կառուցապատման եւ ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ի ֆինանսավորումը ՀՀ պետական բյուջեից 2006, 2007 եւ 2008թթ-ին որքա՞ն գումար է կազմել,
 - «Երեւանի կառուցապատման եւ ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ը 2006, 2007 եւ 2008թթ-ին ո՞ր կազմակերպությունների հետ է կնքել հանձնարարության եւ նկարագրության պայմանագրեր,
 - «Երեւանի կառուցապատման եւ ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ը 2006, 2007 եւ 2008թթ-ին որքա՞ն հասույթ է ստացել հանձնարարության եւ նկարագրության պայմանագրերից:
2. «Երեւանի կառուցապատման եւ ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ի տնօրեն Ռոբերտ Հարությունյանին ենթարկել վարչական պատասխանատվության՝ տուգանքի՝ 50000 դրամի չափով:
3. «Երեւանի կառուցապատման եւ ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ից հօգուտ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի բռնագանձել 8000 դրամ պետական տուրքի գումարը:

Կից ներկայացվում են՝

1. պետական տուրքի վճարման անդորրագիր,
2. հայցադիմումը պատասխանողներին ուղարկելու մասին ապացույց,
3. լիազորագիր,
4. հարցումների օրինակը,
5. պատասխանները:

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ

Նախագահ՝

Լիազոր ներկայացուցիչ՝

Շուշան Դոյոյան

Կարեն Մեծլումյան:

Վարչական գործ թիվ ՎԴ-1696/05/09, 2009թ.

Վ Ճ Ի Ռ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

07 դեկտեմբերի 2009թ.

ք. Երեւան

Հայաստանի Հանրապետության վարչական դատարանը
Նախագահությամբ դատավոր՝ Ա. Ղազարյանի,
քարտուղարությամբ՝ Վ. Թադեւոսյանի,
մասնակցությամբ՝
հայցվոր՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ
Ներկայացուցիչ՝ Կ. Մեժլումյանի,
պատասխանող՝ «Երեւանի կառուցապատման եւ ներդրումային
ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ
Ներկայացուցիչ՝ Գ. Թադեւոսյանի

դռնբաց դատական նիստում քննելով վարչական գործն ըստ հայցի «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության ընդդեմ «Երեւանի կառուցապատման եւ ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ի, «Երեւանի կառուցապատման եւ ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ի գործողությունները ոչ իրավաչափ ճանաչելու, որպես հետեւանք տեղեկատվություն տրամադրել պարտադրելու պահանջների մասին

Պ Ա Ր Չ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունը /այսուհետ՝ ՀԿ/ հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան ընդդեմ «Երեւանի կառուցապատման եւ ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ի եւ «Երեւանի կառուցապատման եւ ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ի տնօրեն Ռոբերտ Հարությունյանի՝ ՊՈԱԿ-ի գործողությունները ոչ իրավաչափ ճանաչելու, որպես հետեւանք տեղեկատվություն տրամադրել պարտադրելու եւ «Երեւանի կառուցապատման եւ ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ի տնօրեն Ռոբերտ Հարությունյանին վարչական պատասխանատվության ենթարկելու /տուգանք՝ 50.000 դրամի չափով/ պահանջների մասին:

ՀՀ վարչական դատարանը 14.04.2009թ. որոշմամբ հայցադիմումը վարչական դատարանին ընդդատյա մասով ընդունել է վարույթ, մնացած մասով հայցադիմումի ընդունումը մերժել է:

Նշված որոշման դեմ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ ներկայացուցիչ Կ.Մեժլումյանը բողոք է ներկայացրել:

ՀՀ վարչական դատարանը /Երեւանի նստավայր, նախագահությամբ դատավոր Ռ.Հակոբյանի, դատավորներ Զ.Սկոյանի եւ Ա.Միրզոյանի/ 11.05.2009թ. որոշմամբ Կ.Մեժլումյանի բողոքը մերժել է:

ՀՀ վարչական դատարանի /Երեւանի նստավայր, նախագահությամբ դատավոր Ռ.Հակոբյանի, դատավորներ Զ.Սկոյանի եւ Ա.Միրզոյանի/ 11.05.2009թ. որոշման դեմ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ ներկայացուցիչ Կ.Մեժլումյանը վճռաբեկ բողոք է ներկայացրել:

ՀՀ վճռաբեկ դատարանը 12.08.2009թ. որոշմամբ Կ. Մեժլումյանի վճռաբեկ բողոքը մերժել է, իսկ ՀՀ վարչական դատարանի 11.05.2009թ. «Բողոքը մերժելու մասին» որոշումը թողել ուժի մեջ:

ՀՀ վարչական դատարանը 20.10.2009թ. որոշմամբ գործը նշանակել է դատաքննության:

Գործի դատաքննությունն ավարտվել է 20.11.2009թ.-ին:

Հայցվորի փաստարկները եւ հիմնավորումները.

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ 06.02.2009թ.-ին «Երեւանի կառուցապատման եւ ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ի տնօրեն Ռոբերտ Հարությունյանին հետեւյալ բովանդակությամբ տեղեկատվություն ստանալու հարցում է ներկայացրել. «Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 եւ 27.1 հոդվածների եւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. 2008թ. ընթացքում ո՞ր հարկատեսակներից որքա՞ն հարկ է վճարել «Երեւանի կառուցապատման եւ ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական ոչ առեւտրային կազմակերպությունը:
2. 2006, 2007, 2008թթ ընթացքում Երեւան քաղաքում հողի իրացման իրավունք ստացած քանի՞ իրավաբանական եւ ֆիզիկական անձի շահ է Ձեր կազմակերպությունը ներկայացրել ՀՀ դատարաններում:
3. 2-րդ հարցում նշված անձանցից ուրաքանչյուրի հետ ծառայություններ մատուցելու ի՞նչ գումարի պայմանագիր ունեք կնքած:
4. Այդ մատուցված ծառայություններից որքա՞ն հասույթ եք ստացել:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի խնդրում ենք տեղեկություն

ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում ենք գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին /հոդված 1/»:

Նշված փաստը հաստատվում է հարցման օրինակով եւ պատասխանողի 12.02.2009թ. թիվ 38/01-189 պատասխան գրություններով:

Պատասխանողի կես էջանոց պատասխան գրությամբ պատասխան չի տրվել հարցված 3-րդ եւ 4-րդ հարցերի վերաբերյալ, պատճառաբանությամբ, որ դրանք առեւտրային գաղտնիք են իրենց մեջ պարունակում եւ որ ՊՈԱԿ-ը ֆինանսավորվում է պետական բյուջեից, որի վերաբերյալ տեղեկատվությունը կարող են նայել «ՀՀ պետական բյուջեի մասին» օրենքում:

Նշված փաստը հաստատվում է հարցման պատասխանողի՝ 12.02.2009թ. թիվ 38/08-189 պատասխան գրությունով:

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ 27.02.2009թ. «Երեւանի կառուցապատման եւ ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ի տնօրեն Ռոբերտ Հարությունյանին հետեւյալ բովանդակությամբ տեղեկատվություն ստանալու հարցում է ներկայացրել. «Շնորհակալությամբ հայտնում եմ, որ ի պատասխան «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ 06.02.2009թ-ի հարցման ստացվել է Ձեր 12.02.2009թ. պատասխանը:

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 եւ 27.1 հոդվածների եւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. ՊՈԱԿ-ի ֆինանսավորումը ՀՀ պետական բյուջեից 2006, 2007 եւ 2008թթ-ին որքա՞ն գումար է կազմել:
2. ՊՈԱԿ-ը 2006, 2007 եւ 2008թթ-ին ո՞ր կազմակերպությունների հետ է կնքել հանձնարարության եւ նկարագրության պայմանագրեր:
3. ՊՈԱԿ-ը 2006, 2007 եւ 2008թթ-ին որքա՞ն հասույթ է ստացել հանձնարարության եւ նկարագրության պայմանագրերից:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում»:

Նշված փաստը հաստատվում է հարցման օրինակով եւ պատասխանողի 06.03.2009թ. թիվ 38/01-322 պատասխան գրությունով:

Պատասխանում նշվել է, որ 1-ին կետով նախատեսված հարցի պատասխանը պաշտոնապես հրապարակվել է «ՀՀ պետական բյուջեի մասին» համապատասխան օրենքներում, իսկ 2-րդ եւ 3-րդ կետերով ներկայացված հարցերի պատասխանները պարունակում են առեւտրային գաղտնիք, հետեւաբար նման տեղեկատվություն չի կարող տրամադրվել:

Նշված փաստը հաստատվում է հարցման օրինակով եւ պատասխանողի 06.03.2009թ. թիվ 38/01-322 պատասխան գրությունով:

ՀՀ Սահմանադրության 27 հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք, ներառյալ՝ տեղեկություններ եւ գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը, տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից:

ՀՀ Սահմանադրության 27.1 հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր անձնական կամ հասարակական շահերի պաշտպանության նկատառումներով իրավասու պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններին եւ պաշտոնատար անձանց դիմումներ կամ առաջարկություններ ներկայացնելու եւ ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունք:

Սահմանադրությամբ երաշխավորված վերը նշված իրավունքներն առարկայանում են նաեւ **«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում, որի 1-ին հոդվածի 2-րդ մասի** համաձայն՝ «Սույն օրենքի գործողությունը տարածվում է պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունների, ինչպես նաեւ հանրային նշանակության կազմակերպությունների եւ դրանց պաշտոնատար անձանց վրա»:

Նույն օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը եւ (կամ) դա ստանալու նպատակով օրենքով ահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկատվություն տնօրինողին եւ ստանալու այդ տեղեկությունը»:

Նույն օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին եւ 2-րդ կետերի համաձայն՝ հայցվող տեղակատվությունը պետք է տրամադրվեր 5-օրյա ժամկետում, իսկ 3-րդ կետի համաձայն՝ եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը տրամադրելու համար անհրաժեշտ է կատարել լրացուցիչ աշխատանք, ապա այդ տեղեկությունը դիմողին տրվում է դիմումն ստանալուց հետո՝ 30-օրյա ժամկետում, որի մասին հարցումն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում գրավոր տեղեկացվում է դիմողին՝ նշելով հետաձգման պատճառները եւ տեղեկությունը տրամադրելու վերջնական ժամկետը:

Ի խախտումն Սահմանադրությամբ ու օրենքով երաշխավորված հայցվորի իրավունքների ու պատասխանողի պարտականության, պատասխանող ՊՈԱԿ-ը չի տրամադրել 27.02.2009թ. գրավոր հարցմամբ պահանջվող տեղեկատվությունը, այն դեպքում, երբ պարտավոր էր տրամադրել:

Գտնում են, որ եթե անգամ «ՀՀ պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքներում սահմանված են են եղել 2006, 2007 եւ 2008թթ ՊՈԱԿ-ի ֆինանսավորման չափը, դա հիմք չէ դրա վերաբերյալ տեղեկատվությունը չտրամադրելու համար:

Ինչ վերաբերում է 2-րդ եւ 3-րդ կետերով հարցվող տեղեկատվությանը, ապա, ըստ իրենց, այն առեւտրային գաղտնիք չի պարունակում, մասնավորապես այն, թե որ ընկերությունների հետ է պետական բյուջեից ֆինանսավորվող կազմակերպությունը հանձնարարության եւ նկարագրության պայմանագիր

կնքելու, կամ 2006-2008թթ ընթացքում որքան հասույթ է ստացել նման պայմանագրերից, չի կարող առևտրային գաղտնիք լինել, մասնավորապես, եթե պատասխանում նշվեր, որ ՊՈԱԿ-ը 2007թ.-ին նման պայմանագրերից ստացել է օրինակ 30.000.000 դրամ հասույթ, դա որեւէ ձևով չի կարող առևտրային գաղտնիք լինել, քանի որ ՊՈԱԿ-ն առևտրային կազմակերպություն չէ, այլ հակառակը՝ պետական ոչ առևտրային կազմակերպություն է, հետևաբար առևտրային շահ չունի:

Ինդրել է ոչ իրավաչափ ճանաչել «Երեւանի կառուցապատման եւ ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ի այն գործողությունները կամ անգործությունը, որով սպառիչ եւ լրիվ պատասխան չի տրվել հայցվող տեղեկատվության վերաբերյալ եւ պարտավորեցնել «Երեւանի կառուցապատման եւ ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ին հնգօրյա ժամկետում տրամադրել տեղեկատվություն այն մասին, թե՛

- «Երեւանի կառուցապատման եւ ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ի ֆինանսավորումը ՀՀ պետական բյուջեից 2006, 2007, 2008թթ. որքա՞ն գումար է կազմել,
- ՊՈԱԿ-ը 2006, 2007, 2008թթ-ին ո՞ր կազմակերպությունների հետ է կնքել հանձնարարության եւ նկարագրության պայմանագրեր,
- ՊՈԱԿ-ը 2006, 2007, 2008թթ-ին որքա՞ն հասույթ է ստացել հանձնարարության եւ նկարագրության պայմանագրերից:

Ինչպես նաեւ ինդրել է հօգուտ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի բռնագանձել 8.000 դրամ պետական տուրքի գումարը:

Պատասխանողի փաստարկները եւ հիմնավորումները.

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի նախագահի կողմից ներկայացված հայցադիմումի դեմ առարկում է հատելյալ պատճառաբանությամբ.

Հայցվորի կողմից մատնանշված «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 6-րդ հոդվածի 1-ին մասի, 9-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին եւ 2-րդ կետերի հայտնել են, որ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ կետի տեղեկատվությունը կարող է սահմանափակվել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ եւ օրենքներով նախատեսված դեպքերում:

Նույն օրենքի 8-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն տեղեկատվություն տնօրինողը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասում սահմանված դեպքերի, մերժում է տեղեկատվությունը, եթե դա՝ 1-ին կետի համաձայն՝ պարունակում է պետական, ծառայողական, բանկային, առևտրային գաղտնիք:

Նույն օրենքի 2-րդ հոդվածով հստակ սահմանված է, որ եթե պահանջվող տեղեկատվության մի մասը պարունակում է տվյալներ, որոնց տրամադրումը ենթակա է մերժման, ապա տեղեկատվությունը տրամադրվում է մնացած մասի վերաբերյալ, հետևաբար անհասկանալի է հայցվորի դիրքորոշումը եւ առավել եւս հայց հարուցելը դատական ատյաններ, այն դեպքում, որ օրենքը հս-

տակ սահմանում է տեղեկատվության ստանալու կարգը եւ սահմանափակումները:

Բացի այդ, **ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 141 հոդվածի 1-ին կետի** համաձայն տեղեկատվությունը ծառայողական, առետրային կամ բանկային գաղտնիք է, եթե այն երրորդ անձնաց անհայտ լինելու ուժով ունի իրական կամ հնարավոր առետրային արժեք:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ տեղեկատվությունը, որոնք չեն կարող ծառայողական, առետրային կամ բանկային գաղտնիք լինել, սահմանվում են օրենքով:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ կետում հստակ նշվում է այն տեղեկատվության ցանկը, որը չի կարող մերժվել, իսկ հայցվորի կողմից պահանջվող տեղեկատվությունը նշված ցանկում ընդգրկված չէ: Միաժամանակ հայտնել է, որ հայցվորի կողմից պահանջվող տեղեկատվությունը ոչ այլ ինչ է, քան հաշվետվություն, որը ԾԻԳ ՊՈԱԿ-ը ներկայացնում է պետական լիազոր մարմինն՝ համաձայն իր կանոնադրության եւ հարկային մարմիններին օրենքով սահմանված կարգով:

Դատաքննությամբ հաստատված փաստերը.

- «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ 06.02.2009թ-ին «Երեւանի կառուցապատման եւ ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ի տնօրեն Ռոբերտ Հարությունյանին տեղեկատվություն ստանալու հարցում է ներկայացրել, որով խնդրել է հայտնել, թե՛
- 1. 2008թ. ընթացքում ո՞ր հարկատեսակներից որքա՞ն հարկ է վճարել «Երեւանի կառուցապատման եւ ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական ոչ առետրային կազմակերպությունը:
- 2. 2006, 2007, 2008թ.թ. ընթացքում Երեւան քաղաքում հողի իրացման իրավունք ստացած քանի՞ իրավաբանական եւ ֆիզիկական անձի շահ է Ձեր կազմակերպությունը ներկայացրել ՀՀ դատարաններում:
- 3. 2-րդ հարցում նշված անձանցից ուրաքանչյուրի հետ ծառայություններ մատուցելու ի՞նչ գումարի պայմանագիր ունեք կնքած:
- 4. Այդ մատուցված ծառայություններից որքա՞ն հասույթ եք ստացել:
- «Երեւանի կառուցապատման եւ ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ի 12.02.2009թ. թիվ 38/01-189 գրությամբ պատասխանել է հայցվորի ներկայացրած հարցման 1-ին եւ 2-րդ հարցերին, իսկ հարցված 3-րդ եւ 4-րդ հարցերի վերաբերյալ պատասխան չի տրվել՝ պատճառաբանելով, որ դրանք առետրային գաղտնիք են պարունակում եւ որ ՊՈԱԿ-ը ֆինանսավորվում է պետական բյուջեից, որի վերաբերյալ տեղեկատվությունը կարող են սայել «ՀՀ պետական բյուջեի մասին» օրենքում:
- «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ 27.02.2009թ. «Երեւանի կառուցապատման եւ ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ»

ՊՈԱԿ-ի տնօրեն Ռոբերտ Հարությունյանին կրկին տեղեկատվություն ստանալու հարցում է ներկայացրել՝ խնդրելով հայտնել, թե՝

1. ՊՈԱԿ-ի ֆինանսավորումը ՀՀ պետական բյուջեից 2006, 2007 եւ 2008թթ-ին որքա՞ն գումար է կազմել:
 2. ՊՈԱԿ-ը 2006, 2007 եւ 2008թթ-ին ո՞ր կազմակերպությունների հետ է կնքել հանձնարարության եւ նկարագրության պայմանագրեր:
 3. ՊՈԱԿ-ը 2006, 2007 եւ 2008թթ-ին որքա՞ն հասույթ է ստացել հանձնարարության եւ նկարագրության պայմանագրերից:
- «Երեւանի կառուցապատման եւ ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ի 06.03.2009թ. թիվ 38/01-322 պատասխան գրությամբ նշվել է, որ 1-ին կետով նախատեսված հարցի պատասխանը պաշտոնապես հրապարակվել է «ՀՀ պետական բյուջեի մասին» համապատասխան օրենք-ներում, իսկ 2-րդ եւ 3-րդ կետերով ներկայացված հարցերի պատասխանները պարունակում են առևտրային գաղտնիք, հետեւաբար նման տեղեկատվություն չի կարող տրամադրվել:

Դատարանի եզրահանգումները.

Վարչական դատարանը գտնում է, որ հայցն անհիմն է եւ ենթակա է մերժման՝ հետեւյալ օրենսդրական հիմքերով.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 141-րդ հոդվածի համաձայն՝

1. *Տեղեկատվությունը ... առևտրային ... գաղտնիք է, եթե այն երրորդ անձանց անհայտ լինելու ուժով ունի իրական կամ հնարավոր առևտրային արժեք, չկա օրինական հիմքերով այն ազատորեն ստանալու հնարավորություն եւ տեղեկատվություն ունեցողը միջոցներ է ձեռնարկում դրա գաղտնիության պահպանման համար:*
2. *Տեղեկությունները, որոնք չեն կարող ... առևտրային ... գաղտնիք լինել, սահմանվում են օրենքով:*

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝

1. *Յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը եւ (կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկատվություն տնօրինողին եւ ստանալու այդ տեղեկությունը:*
3. *Տեղեկատվության ազատությունը կարող է սահմանափակվել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ եւ օրենքով նախատեսված դեպքերում:*

Նույն օրենքի 8-րդ հոդվածի համաձայն՝

1. *Տեղեկատվություն տնօրինողը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասում սահմանված դեպքերի, մերժում է տեղեկության տրամադրումը, եթե դա՝*
 - 1) *պարունակում է պետական, ծառայողական, բանկային, առևտրային գաղտնիք,*
2. *եթե պահանջվող տեղեկության մի մասը պարունակում է տվյալներ, որոնց տրամադրումը ենթակա է մերժման, ապա տեղեկություն է տրամադրվում մնացած մասի վերաբերյալ:*
3. *Տեղեկության տրամադրումը չի կարող մերժվել, եթե դա՝*
 - 1) *վերաբերում է քաղաքացիների անվտանգությանը եւ առողջությանը սպառնացող արտակարգ դեպքերին, ինչպես նաեւ տարերային (ներառյալ՝ պաշտոնապես կանխատեսվող) աղետներին եւ դրանց հետեւանքներին,*
 - 2) *ներկայացնում է ՀՀ տնտեսության ընդհանուր վիճակը, ինչպես նաեւ բնության եւ շրջակա միջավայրի պաշտպանության, առողջապահության, կրթության, գյուղատնտեսության, առևտրի, մշակույթի բնագավառում տիրող իրական վիճակը,*
 - 3) *չտրամադրելը բացասական ազդեցություն կունենա Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական, գիտատեխնիկական եւ հոգեւոր-մշակութային զարգացման պետական ծրագրերի իրականացման վրա:*

ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք, ներառյալ՝ տեղեկություններ եւ գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը, տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից:

ՀՀ Սահմանադրության 27.1-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր անձնական կամ հասարակական շահերի պաշտպանության նկատառումներով իրավասու պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններին եւ պաշտոնատար անձանց դիմումներ կամ առաջարկություններ ներկայացնելու եւ ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունք:

«Երեւանի կառուցապատման եւ ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ը «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ 06.02.2009թ-ին հարցմամբ առաջադրված 4 հարցերից, պատասխանել է առաջին երկու հարցերին, իսկ 3-րդ եւ 4-րդ հարցերի վերաբերյալ պատասխան չի տրվել՝ պատճառաբանելով, որ դրանք առևտրային գաղտնիք են պարունակում եւ որ ՊՈԱԿ-ը ֆինանսավորվում է պետական բյուջեից, որի վերաբերյալ տեղեկատվությունը կարող են նայել «ՀՀ պետական բյուջեի մասին» օրենքում:

«Երեւանի կառուցապատման եւ ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ը «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի 27.02.2009թ. հարցմանն ի պատասխան հայտնել է, որ 1-ին կետով նախատեսված հարցի պատասխանը պաշտոնապես հրապարակվել է «ՀՀ պետական բյուջեի մասին» համապատասխան օրենքներում, իսկ 2-րդ եւ 3-րդ կետերով ներկայացված հարցերի պատասխանները պարունակում են ամբողջական գաղտնիք, հետեւաբար նման տեղեկատվություն չի կարող տրամադրվել:

«Երեւանի կառուցապատման եւ ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ը օրենքով սահմանված ժամկետներում «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի հարցումներին պատասխանել է բոլոր այն հարցերի մասով, որոնք իրենց մեջ ամբողջական գաղտնիք չեն պարունակել եւ ինչպես նաեւ հղում է կատարել այն օրենքին, որտեղից նրանք կարող էին ստանալ իրենց փնտրած տեղեկությունը: Իսկ հարցերի մի մասին էլ չի պատասխանել՝ նկատի ունենալով, որ դրանք իրենց մեջ ներառում են ամբողջական գաղտնիք: Այս առումով, ճիշտ է, ՊՈԱԿ-ը պետական ոչ ամբողջական կազմակերպություն է, եւ ինչպես հայցվորն է նշում՝ ամբողջական շահ չունի, սակայն հայցվորի ուշադրությունից վրիպել է մի փաստ, այն է՝ ամբողջական շահ ունեն այն կազմակերպությունները, որոնց հետ ՊՈԱԿ-ը կնքել է պայմանագրեր, եւ հայցվորին տրամադրելով նրանց պահանջած տեղեկությունը՝ կատարելով, որ հրապարակում է տվյալ կազմակերպությունների ամբողջական գաղտնիքը:

ՀՀ վարչական դատարանը եզրակացրեց, որ «Երեւանի կառուցապատման եւ ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ը գործել է օրենքի շրջանակներում, հետեւաբար նրա գործողությունները ոչ իրավաչափ ճանաչելու հիմքեր չկան:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 112-115-րդ հոդվածներով՝ դատարանը

Վ Ճ Ո Շ Ց

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի հայցն ընդդեմ «Երեւանի կառուցապատման եւ ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ի՝ «Երեւանի կառուցապատման եւ ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ի գործողությունները ոչ իրավաչափ ճանաչելու, որպես հետեւանք տեղեկատվություն տրամադրել պարտադրելու պահանջների մասին, մերժել:

Սույն վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո եւ կարող է բողոքարկվել վճռաբեկության կարգով:

ԴԱՏԱՎՈՐ

Ա.ՂԱԶԱՐՅԱՆ:

Գործ 16.

**Ինֆորմացիայի ազատության
կենսրոնն**

ընդդեմ

**ՏՏ վարչական դատարանի
դատավորի որոշման**

Գործի համառոտ նկարագրությունը

2009թ.-ի ապրիլի 9-ին Ինֆորմացիայի ազատության կենտրոնը դիմել էր ՀՀ Վարչական դատարան ընդդեմ Չարթոնքի գյուղապետարանի՝ տեղեկատվություն տրամադրելու եւ Չարթոնքի գյուղապետին վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջներով:

Վարչական դատարանը Չարթոնքի գյուղապետին վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջի մասով մերժել էր այն պատճառաբանությամբ, թե հասարակական կազմակերպությունը վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջով Վարչական դատարան դիմելու իրավունք չունի:

Ուստի, 23.04.2009թ.-ին ԻԱԿ-ը դիմեց ՀՀ Վարչական դատարանի նախագահին՝ խնդրելով վերացնել Վարչական դատարանի դատավորի որոշումը Չարթոնքի գյուղապետին վարչական պատասխանատվության՝ 50.000 դրամի չափով տուգանքի ենթարկելու պահանջի մասով ԻԱԿ-ի հայցը մերժելու մասին:

ՀՀ Վարչական դատարանը բավարարեց ԻԱԿ-ի բողոքը՝ ամրագրելով, որ հասարակական կազմակերպությունը կարող է դիմել դատարան պաշտոնատար անձին վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջով:

Գործի նյութերը

ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻՆ

Երեւան Գ. Նժդեհի 23

Հայցվոր՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն»
հասարակական կազմակերպության
Ներկայացուցիչ՝ Կարեն Մեժլումյան
Պատասխանողներ՝ Չարթոնքի գյուղապետարան
Հասցե՝ Արմավիրի մարզ, գ. Չարթոնք
Չարթոնքի գյուղապետ՝ Պարույր Սարգսյան

Բողոքարկվող դատական ակտ՝

ՀՀ վարչական դատարանի 10.04.2009թ. թիվ ՎԴ4/0074/05/09 որոշում՝ հայցադիմումը մի մասով վարույթ ընդունելու եւ մյուս մասով ընդունումը մերժելու մասին

Էջմիածնի նստավայր, ք. Էջմիածին,

Դատավոր՝ Ա. Ծատուրյան

20.04.2009թ.

Բ Ո Ղ Ո Ք

ՀՀ վարչական դատարանի 10.04.2009թ. թիվ ՎԴ4/0074/05/09 որոշման դեմ

1. Գործի դատավարական նախապատմությունը.

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունը հայցով դիմել է ՀՀ վարչական դատարանի Էջմիածնի նստավայր ընդդեմ Չարթոնքի գյուղապետարանի եւ Չարթոնքի գյուղապետ Պարույր Սարգսյանի՝ խնդրելով՝

1. ոչ իրավաչափ ճանաչել Չարթոնքի գյուղապետարանի այն գործողությունները կամ անգործությունը, որով օրենքով սահմանված առավելագույն ժամկետում սպառիչ եւ լրիվ պատասխան չի տրվել հայցվող տեղեկատվության վերաբերյալ եւ պարտավորեցնել Չարթոնքի գյուղապետարանին հնգօրյա ժամկետում տրամադրել Չարթոնք համայնքի 2008թ. բյուջեի եւ Չարթոնք համայնքի 2008թ. բյուջեի կատարման հաշվետվության պատճենները:
2. Չարթոնքի գյուղապետ Պարույր Սարգսյանին ենթարկել վարչական պատասխանատվության՝ տուգանքի՝ 50000 դրամի չափով:

3. Չարթոնքի գյուղապետարանից հոգուտ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի բռնագանձել 8000 դրամ պետական տուրքի գումարը:

ՀՀ վարչական դատարանը 10.04.2009թ-ին թիվ ՎԴ4/0074/05/09 որոշում է կայացրել՝ հայցադիմումը մի մասով վարույթ ընդունելու եւ մյուս մասով ընդունումը մերժելու մասին:

Նշված որոշումը ՀԿ-ն ստացել է 17.04.2009թ-ին, եւ բողոք բերելու համար սահմանված հնգօրյա ժամկետը լրանալու էր 22.04.2009թ-ին:

Սույն բողոքը բերվում է ՀՀ վարչական դատարանի 10.04.2009թ. թիվ ՎԴ4/0074/05/09 որոշման՝ Չարթոնքի գյուղապետին 50.000 դրամի չափով վարչական պատասանատվության ենթարկելու պահանջի մասով հայցադիմումի ընդունումը մերժելու մասի դեմ:

2. Բողոքի հիմքը եւ իրավական փաստարկները.

ՀՀ Սահմանադրության՝

- 27 հոդվածի 2-րդ պարբերության համաձայն. *«Յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք, ներառյալ տեղեկություններ եւ գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը, տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից».*
- 27.1 հոդվածի համաձայն. *«Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական կամ հասարակական շահերի պաշտպանության նկատառումներով իրավասու պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններին եւ պաշտոնատար անձանց դիմումներ կամ առաջարկություններ ներկայացնելու եւ ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունք»:*

Սահմանադրությամբ երաշխավորված վերը նշված իրավունքներն առարկայանում են նաեւ **«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում, որի 6 հոդվածի 1-ին մասի** համաձայն.

«Յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը եւ (կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկատվություն տնօրինողին եւ ստանալու այդ տեղեկությունը»:

Նույն օրենքի 9 հոդվածի 7-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝

եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը տրամադրելու համար անհրաժեշտ է կատարել լրացուցիչ աշխատանք, ապա այդ տեղեկությունը դիմողին է տրվում դիմումն ստանալուց հետո՝ 30-օրյա ժամկետում, որի մասին հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում, գրավոր տեղեկացվում է դիմողին՝ նշելով հետաձգման պատճառները եւ տեղեկությունը տրամադրելու վերջնական ժամկետը:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրքի 189.7. հոդվածը պատասխանատվություն է սահմանում տեղեկություն տալու պարտականությունը չկատարելու համար, որի համաձայն.

«Օրենքով նախատեսված տեղեկությունը պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունների, ինչպես նաեւ հանրային նշանակության կազմակերպությունների պաշտոնատար անձանց կողմից ապօրինաբար չտրամադրելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկից մինչեւ հիսնապատիկի չափով:

Նույն խախտումը, որը կատարվել է կրկին անգամ՝ վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո մեկ տարվա ընթացքում՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից մինչեւ հարյուրապատիկի չափով»:

Նույն օրենսգրքի 223 հոդվածի համաձայն՝ առաջին ատյանի դատարանների դատավորները քննում են սույն օրենսգրքի 189.7 հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 17 Գլուխը՝ 219-244¹⁴ հոդվածներ, սահմանում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի ենթակայությունը: Նշված՝ 219-244¹⁴ հոդվածներից յուրաքանչյուրով սահմանված են այն մարմինները, որոնց ենթակա են կոնկրետ վարչական գործերի քննությունը:

Այդ մարմինների պաշտոնատար անձինք էլ իրավասու են, իրենց ենթակայության գործերով կազմելու վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն եւ Սահմանադրության 5-րդ հոդվածի պահանջից ելնելով իրավասու չեն կազմելու իրենց ենթակայությանը չվերապահված իրավախախտումների վերաբերյալ արձանագրություններ, օրինակ, լեզվի տեսչության աշխատակիցը չի կարող ճանապարհային երթուղեկության կանոնների խախտման վերաբերյալ արձանագրություն կազմել եւ՝ հակառակը:

Դա նշանակում է, որ օրենսգրքով դատարանի դատավորից բացի չկա մի մարմին, որն իրավասու է կազմել օրենսգրքի 223 հոդվածում նշված, այդ թվում 189.7 հոդվածներով նախատեսված, առաջին ատյանի դատարանների դատավորների քննությանը ենթակա վարչական իրավախախտումների վերաբերյալ արձանագրություն, որով ընդամենը արձանագրում է իրավախախտման փաստը:

Նշվածից հետեւում է, որ եթե դատարանը գործի քննությամբ հաստատված է համարում, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը պահանջվող տեղեկատվությունը չի տրամադրել, ապա հենց դա էլ իրավախախտման փաստի արձանագրումն է ու տվյալ պաշտոնատար անձին պատասխանատվության ենթարկելու հիմքը:

Հակառակ մոտեցման դեպքում կստացվի, որ օրենսգրքի 223 հոդվածում թվարկված՝ 40.1-40.7, 44, 53, 53.1, 97.2, 97.3, 104.3, 147, 166.1, 170.5, 172 հոդվածներով, 175 հոդվածի երրորդ մասով եւ 180.1, 182, 183.1, 185, 189.2, 189.3, 189.4, 189.5, 189.6, 189.7, 189.8, 189.9, 189.10 եւ 198.2 հոդվածի չորրորդ եւ հինգերորդ մասերով, 206.1, 206.2, 206.3, 206.4, 206.5, 206.6 եւ 206.7,

206.8 հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումներով որել է անձ վարչական պատասխանատվության չի ենթարկվի, քանի որ չկա արձանագրությունը կազմող մարմինը, ինչը կհանգեցնի սահմանադրական իրավունքների, մեր դեպքում՝ տեղեկատվություն ստանալու իրավունքի խախտման, քանի որ եթե տեղեկատվությունը տնօրինող պաշտոնատար անձը վստահ լինի, որ այն չտրամադրելու համար պատասխանատվություն չի կրի արձանագրության բացակայության պատճառաբանությամբ, ապա այն չի տրամադրի:

Նշենք նաեւ, որ համանման պահանջներով այլ գործերով ՀՀ վարչական դատարանը գործերը բոլոր հայցապահանջներով վարույթ է ընդունել եւ, օրինակ, 23.03.2009թ. թիվ ՎԴ/6279/05/08 վճռով Նոր Նորքի թաղապետին վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջը մերժել է, պատճառաբանությամբ, որ գործի քննության ժամանակ պահանջվող տեղեկատվությունը տրվել է (նշված վճիռը ՀՀ վարչական դատարանում առկա է):

Դա նշանակում է, որ դատարանի այն հետեւությունը, որ հայցվորն ակնհայտորեն իրավունք չունի նման պահանջով դիմելու դատարան, քանի որ տեղեկությունը ապօրինաբար չտրամադրելը հաստատող որել է ապացույց չի ներկայացրել, անհիմն է, ավելին, ըստ էության նախագահող դատավորի կողմից հայտնած նախնական կարծիք է ներկայացված ապացույցների վերաբերյալ, ինչն արդեն կասկածի տակ է դնում նրա անաչառությունն ու ինքնաբացարկի հիմք է:

Վերոգրյալից ելնելով եւ ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 18 եւ 19 հոդվածներով, Կոնվենցիայի 6 հոդվածով, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 125 եւ այլ հոդվածներով

Խնդրում ենք՝

Վերացնել ՀՀ վարչական դատարանի 10.04.2009թ. թիվ ՎԴ4/0074/05/09 որոշման՝ Չարթունքի գյուղապետին 50.000 դրամի չափով վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջի մասով՝ հայցադիմումի ընդունումը մերժելու մասը:

Կից ներկայացվում են՝

1. բողոքարկվող որոշումը եւ ծրարը,
2. բողոքը կողմերին ուղարկելու մասին ապացույցներ,
3. լիազորագրի պատճենը (ընօրինակը ներկայացվել է հայցադիմումին կից):

Լիազոր ներկայացուցիչ՝

Կարեն Մեծլումյան:

ՎԴ4/0074/05/09

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ՈՐՈՇՈՒՄ

ԲՈՂՈՔԸ ԲԱՎԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

28.04.2009թ.

ք. Երեւան

Հայաստանի Հանրապետության վարչական դատարանը
հետեւյալ կազմով՝

Նախագահող դատավոր՝ Ա. Առաքելյան,
դատավոր՝ Ռ. Սարգսյան,
դատավոր՝ Կ. Բաղդասարյան

քննելով թիվ ՎԴ4/0074/05/09 վարչական գործով հայցվոր «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության բողոքը՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի /Էջմիածնի նստավայր, դատավոր Ա. Ծատուրյան/ 10.04.2009 թվականի՝ հայցադիմումը մի մասով վարույթ ընդունելու եւ մյուս մասով ընդունումը մերժելու մասին որոշումը մասնակի՝ հայցադիմումի մի մասի ընդունումը մերժելու մասով, վերացնելու պահանջի վերաբերյալ,

ՊԱՐԶԵՑ

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունը 09.04.2009 թվականին հայցադիմում է ներկայացրել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան /Էջմիածնի նստավայր/ ընդդեմ Չարթոնքի գյուղապետարանի՝ տեղեկատվություն տրամադրել պարտադրելու եւ Չարթոնքի գյուղապետ Պարույր Սարգսյանին վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջների մասին:

Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի /Էջմիածնի նստավայր/ 10.04.2009 թվականի որոշմամբ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության հայցադիմումն ընդդեմ Չարթոնքի գյուղապետարանի՝ տեղեկատվություն տրամադրել պարտադրելու պահանջի մասով ընդունվել է վարույթ, իսկ Չարթոնքի գյուղապետին 50.000 դրամի չափով վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջի մասով՝ հայցադիմումի ընդունումը մերժվել է, հետեւյալ պատճառաբանությամբ.

Դատարանը եզրակացրել է, որ հայցադիմումը մի մասով, այն է՝ տեղեկատվություն տրամադրել պարտադրելու մասով, ներկայացվել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի պահանջներին համապատասխան, հետևաբար՝ նույն օրենսգրքի 77-րդ հոդվածի համաձայն՝ հայցադիմումն այդ մասով պետք է ընդունել վարույթ:

Ինչ վերաբերում է Չարթոնքի գյուղապետին 50.000 դրամի չափով վարչական պատասխանատվության ենթարկելու մասով պահանջին, ապա դատարանը գտել է, որ այն ենթակա է մերժման, քանի որ հայցվոր կողմն ապացույց չի ներկայացրել այն մասին, որ ինքն այդ իրավունքն ունի ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ /այսուհետ՝ ՎԻՎ/ օրենսգրքի 254-րդ հոդվածին համապատասխան: Այսինքն, հայցվորը դատարան չի ներկայացրել տեղեկություն չտրամադրելու վերաբերյալ իրավասու մարմնի կամ հասարակական կազմակերպության՝ նշված օրենսգրքի 255-րդ հոդվածի պահանջներին համապատասխան կազմված արձանագրությունը, որը պարտադիր է վարչական պատասխանատվության ենթարկելու համար: Այսինքն, հայցվորն այդ մասով ակնհայտորեն իրավունք չունի դիմելու դատարան, քանի որ տեղեկություն ապօրինաբար չտրամադրելը հաստատող որեւէ ապացույց չի ներկայացրել, ընդհակառակը, դատարանով փորձում է հասնել նրան, որ հաստատվի այդ փաստը եւ Չարթոնքի գյուղապետարանին պարտավորեցնի տրամադրել հայցվող տեղեկությունը:

Սակայն, եթե դատարանը դատաքննության ընթացքում նույնիսկ հաստատված համարի տեղեկությունն ապօրինաբար չտրամադրելը, ապա դա ինքնըստինքյան չի հանգեցնում ՎԻՎ ՀՀ օրենսգրքի 1897-րդ հոդվածով սահմանված պատասխանատվության կիրառմանը, քանի որ դրա համար օրենքը պահանջում է որոշակի գործողությունների իրականացում իրավասու պետական մարմնի կամ պաշտոնատար անձի կամ հասարակական կազմակերպության կողմից՝ ըստ ՎԻՎ ՀՀ օրենսգրքի 254-րդ հոդվածի, որը բացակայում է սույն գործում: Ըստ նշված օրենսգրքի 254-րդ հոդվածի՝ որեւէ անձ իրավասու չէ 189.7-րդ հոդվածով սահմանված վարչական պատասխանատվության ենթարկելու համար դատարան դիմել, քանի դեռ օրենքով լիազորված չէ կատարելու ՎԻՎ օրենսգրքի 254-255 հոդվածներով նախատեսված գործողությունները: Այդ եզրահանգումը բխում է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 151-րդ հոդվածից, ըստ որի՝ վարչական պատասխանատվության ենթարկելու մասին գործերը հարուցվում են օրենքով վարչական իրավախախտումների վերաբերյալ արձանագրություններ կազմելու լիազորություններ ունեցող մարմինների եւ պաշտոնատար անձանց հայցադիմումների հիման վրա: Մինչդեռ սույն գործով հայցվորը չի մտնում այդ մարմինների ցանկի մեջ:

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունը 23.04.2009 թվականին բողոք է ներկայացրել ՀՀ վարչական դատարան՝ խնդրելով վերացնել ՀՀ վարչական դատարանի 10.04.2009թ. թիվ ՎԴ4/0074/05/09 որոշման՝ Չարթոնքի գյուղապետին 50.000 դրամի չափով վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջի մասով հայցադիմումի ընդունումը մերժելու մասը՝ պատճառաբանելով, որ ՎԻՎ ՀՀ

օրենսգրքի 189.7-րդ հոդվածը պատասխանատվություն է սահմանում տեղեկություն տալու պարտականությունը չկատարելու համար: Նույն օրենսգրքի 223-րդ հոդվածի համաձայն՝ առաջին ատյանի դատարանների դատավորները քննում են սույն օրենսգրքի 189.7 հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը: ՎԻՎ ՅՅ օրենսգրքի 17-րդ գլուխը՝ 219-244.14 հոդվածներ, սահմանում է վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի ենթակայությունը: Նշված ՝ 219-244.14 հոդվածներից յուրաքանչյուրով սահմանված են այն մարմինները, որոնց ենթակա են կոնկրետ վարչական գործերի քննությունը: Այս մարմինների պաշտոնատար անձինք էլ իրավասու են իրենց ենթակայության գործերով կազմել վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն եւ ՅՅ Սահմանադրության 5-րդ հոդվածի պահանջներից ելնելով՝ իրավասու չեն կազմել իրենց ենթակայությանը չվերապահված իրավախախտումների վերաբերյալ արձանագրություններ: Դա նշանակում է, որ օրենսգրքով դատարանի դատավորից բացի չկա մի մարմին, որն իրավասու է կազմել օրենսգրքի 223-րդ հոդվածում նշված, այդ թվում՝ 189.7 հոդվածներով նախատեսված, առաջին ատյանի դատարանների դատավորների քննությանը ենթակա վարչական իրավախախտումների վերաբերյալ արձանագրություն, որով ընդամենը արձանագրվում է իրավախախտման փաստը: Նշվածից հետեւում է, որ եթե դատարանը գործի քննությամբ հաստատված է համարում, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը պահանջվող տեղեկատվությունը չի տրամադրել, ապա հենց դա էլ իրավախախտման փաստի արձանագրումն է ու տվյալ պաշտոնատար անձին պատասխանատվության ենթարկելու հիմքը:

Խնդրվում է վերացնել ՅՅ վարչական դատարանի 10.04.2009թ. թիվ ՎԴ4/0047/05/09 որոշման՝ Չարթունքի գյուղապետին 50.000 դրամի չափով վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջի մասով հայցադիմումի ընդունումը մերժելու մասը:

Հայաստանի Հանրապետության վարչական դատարանը գտնում է, որ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության բողոքը ենթակա է բավարարման հետեւյալ պատճառաբանությամբ:

ՅՅ վարչական դատարանը /Էջմիածնի նստավայր/ 10.04.2009 թվականի հայցադիմումի մի մասի ընդունումը մերժելու մասին որոշումը կայացնելիս հիմք է ընդունել այն հանգամանքը, որ հայցվորը դատարանին չի ներկայացրել տեղեկություն չտրամադրելու վերաբերյալ իրավասու մարմնի կամ հասարակական կազմակերպության՝ ՎԻՎ ՅՅ օրենսգրքի 255-րդ հոդվածի պահանջներին համապատասխան կազմված արձանագրությունը, որը պարտադիր է վարչական պատասխանատվության ենթարկելու համար:

Մինչդեռ, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՅՅ օրենսգրքի 247-րդ հոդվածով սպառնչ սահմանված են վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի վարույթը բացառող հանգամանքները, որոնց ուսումնասիրությունից պարզվում է, որ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության բացակայությունը վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի վարույթը բացառող հանգամանք չէ:

Ավելին, ՎԻՎ ՅՅ օրենսգրքի 17-րդ գլուխը /219-244.14 հոդվածներ/ սահմանում է վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի ենթակայությունը, որի 223-րդ հոդվածի համաձայն՝ առաջին ատյանի դատարանների դատավորները այլ հոդվածների թվում քննում են նաև ՎԻՎ ՅՅ օրենսգրքի 189.7-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը: ՅՅ վարչական դատարանը փաստում է, որ ՎԻՎ ՅՅ օրենսգրքով սահմանված չէ որևէ մարմին կամ հասարակական կազմակերպություն, որն իրավասու է ՎԻՎ ՅՅ օրենսգրքի 255-րդ հոդվածի պահանջներին համապատասխան՝ ՎԻՎ ՅՅ օրենսգրքի 189.7-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտման դեպքում կազմել արձանագրություն:

Ամբողջ վերոգրյալից հետևում է, որ դատարանը գործի քննությամբ պետք է պարզի ՎԻՎ ՅՅ օրենսգրքի 189.7-րդ հոդվածով նախատեսված զանցանքի հատկանիշների առկայությունը /կամ բացակայությունը/:

Նման պայմաններում ՅՅ վարչական դատարանը գտնում է, որ բողոքը հիմնավոր է, իսկ հայցն ամբողջությամբ ենթակա է քննության ՅՅ վարչական դատարանում, հետևաբար՝ Յայաստանի Յանրապետության վարչական դատարանի 10.04.2009թ. թիվ ՎԴ4/0047/05/09 որոշումը՝ Չարթոնքի գյուղապետին 50.000 դրամի չափով վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջի մասով հայցադիմումի ընդունումը մերժելու մասով ենթակա է վերացման:

Վերոգրյալի հիման վրա, ղեկավարվելով ՅՅ վարչական դատավարության օրենսգրքի 112, 125-128 եւ 133 հոդվածներով՝ ՅՅ վարչական դատարանը

ՈՐՈՇԵՑ

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության բողոքը՝ Յայաստանի Յանրապետության վարչական դատարանի 10.04.2009 թ. թիվ ՎԴ4/0074/05/09 որոշումը Չարթոնքի գյուղապետին 50.000 դրամի չափով վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջի մասով՝ հայցադիմումի ընդունումը մերժելու մասով, վերացնելու պահանջի վերաբերյալ, բավարարել:

Թիվ ՎԴ4/0074/05/09 վարչական գործով Յայաստանի Յանրապետության վարչական դատարանի /Էջմիածնի նստավայր/ 10.04.2009 թվականի որոշումը Չարթոնքի գյուղապետին 50.000 դրամի չափով վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջի մասով՝ հայցադիմումի ընդունումը մերժելու մասով, վերացնել:

Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից եւ կարող է բողոքարկվել Յայաստանի Յանրապետության վճռաբեկ դատարան:

ՆԱԽԱԳԱՅՐՂ ԴԱՏԱՎՈՐ

ԴԱՏԱՎՈՐ

ԴԱՏԱՎՈՐ

Ա. ԱՌԱԶԵԼՅԱՆ

Ռ. ՍԱՐԳՍՅԱՆ

Կ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Գործ 17.

**Ինֆորմացիայի ազատության
կենտրոնի դիմումը
ՏՏ Սահմանադրական դատարան**

Գործի համառոտ նկարագրությունը

Ինֆորմացիայի ազատության կենտրոնը սեպտեմբերի 9-ին դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 151 եւ 152 հոդվածները հակասահմանադրական ճանաչելու պահանջով:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 151 հոդվածը, այնքանով, որքանով առանց բացառության սահմանում է, որ «Վարչական պատասխանատվության ենթարկելու մասին գործերը հարուցվում են օրենքով վարչական իրավախախտումների վերաբերյալ արձանագրություններ կազմելու լիազորություն ունեցող մարմինների եւ պաշտոնատար անձանց հայցադիմումների հիման վրա» եւ հնարավորություն չի տալիս ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 223 հոդվածում թվարկված իրավախախտումներ կատարած պաշտոնատար անձանց, այդ թվում 189.7 հոդվածով նախատեսված իրավախախտում կատարած պաշտոնատար անձին վարչական պատասխանատվության ենթարկելու գործ հարուցել տուժողի հայցադիմումի հիման վրա, ճանաչել ՀՀ Սահմանադրության 18 եւ 19 հոդվածներին հակասող եւ այդ մասով անվավեր:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 152 հոդվածը, այնքանով, որքանով վարչական պատասխանատվության ենթարկելու մասին հայցադիմումին ներկայացվող պահանջների ցանկում առանց բացառության բոլոր իրավախախտումների, այդ թվում ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 223 հոդվածում թվարկված

իրավախախտումների, մասնավորապես՝ 189.7 հոդվածով նախատեսված վարչական իրավախախտման համար սահմանված է արձանագրության կազմման վերաբերյալ տեղեկություններ նշելու եւ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը կցելու պայման, ճանաչել ՀՀ Սահմանադրության 18 եւ 19 հոդվածներին հակասող եւ այդ մասերով անվավեր:

Նշենք նաեւ, որ դատական պրակտիկայում նշված հարցի վերաբերյալ առկա է իրարամերժ մոտեցում, մասնավորապես, վարչական դատարանի մի կազմը «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի հայցերը՝ վարչական պատասխանատվության ենթարկելու մասով վարույթ չէր ընդունում, մյուս կազմը՝ վարույթ էր ընդունում, արձանագրելով, որ նման գործով արձանագրություն կազմող մարմին առկա չէ:

2010թ.-ի փետրվարի 5-ին ՀՀ Սահմանադրական դատարանում քննվեց ՀՀ Վարչական դատավարության օրենսգրքի 151 եւ 152 հոդվածները ՀՀ Սահմանադրությանը հակասող ճանաչելու վերաբերյալ ԻԱԿ-ի դիմումը: Հենց նույն օրն էլ Սահմանադրական դատարանը հրապարակեց իր որոշումը:

Սահմանադրական դատարանը որոշեց, որ ՀՀ Վարչական դատավարության օրենսգրքի 151 եւ 152 հոդվածները Սահմանադրությանը չեն հակասում: Սահմանադրական դատարանը արձանագրեց, որ խնդիրը կայանում է այս ոլորտում օրենսդրական բացի առկայության մեջ: Անհրաժեշտ է, որպեսզի իրավասու մարմինը,

այսինքն՝ ՀՀ Ազգային ժողովը համապատասխան նախաձեռնություն իրականացնի՝ ՀՀ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում բարեփոխումներ կատարելու եւ վարչական պատասխանատվության ենթարկելու ինստիտուտի օրենսդրական բացը լրացնելու համար:

Վերջում ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահ Գագիկ Հարությունյանը շնորհակալություն հայտնեց ԻԱԿ-ին նման կարեւոր խնդրին անդրադառնալու համար:

Գործի նյութերը

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻՆ

Դիմող՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն»
հասարակական կազմակերպության
Նախագահ՝ Շուշան Դոյրոյան
Ներկայացուցիչ-փաստաբան՝ Կարեն Մեժլումյան
Պատասխանող՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով

09.09.2009թ.

Դ Ի Մ ՈՒ Մ

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 151 եւ 152
հոդվածների սահմանադրականության վերաբերյալ

I. Գործի փաստական հանգամանքները.

1. «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունը (այսուհետ նաեւ՝ ԻԱԿ) հայցով դիմել է ՀՀ վարչական դատարան ընդդեմ «Երեւանի կառուցապատման եւ ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ի եւ «Երեւանի կառուցապատման եւ ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ի տնօրեն Ռոբերտ Հարությունյանի՝ ՊՈԱԿ-ի գործողությունները ոչ իրավաչափ ճանաչելու, որպես հետեւանք տեղեկատվություն տրամադրել պարտադրելու եւ «Երեւանի կառուցապատման եւ ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ի տնօրեն Ռոբերտ Հարությունյանին վարչական պատասխանատվության ենթարկելու /տուգանք՝ 50.000 դրամի չափով/ մասին պահանջներով:

ՀՀ վարչական դատարանը 14.04.2009թ. թիվ ՎԴ/1696/05/09 որոշում է կայացրել հայցադիմումը վարչական դատարանին ընդդատյա մասով վարույթ ընդունելու, մնացած մասով հայցադիմումի ընդունումը մերժելու մասին:

ԻԱԿ-ը բողոքարկել է ՀՀ վարչական դատարանի 14.04.2009թ. թիվ ՎԴ/1696/05/09 որոշման՝ «Երեւանի կառուցապատման եւ ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ի տնօրեն Ռոբերտ Հարությունյանին 50.000 դրամի չափով վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջի մասով հայցադիմումի ընդունումը մերժելու մասը:

ՀՀ վարչական դատարանի 11.05.2009թ. թիվ ՎԴ/1696/05/09 որոշումով բողոքը մերժվել է:

ՀՀ վարչական դատարանի 11.05.2009թ. թիվ ՎԴ/1696/05/09 որոշումը բողոքարկվել է ՀՀ վճռաբեկ դատարան: Վճռաբեկ դատարանին միջնորդություն է ներկայացվել՝ դիմել ՀՀ սահմանադրական դատարան՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 151 հոդվածի սահմանադրականության, մասնավոր

րապես ՀՀ Սահմանադրության 18 եւ 19 հոդվածներին համապատասխանության հարցով:

ՀՀ վճռաբեկ դատարանի 12.08.2009թ. թիվ ՎԴ/1696/05/09 որոշումով վճռաբեկ բողոքը, ինչպես նաեւ ՀՀ սահմանադրական դատարանին դիմելու միջնորդությունը մերժվել է:

Ինչպես վարչական, այնպես էլ վճռաբեկ դատարանի որոշումներում այն դիրքորոշումն է հայտնվել, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 151 եւ 152 հոդվածների համաձայն՝ վարչական դատարանում վարչական պատասխանատվության ենթարկելու մասին գործեր կարող են հարուցվել միայն օրենքով վարչական իրավախախտումների վերաբերյալ արձանագրություններ կազմելու լիազորություն ունեցող մարմինների եւ պաշտոնատար անձանց հայցադիմումների հիման վրա:

2. «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունը հայցով դիմել է ՀՀ վարչական դատարան ընդդեմ Նոր Նորքի թաղապետարանի եւ Նոր Նորքի թաղային համայնքի ղեկավար Դավիթ Պետրոսյանի՝ Նոր Նորքի թաղապետարանի անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու, վերջինիս հնգօրյա ժամկետում տեղեկատվություն տրամադրելուն պարտավորեցնելու եւ Նոր Նորքի թաղային համայնքի ղեկավար Դավիթ Պետրոսյանին 50.000 դրամ տուգանքի չափով վարչական պատասխանատվության ենթարկելու մասին պահանջներով:

ՀՀ վարչական դատարանը 23.03.2009թ-ին վճռել է.

««Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության հայցը բավարարել մասնակի՝ Նոր Նորքի թաղապետարանի անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու պահանջի մասով:

Ոչ իրավաչափ ճանաչել Կազմակերպության կողմից հայցվող տեղեկատվության տրամադրման մերժելուն ուղղված Համայնքի ղեկավարի գործողությունները:

Հայցը՝ Նոր Նորքի թաղապետարանին հնգօրյա ժամկետում տեղեկատվություն տրամադրելուն պարտավորեցնելու եւ Նոր Նորքի թաղային համայնքի ղեկավար Դավիթ Պետրոսյանին 50.000 դրամ տուգանքի չափով վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջների մասով մերժել:

Երեւանի Նոր Նորք համայնքից հօգուտ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության բռնագանձել 4.000 դրամ՝ որպես պետական տուրքի գումար»:

Վճռի՝ հայցը մերժելու մասի դեմ բերվել է վճռաբեկ բողոք: ՀՀ վճռաբեկ դատարանի 20.05.2009թ. թիվ ՎԴ/6279/05/08 որոշումով վճռաբեկ բողոքը վերադարձվել է:

Վճռաբեկ դատարանը պատճառաբանել է. «Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 151-153-րդ հոդվածների վերլուծությունից հետեւում է, որ ՀՀ վարչական դատարանում վար-

չական պատասխանատվության ենթարկելու մասին գործեր կարող են հարուցվել միայն օրենքով վարչական իրավախախտումների վերաբերյալ արձանագրություններ կազմելու լիազորություն ունեցող մարմինների պաշտոնատար անձանց հայցադիմումների հիման վրա, մինչդեռ բոլոր բերած անձը վարչական իրավախախտումների վերաբերյալ արձանագրություններ կազմելու լիազորություն ունեցող մարմին կամ պաշտոնատար անձ չէ»:

II. Դիմումի փաստարկները

3. ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքն ընդունվել է 2007 թվականի նոյեմբերի 28-ին (ՊՏ-2007-064-(588), 19/12/2007) (ՀՕ-269-Ն), որը ստորագրվել է 2007 թվականի դեկտեմբերի 10-ին, ուժի մեջ մտել 2008 թվականի հունվարի 1-ին:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի՝

151 հոդվածի համաձայն.

«Հոդված 151. Դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու մասին գործերի քննության կարգը

Վարչական պատասխանատվության ենթարկելու մասին գործերը հարուցվում են օրենքով վարչական իրավախախտումների վերաբերյալ արձանագրություններ կազմելու լիազորություն ունեցող մարմինների եւ պաշտոնատար անձանց (այսուհետ՝ իրավասու մարմիններ) հայցադիմումների հիման վրա»:

152 հոդվածի համաձայն.

«Հոդված 152. Դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու մասին հայցադիմումին ներկայացվող պահանջները

1. Ֆիզիկական, պաշտոնատար կամ իրավաբանական անձին վարչական պատասխանատվության ենթարկելու մասին հայցադիմումը, ի լրումն սույն օրենսգրքի 72-րդ հոդվածով ներկայացվող պահանջների, պետք է նաեւ ներառի՝

1) վարչական իրավախախտման մասին արձանագրության կազմման համար հիմք հանդիսացած գործողությունների կատարման վայրը եւ ժամանակը,

2) վարչական իրավախախտման մասին արձանագրությունը կազմած անձի պաշտոնը, անունը, ազգանունը,

3) տեղեկություններ այն անձի մասին, որի նկատմամբ կազմվել է վարչական իրավախախտումների մասին արձանագրությունը,

4) այն օրենքի դրույթները, որոնք վարչական պատասխանատվություն են նախատեսում վարչական իրավախախտման մասին արձանագրության կազմման համար հիմք հանդիսացած գործողությունների կատարման համար,

5) դիմողի պահանջը վարչական պատասխանատվության ենթարկելու մասին:

2. *Դիմումին կցվում են վարչական իրավախախտման մասին արձանագրությունը եւ արձանագրությանը կցվող փաստաթղթերը:*

4. Սույն դիմումի 1-ին եւ 2-րդ կետերում նշված երկու գործերով էլ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ն դիմել է ՀՀ վարչական դատարան՝ հայցվող տեղեկատվությունը տրամադրելու եւ տեղեկատվությունը չտրամադրած պաշտոնատար անձանց Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 189.7 հոդվածով նախատեսված վարչական պատասխանատվության ենթարկելու մասին պահանջով:

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի իրավական դիրքորոշումը հետեւյալն է.

ՀՀ Սահմանադրության՝

- 27 հոդվածի 2-րդ պարբերության համաձայն. *«Յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք, ներառյալ տեղեկություններ եւ գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը, տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից».*
- 27.1 հոդվածի համաձայն. *«Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական կամ հասարակական շահերի պաշտպանության նկատառումներով իրավասու պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններին եւ պաշտոնատար անձանց դիմումներ կամ առաջարկություններ ներկայացնելու եւ ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունք»:*

Սահմանադրությամբ երաշխավորված վերը նշված իրավունքներն առարկայանում են նաեւ **«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում, որի 6 հոդվածի 1-ին մասի** համաձայն.

«Յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը եւ (կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկատվություն տնօրինողին եւ ստանալու այդ տեղեկությունը»:

Սույն օրենքի 9 հոդվածի 7-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝

եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը տրամադրելու համար անհրաժեշտ է կատարել լրացուցիչ աշխատանք, ապա այդ տեղեկությունը դիմողին է տրվում դիմումն ստանալուց հետո՝ 30-օրյա ժամկետում, որի մասին հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում, գրավոր տեղեկացվում է դիմողին՝ նշելով հետաձգման պատճառները եւ տեղեկությունը տրամադրելու վերջնական ժամկետը:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 189.7 հոդվածը պատասխանատվություն է սահմանում տեղեկություն տալու պարտականությունը չկատարելու համար, որի համաձայն.

«Օրենքով նախատեսված տեղեկությունը պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունների, ինչպես նաեւ հանրային նշանակության կազմակերպությունների պաշտոնատար անձանց կողմից ապօրինաբար չտրամադրելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկից մինչեւ հիսնապատիկի չափով:

Նույն խախտումը, որը կատարվել է կրկին անգամ՝ վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո մեկ տարվա ընթացքում՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից մինչեւ հարյուրապատիկի չափով»:

Նույն օրենսգրքի 223 հոդվածի համաձայն՝ առաջին ատյանի դատարանների դատավորները քննում են սույն օրենսգրքի 189.7 հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը:

ՀՀ դատական օրենսգրքի 3 հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի ու 4-րդ մասի համաձայն՝ վարչական դատարանն առաջին ատյանի դատարան է:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3 հոդվածի համաձայն.

«Հոդված 3. Վարչական դատարան դիմելու իրավունքը

1. Յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ սույն օրենսգրքով սահմանված կարգով իրավունք ունի դիմելու վարչական դատարան, եթե համարում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց վարչական ակտերով, գործողություններով կամ անգործությամբ՝

1) խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել նրա՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով եւ այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները եւ ազատությունները, այդ թվում, եթե՝

ա. խոչընդոտներ են հարուցվել այդ իրավունքների եւ ազատությունների իրականացման համար,

բ. չեն ապահովվել անհրաժեշտ պայմաններ՝ այդ իրավունքների իրականացման համար, սակայն դրանք պետք է ապահովվեին Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, միջազգային պայմանագրի, օրենքի կամ այլ իրավական ակտերի ուժով,

2) նրա վրա ոչ իրավաչափորեն դրվել է որեւէ պարտականություն,

3) նա վարչական կարգով ոչ իրավաչափորեն ենթարկվել է վարչական պատասխանատվության»:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 17 Գլուխը՝ 219-244.14 հոդվածներ, սահմանում է վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի ենթակայությունը:

Նշված՝ 219-244.14 հոդվածներից յուրաքանչյուրով սահմանված են այն մարմինները, որոնց ենթակա են կոնկրետ վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի քննությունը:

Այսպես, հոդված 219-ը, սահմանում է Վարչական հանձնաժողովների ենթակա իրավախախտումների վերաբերյալ գործերը, հոդված 219.1-ը՝ Տարածքային կառավարման մարմիններին և տեղական ինքնակառավարման մարմիններին ենթակա, հոդված 220-ը՝ Պատգամավորների ավանային, գյուղական խորհուրդների գործադիր կոմիտեներին ենթակա, հոդված 221-ը՝ Անչափահասների գործերի հանձնաժողովներին ենթակա, հոդված 222-ը՝ հարբեցողության դեմ պայքարի հանձնաժողովներին ենթակա, հոդված 223-ը՝ Առաջին ատյանի դատարանների դատավորներին ենթակա, հոդված 223.1-ը՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության մարմիններին ենթակա վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը, և այդպես մինչև 244.14 հոդվածը:

Այդ մարմինների պաշտոնատար անձինք էլ իրավասու են իրենց ենթակայության գործերով կազմել վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն և Սահմանադրության 5-րդ հոդվածի պահանջից ելնելով իրավասու չեն կազմել իրենց ենթակայությանը չվերապահված իրավախախտումների վերաբերյալ արձանագրություններ, օրինակ, լեզվի տեսչության աշխատակիցը չի կարող ճանապարհային երթուղիների կանոնների խախտման վերաբերյալ արձանագրություն կազմել և՛ հակառակը:

Դա նշանակում է, որ ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով դատարանի դատավորից բացի չկա մի մարմին, որն իրավասու է կազմել օրենսգրքի 223 հոդվածում նշված, այդ թվում 189.7 հոդվածով նախատեսված, առաջին ատյանի դատարանների դատավորների քննությանը ենթակա վարչական իրավախախտումների վերաբերյալ արձանագրություն: Նշվածից հետևում է, որ եթե դատարանը գործի քննությամբ հաստատված է համարում, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը պահանջվող տեղեկատվությունը չի տրամադրել, ապա հենց դա էլ իրավախախտման փաստի արձանագրումն է ու տվյալ պաշտոնատար անձին պատասխանատվության ենթարկելու հիմքը:

Հակառակ մոտեցման դեպքում կստացվի, որ օրենսգրքի 223 հոդվածում թվարկված՝ 40.1-40.7, 44, 53, 53.1, 97.2, 97.3, 104.3, 147, 166.1, 170.5, 172 հոդվածներով, 175 հոդվածի երրորդ մասով, 180.1, 182, 183.1, 185, 189.2, 189.3, 189.4, 189.5, 189.6, 189.7, 189.8, 189.9, 189.10 հոդվածներով, 198.2 հոդվածի չորրորդ և հինգերորդ մասերով, 206.1, 206.2, 206.3, 206.4, 206.5, 206.6, 206.7 և 206.8 հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումներից մեծ մասով որեւէ պաշտոնատար անձ վարչական պատասխանատվության չի ենթարկվի, քանի որ չկա արձանագրությունը կազմող այլ իրավասու մարմին քան դատարանն է՝ գործը քննող դատավորը, որին կարող է բողոք ներկայացնել տեղեկատվություն ստանալու իրավունքը խախտված անձը, իսկ վարչական դատարանին ներկայացված հայցադիմումներն էլ վերադարձվում են, ինչը կհանգեցնի սահմանադրական իրավունքների, մեր

դեպքում՝ տեղեկատվություն ստանալու իրավունքի խախտման ու այդ իրավունքի դատական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքի խախտման, քանի որ եթե տեղեկատվությունը տնօրինող պաշտոնատար անձը վստահ լինի, որ այն չտրամադրելու համար վարչական պատասխանատվություն չի կրի արձանագրության բացակայության եւ արձանագրություն կազմող մարմնի բացակայության պատճառաբանությամբ, ապա այն չի տրամադրի, ինչն արդեն իսկ համատարած կատարվում է:

Նման պայմաններում, որպեսզի տեղեկատվություն ստանալու համար դիմած անձի խախտված իրավունքը վերականգնվի եւ պահանջվող տեղեկատվությունը չտրամադրելով վարչական իրավախախտում կատարած պաշտոնատար անձը ենթարկվի վարչական պատասխանատվության, այլ բան չի մնում, քան իրավունքը խախտված անձի կողմից դատարան դիմելը՝ պաշտոնատար անձին վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջով, որն էլ, գտնում ենք, վարչական դատարանի ենթակայության գործ պետք է լինի, մասնավորապես, վարչական դատարանը պարզելով, որ պահանջվող տեղեկատվությունը պաշտոնատար անձը չի տրամադրել, ոչ իրավաչափ ճանաչելով տվյալ պաշտոնատար անձի անգործությունը եւ պարտավորեցնելով նրան տրամադրել պահանջվող տեղեկատվությունը, միաժամանակ պետք է լուծի նաեւ նրան վարչական պատասխանատվության ենթարկելու հարցը:

5. Կա մեկ այլ տարբերակ եւս, մասնավորապես այն, որ ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 223 հոդվածում նշված, այդ թվում 189.7 հոդվածով նախատեսված պաշտոնատար անձանց վարչական պատասխանատվության ենթարկելու հայցերը հարուցվեն ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան: Այստեղ էլ, սակայն, կան խոչընդոտներ:

Այսպես, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում չկա համապատասխան գլուխ, որը կարգավորի նման պահանջներով գործերի վարույթը: Բացի այդ, գտնում ենք, որ նման գործերը վերաբերում են հանրային իրավախախտություններին եւ ճիշտ կլինի, որ դրանց քննությունը կատարվի վարչական դատարանի կողմից, որը քննում է պահանջվող տեղեկատվությունը պաշտոնատար անձի կողմից չտրամադրելը ոչ իրավաչափ ճանաչելու եւ պահանջվող տեղեկատվությունը տրամադրել պարտավորեցնելու պահանջները:

Եվ, վերջապես, եթե վարչական պատասխանատվության ենթարկելու մասին պահանջը ներկայացվի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան, ապա կստացվի, որ այդ գործի վարույթը պետք է կասեցվի, մինչեւ վարչական դատարանում քննվի եւ օրինական ուժի մեջ մտած վճռով հաստատվի տեղեկատվությունը չտրամադրած պաշտոնատար անձի գործողությունների (անգործության) ոչ իրավաչափ լինելը, որից հետո միայն քննության կառնվի վարչական պատասխանատվության ենթարկելու հարցը:

Ինչեւէ, այս տարբերակով առաջնորդվելու դեպքում եւս կխախտվի ՀՀ Սահմանադրության 18 եւ 19 հոդվածներով երաշխավորված դատական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքը:

Գտնում եմ, որ այս կետում նշված տարբերակը հակասության մեջ է մտնում նաեւ **ՀՀ սահմանադրական դատարանի 03.02.2009թ. ՍԴՈ-787 որոշման 9-րդ կետի** հիմնավորումներին, որի համաձայն.

«9. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 6 հոդվածն ամրագրում է վարչական դատարանի կողմից գործի հանգամանքներն ի պաշտոնե պարզելու սկզբունքը: Վերջինիս տրամաբանությունը կայանում է նրանում, որ նկատի ունենալով այն հանգամանքը, որ վարչաիրավական հարաբերություններից ծագող վեճում քաղաքացին հանդես է գալիս ընդդեմ վարչական մարմնի՝ քաղաքացու համար պետք է ստեղծվի որոշակի բարենպաստ վիճակ: Վերջինս ենթադրում է, որ վարչաիրավահարաբերություններից ծագող վեճի կարգավորման գործընթացում քաղաքացին չպետք է ծանրաբեռնվի անհամաչափ պարտավորություններով:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ խնդրո առարկա իրավակարգավորումը ոչ միայն թույլ չի տալիս ապահովել արդյունավետ դատական պաշտպանության իրացումը, այլ նաեւ հայցվորին ծանրաբեռնում է անհամաչափ պարտավորությամբ: Վերջինս դրսեւորվում է նրանում, որ, բացառելով վարչաիրավական հարաբերություններից ածանցվող քաղաքացիաիրավական վեճի լուծումը մեկ գործի սահմաններում, ներկա իրավակարգավորումը պարտավորեցնում է, որպեսզի քաղաքացին, իր հիմնական պահանջին վերաբերող դատական ակտի առկայության պարագայում, որը կանխորոշում է հետեւանք ներկայացնող պահանջների լուծումը, պարտադրված ձեւով դիմի տարբեր դատարաններ, ինչը դժվարացնում է նրա իրավունքների պաշտպանության գործընթացը: Բացի դրանից, նման իրավակարգավորումը կարող է ավելորդ ծանրաբեռնվածություն ստեղծել նաեւ դատարանների համար»:

Պատահական չէ, որ մինչ օրս, որեւէ պաշտոնատար անձ ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 189.7 հոդվածով, որը գործում է 2004թ. հունվար ամսից, վարչական պատասխանատվության չի ենթարկվել, ի դեպ, այդ մասին գրավոր հարցում է ուղարկվել նաեւ ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահին:

6. Վերոգրյալից ելնելով՝ գտնում եմ, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի

- 151 հոդվածը, այնքանով, որքանով առանց բացառության սահմանում է, որ «Վարչական պատասխանատվության ենթարկելու մասին գործերը հարուցվում են օրենքով վարչական իրավախախտումների վերաբերյալ արձանագրություններ կազմելու լիազորություն ունեցող մարմինների եւ պաշտոնատար անձանց (այսուհետ՝ իրավասու մարմիններ) հայցադիմումների հիման վրա» եւ հնարավորություն չի տալիս ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 223 հոդվածում թվարկված իրավախախտումներ, այդ թվում 189.7 հոդվածով նախատեսված իրավախախտում կատարած պաշտոնատար անձին վարչական պատասխանատվության ենթարկելու գործ հարուցել տուժողի հայցադիմումի հիման վրա, հակասում է ՀՀ Սահմանադրության 18 եւ 19 հոդվածներին, որոնցով

երաշխավորված է դատական պաշտպանության արդյունավետ միջոցի եւ խախտված իրավունքը վերականգնելու եւ դատարանի կողմից իր գործը ողջամիտ ժամկետում քննելու իրավունքը:

- 152 հոդվածը, այնքանով, որքանով վարչական պատասխանատվության ենթարկելու մասին հայցադիմումին ներկայացվող պահանջների ցանկում առանց բացառության բոլոր իրավախախտումների, այդ թվում ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 223 հոդվածում թվարկված իրավախախտումների, մասնավորապես՝ 189.7 հոդվածով նախատեսված վարչական իրավախախտման համար սահմանված է արձանագրության կազմման վերաբերյալ տեղեկությունների նշում եւ արձանագրության կցում, այն դեպքում, երբ ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով նշված իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմող մարմին կամ պաշտոնատար անձ նշված չէ, հակասում է ՀՀ Սահմանադրության 18, 19 հոդվածներին, քանի որ դատական պաշտպանության դիմելու ցանկությունն ունեցող տուժողի համար մի պարտականություն է սահմանում, որն առկա օրենսդրական դաշտում հնարավոր չէ կատարել:

7. Բարձր դատարանին տեղեկացնում ենք նաեւ, որ դատական պրակտիկայում նշված հարցի վերաբերյալ առկա է իրարամերժ մոտեցում, մասնավորապես, վարչական դատարանի մի կազմը «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի հայցերը՝ վարչական պատասխանատվության ենթարկելու մասով վարույթ չէր ընդունում, մյուս կազմը՝ վարույթ էր ընդունում, արձանագրելով, որ նման գործով արձանագրություն կազմող մարմին առկա չէ:

III. Դիմողի խնդրանքը

8. Վերոգրյալից ելնելով, ՀՀ սահմանադրական դատարանի 03.02.2009թ. ՍԴՈ-787 որոշման 9-րդ կետի հիմնավորումները հիմք ընդունելով եւ ՀՀ Սահմանադրության 101 հոդվածի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 19, 27 եւ 69 հոդվածների համաձայն՝

ԽՆԴՐՈՒՄ ԵՄ՝

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 151 հոդվածը, այնքանով, որքանով առանց բացառության սահմանում է, որ «Վարչական պատասխանատվության ենթարկելու մասին գործերը հարուցվում են օրենքով վարչական իրավախախտումների վերաբերյալ արձանագրություններ կազմելու լիազորություն ունեցող մարմինների եւ պաշտոնատար անձանց (այսուհետ՝ իրավասու մարմիններ) հայցադիմումների հիման վրա» եւ հնարավորություն չի տալիս ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 223 հոդվածում թվարկված իրավախախտումներ կատարած պաշտոնատար անձանց, այդ թվում 189.7 հոդվածով նախատեսված իրավախախտում կատարած պաշտոնատար անձին վարչական պատասխանատվության ենթարկելու գործ հարուցել տուժողի հայցադիմումի հիման վրա, ճանաչել ՀՀ Սահմա-

Նադրության 18 եւ 19 հոդվածներին հակասող եւ այդ մասով անվավեր:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 152 հոդվածը, այնքանով, որքանով վարչական պատասխանատվության ենթարկելու մասին հայցադիմումին ներկայացվող պահանջների ցանկում առանց բացառության բոլոր իրավախախտումների, այդ թվում ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 223 հոդվածում թվարկված իրավախախտումների, մասնավորապես՝ 189.7 հոդվածով նախատեսված վարչական իրավախախտման համար սահմանված Է արձանագրության կազմման վերաբերյալ տեղեկություններ նշելու եւ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը կցելու պայման, ճանաչել ՀՀ Սահմանադրության 18 եւ 19 հոդվածներին հակասող եւ այդ մասերով անվավեր:

Կից ներկայացվում են՝

1. պետական տուրքի վճարման անդորրագիր,
2. լիազորագիր,
3. փաստաբանի արտոնագրի պատճեն,
4. ՊԳՎ պատճենը,
5. Վճռաբեկ դատարանի որոշումները՝ բողոքը վերադարձնելու եւ բողոքը մերժելու մասին,
6. վճռաբեկ բողոքները,
7. Վարչական դատարանի հակասական որոշումները,
8. վիճարկվող նորմերի պաշտոնական տեքստը՝ www.arlis.am կայքից:

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն»

հասարակական կազմակերպության նախագահ՝ Շուշան Դոյոյան

Լիազոր ներկայացուցիչ՝

Կարեն Մեծլումյան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

«ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԴԻՍՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍՈՐԶԻ 151 ԵՎ 152-ՐԴ ՅՈՂՎԱԾՆԵՐԻ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

5 փետրվարի 2010թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝
կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող),
Կ. Բալայանի, Յ. Դանիելյանի,
Ֆ. Թոխյանի (զեկուցող), Մ. Թոփուզյանի,
Վ. Հովհաննիսյանի, Յ. Նազարյանի, Վ. Պողոսյանի,
մասնակցությամբ՝
դիմողի՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն»
հասարակական կազմակերպության
ներկայացուցիչ Կ. Մեժլումյանի,
պատասխանող կողմի՝ ՀՀ Ազգային ժողովի
պաշտոնական ներկայացուցիչ՝
ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի
իրավաբանական վարչության պետ Ա. Խաչատրյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 եւ 69-րդ հոդվածների, դռնբաց դատական նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 151 եւ 152-րդ հոդվածների Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործը:

Գործի առիթը «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության՝ 09.09.2009թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրած դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը, օրենսդրության այլ ակտեր եւ գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը

ՊԱՐԶԵՑ

1. Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգիրքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2007թ.-ի նոյեմբերի 28-ին, ՀՀ Նախագահի կողմից այն ստորագրվել է 2007 թվականի դեկտեմբերի 10-ին եւ ուժի մեջ է մտել 2008թ.-ի հունվարի 1-ից:

Օրենսգրքի՝ «Դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու մասին գործերի քննության կարգը» վերտառությամբ վիճարկվող 151-րդ հոդվածը սահմանում է.

«Վարչական պատասխանատվության ենթարկելու մասին գործերը հարուցվում են օրենքով վարչական իրավախախտումների վերաբերյալ արձանագրություններ կազմելու լիազորություններ ունեցող մարմինների եւ պաշտոնատար անձանց (այսուհետ՝ իրավասու մարմիններ) հայցադիմումների հիման վրա»:

Օրենսգրքի վիճարկվող 152-րդ հոդվածը սահմանում է.

«1. Ֆիզիկական, պաշտոնատար կամ իրավաբանական անձին վարչական պատասխանատվության ենթարկելու մասին հայցադիմումը, ի լրումն սույն օրենսգրքի 72-րդ հոդվածով ներկայացվող պահանջների, պետք է նաեւ ներառի՝

1) վարչական իրավախախտման մասին արձանագրության կազմման համար հիմք հանդիսացած գործողությունների կատարման վայրը եւ ժամանակը,

2) վարչական իրավախախտման մասին արձանագրությունը կազմած անձի պաշտոնը, անունը, ազգանունը,

3) տեղեկություններ այն անձի մասին, որի նկատմամբ կազմվել է վարչական իրավախախտումների մասին արձանագրությունը,

4) այն օրենքի դրույթները, որոնք վարչական պատասխանատվություն են նախատեսում վարչական իրավախախտման մասին արձանագրության կազմման համար հիմք հանդիսացած գործողությունների կատարման համար,

5) դիմողի պահանջը վարչական պատասխանատվության ենթարկելու մասին:

2. *Դիմումին կցվում են վարչական իրավախախտման մասին արձանագրությունը եւ արձանագրությանը կցվող փաստաթղթերը»:*

2. Գործի դատավարական նախապատմությունը հանգեցնում է հետեւյալին. «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ դիմող) հայցով դիմել է ՀՀ վարչական դատարան ընդդեմ «Երեւանի կառուցապատման եւ ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ի վերջինիս տնօրենի՝ ՊՈԱԿ-ի գործողությունները ոչ իրավաչափ ճանաչելու, որպես հետեւանք տեղեկատվություն տրամադրել պարտադրելու եւ ՊՈԱԿ-ի տնօրենին վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջներով:

ՀՀ վարչական դատարանը 14.04.2009թ. որոշմամբ հայցադիմումը վարչական դատարանին ընդդատյա մասով վարույթ է ընդունել, իսկ ՊՈԱԿ-ի տնօրենին վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջի մասով՝ հայցադիմումի ընդունումը մերժել: Դիմողը վարչական դատարանի այս որոշումը բողոքարկել է: ՀՀ վարչական դատարանի 11.05.2009թ. որոշմամբ վարչական դատարանը բողոքը մերժել է: Նշված որոշումը բողոքարկվել է ՀՀ վճռաբեկ դատարան: Վերջինս իր 12.08.2009թ. որոշմամբ մերժել է դիմողի վճռաբեկ բողոքը: Ինչպես վարչական դատարանի, այնպես էլ վճռաբեկ դատարանի որոշումներում այն դիրքորոշումն է արտահայտվել, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 151 եւ 152 հոդվածների համաձայն վարչական դատարանում վարչական պատասխանատվության ենթարկելու մասին գործեր կարող են հարուցվել միայն օրենքով վարչական իրավախախտումների վերաբերյալ արձանագրություններ կազմելու լիազորություն ունեցող մարմինների եւ պաշտոնատար անձանց հայցադիմումների հիման վրա:

3. Վիճարկվող դրույթների՝ ՀՀ Սահմանադրությանը չհամապատասխանելու առնչությամբ դիմողը բերում է մի շարք փաստարկներ: Հատկապես կարելի է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 189.7 հոդվածը պատասխանատվություն է սահմանում պաշտոնատար անձանց կողմից տեղեկություն տալու իրենց պարտականությունը չկատարելու համար: Նույն օրենսգրքի 223-րդ հոդվածի համաձայն՝ նշված իրավախախտման համար պաշտոնատար անձին վարչական պատասխանատվության ենթարկելու իրավասու մարմինը դատարանն է: Վարչական դատավարության օրենսգրքի 151-րդ հոդվածը պաշտոնատար անձանց վարչական պատասխանատվության ենթարկելու հայցադիմումով վարչական դատարան դիմելու իրավունք վերապահում է միայն օրենքով վարչական իրավախախտումների վերաբերյալ արձանագրություններ կազմելու լիազորություն ունեցող մարմինների եւ պաշտոնատար անձանց՝ նման իրավունք չվերապահելով նաեւ անձանց, ում իրավունքները խախտվել են տվյալ իրավախախտմամբ:

Ըստ դիմողի՝ Վարչական դատավարության օրենսգրքի 151-րդ հոդվածը այնքանով, որքանով հնարավորություն չի տալիս տեղեկատվությունը տալու պարտականությունը չկատարած պաշտոնատար անձին վարչական պատասխանատվության ենթարկելու գործ հարուցել տուժողի հայցադիմումի հիման վրա, հակասում է ՀՀ Սահմանադրության 18 եւ 19 հոդվածներով երաշխավորված դատական պաշտպանության արդյունավետ միջոցի եւ խախտ-

ված իրավունքը վերականգնելու ու դատարանի կողմից իր գործը ողջամիտ ժամկետում քննելու իրավունքին:

Ինչ վերաբերում է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 152-րդ հոդվածի ենթադրյալ հակասահմանադրականությանը, ապա դիմողը փաստարկում է, որ այնպիսի պայմաններում, երբ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի ինչպես 189.7 հոդվածով նախատեսված վարչական իրավախախտման, այնպես էլ օրենսգրքի 223 հոդվածում նշված մի շարք իրավախախտումների վերաբերյալ արձանագրություն կազմելու լիազորություն ունեցող իրավասու մարմին նախատեսված չէ, վիճարկվող հոդվածով սահմանված՝ հայցադիմումում իրավախախտման վերաբերյալ արձանագրության մասին տեղեկություններ ներառելու եւ հայցադիմումին նշված արձանագրությունը կցելու պահանջով դատարան դիմող անձի համար սահմանվում է մի պարտականություն, որն առկա օրենսդրական դաշտում հնարավոր չէ կատարել: Որպես փաստարկ ներկայացվում է, որ 2005-2009թ.թ. ընթացքում ՀՀ դատարանները Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 189.7-րդ հոդվածով որեւէ պաշտոնատար անձի պատասխանատվության չեն ենթարկել: Նշված պատճառաբանությամբ դիմողը գտնում է, որ օրենսգրքի 152-րդ հոդվածը եւս հակասում է ՀՀ Սահմանադրության 18 եւ 19-րդ հոդվածների պահանջներին:

4. Պատասխանողի պնդմամբ՝ դիմող կողմն իր հիմնավորումներում շփոթում է «խախտված իրավունքը վերականգնելու» եւ «պաշտոնատար անձին վարչական պատասխանատվության ենթարկելու»՝ եությամբ միմյանցից տարբեր իրավական նշանակություն ունեցող հասկացությունները: Ըստ պատասխանողի՝ վիճարկվող հոդվածները չեն շոշափում դիմողի իրավունքների դատական պաշտպանության իրավունքը, քանի որ ՀՀ Սահմանադրության 18 եւ 19-րդ հոդվածների, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 14, 15 եւ 17-րդ հոդվածների, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի համակարգային վերլուծությունը վկայում է, որ վարչական իրավախախտում կատարած պաշտոնատար անձին վարչական պատասխանատվության ենթարկելը չի դիտարկվում որպես քաղաքացիական իրավունքների պաշտպանության եղանակ:

Պատասխանողը գտնում է, որ պաշտոնատար անձին վարչական պատասխանատվության ենթարկելու հնարավորությունը չի կարող համարվել անձի խախտված իրավունքների վերականգնման բաղադրատարր:

Միաժամանակ, պատասխանողը գտնում է, որ առկա է օրենքի բաց այն առումով, որ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում բացակայում են պաշտոնատար անձանց վարչական պատասխանատվության գործերի ենթակայության մասին համապատասխան դրույթներ»:

5. Սույն գործի քննության շրջանակներում հարկ է պարզել, թե արդյոք անձի իրավունքները խախտած պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի պաշտոնատար անձին դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելը հանդիսանում է անձի իրավունքի դատական պաշտպանության բաղադրատարր: Այս կապակցությամբ հարկ է ՀՀ վարչա-

կան դատավարության օրենսգրքի վիճարկվող հոդվածները դիտարկել վարչական պատասխանատվության նպատակի, օրենսգրքով նախատեսված ողջ իրավակարգավորման հիմքում ընկած տրամաբանության, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի, ինչպես նաև «անձի խախտված իրավունքների վերականգնում» հասկացության բովանդակության համատեքստում:

Նման համադրումը վկայում է, որ վարչական պատասխանատվությունը՝ ընդհանրապես, եւ վարչական պատասխանատվության միջոց հանդիսացող վարչական տույժը՝ մասնավորապես, հետապնդում են այլ նպատակ, քան անձի խախտված իրավունքի դատական կարգով վերականգնումն է: Վարչական պատասխանատվության նպատակն առավելապես կրում է հանրային բնույթ, իրավախախտ անձը պատասխանատվություն է կրում հասարակության, այլ ոչ թե մասնավոր անձի առջեւ, վարչական պատասխանատվությունն առնչվում է ոչ այնքան մասնավոր, որքան հանրային շահերին: Իսկ հանրային իրավահարաբերությունների ոլորտում մասնավոր շահի պաշտպանության նպատակով սահմանված է այլ կարգ՝ հաշվի առնելով վարչադատավարական իրավահարաբերությունների առանձնահատկությունները, վարչաիրավական հարաբերությունների հետեւանքով խախտված իրավունքների վերականգնման կարգի առանձնահատկությունները, խախտված իրավունքների փաստացի վերականգնելիության հնարավորությունն ու աստիճանը:

Վարչական դատավարության օրենսգրքի համակարգային վերլուծությունը, մասնավորապես, օրենսգրքի 1-ին հոդվածով սահմանված՝ ընդհանուր եւ հատուկ վարույթների վերաբերյալ դրույթների, հայցատեսակների, օրենսգրքի 3-րդ հոդվածով սահմանված՝ վարչական դատարանի միջոցով անձի իրավունքների դատական պաշտպանության շրջանակների ուսումնասիրությունը վկայում է, որ օրենսգրքով սահմանված ողջ իրավակարգավորումը հիմնվում է այն տրամաբանության վրա, որ հանրային իրավահարաբերությունների ոլորտում անձանց իրավունքների եւ օրինական շահերի դատական պաշտպանության ինստիտուտը տարանջատված է անձանց՝ դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու ինստիտուտից:

Այսինքն՝ օրենսգրքով օրենսդիրը սահմանել է իրավակարգավորման երկու՝ միմյանցից տարբերվող ուղղություն, որոնք վերաբերում են համապատասխանաբար՝ հանրային իրավահարաբերությունների ոլորտում անձանց իրավունքների եւ օրինական շահերի դատական պաշտպանության ինստիտուտին եւ անձանց՝ դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու ինստիտուտին: Իր հերթին, նշված տրամաբանությունը բխում է այն օբյեկտիվ իրողությունից, որ առաջին դեպքում իրավախախտման աղբյուրը պետությունն է, մյուս դեպքում՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձը: Այս տրամաբանությունը համապատասխան՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքը սահմանում է այն հայցատեսակները, որոնց միջոցով անձը վարչական դատարանում իրացնում է վարչական մարմնի կողմից խախտված իր իրավունքների պաշտպանությունը: Այն է՝ վիճարկման հայց

(65), պարտավորեցման հայց (66), գործողության կատարման հայց (67) եւ ճանաչման հայց (68): Սահմանվում են նաեւ պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց նորմատիվ իրավական ակտերի վիճարկման վերաբերյալ դրույթներ, որոնց միջոցով ապահովվում է վարչական մարմնի գործողությամբ (անգործությամբ) կամ վարչական ակտով, ինչպես նաեւ պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց նորմատիվ իրավական ակտերի՝ ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող ակտերին կամ Սահմանադրությանը հակասելու հետեւանքով խախտված իրավունքների դատական կարգով վերականգնումը:

Միաժամանակ, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 1-ին հոդվածով սահմանված իրավակարգավորման տրամաբանությանը համահունչ, Վարչական դատավարության օրենսգրքով սահմանվում է այն հայցադիմումների քննության կարգը, (գլուխներ 26 եւ 27), որոնք վերաբերում են օրենսգրքով սահմանված իրավակարգավորման երկրորդ ուղղությունը, այն է՝ անձանց՝ դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու ինստիտուտին, որոնց միջոցով վարչական մարմինները դատարանի միջոցով հանրային շահը պաշտպանում են իրավախախտ անձանցից: Օրենսգրքի վիճարկվող 151-րդ հոդվածով, օրենսգրքի 1-ին հոդվածին եւ 3-րդ հոդվածի երկրորդ մասին համահունչ, որով որպես վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջով դատարան դիմելու իրավասու սուբյեկտ են դիտարկվում միայն վարչական մարմինները կամ դրանց պաշտոնատար անձինք, վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ գործերի հարուցման հիմք են համարվում իրավասու մարմինների եւ պաշտոնատար անձանց հայցադիմումները:

Ինչ վերաբերում է «անձի խախտված իրավունքների վերականգնում» հասկացության բովանդակությանը, ապա անձի խախտված իրավունքը վերականգնված է համարվում այն դեպքում, երբ վերականգնվում է մինչեւ իրավախախտման պահը գոյություն ունեցող իրավիճակը կամ վերացվում է իրավունքի իրացմանը խոչընդոտող հանգամանքը: Տվյալ դեպքում պաշտոնատար անձի գործողությունները ոչ իրավաչափ ճանաչելու եւ նրան տեղեկատվություն տրամադրելու արդյունքում դիմողը հնարավորություն է ստացել իրացնել տեղեկատվություն ստանալու իր իրավունքը:

